11577

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

XI ՀԱՏՎԱԾ

(ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ)

3(07)
Կ-33

ԵՐԵՎԱՆ
1931

25 SEP 2006
1 DEC 2009
3(07)
Կ-33
Չ/8/7

ԽՍՀՄ Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք ՀԽՍՀ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

XI ՀԱՏՎԱԾ

(ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ)

Հ. Հ. ԴԻՎ. ՔԱՂԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1931

20 MAY 2013

11517

Программа

политзанятий с красноармейцами

Раздел XI

(Колхозное строительство)

ՀՍՍՌ — Арм. ССР
Гос. библиотека им. А. Мясникяна
Մյասնիկյանի անվան

38029. 62

Պատվեր № 2269   Գլավլիտ № 6490 (բ)   Տիրաժ 800
Պետհրատի տպարան.

I. ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Կենտկոմի ու ԿՎՀ դեկտեմբերյան պլենումն առաջադրեց ամբողջ յերկրին կարեվորագույն խնդրի լուծում, մի խնդիր, վոր ունի համաշխարհային-պատմական նշանակություն. այն ե՝ «ավարտել ԽՍՀՄ սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը»: *«Ստեղծել սոցիալիզմի տնտեսական բազա — այդ նշանակում ե ներփակել գյուղական տնտեսությունը սոցիալիստական ինդուստրիայի հետ ի մի ամբողջացած տնտեսություն, յենթարկել գյուղական տնտեսությունը սոցիալիստական ինդուստրիայի ղեկավարությանը, կարգավորել փոխհարաբերությունները քաղաքի ու գյուղի միջև՝ գյուղատնտեսության ու ինդուստրիայի արդյունքների անմիջական փոխանակման հիման վրա, փակել և վերացնել այն բոլոր անցքերը, վորոնց ոգնությամբ ծնվում են դասակարգեր և ծնվում ե, ամենից առաջ, կապիտալը, ստեղծել վերջիվերջո արտադրության և բաշխման այնպիսի պայմաններ, վորոնք տանում են ուղղակի և անմիջորեն դեպի դասակարգերի վոչնչացումը» (Ստալին):*

Պլենումի կողմից ընդունված ժողովրդական-տնտեսական պլանը 1931 *թվի համար ապահովում ե այն ամենը, ինչ անհրաժեշտ ե այդ բազայի կառուցման համար: Վիթխարիորեն աճում ե ինդուստրիան մի տարում՝* 45 *տոկոսով, ըստ վորում ծանր ինդուստրիան՝*

58 տոկոսով: Գործողության մեջ կմտնեն շինարարության մեջ ներդրած ֆոնդերը, մոտավորապես 4 միլիարդ ռուբլի գումարով, և 5,5 միլիարդ ռուբլի նոր ներդրումներով: 1931 թիվը վճռական տարի կհանդիսանա «5-ամյակը 4 տարում», իսկ վճռական բնագավառներում՝ 3 տարում լոզունգի իրականացման գործում: Առաջիկա մեկ-երկու տարում մենք արդեն հասնում ենք մի շարք առաջավոր կապիտալիստական երկրների արդյունաբերության կարևորագույն բնագավառներում: Քարածխային արդյունաբերությունում ԽՍՀՄ դուրս կգա համաշխարհային արտադրության մեջ չորրորդ տեղը, չուգունի ձուլման մեջ՝ չորրորդ տեղը, պողպատի ձուլման մեջ՝ հինգերորդ տեղը: Առաջին տեղերից մեկը ԽՍՀՄ կբռնի նաև մեքենաշինարարության բնագավառում: Վերջապես՝ կառուցվող էլեկտրոկայանների ուժգնությունը կգերազանցի Հ. Ա. Միացյալ Նահանգների կառուցվող էլեկտրոկայանների ուժգնությունը: Արդյունաբերական շինարարության ծավալով մենք անցնում ենք 1931 թվին աշխարհիս ամենաուժեղ կապիտալիստական երկրից՝ ՀԱ Միացյալ Նահանգներից:

Յերկրի ինդուստրացման արագ տեմպը թույլ յե ստեղծել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար: Այս տարի կապահովվի սոցիալիստական սեկտորի բացարձակ գերակշռությունը գյուղատնտեսությունում: Կենտկոմի ու ԿՎՀ դեկտեմբերյան միացյալ պլենումի վորոշումներով մենք պարտավոր ենք՝ «ա) 1931 թվին ապահովել կոլեկտիվ տնտեսություններով ընդգրկումն Ուկրայնայի համար (տափաստան), Հյուսիսային Կովկասի, Վարին Վոլգայի, Միջին Վոլգայի (Զավոլժյե) համար միջին հաշվով վոչ պակաս քան գյուղացիական տնտեսությունների 80 տոկոսը, վոր նշանակում ե այդ շրջանների համար հիմնականում ավարտել համատարած կոլեկտիվացումը և կուլակության, վորպես դասակարգի վերացումը: Մնացած հացահատիկային ռայոնների համար՝ կենտրոնական Սևահողյան Մարզի, Սիբիրի, Ուրալի, Ուկրայնայի (անտառա-տափաստան), Կազակստանի (հացահատիկային ռայոն) ապահովել գյուղացիական տնտեսությունների 50 տոկոս կոլեկտիվացումը: Սպառող շերտի համար՝ հացահատիկային տնտեսությունների 20-25 տոկոսը: Բամբակային ու ճակնդեղային ռայոնների համար ապահովել կոլեկտիվ տնտեսություններով ընդգրկումը տնտեսությունների ընդհանուր թվի 50 տոկոսը:

Միությունում միջին թվով գյուղատնտեսության բոլոր ճյուղերից 1931 թվին կոլեկտիվացումն ապահովել ամենապակասը գյուղացիական տնտեսությունների կիսով չափ:

Կոլխոզային ու սովխոզային շինարարության աճման հիման վրա գյուղացիությունը վիթխարի քայլ առաջ ե անում, մի քայլ, վորին անհնար եր միանձնյա գյուղացիական տնտեսության պայմաններում:

ԽՍՀՄ ցանքերի տարածությունն ե՝

	Բացարձակ թվերով հազար հեկտարով		1931 թ. տոկ. համեմատած 1930 թ. հետ	%-ներով	
	1930 թ.	1931 թ.		1930 թվ	1931 թվ
Ամբողջ ցանքերի տարածությունը . . .	127,345	148,060	112,3	100,0	100,0
վորի թվում					
Սովխոզներինը . . .	4,850	11,076	228,4	3,81	.774
Կոլխոզներինը	43,241	71,251	164,8	33,96	49,80

Այսպիսով միայն մի տարում ԽՍՀՄ ցանքի տարածությունը կավելանա 12,3 տոկոսով: Համայնացրած սեկտորի ցանքերի տարածությունը 48,1 միլիոն հեկտարից աճում, հասնում ե 82,3 միլիոն հեկտարի (71,2

տոկոսով)։ Դրա հետևանքով կոլխոզ-սովխոզային սեկտորի տեսակարար կշիռը բարձրանում է 57,5 տոկոսի ընդդեմ 37,3 տոկոսի։ Զգալի աճում կտան տեխնիկական մշակույթների ցանքերը։ Այդ աճումը 1931 թվին կկազմի 14 միլիոն հեկտար, որով 18,6 տոկոսով գերազանցված կլինի այն առաջադրանքը, որ տրված էր հնգամյակի վերջին տարվա համար։ Տեմպերի նման աճում չի իմացել և այժմ էլ չի իմանում կապիտալիստական ոչ մի յերկիր, իսկ առավել ևս ցարական Ռուսաստանը։ Ավելի ևս մեծ է համայնացրած սեկտորի տեսակարար կշիռը ապրանքային արտադրանքում։ 1931 թիվը ամրացնում է կուսակցության ու բանվոր դասակարգի հաղթանակը հացահատիկային պրոբլեմի լուծման բնագավառում։

1931 թվին կենտրոնական հարց է դառնում կենդանաբուծության պրոբլեմի լուծումը։ Կենտկոմի ու ԿՎ.Հ միացյալ պլենումի վորոշումներում ասված է. «Սկոտովոդի» հոտը պետք է հասցնել 2.800 հազար գլխի, «Սվինովոդի» հոտը՝ մինչև 1.900 հազար գլխի, «Ովցեվոդի» հոտը՝ մինչև 4.4 միլիոն գլխի, «Մոլոչնո-Մասլյաննոյ տրեստի» հոտը՝ մինչև 110 հազար գլխի։ Այդ պրոբլեմի լուծումն անխուսափելիորեն պետք է անցնի սովխոզ-կոլխոզային բազայի վրա»։

1931 թիվը հանդիսանում է բեկման տարի նաև գյուղատնտեսության տեխնիկական վերազինման տեսակետից։ Տրակտորային պարկի (կրանքի) ուժն աճում է ավելի քան յերկու անգամ։ Մեքենատրակտորային կայանների քանակը հասնում է 1.400-ի, տրակտորների թիվը աճում է 1931 թվին մինչև 98 հազար պայմանական (տասնուժանի) տրակտորի ընդդեմ 1930 թվի 21,5 հազարի։

Սակայն մենք առաջուց պետք է ամենայն վճռականությամբ նախազգուշացնենք ձիաքարշի ոպորտունիստական թերագնահատումից, քանի վոր միայն տրակտորային ու ձիու քարշի զուգակցումով է հնարավոր բոլոր այդ հսկայական խնդիրների լուծումը գյուղատնտեսության ասպարեզում։

Կտրականապես բարելավվում է գյուղատնտեսական մեքենաներով, տրակտորային ինվենտարով ու պահունի մասերով հայթայթումը, որը 1930 թվի 450 միլիոն ռուբլուց 1931 թվին հասնում է մինչև 730 միլիոն ռուբլու։ Խոշոր քայլ է արված նաև գյուղատընտեսությունը հանքային պարարտանյութերով ապահովելու բնագավառում։ Դրանց սպառումն աճում է յերեք և կես անգամ (1930 թվի 665 հազար տոննի դիմաց 1931 թվին 2.427 հազար տոնն)։ Այդպիսով առաջիկա տարին գյուղատնտեսության մեջ ապահովում է սոցիալիստական սեկտորի բացարձակ գերակշռությունը և այդպիսով իսկ ավարտում է ԽՍՀՄ սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումը։ «Այդ կլինի համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաղթանակ»։

Այդ հաջողությունները բանվոր դասակարգն ու կուսակցությունը ձեռք են բերել պայքարելով ու հաղթահարելով այն դժվարությունները, վոր յեղել են սոցիալիստական շինարարության ճանապարհին։ Սակայն մեր դժվարությունների բնույթը միանգամայն հակառակ է կապիտալիստական յերկրների դժվարությունների բնույթին։ Մեզանում աճման դժվարություններ են, իսկ այնտեղ անկման դժվարություններ։ Այդ տարբերությունը չի ըմբռնում միայն անհույս ոպորտունիստը։ Այդ դժվարությունները բղխում են նրանից, վոր մենք արմատապես վերակառուցում ենք արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը։ Փոխում ենք վոչ միայն տեխնիկական բազան, այլև գյուղատնտեսության պայմաններում վերակառուցում ենք նրա ամբողջ սոցիալ-տնտեսական կառուցվածքը, անհատական տնտեսությունները համախմբելով կոլխոզների, արմատախիլ անելով կապիտալիզմը և վերացնելով կուլակությունը, վորպես դասակարգ, համատարած կոլեկտիվացման հիման վրա։ «Այդ աշխատանքի բարդությունն ավելի մեծ չափով է ավելանում կուլակության, բուրժուական ինտելիգենցիայի ու պետապարատի բյուրո-

կրատական տարրերի կատաղի դիմադրությամբ (վնասարարություն, սաբոտաժ և այլն)»:

«Այդ դժվարությունների հաջող և ամենաարագ հաղթահարման հիմնական պայմանը հանդիսանում է սոցիալիստական շինարարության տեմպերի արագացումը և ծավալուն հարձակումը կապիտալիստական տարրերի դեմ ամբողջ ճակատով: Այդ տեմպերի յուրաքանչյուր թուլացում հօգուտ կապիտալիստական-կուլակային տարրերի և նրանց դեմ հարձակման թուլացումը գործով կնշանակեր վոչ թե մեղմել դժվարությունները, այլ խորացնել, ուժեղացնել պրոլետարական դիկտատուրայի դասակարգային թշնամիների դիրքերը:

Աջ ոպորտունիստների կապիտուլյանտական խնդրադրումը ինդուստրացման տեմպերի իջեցման մասին թելադրված է ըստ եյության կուլակային-կապիտալիստական խմբակների շահերով և տանում է դեպի կապիտալիզմի ռեստավրացիան:

Կուսակցությունն ու բանվոր դասակարգը տվել են ու կտան ամենաանխնա հակահարված աջերի ոպորտունիստական կապիտուլյանտությանը, վորը գործնականում համազոր է բանվոր դասակարգի շահերի դավաճանության» (Համկոմկուսի (բ) 16-րդ համագումարի բանաձևից):

Կուսակցության անխնա պայքարը յերկու ճակատով, մանավանդ աջ ոպորտունիզմի դեմ հնարավոր դարձրեց հսկայական դժվարությունների հաղթահարումը և սոցիալիստական շինարարության տեմպերի արագացումն առաջիկա 1931 թվին:

ԳԼԽԱՎՈՐԵԼ ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՆԵՐՀՈՍԸ

Վիթխարի հաջողությունները արդյունաբերության սոցիալիստական վերակերտման և գյուղատնտեսության կոլեկտիվացման բնագավառում ստեղծեցին «յերկրում դասակարգային ուժերի նոր հարաբերակցություն»: Աճում է բատրակ-չքավորական մասսաների ակտիվությունը գյուղում: Ամրանում է դա-

շինքը միջակի հետ: Այդ հիման վրա կուսակցությունը կոտրեց կուլակության հակահեղափոխական սաբոտաժն ու դիմադրությունը:

«Չքավորական մասսաների վճռական շրջադարձը դեպի սոցիալիզմ կուսակցության ճիշտ քաղաքականության հետևանքով իր վառ արտահայտությունը գտավ կոլխոզային հուժկու շարժման մեջ, վորը 1929 թվի վերջում ընդգրկեց միլիոնավոր գյուղացիական տնտեսություններ, յերկրում ստեղծելով դասակարգային ուժերի նոր հարաբերակցություն, դարձնելով կոլխոզ մանող միջակին խորհրդային իշխանության հենարանը, պայմաններ ստեղծելով հացի կուլակային արտադրությունը փոխարինել սովխոզների ու կոլխոզների արտադրությամբ և թույլ տալով կուսակցությանը՝ կուլակության սահմանափակման ու վտարման լոզունգից անցնելու համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության վորպես դասակարգի վոչնչացման լոզունգին:

Համագումարը շեշտում է այդ լոզունգի մեծագույն պատմական նշանակությունը, վորը բանվոր դասակարգի գրոհն է նշանակում դեպի յերկրում կապիտալիստական շահագործման վերջին հենարանը (Համկոմկուսի (բ) 16-րդ համագումարի վորոշումներից):

Ահա թե ինչու չքավոր ու միջակ տնտեսությունների հետագա ներգրավումը դեպի կոլխոզները կամավորական սկզբունքով վճռական նշանակություն ունի կուսակցության աշխատանքի համար: Ամենայն վճռականությամբ մերկացված են ու վերացված անցյալ տարվա գարնան սխալներն ու խեղաթյուրումները կոլխոզային շինարարության պրակտիկայում: Վո՞րն եր թույլ տված սխալների արմատը: «Սխալ մոտեցումը դեպի միջակը: Թույլ տված բռնությունը միջակի հետ տնտեսական հարաբերությունների բնագավառում: Մոռացումն այն բանի, վոր միջակային մասսաների հետ տնտեսական դաշինքը պետք է կառուցվի վոչ թե բռնի միջոցների հիման վրա, այլ միջակի հետ համաձայնության հիման վրա, միջակի հետ դաշինքի հիման

վրա: Մոռացումն այն բանի, վոր կոլխոզային շարժման հիմքը տվյալ մոմենտում հանդիսանում է բանվոր դասակարգի ու չքավորության և միջակի դաշինքը կապիտալիզմի դեմ ընդհանրապես և կուլակության դեմ՝ մասնավորապես:

Քանի դեռ հարձակումը տարվում էր կուլակության դեմ՝ միասնական ճակատով միջակի հետ, ամեն ինչ լավ էր ընթանում: Բայց յերբ մեր ընկերներից վոմանք արբեցած հաջողություններով, աննկատելիորեն սկսեցին ցած սողալ կուլակի դեմ հարձակման ճանապարհից դեպի միջակի դեմ պայքարի ուղին, յերբ նրանք ընկնելով կոլեկտիվացման բարձր տոկոսի յետևից, սկսեցին բռնություն գործել միջակի դեմ, զրկելով նրան ընտրական իրավունքից, «ապակուլակացնելով» և էքսպրոպրիացիայի յենթարկելով նրան,— հարձակումը սկսեց ծռվել, միջակի հետ միասնական ճակատը սկսեց խզվել, և պարզ է, վոր կուլակը հնարավորություն ստացավ նորից փորձելու վոտքի կանգնել:

Մոռացան, վոր բռնությունը, վորն անհրաժեշտ և ոգտակար է մեր դասակարգային թշնամիների դեմ մղած պայքարում, անհանդուրժելի յե և կործանարար միջակի նկատմամբ, վորը հանդիսանում է մեր դաշնակիցը (Ի. Ստալին. «Լենինիզմի հարցերը»):

Այդ պատճառով կոլեկտիվացման բնագավառում ձեռք բերած հաջողությունների ամրացումը և նրա հետագա զարգացումը հնարավոր են միայն հետևյալ մարքսիստական–լենինյան սկզբունքների պահպանումով, սկզբունքներ, վոր բացատրված են կուսակցության 16–րդ համագումարի վորոշումներում:

«1. Կոլխոզները կարող են կառուցվել միայն կամավորականության հիման վրա: Չքավոր–միջակային մասսաներին կոլեկտիվներին միացնելու նպատակով նրանց նկատմամբ բռնություն կամ վարչական հարկադրանք գործադրելու յուրաքանչյուր փորձ հանդիսանում է կուսակցության գծի կոպիտ խախտում և իշխանության չարարկություն (ի չարը գործ դնել):

2. Կոլխոզի հիմնական ձևը տվյալ շրջանում հանդիսանում է գյուղատնտեսական արտելը: Պահանջել, վոր գյուղացիները, արտել մտնելով, անմիջապես հրաժարվեն բոլոր անհատական սովորքներից ու շահերից, համայնացրածին հավելյալ անձնական տնտեսություն (կով, վոչխար, թռչուն, ագարակամերձ բանջարանոց) վարելու հնարավորությունից, դրսի աշխատանքներն իր համար ոգտագործելու հնարավորությունից, և այլն, —նշանակում է մոռանալ մարքսիզմ–լենինիզմի այբուբենը:

3. Կոլխոզի ձևը պետք է համապատասխանի ռայոնի տնտեսական առանձնահատկությանը և տնտեսության ճյուղերին: Արտելի հետ միասին վոչ հացահատիկային բնույթի վորոշ ռայոններում, ինչպես նաև Արևելքի ազգային ռայոններում կարող է սկզբնական շրջանում մասսայական տարածում ստանալ հողի համատեղ մշակման ընկերությունը, վորպես անցողիկ ձև դեպի արտելը:

4. Կոլխոզային շարժումը կարող է բարձրանալ դեպի բարձրագույն ձևը՝ կոմունան, համաձայն տեխնիկական բազայի բարձրացման, կոլխոզային կադրերի և կոլխոզնիկների կուլտուրական մակարդակի աճման այն անհրաժեշտ պայմանով, վոր ինքը գյուղացիությունն ընդունի կանոնագրքի համապատասխան փոփոխությունները և այդ փոփոխությունները իրագործվեն վարից (Համկոմկուսի (բ) 16–րդ համագումարի վորոշումներից):

Բոլոր լծակները պետք է շարժման մեջ դրվեն հեշտացնելու համար կոլեկտիվացման վիթխարի պլանների կատարումը հնգամյակի յերրորդ տարում: Ինչ էլ վոր լինի, պետք է վերացվեն բոլոր խոչընդոտները դեպի կոլխոզները ներհոսի այդ նոր հորձանքի ճանապարհին, համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության, վորպես դասակարգի, վերացման ճանապարհին:

Կուսակցության գլխավոր գծի ստույգ և հետևողական իրագործումը, բոլոր ուժերի իսկական մոբիլիզացիան այդ խնդրի կատարման համար տվյալ շրջա–

նում հանդիսանում է կուսակցության առաջադրած
մարտական խնդիրը: Չի կարելի այդ խնդիրն իրագոր-
ծել, առանց ամենաանխնա պայքար մղելու աջ և «ձախ»
ոպորտունիստների դեմ, հաշտվողականների ու յերկե-
րեսանիների դեմ, վորոնք կուսակցության գծին հա-
կադրում են իրենց թշնամական գիծը, մի գիծ, վոր
հիմնված է կուլակի՝ սոցիալիզմի մեջ «խաղաղ ներաճ-
ման» վրա, հույսն ինքնահոսի վրա դնելու, կոլխոզային
շինարարության մեջ վարչականացման վրա և այլն:

Կուսակցությունն արդեն իսկ զգալի հաջողու-
թյուններ է ձեռք բերել կոլեկտիվիզացման պլանի իրա-
կանացման գործում: Դրան պարզ ապացույց կարող են
հանդիսանալ Հողժողկոմատի հետևյալ տեղեկանքը.
առ 10-ն փետրվարի 1931 թ. ԽՍՀՄ կոլեկտիվացված է
տնտեսությունների ընդհանուր թվի 30,7 տոկոսը: Կոլ-
խոզ են մտել փետրվարի 1-ից մինչև նույն ամսի 10-ը
դեկադում 397,3 հազար տնտեսություն: Առանձին
մարզերում կոլեկտիվացված է՝ Հյուսիսային Կովկա-
սում —ընդհանուր տնտեսությունների 67,2 տոկոսը,
Ստորին Վոլգայում—62,5 տոկոսը, Մերձվոլգյան
Գերմանական Ավտոնոմ ԽՍՀ-ում —72,2 տոկոսը, Մի-
ջին Վոլգայում —36,5 տոկոսը, Կենտրոնական-Սևա-
հողային Մարզում —30,4 տոկոսը, Ուկրայինայում —
39,2 տոկոսը:

Ակնհայտ է կոլեկտիվ տնտեսության առավելու-
թյունը միանձնյա տնտեսության հանդեպ: Այս տարի
արդեն իսկ կոլխոզների հիման վրա զգալիորեն բարձ-
րացել է բատրակների, չքավորների ու միջակների կեն-
սական մակարդակը: Ստորին Վոլգայի 10 ռայոնների
տվյալների համաձայն չքավոր կոլխոզնիկների յեկա-
մուտը բարձրացել է 84 տոկոսով, միջակի յեկամուտը
46 տոկոսով՝ համեմատած նրա հետ, ինչ նրանք ունե-
յին նախքան կոլխոզ մտնելը: Դանիլովսկի ռայոնում
(Ստորին Վոլգա) բատրակ-կոլխոզնիկի միջին յեկա-
մուտը կազմում է 406 ռուբլի ընդդեմ միանձնյա բատ-
րակի 80 ռուբլի յեկամուտի, չքավոր-կոլխոզնիկի յե-
կամուտը կազմում է 412 ռուբլի, ընդդեմ չքավոր-

միանձնյակի 86 ռուբլու, միջակ կոլխոզնիկի յեկամու-
տը՝ 726 ռուբլի, ընդդեմ միանձնյակ-միջակի 260 ռուբ-
լու:

Ճիշտ է, կոլեկտիվացման տեմպը տակավին բա-
վական չէ: Կատաղի դիմադրություն է ցույց տալիս
կուլակությունը: Կուլակը իր զենքը դեռ վայր չի դրել:
Միայն հարվածելով կուլակին, մերկացնելով նրա բո-
լոր պլանները մենք ավելի ևս ուժգնորեն կծավալենք
չքավոր-միջակային մասսաների շարժումը դեպի սո-
ցիալիզմ: Տեղ-տեղ կուլակը փոխում է իր գույնը, նը-
մանվելով չքավորին, միջակին, «անփոխարինելի մաս-
նագետի» անվան տակ խցկվելով կոլխոզը: Հարկավոր է
դասակարգային աչալրջություն այդ տեսակետից: Այլ
կերպ ինչով, յեթե վոչ կուլակային ագիտացիայով, ա-
ռանձին կոլխոզներում կուլակի գոյությամբ պետք է
բացատրել դեռ տեղի ունեցող այնպիսի փաստերը, ինչ-
պիսին են՝ աշխատանքային կարգապահության անկու-
մը կոլխոզում, բերքի շռայլումը, ինվենտարի փչացու-
մըն ու նրա հափշտակումը, պետության հանդեպ հանձն
առած պարտականությունների չկատարումը, կոլխո-
զից առանձին չքավորների ու միջակների հեռանալը,
միանձնյա չքավորների ու միջակների մեջ կոլխոզների
հեղինակության գցելը, առանձին գյուղերի կոլեկտի-
վացման կասեցումը:

Կոլխոզների վարչությունների նախընտրական
կամպանիան հարկավոր է օգտագործել նաև վերջնակա-
նապես վանելու համար կուլակներին կոլխոզից, միև-
նույն է թե ինչպիսի ցուցանակի տակ էլ նրանք թաք-
նված լինեն այնտեղ: Միայն այդ զտման հիման վրա
կարելի յե ապահովել կոլեկտիվացման հետագա հաջող
զարգացումը:

Կուլակը յեռանդուն ագիտացիա յե մղում նաև կոլ-
խոզ մտնելուց առաջ ինվենտարի վաճառման համար:
«Կոլխոզ գնալով», —ասում է կուլակը, —ծախեք ամեն
ինչ. քանի վոր կուսակցությունը ձեզ կոլխոզ հրավի-
րելով, ամեն ինչ կտա ձեզ»:

Միանգամայն ակնհայտ է, վոր մեր պետությունը,

մեծ ոգևորություն ցույց տալով կոլխոզներին, սակայն ի վիճակի չեն լրիվին ապահովելու արտադրական սարքավորումով: Այդ պատճառով կոլխոզների արտադրական ուժը թուլացնելու նկատմամբ կուլակության այդ դավերի դեմ պետք է ձեռք առնել պայքարի ամենավճռական միջոցներ:

Կազմակերպել ու գլխավորել դեպի կոլխոզները յեղած նոր հուժկու ալիքը, —սա կուսակցության մարտական խնդիրը: Գյուղի բոլոր տնտեսական ու քաղաքական կամպանիաները պետք է ապահովեն միանձնյակների նոր խավերի ներգրավումը դեպի կոլխոզները: Այդ պետք է լինի ամենաէականը գյուղի կուսակցական, կոմյերիտական կազմակերպությունների ու գյուղխորհուրդների աշխատանքում:

«Յեթե կալվածատերերից հողի բռնագրավումը Հոկտեմբերյան հեղափոխության առաջին քայլն եր գյուղում, ապա կոլխոզների անցնելը հանդիսանում է յերկրորդ և այն էլ վճռական քայլը, վորը վորոշում է կարեվորագույն ետապ ԽՍՀՄ մեջ սոցիալիստական հասարակակարգի հիմքի կառուցման գործում (Համկոմկուսի (բ) 16-րդ համագումարի վորոշումներից):

ԳԱՐՆԱՆԱՑԱՆԸ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՐՇԱՎ Է ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ցանքադաշտերի ընդարձակման ծրագիրը 1931 թվի համար բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով. ցանքադաշտերի ավելացումը նախատեսվում է 1931 թվին 127 միլիոն հեկտարից հասցնել 143 միլիոն հեկտարի:

Այդ տարածությունից 11 միլիոն հեկտարը, կամ 7,74 տոկոսը գտնվելու յե սովխոզներում, 71,2 միլիոն հեկտարը, կամ 50 տոկոսը, —կոլխոզներում (գարնանացանի համար 100 միլիոն հեկտար, վորից ամենապակասը կոլխոզային), մնացածը՝ 43 տոկոսը, —անհատական գյուղացիական տնտեսություններում:

Առանձնապես սուր բնույթ է ստանում ներկայումս պայքարը կենդանաբուծության զարգացման համար:

Ընթացիկ գարնանացանի կամպանիայում հարկավոր է լուրջ ուշադրություն դարձնել ջոկելու համար այնպիսի ռայոններ, վորոնք ամենից շատ հարմար են խոշոր անասնաբուծական կոլխոզներ ստեղծելու համար: Ամենալուրջ ուշադրությունը պետք է դարձնել նաև անասունների աճման ու պահպանման համար մղած պայքարի վրա: Անասնաբուծական պրոբլեմի լուծումը կազմում է խոշորագույն քաղաքական խնդիր: Այստեղից մեզ պարզ է այն ամբողջ խնդիրների վիթխարիությունը, վոր ծառանում են գարնանացանի կամպանիայի առաջ:

Այդ խնդրի լուծումը պահանջում է աշխատանքի իրոք բոլշևիկյան մարտական տեմպեր:

Մենք արդեն չեշտեցինք գարնանացանի նշանակությունը կոլխոզային շարժման աճումը վերածելու «իրոք մի հուժկու ներհոսի դեպի կոլխոզները»: «Այդ ներհոսը պետք է ապահովի կոլեկտիվացման այն տեմպերի իրագործումը, վոր նշել է Կենտրոնական Կոմիտեյի պլենումը, և համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության, վորպես դասակարգի վերացման գործում հետագա վճռական քայլերը» (Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1931 թվի հունվարի 21-ի վորոշումից):

Այս տարի կոլխոզները գարնանացանի մեջ են մտնում զգալիորեն ամրացած, մեծ փորձառությամբ, տեխնիկայով զգալիորեն հագեցած լինելու պայմաններում: Այդ հանգամանքները ստեղծում են բոլոր նախադրյալներն ավելի ևս մեծ չափով ապացուցելու համար կոլեկտիվ տնտեսության առավելությունները՝ միանձնյա տնտեսության հանդեպ: Այդ, իհարկե, դնում է նաև լուրջ պարտավորություններ թե՛ գարնանացանի պատրաստության և թե՛ նրա անցկացման տեսակետից: Միանգամայն պարզ է, վոր այդ խնդիրների վրա պետք է մոբիլիզացիայի յենթարկել կոլխոզային լայն մասսաների ուշադրությունը: Չի կարող կոլխոզնիկ լինել, վորը չիմանա իր կոլխոզի ցանքի մասին: Առանձին ռայոններում մենք հանդիպում ենք ցաքերի

պլանների կրճատման տենդենցների: Այս երևույթը հանդիսանում է գործնականում աջ օպորտունիզմի արտահայտության տեսակներից մեկը: Խուսափ դժվարությունների հանդեպ, հույսը «ինքնահոսի» վրա դնել, սոցիալիստական հարձակումը սեղմելու ցանկություն, —ահա թե ինչ է դրված դրանց հիմքում:

Կուսակցության բջիջն ու կոմերիտականների կազմակերպությունները պետք է լինեն կոլխոզային մասսաների իսկական առաջնորդները պլանի համար մղած պայքարում և պետք է ամենավճռական ու անխնա հակահարված տան այդ տենդենցներին:

Բոլոր ջանքերը պետք է ուղղված լինեն կազմակերպելու համար հանդիպական պլաններ: Մենք արդեն ունենք բազմաթիվ փաստեր, երբ կոլխոզներն ընդունում են ցանքի հանդիպական պլաններ: Մեր կոլխոզներն ունեն բոլոր նախադրյալները վոչ միայն կատարելու, այլ և գերակատարելու համար իրենց տրված պլանները:

«Կոլխոզների կողմից արտադրական պլանների քննարկումն ու ընդունումն օգտագործել կոլխոզնիկների միջև աշխատանքի ճիշտ բաշխում սահմանելու համար, ընտրելու համար բրիգադիրներ, համալրելու համար բրիգադները և վորոշելու համար նշանց պլանային առաջադրանքները: Աշխատանքի ճիշտ բաշխման, ավելորդ չփոթվածության, և առանձին կոլխոզնիկների ավել բեռնավորման վերացման, աշխատանքային կարգապահության համար մղած պայքարի, մեքենաների ճիշտ բեռնավորման հարցերը հանդիսանում են կարևորագույն խնդիրներից մեկը կուսակցական, կոլխոզային ու հողային կազմակերպությունների համար այն շրջաններում, վոր մնացել են մինչև ցանքի կամպանիան» (Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1931 թվի հունվարի 21 վորոշումից):

Մշակման նորմաներ հաստատելը, գործարքայինի անցնելը հանդիսանում են վճռական գործոններ աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրության բարձրացման, արտադրության ճիշտ կազմակերպման, հետևապես՝ նաև կոլխոզնիկի եկամտի բարձրացման համար:

Դրանով չի սպառվում կոլխոզնիկի կողմից ցանքին պատրաստվելու ամբողջ ծրագիրը: Վիթխարի խնդիրներ են դրված նրանց առաջ, — մանավանդ՝ մասսայական ներհոսի հետևանքով, — կոլխոզային սերմացվի ֆոնդերի, խոտի (ֆուրաժի) ֆոնդերի, կոլխոզնիկների ու միանձնյակների ապահովագրական ֆոնդերի հավաքի, սերմացվի նյութի փոխանակման, զտման ու ախտահանման, գյուղատնտեսակ. ինվենտարի նորոգման նկատմամբ: Գարնանացանի պատրաստության ու անցկացման համար վճռական նշանակություն ունի Ժողկոմխորհի ու Համկոմկուսի (բ) Կենտկոմի դիմումը կոնտրակտացիայի մասին:

Այս բոլոր խնդիրները պետք է իրենց լուծումը ստանան սոցիալիստական աշխատանքի նոր ձևերի, — սոցմրցակցության ու հարվածայնության, — հիման վրա: Չկա կոլխոզ առանց հարվածային բրիգադների: Չկան բրիգադներ առանց հարվածայինների: Այդ պետք է լինի ղեկավարող սկզբունքը աշխատանքներում:

Դասակարգային թշնամին քնած չէ: Ցանքին պատրաստվելն ընթանում է դասակարգային սրված պայքարի պարագաներում: Կուլակը գործադրում է բոլոր միջոցները ձախողելու համար կոլխոզային արտադրությունը: «Աշխատիր կոլխոզում, ասում է նա, ինչպես ուզում ես, միևնույն է, եկամուտները բաժանելու յեն հավասար չափով, ըստ ուտողների»:

Բոլոր կոլխոզներում առանձնապես պետք է մշակվեն բերքի բաշխման կանոնները՝ վերջնականապես վերացնելու համար բերքն ըստ շնչի բաշխելու տարրերը: Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն իր վորոշման մեջ շեշտել է. «Գարնանացանի իսկական հաջողության պայմանն է հանդիսանում բոլոր կոլխոզների կողմից բերքի բաշխման կանոնների իսկական իրականացումը՝ բացառապես կոլխոզնիկի կամ նրա ընտանիքի կողմից գործադրած աշխատանքի քանակի ու վորակի համեմատ»:

3802Գ-62 2/8/17
ZUUՌ-Арм ССР
им. А. Мясн

Ահա յուրաքանչյուր կոլխոզի աշխատանքի ծրագիրը: Վորքան ավելի լավ պատրաստված լինի գարնանցանի պատրաստությունը, վորքան ավելի կազմակերպված վոտքի հանենք յուրաքանչյուր կոլխոզնիկի մարտնչելու գարնանացանում նոր նվաճումների համար, այնքան ավելի վճռականորեն կվորոշվի միջակի ներհոսը դեպի կոլխոզները:

Բոլշևիկյան գարնան խնդիրն անխզելի յե բերքահավաքի խնդրից: Բոլշևիկյան գարունը պետք է նախապատրաստի գյուղատնտեսական ամբողջ տարվա հաջողությունը:

Ցանքի պլանի հաջող կատարմանը մենք կհասնենք միայն դասակարգային թշնամու դեմ մղած վճռական պայքարի պայմանով, աջ ու «ձախ» ոպորտունիստների դեմ՝ կուսակցության գլխավոր գծի անշեղ կիրառման հիման վրա մղած վճռական պայքարի պայմանով:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՅԵՐԵՍՈՎ ԴԵՊԻ ԿՈԼԽՈԶ

Խորհուրդների ավարտված վերընտրական կամպանիայի հսկայական նշանակությունը նրանումն է, վոր ներկա վերընտրությունները պետք է դարձնել կարեվորագույն միջոց խորհուրդների աշխատանքի վերակառուցման համար, վորպեսզի բարձրացվի նրանց դերը «վորպես կուսակցության գլխավոր գծի հաղորդիչների, մի գծի, վորն անհաշտ թշնամական է թե՛ աջ և թե՛ «ձախ» ոպորտունիզմի նկատմամբ»: Այդ վերընտրությունները ունեցան առանձնապես մեծ նշանակություն գյուղի համար՝ գավառների վերացման և աշխատանքի ծանրության կենտրոնը ռայոնները փոխադրելու հետեվանքով:

«Դրանով ստեղծված են կարեվորագույն նախադրյալներ կուսակցական ու խորհրդային ապարատը մասսաներին, գյուղին, կոլխոզին մոտեցնելու համար, ինչպես նաև ժամանակին ստուգելու համար մարզային ու կենտրոնական մարմիններից տեղերը յեկող ցուցումները» (Կենտկոմի ու ԿՎՀ դեկտեմբերյան պլենումի վորոշումներից): Կուսակցության հիմնական ու-

ղումները՝ խորհուրդների յերեսով դեպի կոլխոզային շինարարությունը շրջադարձի մասին լայնորեն ըմբռնել յեն քաղաքի ու գյուղի ընտրողները: Չափազանց բնորոշ հանգամանք են գյուղում տեղի ունեցած առաջխաղացման նկատմամբ գյուղխորհուրդների կազմի մասին տվյալները: Գյուղում նոր խորհուրդների կենտրոնական դեմքն է կոլխոզնիկը: ՌՍՖՍՀ կոլխոզնիկները խորհուրդներում կազմում են 34,4 տոկոս, Ուկրայնայում՝ 51,2 տոկոս, Ստորին Վոլգայում՝ 65 տոկոս, Հյուսիսային Կովկասում՝ 71 տոկոս:

Վորպես կանոն, վերընտրական կամպանիայի հետ միասին անընդհատ տեղի յեն ունեցել ներհոսք դեպի կոլխոզները, նոր կոլխոզների կազմակերպում, նախաձեռնող խմբակների ստեղծում և այլն: Հետագա ներհոսի կազմակերպումն անկասկած առաջին հերթին կախված կլինի նրանից, թե ինչ չափով կապահովվի գյուղխորհուրդների ճիշտ ղեկավարությունն ու ոգնությունն այդ գործում:

Կուսակցության 16-րդ համագումարի բանաձեվում նշված է՝ «Այն առթիվ, վոր կոլեկտիվացման աճումը միանգամայն այլ կերպ է դնում ռայոնական ու գյուղական իշխանության մարմինների դերի հարցը, վորպես գյուղի սոցիալիստական վերակառուցման անմիջական ղեկավարների, համագումարը գտնում է, վոր անհրաժեշտ է ամեն կերպ ուժեղացնել գյուղխորհուրդները և վճռականապես փոխել նրանց աշխատանքի բովանդակությունն ու մեթոդներն այն տեսակետից, վորպեսզի նրանք ավելի մեծ չափով ընդգրկեն գյուղի տնտեսական ու կուլտուրական շինարարության հարցերը»:

Կուսակցության այդ վորոշումը գյուղխորհուրդների առաջ դնում է կոլխոզային շարժման ղեկավարության մեծ ու պատասխանատու խնդիրը: Հենց աշխատանքում գյուղխորհուրդները պետք է հենվեն կոլխոզնիկների վրա, առաջնորդելով նրանց դեպի կոլխոզ տանելու ճանապարհը: Այդ պատճառով խորհուրդների գլխավոր խնդիրներն են հանդիսանում՝ գոյություն ու-

նեցող և մանավանդ նոր կազմակերպվող կոլխոզներին ցույց տված ղեկավարության ուժեղացումն ու օգնությունը, ինչպես նաև մասսայական լայն աշխատանքը կոլխոզների մեջ քաշելու միլիոնավոր նոր գյուղացիական տնտեսություններ:

Գյուղխորհուրդների ղեկավարությամբ կոլխոզների հավաքագրման բրիգադներ, աջակցության հանձնաժողովներ, ագիտատորների խմբակներ ստեղծելը կազմում է այն գործնական միջոցառումների շրջանը, որոնց հաջողությունը վճռական չափով կախված է գյուղխորհուրդների ղեկավարությունից: Դեպի կոլխոզները նոր հոսանք կազմակերպելն ամբողջ վճռականությամբ առաջադրում է բատրակության ու չքավորության հետ տարվող աշխատանքի վերակառուցման անհրաժեշտությունը: Գյուղխորհուրդներին կից չքավորության խմբակների աշխատանքը պետք է դարձնել դեպի կոլեկտիվացման կողմը:

Մինչդեռ առանձին գյուղխորհուրդների աշխատանքի պրակտիկան վկայում է այն մասին, որ այդ կարևորագույն խնդիրները թերագնահատվում են նրանց գործնական աշխատանքում: «Մենք ժամանակ չունենք զբաղվել կոլեկտիվացումով, ա՛յ, մի փոքր ազատվենք, այն ժամանակ կզբաղվենք դրանով»: Այդ հայտարարությունները վկայում են ամենից առաջ այն մասին, որ առանձին գյուղխորհուրդները տակավին ընդունակ չեն դառնալու կուսակցության գլխավոր գծի հաղորդիչները և գլխավորելու կոլխոզային շարժման ալիքը:

Մինչդեռ ներկայումս հատկապես հենց այդ է նրանց աշխատանքի հիմնական օղակը: «Մեզ պետք չեն այնպիսի խորհուրդներ, որոնք ընդունակ չեն անխնա ճնշելու կուլակության այն փորձերը, որ ուղղված են գյուղում սոցիալիստական սեկտորի աճումը կասեցնելուն: Խորհուրդները պետք է մերկացնեն և ամբողջ անհաշտությամբ կռվեն «ինքնահոսի» վրա հույս դնելու աջ օպորտունիզմի, կոլխոզային աշխատանքի նվաճումների մասսայականացման բացա-

կայության, բացառական աշխատանքի բացակայության դեմ» («Իզվեստիա» 27 հունվարի 1931 թվի):

Դրա հետ միասին խորհուրդները չպետք է թույլ տան անցյալ տարվա տրոցկիստական կարգի «ձախոկան» սխալները:

Գյուղխորհուրդը գյուղում իշխանության բարձրագույն մարմինն է: Այդ պատճառով առանց զբաղվելու մանր խնամակալությամբ, կոլխոզի ներքին գործերի միջամտությամբ, գյուղխորհուրդը պետք է իր ամբողջ աշխատանքով իսկական ղեկավարություն ցույց տա կոլխոզային շինարարությանը: Մենք այստեղ կանգ չենք առնում խորհուրդների հարաճուն խնդիրների վրա միանձնյա սեկտորի մասում:

Զեկուցումներ դնելը գյուղխորհուրդների պլենումներում գարնանացանի պատրաստության մասին, կոլխոզներում աշխատանքի կազմակերպման մասին, եկամուտների բաշխման մասին, — այս բոլորը կազմում է խորհուրդների աշխատանքի անխզելի մասը և կարող է խոշորագույն դեր խաղալ նոր ինիցիատիվ խմբակների ու հավաքագրման բրիգադների կազմակերպման գործում: Բայց դրա համար պահանջվում է ևս մի հատկություն. կարողանալ իր աշխատանքում հենվել դասակարգային պայքարում կոփված կոլխոզնիկների կադրերի, չքավորության ու բատրակության վրա և վճռականապես ներգրավել խորհուրդների աշխատանքին գյուղի ակտիվին: Առաջիկա գարնանացանի կամպանիան, որը բացառիկ նշանակություն ունի կոլեկտիվացման պլանի կատարման համար և համատարած կոլեկտիվացումը ռայոններում զուգակցվում է հիմնականում կոլխոզային շինարարության վիճակի ավարտման հետ, ակնհայտ ցուցանիշը կհանդիսանա խորհուրդների, որպես կուսակցության գլխավոր գծի հաղորդիչների, հարաճուն դերի, համաձայն ռեկոնստրուկտիվ շրջանի պահանջների՝ նրանց աշխատանքի հիմնական վերակառուցման: Գյուղխորհուրդները աշխատանքի սոցիալիստական նոր ձևերի հիման վրա, սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության

հիման վրա, հանդիպական պլանների, հասարակական բուքսիրի կազմակերպումով կկատարեն կուսակցության կողմից նրանց առաջադրած խնդիրները, խնդիրներ, որ ունեն համաշխարհային պատմական նշանակություն:

ԱՄՐԱՑՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Չքավորության ու բատրակության հետ տարվող աշխատանքը պատշաճ բարձրության վրա դնելն անհրաժեշտ նախադրյալներից մեկն է դառնում գյուղատնտեսության վերակառուցման նկատմամբ կուսակցության տարած աշխատանքի հաջողության համար: «Գյուղում տարած իր ամբողջ գործնական աշխատանքում կիրառելով կոլխոզնիկի վրա հենվելու լոզունգը, կուսակցությունը պետք է վճռականորեն կռվի այն բոլոր տենդենցների դեմ, վորոնք անտես են առնում, կամ թերագնահատում են չքավոր-միջակային միանձնյա տնտեսությունները, ոգնություն ցույց տա այդ տնտեսությանը, ամրացնելով չքավորության ինքնուրույն կազմակերպությունը խորհուրդներում, կոոպերացիայում և կոլխոզային շարժման ստորին ողակներում, լայն աշխատանք տանելով միանձնյակների մեջ և ներգրավելով նրանց կոլխոզների մեջ» (Համկոմկուսի (բ) 16-րդ համագումարի վորոշումներից): Մինչդեռ տակավին բավականաչափ ուշադրություն չի նվիրվում չքավորության հետ տարվող աշխատանքին: Ստորին կազմակերպությունները թերագնահատում են այդ աշխատանքի նշանակությունը, իսկ առանձին դեպքերում չեն հասկանում, վոր միջակի հետ դաշինքի ամրացման կարեվորագույն պայմանը, հետեվապես և կուլակի դեմ մղած հաջող պայքարի կարեվորագույն պայմանը հանդիսանում է հենց չքավորության ու բատրակության հետ տարվող աշխատանքի ամրացումն ու ակտիվացումն է: Ահա թե ինչ ցույց տվեց չքավորության հետ տարվող աշխատանքի մասսայական ստուգումը, վոր կատարել էր Վոլոսկի հրջանային կոմիտեն 1930 թվի գարնանը: Մինչև ինքնաստուգումը յեղել է 6 ռայոնում միայն

չքավորության 63 խմբակ: Ինքնաստուգման ժամանակ կազմակերպվել է նորից 186 խմբակ: Այդ պարզ ցույց է տալիս, վոր չքավորության խմբակների աշխատանքը վատ է մինչև իսկ քանակական տեսակետից: Մ. Ոզերսկի գյուղխորհրդին կից չքավորության խմբակում յեղել է 6 միջակ և 1 ծառայող... Յեթե դրան ավելացնենք նաև այն, վոր չքավորության խմբակների աշխատանքը հաճախ յերեսով դարձված չէ դեպի կարեվորագույն տնտեսական-քաղաքական կամպանիաների կատարումը, ապա միանգամայն պարզ կլինի, վոր չքավորության հետ տարվող աշխատանքը հանդիսանում է գյուղում տարվող աշխատանքի ամենից թույլ ողակներից մեկը:

Ահա թեինչու աշխատանքը չքավորության ու բատրակության հետ կոլխոզից դուրս, ինչպես նաև այդ աշխատանքի ամրացումը կոլխոզի ներսում կազմում է այն հիմնական խնդիրներից մեկը, վոր կապված են գյուղի սոցիալիստական վերակերտման պլանի իրականացման հետ:

Մենք պետք է ամենաանխնա պայքար մղենք աջ ու «ձախ» ոպորտունիզմի արտահայտությունների դեմ: Մեզանում սակավ չեն այնպիսի օրինակները, յերբ աշխատողների մի մասը կոլխոզնիկի վրա հենվելու լոզունգը հասկացել է վորպես հրաժարում չքավորի վրա հենվելուց: Առանձին աշխատողների աջ ոպորտունիստական այդ պրակտիկայի հետ մենք ունենք նաև այլ կարգի յերեվույթներ. չքավորության հետ տարվող աշխատանքի անվան տակ միջակի՝ «ձախ» ոպորտունիստական անտեսում: Այստեղ ամենայն ակնհայտությամբ յերեվում է ոպորտունիստական չըմբռնումն այն բանի, վոր չքավորության հետ աշխատանքի ամրացումը հանդիսանում է կարեվորագույն պայման միջակի հետ դաշինքն ամրացնելու համար, հետեվապես՝ և կարեվորագույն պայման կուլակության դեմ հաջող պայքարի համար: Հենց այդ է չքավորության հետ տարվող աշխատանքի ծանրության կենտրոնը կոլխոզից դուրս, դրանից է կախված կոլեկ-

տիվացման, գյուղի սոցիալիստական վերակառուցման և կուլակության վերացման պլանների ամենից հաջող կատարման արդյունքը: Այդ պատճառով կոլխոզից դուրս գտնվող չքավորությանը մասնակից դարձնելը կոլխոզի պլանների ու ձեռնարկումների մշակմանը, միասնական ճակատ ստեղծելը միանձնյա չքավորների ու կոլխոզնիկների հետ բոլոր տնտեսական-քաղաքական կամպանիաներն անցկացնելիս —կազմում է կոլխոզնե-րից դուրս չքավորության հետ տարվող աշխատանքի նկատմամբ գործնական միջոցառումների հիմքը:

Զգալիորեն պետք է բարելավվի և ուժեղացվի կոլեկտիվ տնտեսությունների նախնական ձևերում չքավորության խմբակների հետ տարվող աշխատանքը, «քանի վոր միայն հենվելով չքավորության վրա կարելի յե ապահովել ամենապարզ միավորությունների՝ կոլեկտիվացման բարձրագույն աստիճանին անցնելը (Համկոմկուսի (բ) 16-րդ համագումարի վորոշումներից):

Հսկայական խնդիրներ կան չքավորության հետ տարվող աշխատանքի բնագավառում նաև կոլխոզներում: Այստեղ ևս մենք տակավին չենք գործել վճռական հառաջադիմություն: Աշխատանքի ամբողջ սիստեմը պետք է կառուցված լինի այնպես, վորպեսզի վոչ միայն պաշտպանվեն չքավորության անմիջական շահերը, այլև աջակցություն ցույց տրվի բանվոր դասակարգի ու չքավորության դաշինքին միջակի հետ. Այդ պատճառով չքավորության դիրքերի ամրացումը կոլխոզում, չքավորության կողմից տնտեսական հեղինակության նվաճելը միջակների մոտ կազմում է կոլխոզի վարչության, բջիջի, խորհրդի խնդիրը: Իր ամբողջ վարքով չքավորությունը պետք է ջախջախի կուլակների տարածած զրպարտությունները այն մասին, թե չքավորները ծույլեր են: Կոլխոզների առաջ ծառացող վիթխարի խնդիրները աշխատանքի կազմակերպման և արտադրողականության բարձրացման բնագավառում պետք է լայն աջակցություն գտնեն չքավոր ու բատրակ կոլխոզնիկների կողմից: Չքավորությունը

պետք է լինի սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության ծավալման առաջին շարքերում, նա պետք է լինի կոլխոզի ներսում այդ բոլոր միջոցառումների կիրարկման առաջամարտիկը: Մենք գտնվում ենք գարնանացանի կամպանիայի նախորեյին: Նրա կատարման հաջողությունը պահանջում է մոբիլիզացիայի յենթարկել թե քաղաքի և թե՝ գյուղի բոլոր ուժերը: Այդ պատճառով բոլոր ուղղություններով անհրաժեշտ է բարելավել և ակտիվացնել աշխատանքը չքավորության հետ, ամեն կերպ բարձրացնելով նրա, վորպես պրոլետարական ազդեցության հաղորդողի դերը:

1931 թվի պլանի կատարումով մենք ավարտում ենք ԽՍՀՄ սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը: «Կոլեկտիվացման, մեքենատրակտորային կայանների զարգացման, սովխոզների կազմակերպման հիման վրա, կուսակցությունը կարող է սկսել իրագործել՝ աշխարհի կապիտալիստական յերկրներին «հասնել ու անցնել» լոզունգը վոչ միայն արդյունաբերության տեսակետից, վորտեղ խոշոր տնտեսության առավելությունները արդեն վաղուց հայտաբերված են մեծ ուժով, այլև գյուղատնտեսության բնագավառում, վորի զարգացման տեմպերը մինչև այժմ բնորոշվում եյին չափազանց սակավ արտադրական մանր ու մանրագույն տնտեսության ճնշող գերակշռումով, իսկ այժմ կբնորոշվի կոլխոզների ու սովխոզների արագ զարգացումով, վորոնք (կոլխոզներն ու սովխոզները) ներկայացնում են իրենցից մի նոր, մարդկային պատմության մեջ չտեսնված տիպ և առաջին անգամ դրված է ԽՍՀՄ տեխնիկական շինարարության փորձով» (Համկոմկուսի (բ) 16-րդ համագումարի վորոշումներից):

Հակառակ աջ ու «ձախ» ոպորտունիստների, յերկերեսանիների և հաշտվողականների մարգարեությունների, հացահատիկային շրջաններում հիմնականում համատարած կոլեկտիվացման ու դրա հիման վրա կուլակության, վորպես դասակարգի վերացման ավարտումով մենք գյուղատնտեսության մեջ ևս կապահովենք «ով-ում» հարցի լուծումը հօգուտ սոցիալիզմի:

II. ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ինչ բան է կոլխոզը: 2. Ով իրավունք ունի կոլխոզ կազմել ու լինել նրա անդամը: 3. Ինչպես պետք է կազմակերպել կոլխոզ: 4. Կոլխոզի ձեվակերպման ու նրա կանոնագրքի ցուցակագրման կարգը: 5. Պայքար թեքումների դեմ:

1. ԻՆՉ ԲԱՆ Է ԿՈԼԽՈԶԸ

Կոլխոզներ են կոչվում այնպիսի արտադրական գյուղատնտեսական միավորություններ, վորտեղ արտադրության հիմնական միջոցները լիովին կամ մասամբ համաձայնեցված են և պատկանում են վոչ թե առանձին տնտեսություններին, այլ ամբողջ կոլեկտիվին, և բոլոր հիմնական գյուղատնտեսական աշխատանքները կատարվում են կոլեկտիվ աշխատանքով:

Տարբերում են կոլխոզների յերեք ձեվ. հողի համայնացված մշակման ընկերություններ, գյուղատնտեսական արտելներ ու գյուղատնտեսական կոմունաներ:

Կոլխոզային շինարարության տվյալ շրջանում կոլխոզի հիմնական ձեվը, վորի լայն զարգացմանը կուսակցությունն ու Խորհրդային կառավարությունը հատուկ ուշադրություն են նվիրում, հանդիսանում է գյուղատնտեսական արտելը: «Արտելն ավելի հեշտ գործ է և ավելի մատչելի յե լայն գյուղացիական մասսաների գիտակցությանը: Այդ պատճառով արտելը հանդիսանում է տվյալ մոմենտում կոլխոզային շարժման ամենից տարածված ձեվը» (Ստալին):

Կանոնադրքով գյուղատնտեսական արտելի մեջ կարող են համայնացված լինել արտադրության հետեվյալ միջոցները, լծկան անասունները (ձիերը, յեզները), գյուղատնտեսական ինվենտարը, ապրանքամթերային անասունը, սերմացվի պաշարները, կերի միջոցներն այն չափով, ինչ անհրաժեշտ են համայնացված անասունը պահելու համար, տնտեսական այն շեն-

քերը, վոր անհրաժեշտ են արտելային տնտեսության համար և գյուղատնտեսական արտադրանքների վերամշակման բոլոր ձեռնարկությունները: Շնորհիվ նրա, վոր գյուղատնտեսության արտելի մեջ միացման ժամանակ գյուղացիները տակավին պահպանում են մի վորոշ, թեև փոքր չափով, իրենց միանձնյա տնտեսության մի մասը, այդ տնտեսությունների անձնական օգտագործման համար հարկավոր է թողնել մանր տընտեսական այն ինվենտարը, վոր հարկավոր է մերձագարակային աշխատանքների համար: Անդամների անձնական կարիքների սպասարկման համար (աշխատանքը մերձագարակային հողերում, փոխադրություններ և այլն) արտելի վարչությունը պետք է առանձնացնի համայնացրած անասուններից անհրաժեշտ քանակով ձիեր: Բացի դրանից, գյուղատնտեսական արտելներում մի կով ունեցողներից չեն համայնացվում կթան կովերը, իսկ շատ կովեր ունեցողների մոտ թողնում են մի-մի կով անձնական օգտագործման համար: Այն ռայոններում, վորտեղ զարգացած է արդյունաբերական մանր կենդանաբուծությունը, համայնացվում են նաև մանր անասունները (վոչխարները, խոզերը), սակայն թողնելով արտելի անդամների մոտ մանր անասունների մի վորոշ քանակ, վորպիսի քանակը վորոշում է ինքն արտելը: Այն ռայոններում, վորտեղ մանր անասնաբուծությունը զարգացած չէ և ապրանքային բնույթ չունի, մանր անասուններն ամենեվին չեն համայնացվում արտելներում:

Հողի համայնական մշակման ընկերությունները հանդիսանում են գյուղատնտեսական արտելի անցողիկ ձեվ, և կազմակերպվում են գլխավորապես, այսպես կոչված, սպառողական շրջանում և ազգային ռայոններում:

Հողի համայնական մշակման ընկերություններում արտադրության միջոցները համայնացվում են, կամ ավելի ճիշտ ընդհանուրի կողմից օգտագործվում են միայն դաշտային աշխատանքների ժամանակ, ընդ վորում յեկամուտների բաշխման միջոցին հաշվի յեն

առնվում ընկերության անդամի այն գույքի չափը, վոր մասնակցել է համայնացրած աշխատանքներում: Հողի համայնական մշակման ընկերության մեջ հիմնականն այն է, վոր միացվում է ընկերության անդամների աշխատանքը գյուղատնտեսական կարևորագույն աշխատանքների ժամանակ (ցանք, քաղ) և ի հաշիվ ընկերության յեկամուտների ձեռք են բերվում ընդհանուր տիրապետման և օգտագործման համար բարդ մեքենաներ և արտադրության այլ միջոցներ:

Գյուղատնտեսական կոմունաները հանդիսանում են կոլխոզային շարժման բարձրագույն ձևը: Գյուղատնտեսական կոմունայում լրիվին համայնացվում են առանց բացառության բոլոր արտադրության միջոցները, լծկան անասունը, գյուղատնտեսական ինվենտարը, սերմացվի պաշարները, մթերային անասունը (խոշոր ու մանր), կերի միջոցները, տնտեսական շենքերը և վերամշակման ձեռնարկությունները: Կոմունաները ստեղծում են կոմունայի անդամների կարիքների սպասարկման հիմնարկներ ու ձեռնարկություններ.— Հասարակական ճաշարաններ, հասարակական բնակելի շենքեր, մանկական հիմնարկներ, լվացքատներ և այլն:

Գյուղատնտեսական կոմունան ունի խոշոր առավելություններ՝ համեմատած կոլխոզների այլ ձևերի հետ: Միևնույն ժամանակ «կոմունա կազմելն ու վարելը բարդ ու դժվարին գործ է: Խոշոր ու կայուն կոմունաները կարող են գոյություն ունենալ ու զարգանալ միայն փորձառու կադրերի ու ղեկավարների օգնությամբ» (Ստալին): Կուսակցության 16-րդ համագումարը մատնանշեց, վոր «կոլխոզային շարժումը կարող է բարձրանալ ու հասնել բարձր ձևին՝ կոմունային տեխնիկական բազայի բարձրացման, կոլխոզային կադրերի աճման, կոլտնտեսականների կուլտուրական մակարդակի աճման համապատասխան, այն պարտադիր պայմանով, յերբ գյուղացիներն իրենք ընդունում են համապատասխան փոփոխությունները կանոնագրքում և իրագործում են այն վարից»: Վերջին ամիսների պրակտիկան լրիվին հաստատեց 16-րդ համագումարի նշած այդ գծի ճշտությունը:

2. ՈՎ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԿՈԼԽՈԶ ԿԱԶՄԵԼ ՈՒ ԼԻՆԵԼ ՆՐԱ ԱՆԴԱՄԸ

Գյուղատնտեսական կոլեկտիվներ կազմելու և նրանց անդամը լինելու իրավունքը վերապահված է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության քաղաքացի բոլոր աշխատավորներին, վորոնք հասել են 16 տարեկան հասակին, զբաղվում են կամ սկսում են զբաղվել գյուղատնտեսությամբ: Հողի համայնական մշակման ընկերություն— գյուղատնտեսական կոլեկտիվ, գյուղատնտեսական արտել կամ կոմունա կազմակերպելու համար պահանջվում է առնվազն 15 անդամ, վորոնք իրար հետ կապված չեն ազգակցությամբ: Յեթե կոլխոզ կազմակերպել ցանկացող անձանց թվում կան մի քանի ազգականներ, նրանք բոլորն էլ կոլխոզ կազմակերպելիս կհամարվեն, վորպես մի անձ:

Ըստ օրենքի, այն ազգականներին, վորոնք համարվում են մի անձ, պատկանում են այն անձինք, վորոնք իրար ամուսիններ են, համարվում են ծնողներ ու զավակներ, քույրեր ու յեղբայրներ, պապեր ու թոռներ: Ավելի հեռավոր ազգակցությունը հաշվի չի առնվում:

Չեն կարող կոլխոզ կազմակերպել և ընդունվել նրա կազմի մեջ, վորպես անդամ՝ կուլակները, կուլակային ընտանիքի անդամները, այն բոլոր անձինք, վորոնք ապրում են անաշխատ յեկամուտով, մասնավոր առևտրականները, առևտրական միջնորդները, վարդապետներն ու բոլոր կրոնների կրոնական պաշտամունքների հոգևոր ծառայողները, նախկին վոստիկանության ծառայողներն ու գործակալները, դատարանով ընտրական ձայնի իրավունքից զրկվածները: Այդ բոլոր տարրերը վոչ մի դեպքում չեն կարող թույլատրվել կոլխոզների կազմակերպմանը և չեն կարող ընդունվել

նրանց կազմի մեջ, վորպես անդամ: Յեթե նրանք առաջուց կոլխոզ են մտել (այն ժամանակ, յերբ կուլակներն ու ձայնազուրկները չեյին թույլատրվում միայն վորպես կոլխոզի հիմնադիրներ, բայց կարող եյին անդամ լինել), ապա այժմ, յերբ արդեն վորոշում ե ընդունված կուլակներին ու ձայնազուրկներին կոլխոզների մեջ չընդունելու մասին, նրանք բոլորն էլ պետք է առանց առարկության հեռացվեն կոլխոզի անդամների կազմից:

3. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿՈԼԽՈԶ

Ինչպիսին ե կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպման կարգը:

Կուսակցական կամ կոմյերիտական բջիջը, կամ ակտիվը, վորն իրեն խնդիր ե առաջադրել տնտեսության կոլեկտիվ ձեվ կազմակերպելու, պետք ե ամենից առաջ կազմի ակտիվ խմբակ գյուղի ամենից գիտակից բատրակներից, չքավորներից ու միջակներից, վորոնք վճռել են կոլխոզ կազմակերպելու անհրաժեշտության հարցը: Յուրաքանչյուր գյուղում ներկայումս նման խմբակ կա: Այդ խմբակն ե, վոր պետք ե իր վրա վերցնի կոլխոզ կազմակերպելու նախաձեռնությունը և մինչեվ անգամ ամբողջ գյուղը տնտեսության կոլխոզային ձեվերին անցկացնելու նախաձեռնությունը:

Առաջադրելով իրեն գյուղատնտեսական արտել ստեղծելու խնդիրը, նախաձեռնող խմբակը պետք ե ծավալի բացատրական ու կազմակերպչական աշխատանք, հենվելով ամենից առաջ բատրակության ու չքավորության վրա: Բաշխելով իր անդամներին նախաձեռնող խմբակը պետք ե անցկացնի գյուղի ամենից հեղինակավոր (ազդեցիկ) բատրակների, չքավորների ու միջակների անհատական մշակումը: Նրանից հետո, յերբ այդ աշխատանքը կատարված ե, խմբակը պետք ե հրավիրի գյուղի չքավորության ինքնուրույն ժողով և ապա նաև՝ ընդհանուր ժողով:

Գյուղի քաղաքացիների ընդհանուր ժողովում հար-

կավոր ե դնել լավ աշխատող արտելներից մեկի զեկուցումը: Արտելի զեկուցումն այն մասին, թե ինչպես ե նա կազմակերպվել, ինչպես ե տանում իր աշխատանքը, ինչպիսի նվաճումներ ունի նա, լավագույն ապացույցն կլինի տնտեսության կոլեկտիվ ձեվերի համար:

Նրանից հետո, յերբ կոլխոզ մտնելու համար բավական թվով ցանկացողներ են հավաքվել, և յերբ գյուղի քաղաքացիների ընդհանուր ժողովը վորոշում ե ընդունել ամբողջ գյուղով կոլխոզ մտնելու մասին, նախաձեռնող խմբակը պետք ե աշխատանք ծավալի մանրամասնորեն պարզաբանելու համար համայնացված գույքի, կոլխոզի միջոցների գոյացման հարցերը, կոլխոզի յեկամուտների բաշխման և անդամների աշխատանքի վճարի կարգերը: Կոլխոզ մտնելու մասին յուրաքանչյուր ցանկություն հայտնող պետք ե գիտենա, թե ինչ բանի յե գնում ինքը, ինչ պետք ե համայնացնի, ինչպիսի պարտականություններ նա պետք ե ստանձնի և ինչ իրավունքներ նա պետք ե ունենա և պետք ե անհատական դիմում տա կոլխոզ մտնելու մասին:

Բացատրական աշխատանք տանելուց և կոլխոզ մտնելու մասին ցանկություն հայտնած քաղաքացիների ընդհանուր քանակը պարզելուց հետո, նախաձեռնող խմբակը, հավաքելով անդամների անհրաժեշտ քանակը (առնվազն 15 անդամ, վորոնք միմյանց հետ կապված չեն ազգակցությամբ և իրավունք ունեն կոլխոզի անդամ լինելու), աշխատանք ե տանում ձեվակերպելու համար կանոնադրքը և այն ցուցակագրելու համար: Միայն կանոնագրքի ցուցակագրումից հետո կոլխոզը կարող է բացված համարել և կարող ե անցնել աշխատանքի:

4. ԿՈԼԽՈԶԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Կանոնադրքի ձեվակերպման համար նախաձեռնող խմբակը հրավիրում ե հիմնադիրների առաջին ժողովը, թվով 15 մարդ, վորոնք իրավունք ունեն կոլխո-

վի անդամ լինելու: Այդ ժողովում պետք է ընդունվի կոլխոզի կանոնադիրքը:

Նրանից հետո, յերբ կանոնադիրքն ընդունված է, այդ կանոնադիրքը ստորագրում են գյուղատնտեսական արտելի բոլոր 15 հիմնադիրները:

Հիմնադիրների ժողովը կազմում է ժողովի արձանագրություն, վորտեղ գրի յեն առնվում գյուղատնտեսական արտելի գոյացման և կանոնադրության ընդունելու մասին: Նույն այդ ժողովում ջոկվում է մի մարդ, վորին հանձնարարվում է անցկացնել կանոնադրության ցուցակագրումը: Արձանագրությունը ստորագրում են բոլոր հիմնադիրները: Նրանից հետո, յերբ արդեն կանոնադրությունն ընդունված ու ստորագրված է, հարկավոր է այն ցուցակագրել:

Այն կոլխոզների կանոնդրությունները, վորոնք միացնում են վարչական ռայոնից վոչ ավելի տերիտորիայի բնակչություն, ցուցակագրվում են ռայոնական գործկոմում:

Կոլխոզի հիմնադիրները պետք է ռայոնական գործկոմին դիմում տան կանոնադրության ցուցակագրման մասին, վոր ստորագրված է հիմնադիրների կողմից, ըստ վորում ստորագրությունները պետք է վավերացված լինեն գյուղխորհրդի կողմից: Դիմումի մեջ պետք է մատնանշված լինի այն անձը, վորին լիազորություններ են տրված կանոնադրության ցուցակագրման գործը վարելու համար: Ցուցակագրման գործը վարելու համար, վորպես լիազոր կարող է նշանակվել նաև նա, ով կոլխոզի անդամ չէ.

Կանոնադրության ցուցակագրման մասին դիմումին պետք է կցված լինեն. 1) հիմնադիրների կողմից ստորագրված 3 օրինակ կանոնադրություն. 2) հիմնադիրների ցուցակը, մատնանշելով նրանց անուն, հայրանուն, ազգանունները, բնակավայրն ու զբաղմունքի տեսակը, վորպեսի ցուցակը պետք է ստորագրված լինի բոլոր հիմնադիրների կողմից, 3) գյուղխորհրդի կողմից վավերացրած տեղեկանք յուրաքանչյուր հիմնադրի նկատմամբ այն մասին, վոր նա ունի խորհուրդների ընտրության իրավունք, 4) գյուղխորհրդի տեղեկանքը հիմնադիրների ազգակցության մասին:

Ռայոնական գործկոմը պարտավոր է վոչ ավելի քան մի ամիս ժամանակամիջոցում քննության առնել դիմումը և պատասխան տալ այդ առթիվ: Յեթե մի ամիս ժամանակամիջոցում պատասխան չստացվեց, կանոնադիրքը համարվում է ցուցակագրված:

Ցուցակագրող հիմնարկը մերժել ցուցակագրման մեջ կարող է միայն այն դեպքում, յերբ կոլխոզի կանոնադրությունը չի համապատասխանում օրենքի այս կամ այն հոդվածներին, ըստ վորում ցուցակագրող հիմնարկությունը պարտավոր է ճիշտ մատնանշել օրենքի այն հոդվածները, վորոնց հիման վրա կանոնադրությունը չի կարող ցուցակագրվել: Ցուցակագրման մերժման դեպքում կոլխոզի հիմնադիրներն իրավունք ունեն վոչ ուշ քան մի ամիս ժամանակամիջոցում բողոքարկել ցուցակագրող հիմնարկի վորոշումը: Այդ դեպքերում բողոքը տրվում է այն հիմնարկությանը, վորը մերժել է ցուցակագրել, և նա պարտավոր է 3 օրվա ընթացքում բողոքն իր բացատրություններով ներկայացնել վերադաս մարմնին: Բողոքից հետո ցուցակագրման մերժման վորոշումը վերջնական է և յենթակա չէ բողոքարկման:

Գյուղատնտեսական կոլեկտիվը ցուցակագրումից հետո համարվում է բացված և կարող է սկսել աշխատանքը, վորպես իրավական անձ:

Հիմնարկները ձևակերպում են բոլոր մնացած այն անդամների ընդունելությունը, վորոնք ցանկանում են մտնել կոլխոզի մեջ: Տնտեսությունը կոլեկտիվ ձևով վարելու անցնող գյուղի բոլոր քաղաքացիներից, համաձայն արտելի կանոնադրության, հավաքվում են գրավոր դիմումներ կոլխոզ մտնելու ցանկության մասին: Կոլխոզի հիմնադիրները հավաքվում են ընդհանուր ժողովի և այդ ժողովում անց են կացնում գյուղի մնացած բոլոր քաղաքացիների ընդունելությունը, վորոնք դիմում են տվել կոլխոզ մտնելու մասին:

Անդամության ձևակերպման միջոցին առանձնա-

պես կարևոր է հետևել, վոր կոլխոզի կազմի մեջ չմտնեն կուլակները:

Կոլխոզ մտնելու ցանկության մասին յուրաքանչյուր դիմում տվողից անհրաժեշտ է ստորագրություն տանել այն մասին, վոր նրան հայտնի յե արտելի կանոնադրությունը, վորին նա պարտավորվում է յենթարկվել, վոր նա կոլխոզին է հանձնում արտադրության իր բոլոր արտադրության այն միջոցները, վոր կանոնադրքով յենթակա յեն համայնացման (նրանց մի մասը, վորպես փայ, իսկ մյուսը, վորպես անբաժանելի ֆոնդ):

Արտադրության այն բոլոր միջոցների համայնացումը, վոր ըստ կանոնադրքի յենթակա յեն համայնացման, հանդիսանում են կոլխոզի անդամ լինելու ամենակարեվորագույն միջոցներից մեկը: Այդ պայմանն է, վոր ամենից առաջ անհրաժեշտ է պահպանել կոլխոզների կազմակերպման ժամանակ:

Կոլխոզի անդամներ հանդիսանում են կոլխոզ կազմակերպող տնտեսությունների բոլոր հասակավոր անդամները, վորոնք հասել են 16 տարեկան հասակին: Կոլխոզի անդամները պարտավոր են կոլեկտիվի տնօրինությանը հանձնել այն ամենը, ինչ յենթակա յե համայնացման կոլխոզի տվյալ ձևով:

Նրանից հետո, յերբ անդամների կազմը ձևավորվել է, նշանակվում է անդամների ընդհանուր ժողովը՝ ընտրելու համար կոլխոզի վարչություն, խորհուրդ և վերստուգիչ հանձնաժողով, ինչպես նաև ընդունելու համար առաջիկա ժամանակի համար աշխատանքների պլանի հիմնական տարրերը:

5. ՊԱՅՔԱՐԸ ԹԵՔՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

1930 թվի գարնան կամպանիայում կոլեկտիվացման աշխատանքներ կատարելիս առանձին աշխատողներ և մինչև իսկ մի շարք ստորին կազմակերպություններ գործեցին մի շարք ամենակոպիտ սխալներ: Այդ սխալներից հիմնականն ու ամենակարեվորն այն եր, վոր խախտված եր կոլխոզների կազմակերպման ժամանակ

կամավորականության լենինյան սկզբունքը: Առանձին աշխատողներ, իսկ մի շարք դեպքերում և ամբողջ կազմակերպություններ, ընկնելով կոլեկտիվացման բարձր տոկոսների յետևից, փոխանակ իրենց ռայոնի բատրակների, չքավորների ու միջակների միջև լուրջ աշխատանք տանելու՝ պարզաբանելու համար տնտեսության կոլեկտիվ ձևով վարելու առավելությունն ընդդեմ միանձնյա տնտեսության, փոխանակ լավ աշխատող կոլխոզների որինակով պարզ ցույց տալու միանձնյակին կոլխոզի առավելությունները, գործադրում եյին սեղմման միջոցներ և վարչական ձևով, սպառնալիքով միջակին կոլխոզ եյին քշում, հաշվի չառնելով առանձին ռայոնների ազգային յուրահատկությունները, ստիպողական կարգով համայնացնում եյին բնակելի շենքերը, ընտանի թռչունը և այլն, չհասկանալով, վոր կոլխոզային շինարարության հիմնական ձևը տվյալ էտապում հանդիսանում է արտելը, վորտեղ համայնացվում են միայն արտադրության հիմնական միջոցները: Սպառնալիքով ու վարչական ճնշումով ստեղծված կոլխոզները նույնչափ արագ քայքայվում եյին, վորչափ արագ նրանք կազմակերպվել եյին: Այն առանձին ռայոններում, վորտեղ կոլեկտիվացման բնագավառում թույլ եյին տվել վերոհիշյալ սխալները, և վորտեղ կոլեկտիվացված եր համարվում չքավոր-միջակային տնտեսությունների 100 տոկոսը, այդ տոկոսն իջավ 5-ի և 6-ի նրանից հետո, յերբ հրապարակվեց Կենտկոմի վորոշումը ստիպողական կոլեկտիվացման անհանդուրժելիության մասին:

«Պատասխան ընկ. կոլխոզնիկներին» իր հայտնի նամակում ընկ. Ստալինը գրում է՝ «Լենինիզմը սովորեցնում է, վոր գյուղացիներին հարկավոր է կոլեկտիվ տնտեսության ռելսերի վրա փոխել կամավորության կարգով, համոզելով համայնացրած, կոլեկտիվ տնտեսության առավելությունն ընդդեմ միանձնյա տնտեսության: Լենինիզմը սովորեցնում է, վոր կոլեկտիվ տնտեսությունների առավելությունների մեջ գյուղացիներին համոզել կարելի յե միայն այն դեպքում,

յերբ նրանց ցույց կտրվի ու կապացուցվի գործով, փորձով, վոր կոլխոզն ավելի լավ է, քան թե միանձնյա տնտեսությունը, վոր նա միանձնյա տնտեսությունից ավելի շահավետ է, վոր կոլխոզը գյուղացիությանն ու միջակներին յելք է տալիս կարիքից ու աղքատությունից: Լենինիզմը սովորեցնում է, վոր այդ պայմաններից դուրս կոլխոզները չեն կարող ամուր լինել: Լենինիզմը սովորեցնում է, վոր յուրաքանչյուր փորձ՝ կոլխոզներն ուժով, ստիպողական կարգով ուրիշի վզին փաթաթելու համար կարող է տալ միայն բացասական արդյունքներ, կարող է միայն յետ մղել գյուղացիներին կոլխոզային շարժումից»:

Ընկ. Ստալինի այդ ցուցումները յուրաքանչյուր աշխատող, վոր կոլեկտիվացման աշխատանք է կատարում, պետք է հիշի և գործնականապես իրականացնի իր աշխատանքում: Այդ գործում յուրաքանչյուր վարչականացում և հարկադրություն միայն վնասակար է և բացասական արդյունքներ է տալիս:

Այդ հարցի առթիվ կան Վլադիմիր Իլյիչի միանգամայն պարզ և անմիջական ցուցումները: Ահա թե ինչ է նա ասում.

Խրախուսելով ամեն տեսակի ընկերություններ, ինչպես նաև միջակ գյուղացիների գյուղատնտեսական կոմունաները, Խորհրդային իշխանության ներկայացուցիչները չպետք է այդպիսիների գոյացման ժամանակ թույլ տան վոչ մի ստիպում: Միայն այն միավորություններ են արժեքավոր, վոր անց են կացրել իրենք գյուղացիներն իրենց սեփական նախաձեռնությամբ, և վորոնց ոգտավետությունը ստուգված է գործնականապես: Չափից ավելի շտապողականությունն այդ գործում վնասակար է, քանի վոր կարող է միայն ուժեղացնել միջակ գյուղացիության նախապաշարումը նորմուծումների դեմ: Խորհրդային իշխանության այն ներկայացուցիչները, վորոնք գյուղացիներին կոմունաներին միացնելու նպատակով թույլ կտան իրենց գործադրել վոչ միայն անմիջական, այլև թեկուզ կողմնակի հարկադրում, պետք է յենթարկվեն

ամենախստագույն պատասխանատվության և հեռացվեն գյուղում աշխատելուց» (Լենին. հատ. 16, եջ 159):

Վոչ մի բռնություն, վոչ մի հարկադրանք, այլ միայն համոզում ու խրախուսանք,— այդ ցուցումներով յուրաքանչյուր աշխատող պետք է ղեկավարվի կոլեկտիվացման իր աշխատանքներում:

Հարկադրանքն ու վարչականացումը կոլեկտիվացման ժամանակ հանդիսանում են միայն «ձախ» խոտորումների արտահայտություն, «մի վորոշ, ճիշտ է, անգիտակից փորձ՝ մեզանում վերածնելու տրոցկիզմի տրադիցիաները գործնականում, վերածնել տրոցկիստական վերաբերմունքը դեպի միջակ գյուղացիությունը»: Նման խոտորումների դեմ յուրաքանչյուր կազմակերպիչ, կոլխոզային շարժման յուրաքանչյուր աշխատող պետք է վճռական պայքար մղի:

Բայց ավելի վնասակար ու հետամնաց է հանդիսանում կոլեկտիվացման ժամանակ հույսն ինքնահոսի վրա դնելը, վորը գործնականում գլխավոր վտանգի— աջ թեքման իդեոլոգիայի արտահայտությունն է հանդիսանում: Գյուղի հիմնական մասսաները,— չքավորությունն ու միջակները,— վճռականապես անցել են կոլխոզային շինարարության ճանապարհին: Սակայն այդ չի նշանակում, վոր կարելի յե նստել ձեռքերը ծալած ու սպասել, մինչև ամեն ինչ ինքն իրեն կկոլեկտիվանա: Հույսն ինքնահոսի վրա դնելը, գյուղում տեղի ունեցող պրոցեսների փաստական միջամտությունից հրաժարվելը հրաժարումն է կուլակի դեմ պայքարելուց, կուլակի, վոր կռիվ է մղում կոլխոզի դեմ: Ինքնահոսային տրամադրության դեմ, վորն աջ թեքման արտահայտությունն է գործնականում, անհրաժեշտ է մղել ավելի վճռական պայքար, քան վարչականացման ու հարկադրանքի դեմ: Ակտիվ ագիտացիան կոլխոզների համար, լայն կազմակերպչական ոգնությունը չքավորությանը ու միջակ-կոլխոզնիկներին, գործնականում կուսակցության ու կառավարության այն բոլոր միջցառումների կիրառումը, վոր ուղղված են կոլխոզ-

ների խրախուսմանը,— ահա այն մեթոդները, վոր պետք է գործադրի կոլեկտիվացման վերաբերյալ իր աշխատանքներում կոլխոզային շարժման յուրաքանչյուր աշխատող:

Կոլխոզի կազմակերպիչները պետք է հիշեն, վոր դասակարգային թշնամին,— կուլակությունը,— պետք է ամեն կերպ խանգարի կոլխոզի ստեղծմանը, քանի վոր կոլեկտիվացումը, ապահովելով կուլակային արտադրությունը կոլխոզային ու սովխոզային արտադրությամբ փոխարինելը կորուստ է բերում կուլակների համար, կուլակների, վոր՝ «ամենագազանաբարո, ամենակոպիտ, ամենավայրագ շահագործողներն են» (Լենին): Կոլխոզների դեմ մղած պայքարում կուլակությունը չի խորշում վոչ մի միջոցից. կուլակներն ագիտացիա յեն մղում աժան գներով գույքն ու անասուններր վաճառելու համար, գրգռություններ են տարածում կոլխոզների ու Խորհրդային իշխանության մասին, հրձիգություններ, սպանություններ են կատարում, և վերջապես՝ ձգտում են կոլխոզ մտնել, վորպեսզի նրանց ղեկավարությունն իրենց ձեռքն առնեն: Այդ պատճառով կոլխոզի կազմակերպիչից պահանջվում է ամենալարված դասակարգային աչալրջություն, անդուլ պայքար կուլակային վոտնձգությունների ու ագիտացիայի դեմ: Մասնավորապես՝ կազմակերպիչները պետք է վճռական պայքար մղեն՝ կոլխոզ մտնելուց առաջ առանձին միջակների և մինչև իսկ չքավորների կողմից գույքն աժան վաճառքի դեմ: Այդ բանում կազմակերպիչներին օգնության են գալիս կառավարության դեկրետներն ու վորոշումները:

III. ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՆ

1. Կոլեկտիվացած գյուղացիության միջոցները կոլխոզի միջոցների հիմնական աղբյուրն են: 2. Ինչպես են գոյանում կոլխոզի միջոցները: 3. Անբաժանելի ֆոնդը կոլխոզներում: 4. Կապիտալների ու ֆոնդերի կառուցվածքը կոլխոզներում: 5. Հաշվեվճարի պայմանները հեռացող անդամների հետ:

1. ԿՈԼԵԿՏԻՎԱՑԱԾ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿՈԼԽՈԶԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆ ԵՆ

«Կոլեկտիվ հողագործության անցումը կարող է իրականացվել, ինչպես այդ բանից մատնանշել է Լենինը, միայն այն պայմանով, յերբ կոլխոզներին լայն կազմակերպչական, նյութական ու ֆինանսական օգնություն ցույց կտա խորհրդային պետությունը» («Կոլխոզային շարժման մասին» Համկոմկուսի (բ) 16-րդ համագումարի բանաձևից): Կոլխոզներին այդ օգնությունը Խորհրդային պետությունը սիստեմատիկորեն ցույց է տալիս: Նա կազմակերպում է արտոնյալ սկըզբունքներով կոլխոզներին ամենաբարդ գյուղատնտեսական մեքենաներով ու տրակտորներով հայթայթումը. կոլխոզներին նոր տեխնիկայով վերազինելու նպատակով նա ձեռնամուխ է լինում տրակտորային վիթխարի գործարանների ու խոշոր գյուղատնտեսական մեքենաշինարարական գործարանների շինարարությանը. Նա ֆինանսավորում է կոլխոզները, հատկացնելով հսկայական գումարներ նրանց վարկավորման համար և նրանց մի շարք արտոնություններ տալով գյուղմիահարկի ու վարկերի վերաբերյալ, վորպիսի արտոնությունները կոլխոզներին ավելի շահավետ դրության մեջ են դնում, քան միանձնյա գյուղացիական տնտեսություններին. վերջապես՝ նա կոլխոզներին հսկայական նյութական օգնություն է ցույց տալիս, կոլխոզներում աշխատելու համար մոբիլիզացիայի յենթարկելով յերկրում ունեցած գյուղատնտեսների, զոոտեխնիկների, անասնաբուժների և այլ մասնագետների մեծ մասին:

Կոլխոզներին վիթխարի օգնություն են ցույց տալիս բանվորական կազմակերպություններն ու արհմիությունները: Նրանք ջոկում են բանվոր-աշխատողներ կոլխոզներին օգնելու համար, նրանք աջակցում են կոլխոզների կողմից մեքենաներ ստանալուն, օգնում են կոլխոզներում տնտեսության առանձին ճյուղերի ու կուլտուրական աշխատանքի կազմակերպմանը, հաճախ

նաև նյութական օգնություն են ցույց տալիս կոլխոզներին:

Սակայն Խորհրդային պետության ու բանվորական կազմակերպությունների կողմից կոլեկտիվացող չքավոր—միջակ գյուղացիությանը ցույց տրվող նյութական, ֆինանսական և կազմակերպչական այդ ամբողջ հսկայական օգնությունը արդյունքներ կտա միայն այն դեպքում, յեթե կոլխոզներում կազմակերպվող գյուղացիությունն ինքը մոբիլիզացիայի յենթարկի իր սեփական միջոցները, համայնացնելով այդ կոլխոզում:

Յուրաքանչյուր բատրակ, յուրաքանչյուր չքավոր ու միջակ, վորը կոլխոզ է մտնում, պետք է գիտենա ու հիշի, վոր կոլխոզի հիմնական միջոցները պետք է լինեն կոլեկտիվ տնտեսությանը մասնակցող միջոցները և այն յեկամուտները, վոր ստանում է կոլխոզն իր տնտեսական գործունեյության հետեվանքով: Այն վարկերը, վոր պետությունը տալիս է կոլխոզներին, լրացնում են միայն կոլխոզի սեփական միջոցները: Յեթե կոլխոզները չունենան իրենց սեփական միջոցները, այն ժամանակ նրա համար վորևէ աշխատանք տանելը չափազանց դժվար և մինչև իսկ անհնար կլինի: Իսկ վորտեղի՞ց կարելի յե միջոցներ վերցնել կոլխոզի արտադրության կազմակերպման համար: Այդ միջոցները պետք է վերցնել կոլխոզ կազմակերպող անդամների գույքի համայնացման միջոցով և ի հաշիվ անդամների ազատ դրամական միջոցների: Միայն այդ հիման վրա կարող է ճիշտ զարգանալ կոլեկտիվ տնտեսությունը:

2. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՈՅԱՆՈՒՄ ԿՈԼԽՈԶԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Կոլխոզի միջոցների հիմնական աղբյուրը հանդիսանում են կոլխոզում միացած գյուղացիական տնտեսությունների միջոցները: Դրանք կազմվում են հիմնականում անդամների այն գույքից, վորը համայնացված է համաձայն կանոնագրքի, և անդամների ազատ դրամական միջոցներից: Քննենք ավելի մանրամասնորեն միջոցների գոյացման կարգն այն կոլխոզում, վորը

կազմակերպված է գյուղատնտեսական արտելի կանոնագրքով, վորպես կոլխոզի ամենից տարածված ձևի:

Կոլխոզում համախմբված գյուղացիական բոլոր տնտեսությունները պետք է կոլխոզին հանձնեն իրենց այն ամբողջ գույքը, վորը կանոնագրքի համաձայն յենթակա յե համայնացման: Վարչությունը կազմակերպում է այդ գույքի ընդունելությունը, ջոկելով դրա համար հատուկ ընդունող հանձնաժողով, վորը նախ՝ պարզում է, թե անդամի համայնացրած գույքից վորն է անհրաժեշտ կոլխոզի տնտեսությունը վարելու համար, և ապա՝ նա կատարում է ընդունվող գույքի դրամական գնահատականը:

Ամբողջ ընդունվող գույքի գնահատմանը պետք է մոտենալ չափազանց մեծ խնամքով և զգուշությամբ, վորպեսզի մի կողմից՝ չտուժի ընդունվող անդամը, իսկ մյուս կողմից՝ բարձր գնահատությամբ վնաս չհասցվի ամբողջ կոլխոզին:

Արտադրության այնպիսի միջոցները, ինչպիսին են սերմացուն, լծկան ու մթերային անասունը ընդունվում են գյուղատնտեսական կոոպերացիայի համապատասխան արժեքով, ըստ վորում գնահատման ժամանակ հաշվի յեն առնվում վորակը, անասունի ցեղն ու տարիքը: Իսկ գյուղատնտեսական մեռյալ ինվենտարը հարկավոր է ընդունել, յելնելով կոլխոզում նրա անմիջական օգտագործման հնարավորությունից, հաշվի առնել մաշվածության աստիճանը և մաշվածության համար համապատասխան զեղչ անելով:

Յելնելով այս բոլոր մոմենտների հաշվառումից, ընդունող հանձնաժողովը պետք է կատարի յուրաքանչյուր անդամից ընդունած ամբողջ գույքի ընդհանուր գնահատականը և գրի առնի այն դրամականի վերածած, նշանակելով գույքի յուրաքանչյուր տեսակի արժեքը կոլխոզի հաշվին: Գրանցման համապատասխան ձևերը սահմանված են Կոլխոզկենտրոնի կողմից և ուղարկված են տեղերին:

Բացի կանոնադրության համաձայն համայնացման յենթակա իր ամբողջ գույքի համայնացումից, յուրա—

քանչյուրը, ով մտնում է գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ կազմակերպված կոլխոզի մեջ, մըտցնում է նաև մուտքի վճար: Մուտքի վճարի չափը զանազան ուժի գյուղացիական տնտեսությունների համար լինում է տարբեր: Դրա չափը տատանվում է 5-ից մինչև 25 ռուբլու սահմաններում:

Մուտքի վճարն անհրաժեշտ է անդամներից ընդունել միայն կանխիկ դրամով:

Մենք պետք է առանձին քննենք ծառայողներից ու բանվորներից գանձվող մուտքի վճարների հարցը, վորոնց յեկամտի հիմնական աղբյուրն աշխատավարձն է: ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահության կողմից հաստատված գյուղատնտեսական արտելի կանոնադրության մեջ այդ հարցի առթիվ ասված է հետևյալը. «Այն դեպքում, յերբ արտել մտնողի յեկամտի հիմնական աղբյուրն աշխատավարձն է (գյուղատնտեսներ, ուսուցիչներ, հողաշինարարներ, արտելի ռայոնում գտնվող հիմնարկությունների ու կազմակերպությունների ծառայողներ և այլն), մուտքի վճարի չափն ամեն անգամ սահմանում է վարչությունը, բայց այդ չափը չի կարող ավելի լինել, քան մի տարվա աշխատավարձի 10 տոկոսը»:

Այն անձերի համար, վորոնց յեկամտի հիմնական աղբյուրը հանդիսանում է աշխատավարձը, մուտքի վճարի այդպիսի համեմատաբար բարձր չափ է սահմանվում այն պատճառով, վոր նրանք կոլխոզում վոչ մի գույք չեն համայնացնում, վորովհետև նրանք այդպիսի գույք չունեն: Այդ պատճառով նրանց մուտքի վճարը փոխարինում է և՛ փայը, և՛ համայնացված գույքից անբաժանելի կապիտալի մեջ հատկացումը:

Մուտքի վճարը բոլոր անդամները պետք է մտցնեն ամենակարճ ժամանակամիջոցում: Միայն ծայրահեղ դեպքերում, հաշվի առնելով առանձին անդամների սոցիալական պատկանելությունը և նյութական դրությունը, կոլխոզի վարչությունը կարող է հետաձգել վճարելն ըստ ռայոնի կոլխոզմիության ժամկետների:

Մուտքի վճարի հաշվին գանձած գումարները

հաշվվում են անբաժանելի ֆոնդի մեջ և վոչ մի պայմանով անդամներին չեն վերադարձվում:

Անդամի համայնացրած ամբողջ գույքը համաձայն կանոնադրության հանձնվում է կոլխոզին գնահատությամբ և գրանցվում է դրամական ձևով: Այն գումարի մի մասը, վորով գնահատված է անդամի համայնացրած գույքը, գրանցվում է անդամի անձնական հաշվի մեջ, վորպես փայ, իսկ մյուս մասը գրվում է արտելի անբաժանելի ֆոնդի մեջ: Համաձայն գյուղատնտեսական արտելի կանոնադրության, արտելի անբաժանելի ֆոնդի մեջ գրվում է արտելի անդամների համայնացրած գույքի արժեքի մի քառորդից մինչև կեսը, ըստ վորում անբաժանելի ֆոնդի գրանցման ավելի բարձր բաժինը գործադրվում է արտել մտնող ավելի հուժկու տնտեսությունների նկատմամբ:

Գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ կազմակերպված կոլխոզում չի կարող լինել բոլորի համար հավասարաչափ փայավճար: Այդ փայավճարները տարբեր են գույքային տարբեր խմբակների համար, քանի վոր այդ վճարների չափը կախված է ըստ կանոնադրության համայնացրած գույքի արժեքի մեծությունից: Վորքան ավելի հուժկու տնտեսություն է մտնում կոլխոզ, այնքան ավելի շատ գույք ունի նա, համայնացնելու յենթակա, այնքան ավելի մեծ է նրա փայավճարի չափը և այնքան ավելի բարձր է անբաժանելի ֆոնդի համար նրա հատկացումը:

Փայավճարի չափի վորոշման այս չափը, վոր կախված է համայնացրած գույքի արժեքից, գըլխարեն հեշտացնում է կոլխոզ մտնելու պայմանները բատրակային, չքավորական ու սակավազոր միջակային տնտեսությունների համար: Առաջ յերբ կոլխոզներում սահմանվում եր փայավճարի՝ բոլորի համար հավասար փայավճար, վորը յերբեմն համեմատաբար բարձր եր (100, 150, 200 ռուբլի), դրա վճարումը դժվար եր չքավորության ու սակավազոր միջակի և համարյա անհնար եր բատրակի համար: Այժմ արդեն գյուղացիության այդ խմբակների համար փայավճարների չափի

մուծումը չի կարող ավելի լինել նրանց պատկանող այն գույքի արժեքից, որը համայնացվում է համաձայն կանոնադրության:

Բացի դրանից, համաձայն կառավարության որոշման, համատարած կոլեկտիվացման ռայոններում վերացված կուլակների գույքը հաշվվում է հօգուտ չքավորության ու բատրակների մուտքի վճարի:

Անդամների կողմից որպես փայավճար մուծած գումարները վերադարձվում են նրանց, երբ նրանք դուրս են գալիս կոլխոզից:

Բացի այդ մուծումներից, որ պարտադիր են յուրաքանչյուր այն անձի համար, որը մտնում է գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ կազմակերպված կոլխոզը, արտելի յուրաքանչյուր անդամ կարող է կոլխոզը մտցնել իր ազատ դրամական միջոցները, որպես ավանդ: Ավանդները կարող են լինել ժամկետավոր և անժամկետ: Անդամները ժամկետավոր ավանդները կարող են պահանջել միայն՝ ավանդը մտցնող անդամի և վարչության միջև կայացրած համաձայնությամբ սահմանված որոշ ժամկետի լրանալուց հետո: Անժամկետ ավանդները կոլխոզ են մտցվում նույն հիմունքներով, ինչ և խնայողական դրամարկղները, այսինքն՝ կոլխոզի անդամն իրավունք ունի պահանջել իր մտցրած միջոցներն այն մոմենտին, երբ այդ հարկավոր է համարում իրեն համար: Ժամկետավոր և անժամկետ ավանդներով կոլխոզը կարող է ավանդատու անդամներին վճարել որոշ տոկոսներ, բայց այդ տոկոսները բարձր չպետք է լինեն այն տոկոսներից, որ վճարում է խնայողական դրամարկղը կամ վարկային ընկերությունը:

Հատուկ մուծումները կարող են սահմանվել կոլխոզներում անդամների ընդհանուր ժողովի որոշումով որևէ հատուկ կարիքների համար: Բայց այդ հատուկ մուծումները սահմանվում են ոչ թե բոլորի համար հավասար չափով, այլ համաձայնեցրած գույքի արժեքի տոկոսի ձևով: Ընդհանուր ժողովը կա-

րող է, օրինակ՝ որոշել, որ գործարանի շինարարության համար հատկացվի որոշ տարվա ընթացքում կոլխոզի եկամտի այսքան տոկոսը: Նույնպիսի կարգ կարելի է ընդունել նաև տրակտորի համար կանխավճար հավաքելու կամպանիա անցկացնելու ժամանակ:

Ընդհանրապես հատուկ մուծումների սիստեմը տնտեսության մեքենայացման, տնտեսության հատուկ ճյուղերի զարգացման, ձեռնարկությունների ու կենցաղային հիմնարկների շինարարության համար անհրաժեշտ է ըստ հնարավորին լայն գործադրել, որպեսզի կոլեկտիվացած բնակչության միջոցներն առավելագույն չափով ներգրավվեն կոլխոզային արտադրության զարգացման գործին: Իհարկե, այդ բոլորը պետք է անել լիակատար կամավորականության սկզբունքներով և միայն կոլխոզի անդամների ընդհանուր ժողովների որոշումների հիման վրա:

3. ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՖՈՆԴԵՐԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

Կոլխոզներում անբաժանելի ֆոնդ կոչվում է միջոցների այն մասը, որը մինչև անգամ կոլխոզի վերացման դեպքում յենթակա չէ բաժանման անդամների միջև և չի կարող օգտագործվել վնասները ծածկելու համար: Այդ իսկ պատճառով նրանք կոչվում են անբաժանելի: Այդ ֆոնդում հաշվվող միջոցները գտնվում են կոլխոզի ընդհանուր տնտեսական շրջանառության մեջ և օգտագործվում են կոլխոզի աճման, ամրացման ու զարգացման համար: Բայց միևնույն ժամանակ նրանք հանդիսանում են ընդհանուր կոլխոզային միջոցներ և կոլխոզի լիկվիդացիայի դեպքում հանձնվում են ռայոնի կոլխոզմիությանը, որն ուղարկում է այդ մյուս կոլխոզներին նույն նպատակների համար: Անբաժանելի ֆոնդերը կոլխոզներում ստեղծվում են՝ կոլխոզի տնտեսությունն ավելի ամուր ու կայուն դարձնելու համար:

1930 թվի սկզբին միայն ընդունվեց գյուղատնտե-

տական արտելի նոր կանոնադրությունը, վորը նախատեսնում է կոլխոզներում անբաժանելի ֆոնդերի պարտադիր գոյացումը թե ի հաշիվ անդամների համայնացրած գույքի մի մասի (մի քառորդից մինչև կեսը), և թե՛ ի հաշիվ կոլխոզի յեկամտի մի մասի պարտադիր հատկացման (10-ից մինչև 30 տոկոս): Մինչև այդ կոլխոզների զգալի մեծամասնության մեջ չկար անբաժանելի ֆոնդի համար հատկացում համայնացրած գույքի հաշվին: Յեթե կոլխոզներում լինում էին անբաժանելի ֆոնդեր, դրանք գլխավորապես գոյացել էին կոլխոզի ոգտագործման հանձնած պետական ու զեմստվոյի գույքի հաշվին:

Կոլխոզի գույքը, նրա արտադրության բոլոր միջոցները և այլն կազմվում էին գլխավորապես փայավճարներից և անդամների ավանդներից: Այն յեկամուտներից, վոր ստացվում էին կոլխոզի տնտեսական գործունեյության հետևանքով, տնտեսական ծախսերը ծածկելուց հետո լրիվին բաշխվում էին անդամների միջև: Դրա հետևանքով այդպիսի կոլխոզներում հաճախ առանձին անդամները, զգալիորեն բարձրացնելով իրենց բարեկեցությունն ի հաշիվ կոլտնտեսություններին տրվող տնտեսական առավելությունների, դուրս էին գալիս կոլխոզի կազմից և կազմում էին իրենց միանձնյա տնտեսությունը: Կոլխոզն ոգտագործվում էր նման դեպքերում, վորպես առանձին անդամների հարստանալու միջոց:

Կոլխոզում անբաժանելի ֆոնդերի բացակայության ժամանակ խոշոր տնտեսական նվաճումների հետևանքով կարող էին մինչև անգամ ուժեղանալ մանր սեփականատիրական տրամադրությունները: Առանձին անդամները, գտնելով, վոր կոլխոզի վերացումից հետո կոլխոզի գույքը պետք է բաժանվի անդամների միջև և վոր այդ գույքը հաջող աշխատանքի հետևանքով բավականաչափ խոշոր է, և հետևապես յուրաքանչյուրը կարող է խոշոր միջոցներ ստանալ, աշխատում էին գործը հասցնել կոլխոզի լիկվիդացիային, վորպեսզի իրար

մեջ բաժանեն նրա ամբողջ գույքը: Չքավոր-միջակային գյուղացիության փորձը, վորը կուսակցության ու բանվոր դասակարգի ղեկավարությամբ կատարում է իր միանձնյա տնտեսության արմատական վերակերտումը, դարձնելով այն խոշոր սոցիալիստական տնտեսություն, մշակել է պայքարի այնպիսի միջոցներ, վորոնք ապահովում են կոլխոզների հաջող շինարարությունը և պաշտպանում են այն մանր սեփականատիրական ձգտումների քայքայիչ ազդեցություններից: Կոլեկտիվ տնտեսության ամրացումն ապահովող ամենից ուժեղ ձևերից մեկն է անբաժանելի ֆոնդեր ստեղծելը:

Անբաժանելի ֆոնդերի աճումն ու կուտակումը կոլխոզներում նպաստում են կոլեկտիվ տնտեսության ընդարձակմանն ու ամրացմանը և առանձին անդամների մանր սեփականատիրական ձգտումների թուլացմանը: Անբաժանելի ֆոնդերի այդ աճումը փոխում է նաև կոլխոզի ներսում անդամների հարաբերությունը· աստիճանաբար վոչնչացնում է անդամների միջև գույքային անհավասարությունը և միատեսակ հարաբերություն է ստեղծում կոլխոզի բոլոր անդամների համար դեպի արտադրության միջոցները:

6. Անբաժանելի ֆոնդերի աճումն ու կուտակումը կու· են մի չարք աղբյուրների հաշվին: Սակայն դրանցից հիմնականը պետք է լինի նախ՝ կոլխոզի անդամների համայնացրած գույքի մի մասի հատկացումը և յերկրորդ՝ կոլխոզի յեկամտի մի մասի հատկացումը: Գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ կազմակերպված կոլխոզներում անբաժանելի ֆոնդի համար հատկացվում է անդամների համայնացրած գույքի արժեքի 25-ից մինչև 50 տոկոսը· ընդ վորում 25-ից մինչև 50 տոկոսի սահմաններում հատկացումների չափը սահմանվում է տարբեր ուժի գյուղացիական տնտեսությունների համար տարբեր ձևով: Բացի դրանից արտելի տարեկան ընդհանուր յեկամտից՝ հանած ցանքի համար սերմացուն, համայնացրած անասունների համար կերը և գյուղմթահարկն ու ապահովագրական վճա-

րումները, 10-ից մինչև 30 տոկոս նույնպես հատկացվում է անբաժանելի ֆոնդի ոգտին:

1930 թվին Կոլխոզկենտրոնի վորոշումով գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ կազմակերպված կոլխոզների համար սահմանված են, վորպես կանոն, պարտադիր հատկացումներ անբաժանելի ֆոնդի ոգտին՝ արտադրության ծախսերն ու գյուղմթահարկի վճարումները հանելուց հետո ընդհանուր յեկամտի 10 տոկոս և հասարակական այլ ֆոնդերի համար՝ 5 տոկոս: Կանոնադրությամբ հատկացումների նվազագույն այդպիսի տոկոս ընդունված է այն պատճառով, վոր կոլխոզների ճնշող մեծամասնությունը կազմակերպվել է միայն այս տարի և տակավին չի կարողացել հայտաբերել իր բոլոր տնտեսական առավելությունները:

Անբաժանելի ֆոնդերի ոգտին պետք է հանձնվեն նաև այն բոլոր միջոցները, վոր գանձվում են հետևյալ աղբյուրներից. ա) անդամների մուտքի վճարը, բ) կոլխոզի տրամադրության տակ դրված և անժամկետ ոգտագործման հանձնած պետական հիմնարկների, կոոպերատիվ և այլ հասարակական կազմակերպությունների միջոցների արժեքը, վորոնց թվում նաև անժամկետ ոգտագործման հանձնած պետական գույքի շենքերի, ձեռնարկությունների, գյուղատնտեսական ինվենտարի և այլ արժեքը. գ) անվերադարձ հատկացումները (դոտացիաները) և պատահական մուծումները (անդամների լքյալ գույքը, պրեմիաները և այլն), դ) պետական, կոոպերատիվ և այլ հիմնարկների կողմից կոլխոզներին ձրի բաց թողած նյութերն ու իրերը (անտառանյութը և այլն), ե) այն գույքի արժեքը, վոր կոլխոզին է հանձնված ուրիշ կոլխոզների լիկվիդացիայից հետո և ընդհանրապես այն բոլոր հատկացումները, վոր անբաժանելի ֆոնդի ոգտին անում է կոլխոզի ընդհանուր ժողովը:

Բոլոր կոլխոզներում վերոհիշյալ աղբյուրներից

ստացած բոլոր միջոցները պետք է հայտաբերվեն, հատուկ հաշվառման յենթարկվեն և գրանցվեն անբաժանելի ֆոնդերի մասին հատուկ արձանագրության մեջ:

Բոլոր ռայկոլխոզմիությունները պետք է կազմակերպեն անբաժանելի ֆոնդերի հատուկ հաշվառում, և ռայկոլխոզմիությունները պետք է հսկեն այդ ֆոնդերի ոգտագործման կարգի վրա:

Կոլխոզների անբաժանելի ֆոնդը, ինչպես և նրանց մնացած ֆոնդերն ու կապիտալները, ոգտագործվում են կոլխոզների տնտեսական ոպերացիաների համար, բայց այնպիսի հաշվով, վոր կարելի լինի նրանց ժամանակին իրացնել: Անբաժանելի ֆոնդերի միջոցներից ձեռք բերած գույքը, ինչպես նաև այն ամբողջ գույքը, վորի արժեքը հաշվվում է անբաժանելի ֆոնդում, պետք է ապահովվի իր իսկական արժեքով կոլխոզի ընդհանուր միջոցներից:

4. ԿԱՊԻՏԱԼՆԵՐԻ ՈՒ ՖՈՆԴԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

Ինչպես մենք արդեն ցույց տվինք, կոլխոզների միջոցների գոյացման հիմնական աղբյուրը հանդիսանում են անդամների իրենց միջոցները, վոր համայնացվում են, յերբ անդամները համախմբվում են կլխոզում և այն յեկամուտները, վոր ստացվում են կոլխոզների տնտեսական գործունեության հետևանքով:

Կոլխոզների միջոցները կազմող այդ հիմնական աղբյուրներից բացի, կոլխոզները զգալի միջոցներ են ստանում պետությունից, գլխավորապես՝ յերկարատև ու կարճատև վարկերի ձևով, ինչպես նաև պետական հողային գույքերից, վոր առանձին կոլխոզներին է հանձնվում անժամկետ ոգտագործման ձևով:

Անդամներից հավաքած, պետությունից ստացած ձրի և անժամկետ ոգտագործման համար կամ վորպես յերկարատև վարկ, այդ միջոցների հիման վրա կոլխոզները կազմակերպում են կոլեկտիվ արտադրություն,

կազմակերպելով համապատասխան ձևով իրենց միջոցները զանազան ֆոնդերի ու կապիտալների ձևով։

Կոլխոզային շարժման նախընթաց պրակտիկայից յերևում է, վոր կոլխոզներում ֆոնդերի ու կապիտալների ամենից նպատակահարմար ու առույգ կառուցվածքը հետևյալն է.—1) անբաժանելի ֆոնդ, 2) փայակապիտալ, 3) պահեստի կապիտալ, 4) կուլտուր-կենցաղային ֆոնդ, 5) պրեմիաների ֆոնդ։

Փայակապիտալը կազմվում է անդամների փայավճարներից, վորոնց մուծման կարգը մենք արդեն պարզեցինք վերևում։ Փայակապիտալն ոգտագործվում է կոլխոզի տնտեսական ծախքերի ու շրջանառությունների համար և կոլխոզի կրած վնասների դեպքում, փայակապիտալով ծածկվում են այդ վնասները։ Իհարկե, վնասները ծածկելու համար փայակապիտալն ոգտագործվում է միայն նրանից հետո, յերբ սպառվում են հատկապես այդ նպատակի համար ստեղծվող պահեստի կապիտալի միջոցները։ Վնասները ծածկելու համար փայակապիտալից դուրս գրած գումարը պետք է համեմատական չափով բաշխվի բոլոր անդամների փայերի հաշիվների վրա։

Կոլխոզի կազմից դուրս գալուց հետո յուրաքանչյուր անդամ ստանում է փայակապիտալից այն մասը, վորը հաշվվում է նրա փայահաշվում, դուրս գալով այն գումարը, վորը ծախսվել է վնասները ծածկելու վրա, չբացառելով նաև անդամների դուրս գալու տարվա վնասները։

Այն դեպքում, յերբ կոլխոզն այս կամ այն պատճառով լիկվիդացիայի յե յենթարկվում, բոլոր անդամները ստանում իրենց փայավճարից այն մասը, վորը մնում է բոլոր վնասները ծածկելուց հետո։ Պահեստի կապիտալը, ինչպես ցույց է տալիս անունը, կազմվում է, վորպես պահեստի (պահուստի) կապիտալ, այսինքն այն դեպքի համար, յերբ հարկավոր է ծածկել այս կամ այն պատճառներով առաջացած վնասները։ Վերևում մենք ասացինք, վոր վնասները ծած-

կվում են նաև ի հաշիվ փայակապիտալի. բայց ի հաշիվ փայակապիտալի վնասները ծածկվում են միայն այն դեպքում, յերբ պահեստի կապիտալում յեղած բոլոր միջոցները սպառված են։ Որինակ՝ պահեստի կապիտալում հաշվվում է 10 հազար ռուբլի, իսկ կոլխոզը վնաս է կրել 15 հազար ռուբլու։ Այդ դեպքում ի հաշիվ պահեստի կապիտալի ամբողջ վնասը ծածկել չի կարելի, մնում է դեռ 5000 ռուբլի, վոր ծածկվում է փայակապիտալից։ Պահեստի կապիտալը ստեղծվում է կոլխոզի յեկամուտներից արած հատուկ հատկացումների հաշվից։ Գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ պահեստի կապիտալի ու արտելի բոլոր այլ ֆոնդերի համար հատկացումներն արվում են 5-ից մինչև 15 տոկոսի չափով։

Սխեմատիկորեն հատկացնելով յեկամտի մի մասը պահեստի կապիտալի ոգտին, կարելի յե ստանալ ցանկացած գումարը՝ անհաջողությունների դեպքում վնասները լրիվին ծածկելու համար պահեստի կապիտալի հաշվին։ Պահեստի կապիտալի համար հատկացված միջոցները, ինչպես և կոլխոզի մնացած միջոցները, մասնակցում են կոլխոզի տնտեսական օպերացիաներում, նրա շրջանառության մեջ, բայց պետք է զետեղված լինեն այնպիսի արժեքների մեջ, վորոնք հեշտությամբ կարող են վերածվել դրամական գումարի։

Կուլտուր-կենցաղային ֆոնդը հիմնականում նույնպես ստեղծվում է կոլխոզի յեկամուտներից։ Այն միջոցների մի մասը, վոր առանձնացվում է գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ զանազան հասարակական ֆոնդերի համար, հատկացվում է կուլտուր-կենցաղային ֆոնդի ոգտին։

Կուլտուր-կենցաղային ֆոնդի ոգտին միջոցներ կարող են հատկացվել նաև այլ աղբյուրներից։ Մասնավորապես՝ մի շարք կոլխոզներում կուլտ-կենցաղային աշխատանքի միջոցները լրացնելու համար անց են կացրվում հատուկ շաբաթօրյակներ, ցանվում են այսպես կոչվող «կուլտուրական հեկտարներ» և այլն։

Այդ ֆոնդի միջոցները գործադրվում են կուլտլուսավորական աշխատանքի կազմակերպման և ընդարձակման և կենցաղի կազմակերպման վերաբերյալ միջոցառումների համար:

Պրեմիաների ֆոնդը կոլխոզներում ստեղծվում է առանձին անդամներին պրեմիաներ տալու համար աշխատանքային արժանիքների համար, գյուտարարության ու ռացիոնալացման միջոցառումների համար, աշխատանքի արտադրողականության բնագավառում կամ հասարակական միջոցների ծախսման խնայողության մեջ ձեռք բերած նվաճումների համար և այլն: Այդպիսի ֆոնդ ստեղծելը և նրա ճիշտ օգտագործելը, ինչպես ցույց տվեց այն կոլխոզների փորձը, վորտեղ այդ ֆոնդը ստեղծված եր, հսկայական ազդեցություն է ունենում կոլխոզի արտադրական գործունեության բարելավման վրա:

Պրեմիաների ֆոնդը գոյանում է ի հաշիվ այն միջոցների, վոր կոլխոզի անդամների ընդհանուր ժողովը հատկացրել է զանազան հասարակական ֆոնդերի օգտին:

Բացի այս ամենակարևոր ֆոնդերից կոլխոզի անդամների ընդհանուր ժողովը կարող է կազմել ուրիշ հատուկ կապիտալներ ու ֆոնդեր, իր վորոշումներում մատնանշելով այդ ֆոնդերի նշանակումը, ինչպես նաև նրանց գոյացման կարգն ու աղբյուրները:

5. ՀԱՇՎԵՎՃԱՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԵՌԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ.

Գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ կազմակերպած կոլխոզներում հեռացող անդամների հետ հաշվեվճարը կատարվում է հետևյալ հիմունքներով՝ «արտելի կազմից հեռացող անդամների հետ վարչությունը հաշվեվճար է կատարում և վերադարձնում է նրան փայավճարը, ըստ վորում արտելի հեռացող անդամին հողաբաժինը տրվում է միայն արտելի հողամասի սահմաններից դուրս: Հաշվեվճարը կատարվում է, վորպես կանոն, տնտեսական տարին վեր-

ջանալուց հետո» (գյուղատնտեսական արտելի կանոնադրություն § 11):

Կանոնադրության այս կետից միանգամայն պարզ է, վոր հեռացող անդամը արտելի միջոցներից ստանում է՝ 1) արտելի միջոցների միայն այն մասը, վորը գրված է անդամի հաշվին, վորպես փայավճար, հանելով դրանից այն վնասները, վոր ընկնում են նրա փայի վրա և 2. յեկամտի այն մասը, վոր բաժին է ընկնում հեռացող անդամին արտելի կոլեկտիվ արտադրության մեջ իր աշխատանքով մասնակցելու համար:

1930 թվի գարնանը կոլեկտիվացումն անցկացնելիս Խորհրդային Միության մի շարք ռայոններում ու գավառներում թույլ եյին տրված խոտորումներ, վորոնք հիմնականում հանգում եյին նրան, վոր խախտվում եր կամավորականության լենինյան սկզբունքը: Մի շարք ռայոններում գյուղի չքավոր-միջակային մասսաները հաշվվում եյին կոլխոզի անդամների կազմի մեջ հարկադրական կարգով, հակառակ նրանց ցանկության: Այդ խոտորումների առթիվ կուսակցության Կենտկոմն ու կառավարական մարմինները հրապարակեցին մի շարք կարգադրություններ, վոր ուղղված եյին ծռվածքների շտկմանը և թույլատրում եյին հարկադրական կերպով կոլխոզների մեջ ներգրավվողներին դուրս գալ կոլխոզի կազմից իրենց ամբողջ գույքով, առանց այդ գույքերի արժեքից անբաժանելի ֆոնդի մեջ հաշվելու: Այդ միջոցն անհրաժեշտ եր նրա համար, վորպեսզի շտկվեն տեղերում թույլ տված սխալները: Սակայն այդ միջոցը, վոր ուղղված եր սխալների ու խեղաթյուրումների շտկմանը տեղերում մի քանի վայրերում փորձում եյին մեկնաբանել վորպես մի օրենք, վորն ընդհանրապես փոխում է գյուղատնտեսական արտելի կանոնադրքի այն բոլոր կետերը, վորով կոլխոզից հեռացողը կոլխոզից ստանում է միայն այն միջոցները, վոր հաշվվում են նրա փայավճարում: Խոտորումների սխալների շտկումն ամենևին վերացումն չէ գյուղատնտեսական արտելի կանոնադրության, վորպես կոլխոզի հիմնական ձևի,

և չի փոխում կոլխոզներում միջոցների կազմակերպման հիմնական դրույթները. իսկ այդ կանոնադրությունը նախատեսում է հետացող անդամների հետ հաշվեհարդարի այնպիսի կարգ, վորով հետացող անդամն ստանում է կոլխոզի միջոցներից համայնացրած իր գույքի այն մասը միայն, վորը հաշվվում է վորպես փայավճար, և յեկամտի այն մասը միայն, վորը հասնում է նրան կոլեկտիվ արտադրությունում աշխատելու համար: Հետացող անդամների հետ հաշվեվճարները պետք է կատարվեն միայն տնտեսական տարվա վերջում, յերբ պարզված են կոլխոզի տնտեսական գործունեյության արդյունքները:

Յուրաքանչյուր կոլխոզնիկ, կոլխոզային շարժման յուրաքանչյուր ակտիվ աշխատող պիտի գիտենա հաշվեվճարի այդ պայմանները և իր աշխատանքներում գործադրի այդ գործնականում, հիշելով, վոր «չի կարող լինել ընդհանուր տնտեսություն առանց կարգապահություն հաստատելու, առանց գիտակից ու բարեխիղճ վերաբերմունքի դեպի հասարակական սեփականությունը: Դու արտել ես մտել կամավոր կերպով, բայց այդ չի նշանակում, վոր դու յուրաքանչյուր րոպե կարող ես ցաք ու ցրիվ անել նրա գույքը քո հայեցողությամբ: Քանի վոր արտել ես մտել, նշանակում է պարտավորություն ես հանձն առել յենթարկվելու արտելի սահմանված կանոնադրությանը, արտելի անդամների ընդունած կարգապահությանը... Այլ կերպ աշխատանքի վոչ մի արտադրողականության բարձրացում չի լինի, կյանքի վոչ մի բարելավում չի լինի:(Յակովլեվ):

IV. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

1. Ղեկավարության մարմինները կոլխոզներում: 2. Պարտականությունների բաշխումը վարչության անդամների միջև: 3. Կոլխոզի առանձին ճյուղերի ղեկավարները: 4. Վերստուգիչ հանձնաժողով: 5. Շարքային անդամների՝ կոլխոզների ղեկավարության ներգրավման ձևերը:

1. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ.

Կոլխոզների բոլոր ձևերում ղեկավարության բարձրագույն մարմինը հանդիսանում է կոլխոզի անդամների ընդհանուր ժողովը:

Ընդհանուր ժողովը ղեկավարում է կոլխոզի գործերը և լուծում է կոլխոզի կյանքում առաջացող բոլոր կարևորագույն հարցերը:

Բացի վարչության ու վերստուգիչ հանձնաժողովի ընտրություններից, ընդհանուր ժողովը պետք է անպայման քննարկի ու հաստատի տնտեսության ընդհանուր արտադրական պլանը, յելքի ու մուտքի նախահաշիվները, վարչության հաշվետվությունը, գյուղատնտեսական կամպանիաների կարևորագույն պլանները (գարնան ու աշնան ցանքերի, բերքահավաքի կամպանիաներ), ընդհանուր ժողովը պետք է նույնպես քննարկի ու հաստատի վարչության մշակած կարգը բերքի և այլ յեկամուտների բաշխման նկատմամբ: Այն կարևորագույն պայմանագրերը, վոր կնքում է վարչությունը կոլխոզի անունից, պետք է նույնպես քննարկվեն ու հաստատվեն ընդհանուր ժողովի կողմից:

Ընդհանուր ժողովը, բացի դրանից, պետք է անպայման քննարկի ու հաստատի ներքին կարգ ու կանոնի կանոնները և զանազան հրահանգներ վարչության ու վերստուգիչ հանձնաժողովի համար նրանց աշխատանքների կարգի մասին, աշխատանքի հաշվառման կարգի ու զանազան տեսակ աշխատանքների գնահատման մասին, տույժեր նշանակելու կարգի մասին և այլն:

Առանց ընդհանուր ժողովի հաստատման, վարչությունն իրավունք չունի վորևէ փոփոխում կամ լրացում մտցնել կանոնադրության ու ներքին կարգ ու կանոնի կանոնների մեջ, ինչպես նաև իրավունք չունի ընդունել ու հեռացնել անդամներին: Այդ բոլոր հարցերը վերջնականապես վճռված են համարվում միայն նրանից հետո, յերբ դրանք հաստատվում են կոլխոզի անդամների ընդհանուր ժողովի կողմից:

Այն հարցերի թվարկումից, որ կարող են և պետք է վճռվեն անպայման ընդհանուր ժողովի կողմից, միանգամայն ակնհայտ է, որ ընդհանուր ժողովը պետք է լինի կանոնավոր աշխատող մարմին:

Այն դեպքերում, յերբ կոլխոզը միավորում է մեծ թվով անդամներ (հազար հոգի և ավելի) կամ յերբ կոլխոզն ընդգրկում է մի քանի ցրված գյուղեր և դրա հետեվանքով ընդհանուր ժողովի գումարումը դժվար է լինում, ընդհանուր ժողովը կարող է փոխարինվել լիազորների ժողովով: Լիազորները պետք է ընտրվեն կոլխոզի որոշ թվով (5, 10, 15 և այլն) անդամներից, նայած նրանց քանակին: Լիազորների ժողովը փոխարինում է անդամների ընդհանուր ժողովին, սակայն, այն պայմանով միայն, որ յուրաքանչյուր լիազոր անպայման իրազեկ դարձնի իր ընտրողներին լիազորների ժողովի որոշումների մասին: Մի շարք կոլխոզներում բացի լիազորների ժողովներից գործադրվում են նաև ժողովներ ըստ բրիգադների, որոնք հնարավորություն են տալիս արագ և լայնորեն լուսաբանելու կոլխոզնիկների միջև այս կամ այն հարցը:

Կոլխոզի գործերի անմիջական ղեկավարության համար կոլխոզի անդամների ընդհանուր ժողովն ընտրում է վարչություն, իսկ վերջինիս գործունեության վրա վերահսկելու համար՝ վերստուգիչ հանձնաժողով:

Վարչությունն ընտրվում է սովորաբար 3-ից մինչև 9 հոգի կազմով՝ նայած կոլխոզի չափերին: Յերբ կոլխոզն իր չափերով փոքր է և չունի տնտեսության զարգացած ճյուղեր, այն ժամանակ վարչությունն ընտրվում է 3 անդամի կազմով: Որքան ավելի խոշոր է կոլխոզը և որքան ավելի զարգացած են նրա տնտեսության ճյուղերը, այնքան ավելի շատ անդամ պետք է ընտրել վարչության մեջ:

Բացի դրանից, անհրաժեշտ է ընտրել առնվազն 2 թեկնածու, որոնք փոխարինում են վարչության անդամներին նրանց բացակայության կամ հեռանալու դեպքում:

Կոլխոզի վարչությունն ընտրվում է սովորաբար

մի տարով, բայց այդ ընտրությունը, ի հարկե, չի զրկում ընդհանուր ժողովին՝ ժամանակից շուտ ամբողջ վարչության կազմը վերընտրելու կամ նրա կազմից առանձին անդամին յետ կանչելու իրավունքից: Սակայն այդ միջոցը հարկավոր է գործադրել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում վարչության այն անդամների նկատմամբ, որոնք իրենց գործնական աշխատանքում ծռում են դասակարգային գիծը, այդպիսով իսկ ամրացնելով կուլակի դիրքը, կամ այն անդամների նկատմամբ, որոնք ի չարը գործ դնելով հասարակական վստահությունը, կապվել են մասնավոր առևտրականի հետ, վատնումներ են կատարել և այլն:

Կոլխոզի վարչությունը հանդիսանում է կոլխոզի անդամների ընդհանուր ժողովի գործադիր մարմինը և վարում է կոլխոզի բոլոր գործերը, գործելով ընդհանուր ժողովի ընդունած կանոնադրության, ներքին կարգ ու կանոնի կանոնների ու լրացուցիչ հրահանգների հիման վրա, յեթե վերջիններս հաստատված են ընդհանուր ժողովի կողմից:

Վարչութ. պետքե կոլխոզի անունից, առանց դրա համար հատուկ հավատարմագրի վարի բոլոր գործերը և հարաբերությունների մեջ մտնի պետական հիմնարկների ու զանազան կազմակերպությունների հետ:. Վարչությունն իրավունք ունի կոլխոզի անունից կնքել գործարքներ ու պայմանագրեր, հանդես գալ դատարաններում կոլխոզի գործերով և պարտավորություններ ու հավատարմագրեր տալ:

Վարչության նիստերը պետք է տեղի ունենան որոշ, ճիշտ սահմանված օրերին, որպեսզի այդ ժողովներին կարողանան ներկա լինել կոլխոզի ցանկացող անդամները: Այն կարեվորագույն հարցերը, որ նախատեսված են վարչության նիստում քննարկելու համար, պետք է հրապարակվեն հատուկ պլակատներով (հայտարարություններով), որպեսզի դրանց քննարկման մեջ շահագրգռված բոլոր անդամները գիտենան այդ մասին վաղօրոք և կարողանան մասնակցել վար-

չության նիստին: Վարչության նիստերին բացի կոլտնտեսային ակտիվից, բրիգադիրներից, օգտակար է ներգրավել նաև միանձնյակ չքավորներին ու միջակներին:

Վարչությունը պարտավոր է սիստեմատիկորեն հաշիվ տալ իր գործունեության մասին կոլխոզի անդամների ընդհանուր ժողովներին այն ժամկետներում, որ սահմանել է ընդհանուր ժողովը:

Գյուղատնտեսության կոլեկտիվացումն անցնում է դասակարգային սրված պայքարի պայմաններում: Կուլակը շատ լավ է յուրացրել, վոր կոլեկտիվացումը նրա վոչնչացման ուղին է: Նա գիտե, վոր կոլխոզային արտադրությունը փոխարինում է իր կուլակային արտադրությանը և բանվոր դասակարգի կուսակցությանը հնարավորություն է տալիս կուլակությանը վերացնելու վորպես դասակարգի համատարած կոլեկտիվացման ռայոններում:

Ցեվ այդ պատճառով կուլակն առանձնապես կատաղորեն կռվում է կոլխոզների դեմ: Այդ պայքարում նա գործադրում է ամենաբազմազան յեղանակներ, սկսած կոլխոզի կազմակերպիչների դեմ գործած բացահայտ հարձակումներից, հրձիգություններից, գյուղատնտեսական մեքենաների փչացումից մինչև պայքարի քողարկված (ծածկված) ձևերը, վորոնցից մեկն է հանդիսանում կուլակի, իսկ ամենից հաճախ նրա ագենտուրայի (յենթակուլակի) կոլխոզների մեջ սողոսկելը և նրանց ներսից քայքայելը: Վերջին շրջանում պայքարի քողարկված այդ ձևն առանձնապես ուժեղ կերպով է գործադրվում կուլակների կողմից: Կուլակն այդ նպատակների համար ոգտագործում է նայեվ իր ագենտուրային կուսակցության ներսում, այն է աջ ոպորտունիստներին:

Կուլակի ու նրա ագենտուրայի աշխատանքի թաքնված ձևերի դեմ մղվող պայքարում վիթխարի դեր է խաղում վարչության կազմը: Յեթե վարչության կազմի մեջ կան արդյունաբերական բանվորներ ու բատրակներ, նրանք արագ կկարողանան ի-

րենց դասակարգային հոտառությամբ գտնել կուլակի թաքնված վորոգայթները, ոգնելով վարչության մնացած մասին ըմբռնել այդ և վճռական հակահարված հասցնել թշնամուն: Այդ պատճառով վարչության կազմի մեջ պետք է մտցնել ամենից առաջ բանվորի ու բատրակի, ինչպես նաև ամենից հեղինակավոր (ազդեցիկ) չքավորների: Բանվորը, բատրակն ու չքավորը համերաշխ աշխատանքով իրենց հետևից կտանեն նաև միջակներին, վորոնց նույնպես անհրաժեշտ է մտցնել բավական քանակով վարչության կազմի մեջ:

Մի շարք ռայոններում նկատվում են դեպքեր, յերբ միջակին ամեն կերպ աշխատում են հեռու պահել կոլխոզների ղեկավարության մասնակցությունից: Նման վերաբերմունքը դեպի միջակը բացարձակապես սխալ է: Դեպի միջակը ցույց տված ճիշտ վերաբերմունքի դեպքում միջակը միշտ էլ կլինի բանվորի, բատրակի ու չքավորի հետ՝ ընդդեմ կուլակի: Իսկ դեպի միջակը ցույց տված սխալ վերաբերմունքի դեպքում կարելի յե յետ հրել նրան չքավորությունից և նետել կուլակի գիրկը: «Միանձնյա տնտեսությունից դեպի կոլեկտիվ տնտեսության անցումը կարող է իրականացվել մայն բանվոր դասակարգի և չքավորության ու միջակի հետ կնքած դաշինքի հիման վրա, վորը պարտավորեցնում է սիստեմատիկորեն ներգրավել միջակներին կոլխոզային ղեկավարությանը» («Կոլխոզային շարժման և գյուղատնտեսության վերելքի մասին» Համկոմկուսի (բ) 16-րդ համագումարում ընդունած բանաձևից):

Չափազանց կարևոր է վարչության մեջ ապահովել կանանց ու յերիտասարդության մասնակցությունը:

Իհարկե, վարչության ընտրանքի ժամանակ չի կարելի բավարարվել միայն նրանով, թե առաջ քաշված թեկնածուն, վոր սոցիալական խմբակին է պատկանում: Յուրաքանչյուր առաջ քաշվող թեկնածու պետք է բազմակողմանիորեն քննարկվի նույնպես իր գործարար հատկությունների տեսակետից: Վարչության անդամը պետք է լինի լավ կազմակերպիչ, պետք

է լավ հասկանա տնտեսական հարցերը: Կոլխոզնիկների հոծ մասսաներում այդպիսի կազմակերպիչներ բավականաչափ շատ կան: «Կոլխոզային շարժման ամենանշանավոր նվաճումներից մեկն այն է, որ նա արդեն իսկ կարողացավ առաջ քաշել հազարավոր կազմակերպիչներ և տասնյակ հազարավոր ագիտատորներ հենց գյուղացիներից» (Ստալին, Համկոմկուսի (բ) 16-րդ համագումարում Կենտկոմի քաղհաշվետվությունը):

2. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Աշխատանքում փորձառություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է ամենից առաջ ճշտորեն սահմանագծել վարչության անդամների պարտականությունները ու իրավունքները և ճշտորեն որոշել, թե աշխատանքի որ ճյուղի համար վարչության որ անդամն է պատասխանատվություն կրում և ինչ է նա պարտավոր անել:

Վարչության անդամների միջև պարտականությունների սահմանագծման մոտավոր սխեման կարող է հետևյալը լինել.

Վարչության նախագահի վրա պետք է ամենից առաջ ընկնի կոլխոզի բոլոր գործերի ընդհանուր ղեկավարությունը և տնտեսության բոլոր ճյուղերի վրա հսկողությունը, ինչպես նաև հսկողությունը բոլոր միջոցառումների վրա և նրանց համաձայնեցումն իրար հետ համաձայն արտադրության ընդունած պլանի:

Վարչության նախագահը պետք է հետևի, որ ժամանակին և ճիշտ կիրառվի նախատեսված արտադրական պլանը և ձեռք առնվեն անհրաժեշտ միջոցառումներ պլանի կիրառմանը խանգարող թերությունների վերացման համար:

Վարչության նախագահը պետք է լինի կոլխոզի վարկերի ու բոլոր արժեքների կարգադրիչը:

Վարչության նախագահն իրավունք ունի կոլխոզի անունից բանակցել պետական ու կոոպերատիվ բոլոր

կազմակերպությունների հետ, կնքել կոլխոզի անունից պայմանագիր ու կատարել գործարքներ, ստորագրել մուրհակներ ու պարտավորություններ այն իրավունքների սահմաններում, որ վերապահված են նրան հավատարմագրով և վարչության որոշումով:

Իր այն բոլոր գործողությունների ու կարգադրությունների համար, որ հաստատված չեն վարչության որոշումով, նախագահը կրում է պատասխանատվությունն ինքն անձամբ:

Նախագահի վրա պետք է դրվի պատասխանատվություն նաև կոլխոզի ֆինանսական դրության համար: Նա պետք է հետևի, որ ժամանակին չիջուցվեն կոլխոզի վրա հաշվվող պարտքերը, ձեռք առնի միջոցներ, որ բողոքարկման չգնան մուրհակները և միջոցներ պետք է գտնի այդ մուրհակների չիջուցման համար:

Նախագահի բացակայության ժամանակ նրա պարտականությունները պետք է դրվեն վարչության անդամներից մեկն ու մեկի վրա, որին վարչությունը ջոկում է, որպես նախագահի տեղակալ:

Տեղակալի վրա պետք է դրվի կոլխոզի ներսում կատարվող բոլոր աշխատանքների ղեկավարությունը: Նրան անմիջորեն պետք է ենթարկվեն տնտեսության առանձին ճյուղերի բոլոր ջոկված ղեկավարները: Նախագահի տեղակալը պետք է կանոնավորի քարշային ուժի, ինվենտարի, բանվորական ուժի բաշխումը տնտեսության զանազան ճյուղերի միջև, ճյուղերի վարիչների հետ միասին կազմի աշխատանքի շաբաթական և ամենօրյա վերակարգեր և առանձին ճյուղերի ղեկավարների միջև ծագած տարաձայնությունների դեպքում նրան պետք է պատկանի վերջնական վճռի իրավունքը:

Նախագահի տեղակալի վրա պետք է դրված լինեն նաև ժամանակին տարեկան արտադրական պլան, ինչպես նաև կարեվորագույն գյուղատնտեսական կամպանիաների (գարնանացանի ու աշնանացանի, բերքահավաքի) պլան կազմելու պատասխանատվությունը: Այդ պլանները պետք է կազմեն առանձին ճյուղե–

րի վարիչները և այդ նպատակով ներգրավված գյուղատնտեսը:

Նախագահի տեղակալը պետք է կազմակերպի կոլեկտիվ տնտեսության բոլոր ճյուղերի հերթական աշխատանքների ժամանակին ու ճիշտ կատարումը: Մասնավորապես՝ նա պետք է հետևի վարի, տափանման վորակին ու ցանած կուլտուրաների խնամմանը:

Վարչության պատասխանատու քարտուղարի վրա անհրաժեշտ է դնել կոլխոզի ամբողջ ներքին վարչական աշխատանքը:

Նա պետք է կազմակերպի գործավարությունը և հաշվետարությունը կոլխոզում, վարի վարչության նիստերի արձանագրությունները, պատասխանատու լինի հաշվետվության դրության ու ժամանակին կազմելու համար, ինչպես նաև բոլոր փաստաթղթերի, գրանցումների ու գրասենյակային գործերի ճշտապահ պահպանմանը:

Ցերբեմն պատասխանատու քարտուղարի վրա դրվում է նույնպես կոլխոզի կուլտուր-կենցաղային աշխատանքի ղեկավարությունը: Բայց ավելի լավ է այդ աշխատանքը դնել հատուկ ջոկած վարչության մի վորևէ անդամի վրա: Կուլտուր-կենցաղային աշխատանքի ղեկավարը պետք է կազմակերպի ու ղեկավարի այդ աշխատանքը: Նրա վրա պետք է դրված լինի պատասխանատվությունը կոլխոզի կուլտուրական ձեռնարկությունների կազմակերպման համար (ակումբ, գրադարան, ընթերցարան, կարմիր անկյուն, զանազան խմբակներ և այլն): Նրան նույնպես անհրաժեշտ է հանձնարարել կոլխոզնիկների կենցաղը բարելավող ձեռնարկությունների կազմակերպումը (ճաշարան, լվացքատուն, բաղնիք, մանկամսուրներ և այլն): Նա պետք է բացի դրանից, պատասխանատու լինի դպրոցական հասակի բոլոր յերեխաների ընդհանուր կրթության ու կոլխոզի չափահասակ անդամների մեջ անգրագիտության վերացման համար:

Վարչության չորրորդ անդամի վրա պետք է դնել

կոլխոզի տնտեսական մասի ղեկավարությունը, բերքի և արտադրության միջոցների ճիշտ պահպանության հսկողությունն ու պատասխանատվությունը (հացահատիկ, խար, գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ, տրանսպորտ, ձիասարք և այլն), ինչպես նաև մթերքների վաճառքի ու նրանց վերամշակման կազմակերպումը: Մասնավորապես նրա վրա պետք է դրվի պատասխանատվությունը՝ կոլխոզի արտադրանքը կոնտրակտացիոն պայմանագրերով ժամանակին պետական ու կոոպերատիվ կազմակերպություններին հանձնելու համար:

Նա պետք հոգ տանի նույնպես, վոր ժամանակին վերանորոգվի ամբողջ գույքը, ապահովագրվի այն, պահպանվի, կազմակերպվեն հակահրդեհային միջոցներ, լավ կազմակերպվեն պահեստապետների աշխատանքները: Տնտեսավարը պետք է ղեկավարի մթերումներն ու արտադրության միջոցների, շինարարական նյութերի, սերմացվի, պարարտանյութերի, անտառանյութերի, կերի, վառելափայտի, տրակտորների վառելանյութի, կենսամթերքների և այլի ժամանակին հայթայթմանը՝ համաձայն ընդունված արտադրական պլանի: Տնտեսավարը պետք է ղեկավարի նոր շինանյութերի շինարարության ու հների վերանորոգման աշխատանքները. Նա պետք է հետևի, վոր սարքին լինեն կոլխոզի տերիտորիայում գտնվող ճանապարհներն ու կամուրջները և կազմակերպի նրանց ժամանակին վերանորոգումը: Ինվենտարի օգտագործումը և պահեստներից իրեր բաց թողնելը պետք է կատարվի անպայման տնտեսամասի վարիչի գիտությամբ ու թույլտվությամբ:

Վարչության հինգերորդ անդամի վրա պետք է դըրվի կոլխոզում աշխատանքի կազմակերպման գործի ղեկավարությունը:

Ավելի մանր կոլխոզներում, վորտեղ սովորաբար կա վարչության յերեք անդամ, նախագահի տեղակալի վրա, վորը վարում է արտադրության կազմակերպումը, դրվում է նաև կոլխոզի տնտեսական մասի ղեկավարությունը և աշխատանքի կազմակերպման գործը:

Բայց ավելի խոշոր կոլխոզներում, վորտեղ աշխատանքն ավելի բարդ է, աշխատանքի այդ յերեք տեսակը հանձնարարվում է սահմանագծել վարչության առանձին անդամների միջև, բայց այն պայմանով, վոր նախագահը և աշխատանքի կազմակերպման ղեկավարն աշխատեն միմյանց հետ ամենասերտ կոնտակտ ունենալով նախագահի ու նրա տեղակալի անմիջական ղեկավարությամբ, վորոնք պատասխանատու յեն ամբողջ արտադրության կազմակերպման համար:

Այն կոլխոզներում, վորտեղ ջոկնված է վարչության հատուկ անդամ աշխատանքի կազմակերպման գործի համար, նրա վրա հարկավոր է դնել. ա) արտադրական պլանի այն մասի կազմելու աշխատանքը, վոր վերաբերում է աշխատանքի կազմակերպմանը, բ) ամենօրյա բանվորական ուժի դրսում օգտագործելու կազմակերպումը, ջոկելով դրսում աշխատողների հատուկ բրիգադներ կառուցման մասնագետներից, փոխադրությունների բրիգադներ և այլն. գ) բրիգադների կազմակերպումը տնտեսության ներսում ըստ ճյուղերի և աշխատանքների տեսակների, դ) կոլխոզնիկների աշխատանքների արտադրողականության բարձրացման միջոցառումների մշակում ու կիրառումը (սոցմրցակցություն, հարվածայնության կազմակերպում և այլն), ե) աշխատանքի հաշվառման ու աշխատանքի պահպանության միջոցառումներ:

Խոշոր կոլխոզներում, վորտեղ վարչության կազմի մեջ մտնում են 7 կամ 9 անդամ, վարչության առանձին անդամների վրա հարկավոր է դնել աշխատանքի առանձին ճյուղերի ղեկավարության աշխատանքը, բայց, իհարկե, միայն այն դեպքում, յեթե նրանք իրենց ընդունակություններով, գիտելիքներով ու փորձառությամբ կարող են կատարել այդ աշխատանքը:

3. ԿՈԼԽՈԶԻ ԱՌԱՆՁԻՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

Դաշտաբուծության ղեկավարի վրա, ինչպես նաև տնտեսության այլ ճյուղերի ղեկավարների վրա հարկավոր է դնել ամենից առաջ իր ճյուղի արտադրական պլանի կազմելու պարտականությունը: Նա, բացի դրանից, պետք է մասնակցի ընդհանուր արտադրական պլանի կազմելուն, վորպեսզի շաղկապի իր ղեկավարած ճյուղը տնտեսության այլ ճյուղերի հետ:

Նրանից հետո, յերբ պլանն ընդունված է, դաշտաբուծության ղեկավարը կազմակերպում է նրա կիրառումն իր ճյուղում: Նա կազմում է պահանջագիր իր ճյուղին անհրաժեշտ բանվորական ու քարշային ուժի համար, կազմակերպում է նրա ճիշտ օգտագործումը, բաշխում է իր տրամադրության տակ դրած բանվորական ու քարշային ուժն ըստ աշխատանքների տեսակների, հրահանգում է իր աշխատողներին, պարզ ու վորոշակիորեն վորոշելով յուրաքանչյուրի խնդիրը: Դաշտաբուծության ղեկավարը պարտավոր է հետևել, վորպեսզի նրա տրամադրության տակ դրած արտադրության միջոցներն ու մարդիկ օգտագործվեն ըստ հնարավորին շահավետ ձևով, վորպեսզի առանց աշխատանքի չմնան մեքենաները, գործիքները, մարդիկ ու ձիերը: Նա պետք է հսկի նույնպես կատարած աշխատանքի վորակի վրա և կազմակերպի իր ճյուղում յուրաքանչյուր աշխատողի կատարած աշխատանքի վորակի հաշվառումը:

Դաշտաբուծության ղեկավարը պետք է հետևի, վոր դաշտային աշխատանքների համար անհրաժեշտ գյուղատնտ. ինվենտարը ժամանակին պատրաստվի տնտ. մասի կողմից, վոր ցանքի համար սերմացուն ժամանակին ջոկվի ու ախտահանվի, վոր ձեռք բերվեն անհրաժեշտ պարարտանյութեր, վոր տրակտորները ժամանակին վերանորոգվեն և հայթայթվեն բավական քանակով վառելանյութով, իսկ ձիերը դաշտային աշխատանքների մոմենտին լավ կերակրված լինեն և ապահովված լինեն կերով ապագայի համար: Նա տնտեսական մասի միջոցով պետք է հոգ տանի նույնպես, վոր ժամանակին կարգի բերվեն բերքի պահպանման կառուցվածքները՝ ամբարները, մարագները, խոտի սրահները, կարտոֆիլի ու բանջարեղենի պահարանները և այլն:

Իր ամբողջ աշխատանքը դաշտաբուծության ղեկավարը պետք է կատարի համաձայն դյուղատնտեսի ցուցումների: Շատ խոշոր կոլխոզներում հանձնարարվում է դաշտաբուծության ղեկավարության համար ներգրավել դաշտաբույծ-գյուղատնտեսին:

Կենդանաբուծության ղեկավարը պետք է մշակի իր արտադրական պլանի այն մասը, որ վերաբերում է կենդանաբուծության զարգացմանը և մասնակցի կոլխոզի ընդհանուր արտադրական պլանի մշակմանը, շաղկապելու համար իր ճյուղը տնտեսության այլ ճյուղերի հետ: Նրա ամբողջ աշխատանքը պետք է ուղղված լինի վարչության և ընդհանուր ժողովի հաստատած պլանի այն մասի կիրառմանը, որ վերաբերում է կենդանաբուծության զարգացմանը:

Կոլխոզի անդամների ընդհանուր կազմից նա պետք է ջոկի աշխատողների այն քանակը, որ անհրաժեշտ է կենդանաբուծության զարգացման պլանի իրագործման համար, և ճիշտ տեղավորի նրանց աշխատանքներում:

Կենդանաբուծության համար անհրաժեշտ աշխատողների կազմը փոքրիշատե կայուն կլինի, որովհետև կենդանաբուծության հիմնական աշխատողները պետք է մասնագիտացված լինեն: Կենդանաբուծության ղեկավարը պետք է խնամքով հրահանգավորի իր յուրաքանչյուր աշխատողին նրա աշխատանքի հարցերի վերաբերյալ, ներգրավելով անհրաժեշտության դեմքում ռայկոլխոզմիությունից զոոտեխնիկին: Նա պետք է շարունակ հետևի, որ տնտեսության կենդանաբուծական ճյուղի աշխատանքի համար ջոկած բոլոր աշխատողները տանեն իրենց աշխատանքները ճիշտ զոոտեխնիկի ցուցմունքների համաձայն և ոչ թե հնի պես:

Կենդանաբուծության ղեկավարը պետք է կազմակերպի անասունների ճիշտ տեղավորումը, ձգտելով, որ վարչությունն ու ընդհանուր ժողովն անհրաժեշտ միջոցները բաց թողնեն տաք գոմերի, խոզանոցների և այլ շենքերի կառուցման համար: Նա պետք է զոոտեխ-

նիկի ցուցումների համաձայն կազմակերպի նաև անասունների ճիշտ կազմակերպում, ժամանակին միջոցներ ձեռք առնելով մթերելու համար համապատասխան կեր: Նրա վրա պետք է լիովին դրված լինի անասունների ճիշտ պահելու և կերակրելու և յերիտասարդ անասուններին մեծացնելու պատասխանատվությունը: Նա պետք է հետևի անասունների գլխահաշվի փոփոխումներին, անասունների քաշի, կթի և այլ փոփոխություններին, վարելով համապատասխան գրանցումներ: Նա պետք է կանոնավոր հետևի անասունների առողջության դրությանը և կազմակերպի անասնաբուժի սիստեմատիկ հսկողություն կոլխոզի անասունների վրա:

Կենդանաբուծության ղեկավարը պետք է հասնի նրան, որ բարելավվի կոլխոզի հոտը, զուգավորելով կոլխոզի եզերը միայն ազնվացեղ արտադրիչների հետ և ձեռք բերելով կոլխոզի համար լավորակ ու ազնվացեղ անասուններ:

Կենդանաբուծության ղեկավարն իր ամբողջ աշխատանքը պետք է կատարի ռայոնական զոոտեխնիկի ցուցմունքների համաձայն: Զարգացած կենդանաբուծական ճյուղով խոշոր կոլխոզներում կենդանաբուծության ղեկավարի պաշտոնի համար հանձնարարվում է հրավիրել մասնագետ զոոտեխնիկ:

Այն կոլխոզներում, որտեղ բանջարաբուծությունը զարգացած չէ, բանջարանոցների աշխատանքների ղեկավարությունը սովորաբար դրվում է դաշտաբուծության ղեկավարի վրա: Իսկ այն կոլխոզներում, որտեղ բանջարաբուծությունը զարգացած է և մեծ տեղ է բռնում կոլխոզի ընդհանուր ապրանքային արտադրանքի մեջ, սովորաբար ջոկվում է բանջարաբուծության հատուկ ղեկավար: Հիմնականում նրա իրավունքներն ու պարտականությունները բանջարաբուծության աշխատանքներում նույնն են մոտավորապես, ինչ որ դաշտաբուծության ղեկավարինը դաշտաբուծության վերաբերյալ, բայց բացի դրանից, նա պետք է կազմակերպի հատուկ աշխատանքի ջերմոցների (պարնիկների) պատրաստության, բանջարանոցների վնա-

սատուների դեմ պայքարի և բանջարանոցների ջրամատակարարման համար:

Այն կոլխոզներում, որոնք ունեն օժանդակ-արդյունաբերական ձեռնարկներ, հարկավոր է այդ ձեռնարկությունների աշխատանքների համար ջոկել հատուկ ղեկավար: Ամենից լավ է այդ աշխատանքների համար ջոկել այնպիսի աշխատողներ, որոնք ունեն հատուկ տեխնիկական պատրաստություն, որովհետև արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքների ղեկավարությունը պահանջում է հատուկ տեխնիկական գիտելիքներ:

Օժանդակ-արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարը պետք է կազմի ձեռնարկությունների աշխատանքի արտադրական-ֆինանսական պլանը, ջոկի կոլխոզի անդամների կազմից այդ ձեռնարկությունների համար մշտական աշխատողներ, կազմակերպի ճիշտ և ըստ հնարավորին լրիվ օգտագործումն այն բանվորական ուժի, որ դրված է նրա տրամադրության տակ, կազմակերպի կատարած աշխատանքի քանակի ու որակի հաշվառում ու վերահսկողություն, հետևի սարքավորման ու շարժիչների դրությանը, ժամանակին միջոցներ ձեռք առնի ձեռնարկությունների վերանորոգման ու սարքավորման լրացման համար, կազմակերպի ձեռնարկությունները հումքով, վառելանյութով ու անհրաժեշտ նյութերով ժամանակին հայթայթելու գործը, լավ հիմքերի վրա դնի հումքի, վառելանյութի, նյութերի ու մշակվող արտադրանքի հաշվառումը:

Ահա ամփոփ ձևով և ընդհանուր գծերով կոլխոզի տնտեսության կարևորագույն ճյուղերի ղեկավարների պարտականությունների ու իրավունքների բացատրությունը: Յուրաքանչյուր կոլխոզում պետք է մշակվեն ճյուղերի ղեկավարների համար մանրամասն հրահանգներ, որոնք ճիշտ սահմանագծեն ու որոշեն նրանց իրավունքներն ու պարտականությունները՝ նայած տեղական պայմաններին ու առանձնահատկություններին:

4. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բացի վարչությունից, յուրաքանչյուր կոլխոզում

ընտրվում է վերստուգիչ հանձնաժողով: Վերստուգիչ հանձնաժողովի հիմնական խնդիրն է՝ վարչության, նրա առանձին անդամների ու պաշտոնակատար անձանց աշխատանքի վրա հսկողությունն ու կոնտրոլը:

Վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է նույն ժամանակով, ինչ և վարչությունը, այսինքն՝ մի տարով:

Վերստուգիչ հանձնաժողովը չի կարող և չպետք է բավականանա միայն վարչության ֆինանսական գործունեության ֆորմալ ստուգումով տարեկան հաշվետվությունից առաջ, ինչպես այդ հաճախ անում են վերստուգիչ հանձնաժողովները: Նրա խնդիրն է սիստեմատիկորեն հսկել և կոնտրոլի յենթարկել վարչության գործունեությունը:

Վերստուգիչ հանձնաժողովը պետք է պարբերաբար ստուգի վարչության աշխատանքը, թե ինչ չափով է նա կատարում ընդհանուր ժողովի կողմից ընդունած տարեկան արտադրական պլանը: Այն դեպքերում, յերբ արտադրական պլանը չի կատարվում կամ նրա կատարումը կասեցվում է, վերստուգիչ հանձնաժողովը պետք է անմիջապես պարզի պատճառները և միջոցներ ձեռք առնի վերացնելու պլանի կատարմանը խոչընդոտ հանդիսացող պատճառները: Յեթե հանձնաժողովը յեկել է այն յեզրակացության, որ արտադրական պլանի կատարումը գտնվում է ձախողման սպառնալիքի տակ, և որ ձախողման հիմնական պատճառը հանդիսանում է վարչության անգործունեությունը, նա պետք է հրավիրի արտակարգ ընդհանուր ժողով զեկուցելու համար արտադրական պլանի կատարման վերաբերյալ իր յեզրակացությունների մասին և այդ ժողովում մշակի անհրաժեշտ միջոցներ: Վարչության կողմից արտադրական պլանի կատարման վրա վերահսկողությունը վերստուգիչ հանձնաժողովի կարևորագույն ֆունկցիան է:

Վերստուգիչ հանձնաժողովը պետք է սիստեմատիկորեն հետևի նաև վարչության կողմից կոնտրակտացիոն պայմանագրերի և ընդհանրապես կոլխոզի բոլոր այն պարտավորությունների կատարմանը, որ կոլ-

խոզը հանձն է առել պետական ու կոոպերատիվ կազմակերպությունների նկատմամբ (ժամանակին գյուղմթահարկի, վարկերի վճարումը, հացահատիկների ավելցուկի ժամանակին հանձնումը և այլն):

Վերստուգիչ հանձնաժողովը պետք է սիստեմատիկորեն ստուգի կոլխոզի ֆինանսական գործունեությունը, կատարելով պարբերաբար (վորոշ ժամանակաշրջաններում) վերստուգումներ: Կոլխոզի բոլոր գործերի լրիվ վերստուգումը պետք է կատարվի վոչ ուշ քան տարին մեկ անգամ, վարչության տարեկան հաշվետվությունից առաջ և այնուհետեվ ամեն ժամանակ, յերբ անհրաժեշտ կլինի: Այդ դեպքում հանձնաժողովը ստուգում է դրամարկղը, ամբողջ գույքը թե՛ առկայությամբ, և թե ըստ գրքերի, ստուգում է վարչության բոլոր ոպերացիաները, հաշվետարությունը, արդարացուցիչ փաստաթղթերը և այլն: Բոլոր գործերը ստուգելուց հետո հանձնաժողովը արձանագրություն է կազմում, կազմում է յեզրակացություն վարչության հաշվետվության առթիվ և այդ յերկու փաստաթուղթն էլ իր յեզրակացություններով հրապարակում է ընդհանուր ժողովում վարչության հաշվետվությունից հետո:

Վերստուգիչ հանձնաժողովը պետք է կատարի վերստուգման հետազոտություններ ըստ առանձին հարցերի թե՛ չարաշահությունների մասին կոլխոզի առանձին անդամների դիմումներով (որինակ՝ ճաշարանում յեղած չարաշահությունների մասին և այլն), և թե՛ իր սեփական նախաձեռնությամբ, յերբ այս կամ այն գործը կասկած է հարուցում:

Վերստուգիչ հանձնաժողովը պետք է ամեն կերպ աջակցություն և ոգնություն ցույց տա կոլխոզմիությունների ու Հողժողկոմատի մարմինների ներկայացուցիչների աշխատանքներին, վորոնք հետազոտում են կոլխոզի աշխատանքը:

Վերստուգիչ հանձնաժողովն իրավունք ունի պահանջել վարչությունից, կոլխոզի առանձին պաշտոնատար անձերից և ծառայողներից այն անհրաժեշտ տեղեկություններն ու փաստաթղթերը, վոր անհրաժեշտ

են նրան վերստուգման ընթացքով, և այդ կազմակերպություններն ու անձինք պարտավոր են պահանջածը դնել հանձնաժողովի տրամադրության տակ: Այն դեպքերում, յերբ վերստուգիչ հանձնաժողովի համար դժվար է հաղթահարել վերստուգման աշխատանքները, նա իրավունք ունի իրեն ոգնության հրավիրել փորձառու աշխատողներ վարկային ընկերությունից և ռայկոլխոզմիությունից:

Վերստուգիչ հանձնաժողովը, ինչպես և վարչությունը, հաշիվ է տալիս իր աշխատանքի համար կոլխոզի անդամների ընդհանուր ժողովին:

5. ՇԱՐՔԱՅԻՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՁԵՎԵՐԸ

«Աշխատանքի բարձրագույն արտադրողականության հասնելու համար անհրաժեշտ հասարակական կարգապահությունը կարելի յե ձեռք բերել միայն կոլխոզնիկների ու կոլխոզուհիների լիակատար ինքնագործունեությամբ և նրանց ակտիվ մասնակցությամբ կոլեկտիվի տնտեսության ղեկավարությանը» (16-րդ համագումարի «Կոլխոզային շարժման մասին» ընդունած բանաձեվից):

Չի կարելի կոլեկտիվ տնտեսություն կառուցել առանց կոլխոզնիկների մասսաների ամենալայն ինքնագործունեության ծավալման, առանց զարգացնելու նրանց արտադրական նախաձեռնությունը: Յուրաքանչյուր կոլխոզնիկ, յուրաքանչյուր կոլխոզուհի պետք է իրենց զգան կոլեկտիվ արտադրության իսկական մասնակիցներ: Կոլխոզի բոլոր անդամները պետք է ներգրավվեն կոլխոզի կյանքի ղեկավարության աշխատանքի այս կամ այն ձեվին: Ներգրավման նման ձեվ հանդիսանում են արտադրական խորհրդակցություններն ու հանձնաժողովները, կուլտուր-կենցաղային հանձնաժողովները, աշխատանքի պաշտպանության հանձնաժողովները և այլն:

Մասսաների ստեղծագործական նախաձեռնության

ծավալմանը նպաստող և կոլեկտիվ արտադրության մեջ կոլխոզնիկների լրոք լայն մասսաներին ներգրավող ամենից հուժկու միջոցը հանդիսանում են արտադրական խորհրդակցությունները:

Արտադրական խորհրդակցությունների հիմնական խնդիրն է լրոք ներգրավել կոլխոզի բոլոր անդամներին կոլեկտիվ տնտեսության բարելավման ակտիվ աշխատանքին, բարձրացնելու համար աշխատանքի արտադրողականությունը և խնայողության ռեժիմը միջոցների ծախսման մեջ:

Արտադրական խորհրդակցությունները պետք է կազմակերպվեն անպայման բոլոր կոլխոզներում: Փոքր կոլխոզներում կարելի է բավականանալ մեկ ընդհանուր արտադրական խորհրդակցությամբ: Ավելի խոշոր կոլխոզներում, որոնք տնտեսության զարգացած ճյուղեր ունեն, հարկավոր է կազմակերպել արտադրական խորհրդակցություններն ըստ ճյուղերի, բրիգադների և ամբողջ կոլխոզի ընդհանուր արտադրական կոնֆերանս:

Այն դեպքում, երբ կոլխոզում կազմակերպված է մեկ արտադրական խորհրդակցություն, նրա աշխատանքներին պետք է մասնակցեն զանազան ճյուղերի ու ձեռնարկությունների բոլոր ղեկավարները, մասնագետները և կոլխոզի բոլոր ցանկացող անդամները: Այդ խորհրդակցության աշխատանքը պետք է անցնի վարչության այն անդամի ղեկավարությամբ, որը վարում է արտադրությունը:

Այն կոլխոզներում, որտեղ արտադրական խորհրդակցությունները կազմակերպված են ըստ ճյուղերի, նրանց աշխատանքին պետք է մասնակցեն այդ ճյուղում աշխատող բոլոր մասնագետները, այդ ճյուղի բոլոր պաշտոնատար անձինք և ցանկացող այն բոլոր կոլխոզնիկները, որոնք ամրացված են այդ ճյուղում աշխատելու: Ընդհանուր կոլխոզային արտադրական կոնֆերանսների աշխատանքը պետք է անցնի կոլխոզի վարչության նախագահի ղեկավարությամբ:

Արտադրական խորհրդակցությունները պետք է զբաղվեն այն հարցերի գործնական մշակումով, որ կապված են թե՛ ամբողջ կոլխոզի և թե՛ նրա առանձին ճյուղերի հետ կապված գործնական հարցերի մշակման և տնտեսության ղեկավարության կազմակերպման հարցերով: Մասնավորապես՝ արտադրական խորհրդակցությունները պետք է անպայման մշակեն ու քննարկեն հետևյալ հարցերը.—

ա) համապատասխան ճյուղի կամ ամբողջ կոլխոզի արտադրական պլանը. բ) աշխատանքի կազմակերպման և բանվորական ուժի ճիշտ օգտագործման հարցերը աշխատանքի առանձին տեսակներում. գ) այն միջոցառումները, որ նպաստում են համապատասխան ճյուղի եկամտաբերությանը. օրինակ՝ դաշտաբուծության վերաբերյալ բերքատվության բարձրացումը, կենդանաբուծության վերաբերյալ՝ անասունները պահելն ու կերակրելը՝ կիթը բարձրացնելու համար և այլն. դ) փարչական ծախսերի կրճատումը թե՛ ըստ առանձին ճյուղերի և թե ամբողջ կոլխոզի վերաբերյալ, ե) նյութերի ու միջոցների կրճատում կառուցումների ժամանակ և այլն, զ) աշխատանքի արտադրողականություն և այլն: Կարճ ասած՝ այն բոլոր միջոցառումներն ու հարցերը, որ կապված են կոլխոզային արտադրության լավագույն կազմակերպման հետ, պետք է մշակվեն արտադրական խորհրդակցություններում:

Արտադրական խորհրդակցություններն ու կոնֆերանսները պետք է գումարվեն որոշակի օրերին ոչ պակաս, քան ամիսը երկու անգամ: Խորհրդակցությունների օրակարգը պետք է վաղօրոք հայտնի լինի կոլխոզի բոլոր անդամներին:

Մեծ թվով անդամներ ունեցող կոլխոզներում հանձնարարվում է արտադրական խորհրդակցությունների աշխատանքի ղեկավարության համար կազմել հատուկ արտադրական խորհրդակցություններ, որոնց կազմն ընտրվում է արտադրական խորհրդակցու-

թյուններում նրա ամենից ակտիվ աշխատողների թվից: Այդ հանձնաժողովի նախագահը պետք է լինի վարչության այն անդամը, որը վարում է արտադրության կազմակերպման հարցերը:

Արտադրական խորհրդակցությունները պետք է միջամտեն տնտեսության անմիջական ղեկավարությանը: Նրանց որոշումներն ուժի մեջ են մտնում միայն նրանից հետո, երբ այդ որոշումները հաստատվում են կոլխոզի վարչության կամ նրա անդամների ընդհանուր ժողովի կողմից:

Կոլխոզի ներսում և շրջակա բնակչության մեջ կուլտուր-լուսավորական աշխատանքի ծավալման նպատակով, ինչպես նաև կոլխոզում կենցաղի նոր ձևերի արմատացման աշխատանքների ծավալման համար բոլոր կոլխոզներում հարկավոր է կազմակերպել կուլտուր-կենցաղային հանձնաժողովներ, որոնք աշխատում են վարչության ղեկավարությամբ ու ցուցումներով:

Կուլտուր- կենցաղային հանձնաժողովները սովորաբար ընտրվում են ընդհանուր ժողովներում կոլխոզի անդամների թվից՝ 3-ից մինչև 7 հոգի կազմով՝ նայած կոլխոզի չափերին: Հանձնաժողովի նախագահ նշանակվում է վարչության այն անդամը, որը վարում է կուլտուր- կենցաղային աշխատանքի հարցերը:

Կուլտուր-կենցաղային հանձնաժողովի աշխատանքին պետք է մասնակցություն ցույց տան և նրա նիստերին կարող են ներկա լինել կոլխոզի բոլոր ցանկացող անդամները: Հանձնաժողովի կազմի մեջ հարկավոր է ընտրել այն աշխատողներին, վորոնք կկամենան մասնակցել այդ աշխատանքին և իրենց պատրաստությամբ կարող են այդ անել: Կուլտուր-կենցաղային հանձնաժողովի անդամները բաշխում են իրար միջև կուլտուր-լուսավորական ու կենցաղային աշխատանքների բոլոր տեսակները: Մեկին հանձնարարվում է վարել ակումբը, մյուսին գրադարանը, երրորդին՝ խմբակների ղեկավարությունը և այլն:

Անհրաժեշտության դեպքում կոլխոզում կարող են

կազմակերպվել և այլ ժամանակավոր ու մշտական հանձնաժողովներ:

Մշտական հանձնաժողովներից կարող է կազմակերպվել աշխատանքի պաշտպանության հանձնաժողով այն կոլխոզներում, վորտեղ կան արդյունաբերական ձեռնարկություններ, վորտեղ տնտեսությունը մեքենայացրված է և վորտեղ այդ պատճառով աշխատանքի պաշտպանության հարցը մեծ նշանակություն ունի: Այդ հանձնաժողովի խնդիրների մեջ պետք է մտնի աշխատանքի պաշտպանության, դժբախտ դեպքերի կանխման և այլ միջոցառումների մշակումը:

Ժամանակավոր հանձնաժողովների թվում պետք է կազմակերպել փոխառության տարածման, այս կամ այն հեղափոխական տոների կազմակերպման և այլ հանձնաժողովներ:

Անհրաժեշտության դեպքում կոլխոզներում կարող են կազմակերպվել ժամանակավոր բնույթի տնտեսական հանձնաժողովներ առանձին հատուկ պատվերների կատարման համար: Օրինակ՝ հացամթերումների հանձնաժողով, տրակտորների համար կանխավճարների պարարտացուցիչ միջոցների հավաքման հանձնաժողով և այլն:

Ընդհանրապես՝ կոլխոզում ամբողջ աշխատանքը պետք է կառուցված լինի առավելագույն չափով կոլխոզի շարքային անդամներին տնտեսական ղեկավարությանը ներգրավելու հիման վրա:

V. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

1. Աշխատանքի կազմակերպման նշանակությունը.
2. Բանվորական ուժի օգտագործման պլանը.
3. Կոլխոզի անդամների մասնագիտացումը.
4. Բրիգադների կազմակերպումը.
5. Աշխատանքների նորմայացումը, գործունյա աշխատանք և աշխատանքների գնահատումը.
6. Սոցմրցակցությունն ու հարվածայնությունը կոլխոզներում:

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Բանվորական ուժի կազմակերպման գլխավոր թերությունը կոլխոզներում այն է, որ կոլխոզներն աշխատում են առանց որևէ պլանի, նրանք չեն կարողանում բաշխել աշխատանքն անդամների միջև, չեն կարողանում աշխատողներին բաժանել արտադրության մեջ այնպես, որ յուրաքանչյուրը գիտենա իր գործը: Բացի դրանից, կոլխոզի անդամները չունեն անձնական պատասխանատվություն կատարած աշխատանքի համար, ինչպես նաև չկա կոնտրոլ նրանց աշխատանքի վրա, որի հետևանքն է լինում աշխատանքի ժամանակին չկատարում և աշխատանքի վատ վորակ: Վերջապես՝ բանվորական ուժի կազմակերպման մեծ թերությունն է հանդիսանում աշխատողներին չարունակ մի աշխատանքից դեպի մյուսը տեղափոխելը, ճյուղերի ղեկավարների և կոլխոզների վարչության անդամների հաճախակի փոփոխումը, ինչպես նաև այդ գործի ռացիոնալացմանը չքավորների ու բատրակների խմբակների թույլ մասնակցությունը»: Այդպես է բնութագրված կոլխոզներում աշխատանքի կազմակերպման դրությունը հատուկ ժողովածուում, որ հրատարակել է ԽՍՀՄ Կոլխոզկենտրոնը և նվիրված է կոլխոզներում աշխատանքի կազմակերպման հարցերին:

Կարճ ասած՝ այն բոլորը, ինչ հիմնականն է աշխատանքի ճիշտ կազմակերպման գործում, տակավին շատ կոլխոզներում ապահովված չէ բավարար չափով: Կոլխոզներում աշխատանքը ճիշտ կազմակերպելու և նրա արտադրողականության բարձրացման հասնելու համար անհրաժեշտ է ամենից առաջ վերացնել այդ բոլոր թերությունները: Դրա համար հարկավոր է.

1) Յուրաքանչյուր կոլխոզում ունենալ բանվորական ուժի օգտագործման պլան, որը կազմում է կոլխոզի արտադրական ընդհանուր պլանի անհրաժեշտ մասը:

2) Յուրաքանչյուր կոլխոզում ճիշտ սահմանել բանվորական ուժի պաշար և հայտաբերել բանվորական ուժի ավելցուկներն ու պակասն ըստ շրջանների:

3) Սահմանել կոլխոզում յեղած բանվորական ուժի լրիվ հաշվառում ըստ սեռի, տարիքի և վորակի:

4) Բաժանել կոլխոզի ամբողջ բանվորական ուժն ըստ ճյուղերի համաձայն նշված արտադրական պլանի և կազմակերպել յուրաքանչյուր ճյուղի ներսում բրիգադներ, սահմանելով բրիգադների չափը (մարդկանց, մեքենաների և աշխատող անասունների քանակը), նայած աշխատանքի բնույթին ու մեքենաների արտադրողականությանը:

5) Անցկացնել կոլխոզնիկների մասնագիտացում ըստ ճյուղերի ու բրիգադների ներսում աշխատանքների վորոշ տեսակներով և կոլխոզնիկների միջև աշխատանքների խստիվ բաժանման հիման վրա:

6) Կազմակերպել յուրաքանչյուր կոլխոզում կոլխոզնիկների ըստ մասնագիտությունների վորակի բարձրացման աշխատանք, ինչպես նաև ղեկավար կադրերի պատրաստության աշխատանք:

7) Կազմակերպել ավելորդ բանվորական ուժի համար,—վորպիսի ուժ յուրաքանչյուր կոլխոզում կա վորոշ շրջաններում,—տնայնագործական արհեստներ և դրսի աշխատանք:

8) Լավ հիմքերի վրա դնել յուրաքանչյուր կոլխոզնիկի կողմից կատարած աշխատանքի վորակի հաշվառումը, ինչպես նաև կոնտրոլ աշխատանքների կատարման վրա:

9) Հաստատել կոլխոզներում իսկական աշխատանքային կարգապահություն, վճռական պայքար մղելով զանազան պատրվակներով կոլեկտիվ աշխատանքի մասնակցությունից ամեն տեսակի խուսափումների դեմ:

10) Բոլոր աշխատանքներն անցկացնել ծավալուն սոցիալիստական մրցակցության, աշխատանքային կարգապահության և նյութական շահագրգռվածության հիման վրա, հաստատելով յուրաքանչյուր կոլխոզում մշակման նորմաներ, գործարքային աշխատանք և նվաճումների համար մրցանակաբաշխություն: Ահա այն

հիմնական դրությունները, վորոնք պետք է դրված լինեն յուրաքանչյուր կոլխոզում աշխատանքի ճիշտ կազմակերպման հիմքում՝ բարձրացնելու համար աշխատանքի արտադրողականությունը:

2. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԼԱՆԸ

Բանվորական ուժի օգտագործման պլանը պետք է կազմել կոլխոզի ընդհանուր արտադրական պլանի հիման վրա յեվ հանդիսանում է նրա կարևորագույն մասը: Կոլխոզի արտադրական բուն պլանը պետք է կազմվի այնպիսի հաշվով, վոր ըստ հնարավորին լրիվ և ավելի արդյունավետ ձևով օգտագործվի կոլխոզի յեղած ամբողջ բանվորական ուժը:

Բանվորական ուժի օգտագործման պլանը ճիշտ կազմելու համար անհրաժեշտ է ամենից առաջ վորոշել կոլխոզում յեղած բանվորական ուժի ընդհանուր տարեկան պաշարը: Այդ պաշարը վորոշվում է հետևյալ ձևով. բազմապատկվում է 16 տարեկանից բարձր հասակի բոլոր աշխատունակ տղամարդկանց ու կանանց քանակը տարվա մեջ յեղած բանվորական օրերի քանակի վրա (300 կամ 280):

Ըստ ամիսների այդ պաշարը վորոշվում է, բազմապատկելով բոլոր աշխատունակների ընդհանուր թիվը 25 բանվորական օրվա վրա:

Ամսական այդ պաշարից անհրաժեշտ է հանել բանվորական օրերի այն քանակը, վորը կոլխոզի անդամները ծախսում են, կատարելով մշտական աշխատանք ըստ մասնագիտության (փականագործներ, հաշվետարներ, գյուղատնտեսներ և այլն) կամ ընտրությամբ (վարչության այն անդամները, վոր ազատված են ֆիզիկական աշխատանքից):

Արտադրական պլանը կազմելիս անհրաժեշտ է յելնել բանվորական ուժի այդ յեղած պաշարից և պլանը կազմել այնպես, վոր մի կողմից օգտագործվի բանվորական ուժի ամբողջ պաշարը և մյուս կողմից՝ մինչև

իսկ աշխատանքի ամենալարված շրջաններում (բերքահավաք և աշնանացան) կարելի լինի յոլա գնալ, կոլխոզի սեփական ուժերով:

Բանվորական ուժի ավելցուկների հայտաբերման դեպքում կոլխոզը պետք է կազմակերպի այդ ավելորդ բանվորական ուժի օգտագործումը, զարգացնելով տնտեսության լրացուցիչ ճյուղերը, օժանդակ ձեռնարկությունները և տնայնագործական արհեստներ, ինչպես նաև ուղարկելով կազմակերպված ձևով ազատ բանվորական ձեռքեր սեզոնային շինարարական աշխատանքի, սեզոնային շինարարական աշխատանքի ֆաբրիկներն ու գործարանները և դրսի այլ աշխատանքները:

Բանվորական ուժի օգտագործման պլանն անհրաժեշտ է կազմել նաև ըստ տնտեսության ճյուղերի: Բանվորական ուժի օգտագործման ամսական պլանների հիման վրա կազմվում է ամեն շաբաթ կամ ամեն տասնօրյակ աշխատանքների օրացուցակ: Այդ տասնօրյա կամ շաբաթական ցուցակների հիման վրա պետք է կազմել աշխատանքի ամենօրյա վերակարգեր, վորպիսի վերակարգերը կատարման համար տրվում են բրիգադներին, յեթե այդպիսիներ կազմակերպված են, կամ առանձին անդամներին:

3. ԿՈԼԽՈԶԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ

Կոլխոզներում աշխատանքի կազմակերպման գործում եական թերությունը կոլխոզների աշխատանքի ցածր արտադրողականությունն է, վորը տեղի ունի շնորհիվ մասնագիտացման բացակայության:

Չնայած մասնագիտացման շահավետության ամբողջ ակնհայտությանը, մինչև այժմ կոլխոզների ճընշող մեծամասնության մեջ տակավին չկա մասնագիտացում:

Յուրաքանչյուր կոլխոզ պետք է լըջորեն զբաղվի իր անդամներին վորոշ մշտական աշխատանքի ամրացնելու և նրանց մասնագիտացնելու հարցերով:

Յուրաքանչյուր կոլխոզում անհրաժեշտ է ամենից

առաջ բաշխել ամբողջ բանվորական ուժն ըստ ճյուղերի,
իսկ ճյուղի ներսում առանձնացնել աշխատանքի այն
տեսակները, վոր մշտական բանվորական ուժ են պա-
հանջում: Ճյուղում յեղած այն բոլոր աշխատանքները,
վորոնք փոքր ի շատե մշտական բնույթ են կրում, պետք
է ունենան մշտական աշխատողներ, առաջին հերթին
կոլխոզի անդամ չքավորներից ու բատրակներից: Կոլ-
խոզի անդամների այդպիսի բաշխումն ըստ ճյուղերի
և նրանց վորևե մեկ մշտական աշխատանքի ամրացու-
մը կաջակցի աշխատողների մասնագիտացմանը, նրանց
վորակի բարձրացմանը, հետեվապես նաև աշխատան-
քի արտադրողականության բարձրացմանը: Բացի ճյու-
ղերի վարիչներից, վորոնց հարկավոր է ջոկել կոլխո-
զի անդամներից ամենից փորձվածներին, գիտակներին,
հարկավոր է մշտական աշխատողներ առանձնացնել նաև
արտադրության զանազան ճյուղերի համար՝ տրակտո-
րիստներ, աշխատողներ բարդ մեքենաների վրա (կոմ-
բայններ, խրձկապ մեքենաներ), ձիապաններ, կենդա-
նաբուծությունում՝ ֆերմում աշխատողներ, կթողներ,
խոզապահներ. բանջարաբուծության մեջ՝ բանջարա-
բույծներ, տնտեսական մասում՝ պահեստապետներ,
պահապաններ, կառապաններ և այլն:

4. ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Մասնագիտացման ու բանվորական ուժի ճիշտ օգ-
տագործման հետ անմիջորեն կապված է բրիգադների
կազմակերպման հարցը: Ըստ մասնաճյուղերի բաշխ-
ված ամբողջ բանվորական ուժը պետք է ճյուղի ներ-
սում կազմակերպված լինի բրիգադների:

Բրիգադ կոչվում է կոլխոզի անդամների այն խում-
բակը, վորը ջոկված է մի վորոշ տեսակի վորևե
աշխատանք կատարելու, գլխավորված է ղեկավարի՝
բրիգադիրի կողմից և իր ներսում ամբողջ աշխատան-

քը բաշխել է բրիգադի մեջ մտնող բոլոր անդամների
միջեվ:

Ճյուղի ղեկավարի տրամադրության տակ
մտնող ամբողջ բանվորական ուժը բաշխվում է ղեկա-
վարի կողմից ըստ բրիգադների՝ նայած տվյալ ճյու-
ղի աշխատանքի բնույթին ու քանակին:

Ճյուղի ղեկավարը նշանակում է բրիգադիրներ,
վորոնք աշխատանքը տանում են նրա ղեկավարու-
թյամբ, ստանալով նրանից ամեն օր կամ մի քանի օր-
վա ամբողջ բրիգադի համար վորոշ առաջադրանքներ:

Բրիգադիրը հաշիվ է տալիս իր բրիգադի աշխա-
տանքի մասին ճյուղի ղեկավարին: Նա պատասխանա-
տու յե բրիգադի աշխատանքի համար, աշխատանքի յե
նշանակում իր բրիգադի անդամներին և կատարում է
բրիգադի կազմի մեջ մտնող յուրաքանչյուր անդամի
կատարած աշխատանքի քանակի ու վորակի հաշվա-
ռումը: Բրիգադիրը բրիգադի մյուս անդամների հետ
միասին անմիջական մասնակցություն է ցույց տալիս
բրիգադի աշխատանքներին: Բրիգադի ներսում բրի-
գադիրը պետք է անդամներին այնպես բաշխի ըստ աշ-
խատանքի առանձին տեսակների, վոր բրիգադի յու-
րաքանչյուր անդամ մասնագիտանա աշխատանքի մի
վորոշ տեսակի մեջ: Բրիգադիրի տրամադրության
տակ բացի բանվորական ուժից, անցնում են նաև ար-
տադրության այն բոլոր միջոցները, վոր անհրաժեշտ
են բրիգադին հանձնած աշխատանքները, — աշխատա-
նասունը, տրակտորները, գութանները, գյուղատըն-
տեսական մեքենաները և այլն (նայած աշխատանքի
բնույթին): Բրիգադների կազմակերպման ժամանակ
անհրաժեշտ է ձգտել, վորպեսզի բրիգադների կազմը

առաջ բաշխել ամբողջ բանվորական ուժն ըստ ճյուղերի, իսկ ճյուղի ներսում առանձնացնել աշխատանքի այն տեսակները, որ մշտական բանվորական ուժ են պահանջում: Ճյուղում եղած այն բոլոր աշխատանքները, որոնք փոքր ի շատե մշտական բնույթ են կրում, պետք է ունենան մշտական աշխատողներ, առաջին հերթին կոլխոզի անդամ չքավորներից ու բատրակներից: Կոլխոզի անդամների այդպիսի բաշխումն ըստ ճյուղերի և նրանց որևէ մեկ մշտական աշխատանքի ամրացումը կաջակցի աշխատողների մասնագիտացմանը, նրանց որակի բարձրացմանը, հետևապես նաև աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: Բացի ճյուղերի վարիչներից, որոնց հարկավոր է ջոկել կոլխոզի անդամներից ամենից փորձվածներին, գիտակներին հարկավոր է մշտական աշխատողներ առանձնացնել նաև արտադրության զանազան ճյուղերի համար՝ տրակտորիստներ, աշխատողներ բարդ մեքենաների վրա (կոմբայններ, խրձկապ մեքենաներ), ձիապաններ, կենդանաբուծությունում՝ գոմում աշխատողներ, կթողներ, խոզապահներ. բանջարաբուծության մեջ՝ բանջարաբույծներ, տնտեսական մասում՝ պահեստապետներ, պահապաններ, կառապաններ և այլն:

4. ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Մասնագիտացման ու բանվորական ուժի ճիշտ օգտագործման հետ անմիջորեն կապված է բրիգադների կազմակերպման հարցը: Ըստ մասնաճյուղերի բաշխված ամբողջ բանվորական ուժը պետք է ճյուղի ներսում կազմակերպված լինի բրիգադների:

Բրիգադ կոչվում է կոլխոզի անդամների այն խումբակը, որը ջոկված է մի որոշ տեսակի որևէ աշխատանք կատարելու, գլխավորված է ղեկավարի՝ բրիգադիրի կողմից և իր ներսում ամբողջ աշխատան-

քը բաշխել է բրիգադի մեջ մտնող բոլոր անդամների միջև:

Ճյուղի ղեկավարի տրամադրության տակ մտնող ամբողջ բանվորական ուժը բաշխվում է ղեկավարի կողմից ըստ բրիգադների՝ նայած տվյալ ճյուղի աշխատանքի բնույթին ու քանակին:

Ճյուղի ղեկավարը նշանակում է բրիգադիրներ, որոնք աշխատանքը տանում են նրա ղեկավարությամբ, ստանալով նրանից ամեն օր կամ մի քանի օրվա ամբողջ բրիգադի համար որոշ առաջադրանքներ:

Բրիգադիրը հաշիվ է տալիս իր բրիգադի աշխատանքի մասին ճյուղի ղեկավարին: Նա պատասխանատու է բրիգադի աշխատանքի համար, աշխատանքի է նշանակում իր բրիգադի անդամներին և կատարում է բրիգադի կազմի մեջ մտնող յուրաքանչյուր անդամի կատարած աշխատանքի քանակի ու որակի հաշվառումը: Բրիգադիրը բրիգադի մյուս անդամների հետ միասին անմիջական մասնակցություն է ցույց տալիս բրիգադի աշխատանքներին: Բրիգադի ներսում բրիգադիրը պետք է անդամներին այնպես բաշխի ըստ աշխատանքի առանձին տեսակների, որ բրիգադի յուրաքանչյուր անդամ մասնագիտանա աշխատանքի մի որոշ տեսակի մեջ: Բրիգադիրի տրամադրության տակ բացի բանվորական ուժից, անցնում են նաև արտադրության այն բոլոր միջոցները, որ անհրաժեշտ են բրիգադին հանձնած աշխատանքները,— աշխատանասունը, տրակտորները, գութանները, գյուղատնտեսական մեքենաները և այլն (նայած աշխատանքի բնույթին): Բրիգադների կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է ձգտել, որպեսզի բրիգադների կազմը

փոքր իշատե մշտական ու կայուն լինի և վորպեսզի բրիգադի ներսում կարելի լինի հասնել աշխատողների մասնագիտացման: Ճիշտ է՝ վոչ բոլոր ճյուղերում և աշխատանքների վոչ բոլոր տեսակներում կարելի յե դրան հեշտությամբ հասնել, բայց և այնպես բրիգադի կազմի կայունություն և աշխատողների մասնագիտացման այդ սկզբունքը պետք է դրված լինի բրիգադի կազմակերպման հիմքում: Բրիգադիրը պետք է իր բրիգադի բոլոր անդամներին այնպես բաշխի աշխատանքի, վոր բանվորական ուժի սխալ բաշխման հետեվանքով աշխատանքներում չառաջանեն խափանումներ: Իսկ խափանում կարող է առաջանալ այն ժամանակ, յերբ աշխատողները և արտադրության միջոցները սխալ բաշխված լինեն ըստ աշխատանքների առանձին տեսակների: Յեթե որինակ, վարի կամ ցանքի բրիգադում մի վորոշ տեղամասում մարդիկ ու արտադրության միջոցները բաշխված են այնպես, վոր վարողներն իրենց աշխատանքը զգալիորեն ավելի դանդաղ են կատարում, քան թե տափանողներն ու ցանողները, ապա արդյունքն այն կլինի, վոր տափանողներն ու ցանողները ժամանակի մի մասն իզուր կկորցնեն, սպասելով մինչեվ վոր վարողների կողմից տեղամասը պատրաստվի տափանման ու ցանքի համար: Վորպեսզի այդ այդպես չլինի, բրիգադիրը պետք է վաղորոք, հաշվի առնելով բոլոր մանրամասները, այնպես դասավորի բանվորական ուժն ու արտադրության միջոցները, վոր աշխատանքներում խափանումներ չլինեն, և աշխատանքի բոլոր տեսակները հետեվողականության կարգով անցնեն հավասարաչափ: Իսկ յեթե այնուամենայնիվ աշխատանքի ընթացքում

պարզվում է, վոր ամեն ինչ հաշվի չի առնված և տեղի յեն ունենում խափանումներ, բրիգադիրը պետք է վերաշարի իր բրիգադը և վերացնի հայտաբերած թերությունները: Ճյուղի ղեկավարը, վերսկսելով բրիգադների աշխատանքը, պետք է ժամանակին միջոցներ ձեռք առնի, վորպեսզի նրա ճյուղում կազմակերպված և աշխատող բրիգադները հայթայթված լինեն այն բոլոր միջոցներով ու նյութերով, վոր անհրաժեշտ են աշխատանքը կատարելու համար՝ կեր ձիերի համար, վառելանյութ ու յուղ տրակտորների ու մեքենաների համար, կենսամթերք մարդկանց համար և այլն: Ճյուղի ղեկավարը պետք է տնտեսական մասի միջոցով կազմակերպի բրիգադների անհրաժեշտ մատակարարումը: Բրիգադի յուրաքանչյուր աշխատող, վորն աշխատում է աշխատանքի այս կամ այն գործիքի կամ բարշային ուժի ոգնությամբ պետք է պատասխանատու լինի դրանց պահպանության համար: Տրակտորիստը պետք է հետեվի իր տրակտորին ու նրան շղթայած գործիքների, վարողը իր ձիերին ու գութանին և այլն: Ինվենտարի ու կենդանի քարշային ուժի փչացման համար, յեթե այդ տեղի յե ունեցել բրիգադի անդամի հանցանքով, նա պետք է կրի նյութական պատասխանատվություն:

Բրիգադների մեծությունը ըստ մարդկանց, քարշային ուժի ու արտադրության միջոցների, ինչպես ցույց է տվել նրանց կազմակերպման ու աշխատանքի փորձը, չափազանց բազմազան է լինում և կախված է մի շարք պայմաններից,— կատարելիք աշխատանքի բնույթից, տրակտորների, մեքենաների ու գործիքների ուժից, կոլխոզի չափից և այլն: Սակայն բոլոր

դեպքերում և բրիգադների աշխատանքը տվել է ավելի բարձր արտադրողականություն, քան թե առանց բրիգադների աշխատանքը, քանի վոր աշխատանքների բրիգադային յեղանակի դեպքում կարելի յե լավ կիրառել աշխատանքի բաժանումը, աշխատողների մասնագիտացումը, կոնտրոլն ու կատարած աշխատանքի հաշվառումը:

Սովորաբար այն կոլխոզներում, վորտեղ զարգացած են դաշտաբուծությունն ու կենդանաբուծությունը, կազմակերպվում են հետևյալ բրիգադները. 1) հացահատիկային մշակույթների վարի ու ցանքի բրիգադներ, 2) ձեռնահարկերի մշակույթների վարի ու տնկելու բրիգադներ, 3) քաղհանի բրիգադներ, 4) հացահատիկային մշակույթների բերքահավաքի բրիգադներ, 5) կալսելու բրիգադ, 6) հացահատիկների տեսակավորելու և ախտահանելու բրիգադներ, 7) անասունների յուրաքանչյուր առանձին տեսակի համար առանձին կենդանաբուծական բրիգադներ (կթան անասունների, խոզաբուծության, վոչխարաբուծության), 8) թռչնաբուծության բրիգադներ, 9) վերանորոգման բրիգադներ, 10) շինարարական բրիգադներ, 11) փոխադրությունների բրիգադներ և այլն:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՈՐՄԱՅԱՑՈՒՄԸ, ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Աշխատանքի արտադրողականության և աշխատանքային կարգապահության բարձրացման համար միանգամայն անհրաժեշտ է բոլոր կոլխոզներում սահմանել աշխատանքի յուրաքանչյուր տեսակի համար արտա-

դրանքի պարտադիր նորմաներ: Արտադրանքի հաստատուն նորմաների մշակումն ու սահմանումը պարտադիր պայման է հանդիսանում նաև կոլխոզի յեղած բանվորական ուժի ու քարշի ճիշտ բաշխման համար ըստ ճյուղերի ու բրիգադների: Կոլխոզի արտադրական պլանն ու նրա կարևորագույն մասը կազմող բանվորական ուժի ու քարշի օգտագործման պլանը կարող է լավ կազմվել միայն այն դեպքում, յերբ կոլխոզում կմշակվեն ու կսահմանվեն գյուղատնտեսական աշխատանքի բոլոր տեսակների նորմաները: Արտադրանքի նորմաների մեծությունը կախված է մի շարք ամենաբազմազան միջայներից: Այդ պայմաններից կարևորագույնն են հանդիսանում.— ա) մեքենաների ու գործիքների դրությունը, նրանց ընդգրկման լայնությունը. նրանց սարքինությունն ու տեխնիկական պիտանիությունը, բ) քարշային ուժի վորակը, տրակտորների ուժը, ձիերի ու յեզների դրությունը, գ) բանվորական ուժի պատրաստականությունը, վորակն ու կազմակերպվածությունը: Միանգամայն ակնհայտ է, վոր տարբեր կոլխոզներում այդ պայմանները միատեսակ չեն: Այդ պատճառով ինվենտարի բազմազանությունը, քարշային ուժի տարբեր վորակը, աշխատողների տարբեր կազմը և մի շարք այլ պայմաններ տակավին հնարավորություն չեն տալիս բոլոր կոլխոզներում սահմանելու արտադրանքի միատեսակ նորմաներ: Բայց և այնպես ԽՍՀՄ Կոլխոզկենտրոնը մշակել է աշխատանքի տարբեր տեսակների համար ձիաքարշի ինվենտարի տարբեր պայմաններում կողմորոշիչ նորմաներ, վորոնք պետք է կոլխոզների համար ձեռնարկ հանդիսա-

նան իրենց արտադրանքի նորմաների մշակման ժամանակ: Կոլխոզկենտրոնի մոտավոր նորմաների հիման վրա յուրաքանչյուր կոլխոզ պետք է մշակի արտադրանքի իր նորմաները, հարմարեցրած կոլխոզի տնտեսության վորոշելու առանձնահատկություններին, նրա գյուղատնտեսական ինվենտարի ու քարշային ուժի դրությանը:

Արտադրանքի նորմաներ մշակելիս յուրաքանչյուր կոլխոզ պետք է խնամքով հաշվի առնի ինվենտարի, քարշի դրությունը, հերկող դետնի ամրությունը, աշխատանքների այս կամ այն տեսակի մեքենայացման դրությունը և աշխատանքների անցյալ փորձը: Այդ նորմաները կազմելիս կոլխոզը պետք է հաշվի առնի լավագույն աշխատողների, լավագույն բրիգադների աշխատողների փորձը: Նորմաների մշակումը պետք է մտցնել կոլխոզնիկների լայն քննարկմանը՝ կոլխոզի անդամների արտադրական խորհրդակցությունների ու ընդհանուր ժողովների միջոցով: Աշխատանքների պրոցեսում անհրաժեշտ է սիստեմատիկորեն ստուգել արտադրանքի սահմանած նորմաները, մտցնելով նրանց մեջ անհրաժեշտ ճշտումներ:

Գյուղատնտեսական աշխատանքների յուրաքանչյուր տեսակից արտադրանքի հաստատուն նորմաների մշակելն ու սահմանելը զգալիորեն հեշտացնում է յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատանքի հաշվառումը ու գործարքային աշխատանքի անցնելը: Աշխատանքի յուրաքանչյուր վորոշ տեսակի համաձայն արտադրանքի սահմանած նորմաները պետք է գնահատվեն անմիջապես աշխատանքային օրերով. արտադրանքի նորմաների հաստատման հետ միաժամանակ յուրաքանչյուր կոլխոզում անհրաժեշտ է հաստատապես սահմանել վորոշ աշխատանքի կատարման համար աշխատանքային օրերի քանակը:

Աշխատանքային օրերով աշխատանքի գնահատումը սահմանելիս պետք է հաշվի առնել յուրաքանչյուր աշխատանքի կատարման բարդությունն ու դժվարությունը: Տարբեր աշխատանքներ ըստ բարդության ու լարվածության, չնայած նրան վոր կարող են ժամանակի քանակով միատեսակ լինել, պետք է գնահատվեն տարբեր աշխատանքային օրերով: Սակայն ըստ դժվարության ու բարդության տարբեր այն աշխատանքները, վոր պահանջում են միատեսակ ժամանակի ծախք, գնահատելիս, անհրաժեշտ է հաշվի առնել, վոր ուժերի ավելի մեծ լարում ու վորակ պահանջող դժվարին աշխատանքները պետք է գնահատվեն վոչ ավելի քան յերկու անգամ, համեմատած ավելի հեշտ ու հասարակ աշխատանքների հետ: Աշխատանքների այդ գնահատականն աշխատանքային օրերով պետք է քննարկվեն արտադրական խորհրդակցություններում և հաստատվեն կոլխոզնիկների ընդհանուր ժողովի կողմից: Յուրաքանչյուր կոլխոզնիկ պետք է գիտենա վաղորոք, աշխատանքի վերակարգ ստանալով, թե աշխատանքային օրերի ինչ քանակով են գնահատվում այդ աշխատանքները:

Աշխատանքների գործարքային գնահատմանն անցնելը զգալիորեն կբարձրացնի կոլխոզներում աշխատանքի արտադրողականությունը:

Կոլխոզների այն անդամների համար, վորոնց աշխատանքը չի կարող նորմայացման յենթարկվել և կատարվել գործարքային կարգով (վարչության ագատ-

ված անդամները, գյուղատնտեսները, պահեստապետները, հաշվետարները և այլն) անհրաժեշտ է սահմանել աշխատանքային որերի այն քանակը, վոր նրանք ստանում են մի վորոշ ժամանակամիջոցում (հնգորյակում, դեկադում, մի ամսում, տարում): Այն բրիգադիրը, վոր բրիգադի անդամների հետ հավասար չափով ֆիզիքական աշխատանք են կատարում, պետք է ստանան աշխատանքային որերի վորոշ քանակ կազմակերպչական աշխատանքի համար, վորպես հավելում այն աշխատանքային որի քանակին, վոր նա ստանում է կոլխոզնիկների հետ հավասար չափով իր վրա դրած աշխատանքի կատարման համար:

Գործարքայինի անցնելիս չափազանց կարևոր է կազմակերպել կատարած աշխատանքի վորակի կոնտրոլը, զեղչեր անելով սահմանած գնահատականից աշխատանքի վորակի ցածրացման համար: Կատարած աշխատանքի քանակի ու վորակի ամբողջ հաշվառումը պետք է վարի բրիգադիրը, վորը պարտավոր է ստուգել իր բրիգադի յուրաքանչյուր անդամի աշխատանքը և վարի նախնական գրանցումն ըստ ԽՍՀՄ Կոլխոզկենտրոնի սահմանած ձևերի: Յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատանքի մասին այդ գրանցումները պետք է հանձնել կոլխոզի գրասենյակին, վորովհետև այդ հաշվառման տվյալների հիման վրա պետք է կատարվի յեկամուտների բաշխումը կոլխոզի անդամների միջև: Օգտակար է աշխատանքների ցուցակը կախել դաշտում, վարչությունում և այլն:

Գործարքային անցնելն ու յուրաքանչյուր կոլխոզնիկի կողմից կատարած աշխատանքի քանակի ու վորակի հաշվառումը լավագույն միջոցն են աշխատանքային

կարգապահություն հաստատելու համար: Գործարքայինի և աշխատանքի ծախքի հաշվառման ժամանակ շատ հեշտությամբ յուրաքանչյուր կոլխոզում կարելի յե իրոք վերահսկել, թե կոլխոզի յուրաքանչյուր անդամ ինչպիսի փաստացի մասնակցություն է ցույց տավել կոլեկտիվի աշխատանքում: Իսկ յերբ կա հաշվառում ու վերահսկողություն, հետևապես հեշտությամբ կարող են հայտաբերվել և այն բոլոր անդամները, վորոնք խուսափում են աշխատանքից և այդպիսիների նկատմամբ կարելի յե ձեռք առնել հասարակական ազդեցության միջոցներ. այն է՝ հասարակական հանդիմանություն, սև տախտակի վրա գրելը, խիստ հանդիմանություն և ծայրահեղ դեպքում չարամիտ գործակիցներին կարելի յե հեռացնել կոլխոզի անդամների կողմից:

6. ՍՈՑՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

Կոլխոզների ամրացման և մանավանդ աշխատանքային կարգապահության ու աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում հսկայական նշանակություն է ստանում կոլխոզային շարժման տվյալ շրջանում կոլխոզներում սոցմրցակցությունն ու հարվածայնության զարգացումը:

Սակայն մինչև այժմ սոցիալիստական մրցակցությունն ու հարվածայնությունը կոլխոզներում տակավին ծավալված են միանգամայն անբավարար չափով:

Մի շարք դեպքերում աշխատանքի այդ նոր մեթոդները գործադրվում են ձևականապես և մեծ մասամբ

կրում են զորահանդեսային բնույթ: Այդ դրությունն անհրաժեշտ է հիմնովին փոխել:

Այն վիթխարի խնդիրները, վոր դրված են կոլեկտիվացած գյուղացիության առաջ խոշոր սոցիալիստական արտադրության կազմակերպման գործում, կարող են լուծվել միայն այն դեպքում, յերբ բոլոր կոլխոզները վճռականապես կանցնեն աշխատանքի սոցիալիստական նոր մեթոդներին, յերբ կանցնեն աշխատանքի հարվածային տեմպերին:

Պայքարն արտադրական պլանների կատարման համար, ցանքադաշտերի ընդարձակման համար, բերքատվության բարձրացման համար, ապրանքային կենդանաբուծության ավելացման համար, ժամանակին բոլոր կարեվորագույն կամպանիաներն անցկացնելու համար, պետք է մղել լայն ծավալված սոցիալիստական մրցակցության հիման վրա: Չպետք է լինեն այնպիսի կոլխոզներ, վորոնք ներգրավված չլինեն սոցիալիստական մրցակցությանը: Յուրաքանչյուր կոլխոզ, կոլխոզում յուրաքանչյուր բրիգադ, յուրաքանչյուր առանձին կոլխոզնիկ պետք է մասնակցություն ցույց տա մրցակցությանը և դրա համեմատ հարվածայնորեն վերակառուցի իր աշխատանքը:

Մրցակցող կողմերի ընտրության ժամանակ հարկավոր է ընտրել փոքրիշատե հավասարաչափ կազմակերպվածության և նրա հետ պայմանագիր կնքել այնպիսի պայմաններով, վորն իրոք կատարելի յեն և կարող են կոնտրոլի յենթարկվել: Կոլխոզների միջև սոցմրցակցության պայմանագիրը պետք է բարդ չլինի և պարզ ու հասկանալի լինի յուրաքանչյուր կոլխոզնիկի հա-

մար: Այդ պայմանագիրը պետք է բազմակողմանիորեն քննարկվի ընդհանուր ժողովում և յուրացվի յուրաքանչյուր կոլխոզնիկի կողմից: Միայն այդ դեպքում այդ պայմանագիրը կլինի մասսաների սոցմրցակցության պայմանագիր և վոչ թե կոլխոզի վերնախավի հերյուրանք: Կոլխոզների միջև կամ կոլխոզի ու սովխոզի միջև կնքած այդ պայմանագրի հիման վրա պետք է ծավալվի մրցակցությունը նաև կոլխոզների ներսում: Յուրաքանչյուր բրիգադ, յուրաքանչյուր կոլխոզնիկ պետք է մրցակցեն միմյանց հետ և պայքարեն պայմանագրում առաջադրված պայմանների կատարման համար, առաջադրեն իրենց հանդիպական պլանները, հասարակական բուքսիրի վերցնեն յետ մնացողներին և այլն:

Սոցմրցակցությունը պետք է տարվի այն հարցերի շուրջը, վորոնց հաջող լուծումը կարող է ապահովել կոլխոզի հետագա զարգացումը սոցիալիստական ուղիով:

Մի կոլխոզի մրցակցության ժամանակ մի այլ կոլխոզի հետ նման հարցեր կարող են լինել.

1. Արտադրական պլանի ժամանակին կատարումն ու կատարումը, պլանի, վոր նախատեսում է՝ ա) ցանքադաշտերի ընդարձակումը, բ) բերքատվության բարձրացումը, գ) ապրանքային կենդանաբուծության զարգացումը և այլն:

2. Գարնանացանի կամպանիայի ժամանակին և հաջող անցկացումը:

3. Բերքահավաքի և աշնանացանի կամպանիայի ժամանակին և հաջող անցկացումը:

4. Հացամթերումների և պետության հանդեպ ու-

նեցած այլ պարտավորությունների ժամանակին կատարումը:

5. Աշխատաժամի արտադրողականության բարձրացումը՝ աշխատանքի լավագույն կազմակերպման հիման վրա:

6. Անասնանոցների վորակով ամենից լավ և արժեքով ամենից աժան շինարարությունը:

7. Կենցաղային հիմնարկների կազմակերպումը (ճաշարան, մանկամսուր, մանկապարտեզ, ակումբ և այլն):

Կոլխոզի ներսում բրիգադների միջև մրցակցության ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն հարցերի վրա, վորոնք կապված են աշխատանքային կարգապահության ու աշխատանքի արտադրողականության բարձրացման հետ: Մասնավորապես՝ բրիգադները պետք է մրցակցեն արտադրանքի ավելի բարձր նորմաների համար, առաջադրանքների ժամանակին և վորակով ամենից լավ կատարելու համար, ժամանակին աշխատանքի դուրս գալու համար:

Կոլխոզի ներսում բրիգադների միջև ճիշտ կազմակերպված մրցակցության արդյունքը կլինի հարվածային բրիգադների կազմակերպումը, աշխատանքի տեմպերի բարձրացումը, շարքային կոլխոզնիկների ակտիվության աճումը, աշխատանքային կարգապահության բարձրացումը, իսկ վորպես հետևանք՝ աշխատանքի ընդհանուր արտադրողականության աճումը կոլխոզներում:

Սոցիալիստական մրցակցության ընթացքը պետք է սիստեմատիկորեն լուսաբանվի կոլխոզի պատի թեր-

թում և այդ նպատակով հրատարակած հատուկ պլակատներում:

Մրցակցության հաշվառման ու ղեկավարության համար արտադրական խորհրդակցությունը պետք է ջոկի հատուկ հանձնաժողով, վորը և պետք է կազմակերպի այդ ամբողջ աշխատանքը: Մրցակցության ժամանակ առանձնապես աչքի ընկնողներին խրախուսելու համար անհրաժեշտ է կազմակերպել մրցանակաբաշխություն, հատկացնելով դրա համար հատուկ միջոցներ:

Կոլխոզների յուրաքանչյուր կազմակերպիչ, կոլխոզային շարժման յուրաքանչյուր աշխատող պետք է հիշեն, վոր կոլխոզներում աշխատանքի կազմակերպման հարցերը կոլխոզային շարժման ամբողջ շրջանում հանդիսանում են կարևորագույն հարցեր, վորոնց ճիշտ լուծումից գլխավորապես կախված է կոլխոզների բախտը: Աշխատանքի ճիշտ կազմակերպման և անմիջորեն դրա հետ կապված յեկամուտների բաշխման շուրջը ներկայումս կոլխոզների դեմ պայքար են մղում կուլակներն ու նրանց ձայնակիցները: Աշխատանքի կազմակերպման հարցերը ներկայումս դարձել են դասակարգային պայքարի հարցեր: Այնտեղ, վորտեղ վատ է կազմակերպված աշխատանքը, այնտեղ, վորտեղ դրա հետևանքով ցածր է յեկամուտը,— այնտեղ ամրանում է կուլակի դիրքը, այնտեղ վարկաբեկվում է կոլեկտիվ աշխատանքը, այնտեղ դանդաղում են կոլեկտիվացման տեմպերը: Պայքարն աշխատանքի ճիշտ կազմակերպման համար՝ պայքար է կոլխոզների համար: Այդ այն ողակն է, վորին անհրաժեշտ է ներկայումս կառչել, վորպեսզի հանենք ամբողջ շղթան,

վճռական ու վերջնական հարված հասցնենք կուլակությանը,— կապիտալիստական այդ վերջին դասակարգին մեր յերկրում:

VI. ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

1. Յեկամուտների բաշխման քաղաքականության նշանակությունը: 2. Ընդհանուր յեկամուտը հիմնական մասերի բաշխելու կարգը: 3. Յեկամտի բաշխումը կոլխոզնիկների միջեվ: 4. Աշխատանքի հատուցումը: 5. Բերքի բաշխումը: 6. Անբաժանելի և այլ փոնդերին արած հատկացումները:

1. ՅԵԿԱՄՈՒՏԻ ԲԱՇԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Յեկամուտների բաշխման հետ անխզելիորեն կապված են կոլխոզային շինարարության այնպիսի կարեվորագույն խնդիրներ, ինչպիսին են աշխատանքի արտադրողականության բարձրացումը, աշխատանքի սոցիալիստական նոր ձևեր ստեղծելը, կոլեկտիվացման տեմպերի արագացումը, կոլխոզում սոցիալական տարբեր խմբակների միջեվ ճիշտ փոխհարաբերությունների հաստատելը և կոլխոզի հետագա ամրացումը սոցիալիստական հիմունքներով:

Բաշխման ճիշտ սիստեմի տնտեսական ու քաղաքական հսկայական նշանակությունը բղխում է հատկապես նրանից, վոր այստեղ ամենից շոշափելի ձևով խաչաձևվում են կոլխոզնիկների առանձին սոցիալական

խմբակների շահերը և վոր դասակարգային տեսակետից միանգամայն ստույգ բաշխումն է ընդունակ ճիշտ, լենինորեն շաղկապել կոլեկտիվացման սկզբնական շրջանում յերեկվա միանձնյակի նյութական անձնական շահը սոցիալիստականորեն կառուցվող կոլեկտիվ տնտեսության շահերի հետ: Մեզ անհրաժեշտ է կոլեկտիվացման առաջին իսկ շրջանում (մինչեվ անգամ հասարակ կոլխոզներում) նախ ոգտագործել արտադրության կոլխոզային յեղանակի առավելությունը՝ բարձրացնելու համար բատրակ-չքավորական ու միջակ գյուղացիական մասսաների կենսական մակարդակը, ընդդեմ այն պայմանների, վոր նրանք ունեյին միանձնյա տնտեսությունում, յերկրորդ՝ ոգտագործել կոլխոզի բարձրացած յեկամուտը՝ ամրացնելու համար կոլեկտիվ տնտեսության սոցիալիստական համայնացրած հիմքը: Դրանք են կոլեկտիվացման գործում հավասարապես կարեվոր այդ յերկու խնդիրը: Ճիշտ և դրականորեն լուծելով առաջին խնդիրը,— կոլխոզնիկի յեկամտի բարձրացման խնդիրն ընդդեմ այն յեկամուտների, վոր նա ստանում եր անհատական տնտեսությունում, մենք այդպիսով իսկ վոչ միայն ամրացնում ենք այժմյան կոլխոզնիկին սոցիալիստական տնտեսությանը, վոչ միայն բարձրացնում ենք նրա շահագրգռվածությունը դեպի աշխատանքն ու կոլխոզի զարգացումը, այլև մի հզոր ազդակ ենք ստեղծում ներգրավելու համար «վաղվա կոլխոզնիկին» — միանձնյա չքավորին ու միջակին, ստեղծում են կարեվորագույն նախապայման ավարտելու համար՝ համատարած կոլեկտիվացման ու

դրա հիման վրա կուլակության, որպես դասակարգի վերացնելու խնդիրը։

Սակայն հիմնովին սխալ կլիներ ամբողջ բաշխումը հանգեցնել միայն նրան, թե ինչպես անել, որ ավելի լավ ապրել։ Հարկավոր է նկատի ունենալ ոչ միայն սպառման շահերը, այլ չպետք է մոռանալ ամենից հիմնականը,— իսկական սոցիալիստական հիմունքներով կոլխոզի կառուցման և ամրացման խնդիրը։

Ով չի կարողանում ճիշտ չափկապել առաջին խընդիրը,—կոլխոզնիկների նյութական շահերը,— կոլխոզային արտադրության հետ և ապահովել կոլխոզային մասսաների բարեկեցության աճումն աշխատանքի հարաճուն արտադրողականության հիման վրա, կոլխոզի սոցիալիստական զարգացման ու աճման հիման վրա, նա անխուսափելիորեն կշեղվի իսկական ճանապարհից դեպի զուտ սպառողական խնդիրների ուղին, այդպիսով իսկ ճանապարհ բացելով կորդասիրության, սեփականատիրական տրամադրությունների, անդամների միջև նյութական անհավասարության խորացման համար և այլն։ Այդ պատճառով միայն այնտեղ կարող է ճիշտ կառուցվել յեկամուտների բաշխումը, որտեղ ինչտ է կազմակերպված արտադրությունը, որտեղ այդ բաշխումը հենվում է տնտեսության սոցիալիստական ձևի վրա, և որտեղ, վերջապես՝ ապահովված է արտադրության միջոցների ամենից արագ ստեղծումը (անբաժանելի և այլ հասարակական ֆոնդեր)։ Արտադրության մեջոցը որոշում է բաշխման յեղանակը և ոչ թե ընդհակառակը։

Յեկամուտների բաշխումը բաժանվում է հետևյալ կարեվորագույն մասերին.

1) նախընթաց տարվա անտեսության բոլոր ծախքերի լիակատար ծածկումը.

2) յեկամուտների այն մասի որոշումը, որը պետք է հատկացվի անբաժանելի և այլ հասարակական

ֆոնդերին կոլխոզային անտեսության ընդարձակման համար (ցանքատարածների աճումը, կենդանաբուծության տեսակների ընդարձակումը կամ կազմակերպումը, արդյունաբերական ձեռնարկությունների նոր ճյուղերի կազմակերպումը, բարդ մեքենաների գնում և այլն)․

3) յեկամուտների այն մասի որոշումը, որը պետք է հատկացվի անդամների սպառողական ու կուլտուրական կարիքներին և այդ բաժնի ճիշտ բաշխումն անդամների միջև համաձայն կոլխոզի յուրաքանչյուր անդամի կողմից գործադրած աշխատանքի որակի ու քանակի։

Անհրաժեշտ է մատնանշել, որ բացառիկ փոխադարձ կախվածություն կա յեկամտի այն բաժնի միջև, որը բաշխվում է անդամներին (այլ կերպ ասած, սպառողական ֆոնդ) և այն մասի միջև, որը հատկացվում է կոլխոզի անտեսության ընդարձակմանը, նրա համար սոցիալիստական հիմք ստեղծելուն (անբաժանելի ֆոնդ)։ Յերբ հարց է ծագում կոլխոզնիկների միջև յեկամտի բաշխման մասին, քաղաքական ճիշտ գծի վորոշման համար մենք պետք է յելնենք նրանից, որ կոլխոզ են յեկել սոցիալական տարբեր խմբակներ (բատրակ, չքավոր, միջակ) տարբեր հոգեբանությամբ, սկզբնական շրջանում տարբեր վերաբերմունքով դեպի կոլխոզը, որ մեզ անհրաժեշտ է այդ բոլոր սոցիալական խավերի մեջ ապահովել շահագրգռվածությունը, որ համատարած կոլեկտիվացումը տակավին ապահովված չէ, և որ շարունակվում է պայքարը կուլակության որպես դասակարգ, վերացնելու համար։ Այստեղից էլ որոշվում է մեր կուսակցության քաղաքականությունը յեկամուտների բաշխման և կոլխոզնիկի յեկամտի մակարդակը որոշելու մեջ։

Կուսակցությունն ու կառավարությունն առաջադրել են կոլխոզներին հետևյալ լոզունգը՝ «բարձրացնել համատարած կոլեկտիվացման առաջին իսկ տարում կոլխոզնիկի յեկամուտն ընդդեմ այն յեկամտի, որ նա ստանում էր իր միանձնյա անտեսությունում»․ Եվ այդ լոզունգը կոլխոզների ճնշող մեծամասնության կողմից։

Յերբ մեզ հարկավոր է վորոշել, թե ընդհանուր յեկամտից վո՛րքան պետք է հատկացնել արտադրության ընդարձակման համար, անբաժանելի և համայնացրած այլ հատուկ ֆոնդերին, այդ բնագավառում ճիշտ գիծ վորոշելու համար մենք պետք է յելնենք նրանից, վոր՝ ա) ամենապարզ կոլխոզներում և «արտելներում վոչ թե ավարտվում է, այլ միայն սկսվում է նոր հասարակական կարգապահություն ստեղծելու գործը, գյուղացիներին սոցիալիստական շինարարություն սովորեցնելու գործը» (Համկոմկուսի (բ) 16-րդ համագումարի բանաձևից)· բ) կյանքի վճռական և կայուն բարելավմանը կարելի յե հասնել միայն աստիճանաբար տեխնիկապես վերազինելով կոլխոզը և կոլխոզի պարզ ձևերը վերածելով սոցիալիստական ավելի բարձր ձևի:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵԿԱՄՈՒՏԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ԲԱՇԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ընդհանուր յեկամտի և տնտեսության տարեկան բոլոր ծախսերի ճիշտ հաշիվը հանդիսանում է յեկամուտները ճիշտ բաշխելու առաջին պայմանը:

Ծշտենք նախ ընդհանուր յեկամտի հասկացողությունը: Ընդհանուր յեկամուտը՝ կոլխոզի առանց բացառության բոլոր թե՛ դրամական և թե՛ բնական յեկամուտներն են. այն է՝

ա) յեկամուտները դաշտաբուծությունից (հացահատիկային, տեխնիկական և այլ մշակույթներ).

բ) յեկամուտներ համայնացրած կենդանաբուծությունից (կովեր, վոչխարներ, խոզեր թռչուններ, մեղուներ).

գ) յեկամուտներ համայնացրած այգիներից, բանջարանոցներից, պլանտացիաներից.

դ) յեկամուտներ վերամշակման ձեռնարկություններից (յուղի, պանրի գործարաններից, ջրաղացից և այլն), օժանդակ ձեռնարկություններից ու արհեստանոցներից.

ե) յեկամուտներ դրսում աշխատող քարշի ուժից

(ապրանքների փոխադրություն, վարձով դաշտերի մշակում և այլն).

զ) զանազան այլ յեկամուտներ, վորոնց թվում նաև կոլխոզնիկների դրսում ստացած աշխատավարձից հատկացումներ, վոր արվում են համաձայն գյուղատնտեսական արտելի կանոնադրքի:

Ընդհանուր յեկամուտը հաշվվում է դրամական արտահայտությամբ: Բնամթերքների բոլոր տեսակները պետական կայուն գներով վերածվում են դրամի, անկախ նրանից, թե այդ բնամթերքը, վորպես ապրանքային հանձնվում է պետությանը, թե մնում է կոլխոզի արտադրական ու պարենավորման կարիքների համար (սերմացու, խար, անդամների հայթայթում, բնամթերային պահեստ ֆոնդեր): Այդ անհրաժեշտ է անել նրա համար, վորպեսզի ընդհանուր յեկամուտն արտահայտվի չափի միևնույն միավորներով (ռուբլիներով):

Բաշխման հաջորդ քայլն է կոլխոզի բոլոր ծախսերի հաշվելը. դրան վերաբերում է հետևյալը.

ա) բոլոր մշակույթների համար ծախսած սերմացուն, պարարտանյութերն ու պատվաստման նյութերը· բ) գյուղատնտեսական ծախսված ինվենտարի արժեքի չինջեցումը (ամորտիզացիա) և ինվենտարի ընթացիկ վերանորոգումը· գ) գույքի, ցանքերի և անասունների ապահովագրությունը· դ) գյուղատնտեսական հարկ· ե) անասնապահության այգեգործության, ձեռնարկությունների ու արհեստանոցների ծախքերը· զ) մեքենատրակտորային կայանի աշխատանքների վճարը· է) ծախքեր կոլխոզի ղեկավարման և վարչու բանվորների ու ծառայողների վրա· թ) վարկերի տոկոսների վճարը և տնտեսության այլ ծախքեր:

Նրանից հետո, յերբ կոլխոզում վորոշված է ընդհանուր յեկամուտը, և պարզված են ծախքերը, կարելի յե հատկացումներ անել տնտեսության ընդարձակման համար համայնացրած ֆոնդի ոգտին և հանել այն բաժինը, վոր յենթակա յե անդամների միջև վերջնական բաշխման:

Մեր միտքն ավելի պարզելու համար ցույց տանք բաշխման ոպերացիան պարզ օրինակով: Յենթադրենք, վոր հացահատիկային կոլխոզի ընդհանուր յեկամուտը կազմվում է հետևյալ հոդվածներից.

1. Յեկամուտներ դաշտաբուծությունից 250.000 ռ.
2. Յեկամուտներ կենդանաբուծությունից 10.000 ռ.
3. Յեկամուտներ բանջարաբուծությունից 50.000 ռ.
4. Յեկամուտներ զանազան ձեռնարկթ. 25.000 ռ.
5. Այլ յեկամուտներ . . . . . 15.000 ռ.

Ընդհանուր յեկամուտը 350.000 ռ.

Յենթադրենք այնուհետև, վոր կոլխոզի ծախքերն արտահայտվել են հետևյալ գումարներով.

1. Սերմացու . . . . 30.000 ռ.
2. Գույքի ամորտիզացիա և ինվենտարի ընթացիկ վերանորոգում . . . . 10.000 ռ.
3. Վճարված է Մեքենատրակտորային կայանին հերկի ու ցանքի համար . . 15.000 ռ.
4. Գյուղատնտեսական հարկ և ապահովագրում . . . . 7.000 ռ.
5. Խար համայնացրած անասունների համար 10.000 ռ.
6. Ձեռնարկությունների ծախքը . . . 10.000 ռ.
7. Ղեկավարության ծախքը . . . 3.000 ռ.
8. Այլ ծախքեր . . . . 5.000 ռ.

Ընդամենը ծախքերն են 90.000 ռ.

Դուրս գանք այժմ ընդհանուր յեկամտից ծախքերը՝ կստանանք 350–90=260 հազար ռուբլու:

Այդ գումարն է, վոր յենթակա յե բաշխման: Ինչպե՞ս ճիշտ բաշխել այդ գումարն ըստ տնտեսության զանազան արտադրական ֆոնդերի և կոլխոզնիկների միջև—ահա դրանումն է հենց խնդիրը: Համաձայն ԽՍՀՄ Հողժողկոմատի ու Կոլխոզկենտրոնի վորոշման՝ ամենից առաջ ծախքերը դուրս յեկած գումարի հաշվից (մեզանում այդ գումարն է 260 հազար ռուբլի) անհրաժեշտ է լրացնել սերմացվի, պահեստի և խարի ֆոնդերը համաձայն ցանքադաշտի ընդարձակման ու կենդանիների (ձիերի, կովերի ու խոզերի) քանակի ավելաց-

ման: Այդ նշանակում է, վոր բավական չէ միայն ծածկել ընթացիկ տարում ցանած սերմացուն և կենդանիներին տված կերը (վորը մեր ծախքերում նախատեսված էր՝ սերմացվի արժեքը 30 հազար ռուբլի և խարը 10 հազար ռուբլի, իսկ ընդամենը 40 հազար ռուբլի), այլ անհրաժեշտ է նաև յեկամտից ծածկել ընթացիկ տարվա ծախքերը աճած ցանքադաշտերի սերմացվի և կենդանաբուծության ընդարձակման համար: Յենթադրենք, վոր սերմացվի ֆոնդը անհրաժեշտ է ավելացնել համաձայն ցանքադաշտի 10 հազար ռուբլով, իսկ խարի ֆոնդը՝ 5 հազար ռուբլով: Այդ գումարը (10+5=15 հազար ռուբլի) նույնպես պետք է հանել ընդհանուր յեկամտից վորպես ծախք:

Հանելով այդ գումարն ընդհանուր յեկամտի մնացորդից կստանանք 260–15=245 (հազար ռուբլի):

Այժմ ամենագլխավորն է՝ ինչպես մեր ստացած 245 հազար ռուբլի յեկամտից հատկացում կատարել մի կողմից՝ անբաժանելի և այլ համայնացրած ֆոնդերի օգտին և մյուս կողմից՝ հանել կոլխոզնիկների միջև՝ նրանց սպառողական ու կուլտուրական կարիքների բավարարման համար, բաշխելու մասը:

Գյուղատնտեսական արտելի կանոնադրության § 11-ում հիշյալ յեկամտի բաշխման մասին ասված է, վոր «տնտեսական տարվա վերջում արտելի ստացած յեկամուտներից ծածկվում են տնտեսական ծախքերը, ինչպես նաև տնտեսության հետ կապված ծախքերը, ծածկվում են ծախքերն աշխատանքի անընդունակ անդամներին պահելու համար, հատկացումներ են կատարվում անբաժանելի ու համայնացրած ֆոնդերի օգտին (10-ից մինչև 30 տոկոս անբաժանելի ֆոնդի օգտին և 5-ից մինչև 15 տոկոս համայնացրած այլ ֆոնդերի օգտին) և հաշվեվճարումներ են կատարվում աշխատանքի վարձատրության համար»: Հողժողկոմատի ու Կոլխոզկենտրոնի այս տարվա հատուկ վորոշման մեջ հանձնարարվում է, վորպես կանոն հատկացնել անբաժանելի ֆոնդի օգտին 10 տոկոս և մնացած համայնական ֆոնդերի օգտին (կուլտուրական կարիքներ, օգնության

աշխատանքի անընդունակներին, մրցանակների համար և այլն) հատկացնել 5 տոկոս: Յեկամտի մնացած ամբողջ գումարը բաշխել կոլխոզնիկների միջև: Անբաժանելի ֆոնդի օգտին կարելի յե հատկացնել 30 կամ 20 տոկոս, հենվելով ընդհանուր ցուցման վրա, «վորպես կանոն՝ միայն 10 տոկոս», նույնը և այլ հատկացումների նկատմամբ: Մինչդեռ նրանից, թե վորքան կհատկացնենք մենք անբաժանելի և այլ ֆոնդերի օգտին, ամբողջովին կախված է այն մնացորդը, վորը յենթակա յե անդամների միջև բաշխման: Իսկ կոլխոզի անդամի յեկամուտն ապահովելը կարեվորագույն խնդիր է: Այստեղից էլ պարզ է, վոր դրա համար պատրաստի չափ տալ չի կարելի, ամեն ինչ կախված կլինի տվյալ կոլխոզի պայմաններից:

Յեթե մեր կոլխոզում

նախ՝ հարկավոր է չիջել հերթական մուծումները վարկով ձեռք բերած գյուղատնտեսական մեքենաների համար 30 հազար ռուբլի.

յերկրորդ՝ հարկավոր է ձեռք բերել տրակտորոցենտրի ակցիաները 15 հազար ռուբլու և

յերրորդ՝ հարկավոր է առաջիկա տարվա համար հաշվի առնել կոլխոզի տնտեսական խնդիրները, ինչպես նաև անհատական տնտեսություններում դաշտաբուծությունից յեղած յեկամուտը (յենթադրենք, վոր չքավորի յեկամուտն է 250 ռուբլի, միջակինը՝ 350 ռուբլի), այն ժամանակ մեզ հեշտ կլինի մոտենալ առաջդրած խնդրի լուծմանը, հեշտ կլինի անել անհրաժեշտ հաշիվները: Այդպիսի նախնական հաշիվները միանգամայն անհրաժեշտ են յեկամուտների վերջնական բաշխումից դեռ շատ առաջ մանավանդ սկսնակ յերիտասարդ կոլխոզի համար:

Անենք մենք էլ մեր հաշիվը: Կոլխոզը պետք է միջոցներ գտնի վերադարձնելու համար ստացած վարկը (30 հազար) և մասնակցելու իր տնտեսության սպասարկող մեքենատրակտորային կայանի առաջավոր տեխնիկա ստեղծելու գործին, հետեվապես՝ պետք է ձեռք բերի ակցիաներ (15 հազար ռուբլու): Տնտեսու-

թյան մեջ այդ ներդրումները կարող են կատարվել կոլխոզի ընդհանուր յեկամուտներից և անբաժանելի ձեվով: Ուստի ընդունենք 45 հազար ռուբլի գումարը վորպես հիմք վորոշելու համար անբաժանելի ֆոնդի տոկոսային հատկացումը, վորը կկազմի 18 տոկոսից մի փոքր ավելի (245 հազար ընդհանուր գումարից): Հատկացնենք, դիցուք 8 տոկոս հասարակական այլ ֆոնդերին (կուլտֆոնդ 2 տոկոս, մրցանակային՝ 2 տոկոս, չքավորության ֆոնդ՝ 2 տոկոս, աշխատանքի անընդունակների ֆոնդ 2 տոկոս), վորը կկազմի 19,6 հազար ռուբլի: Հետեվապես՝ ընդամենը ֆոնդերին հատկացվում է 64,6 հազար ռուբլի: Դուրս գանք 245 հազար ռուբլուց 64,6 հազար ռուբլի, կստանանք 180,4 հազար ռուբլի: Այդ 180,4 հազար ռուբլին է հենց, վոր պետք է բաշխվի անդամների մեջ: Բայց նախքան այդ գումարը բաշխելը համաձայն գործադրած աշխատանքի, նրանցից պետք է յեկամտի մի մասը դուրս գալ անդամների միջև ըստ համայնացրած գույքի բաշխելու համար:

Համաձայն կառավարության և Կոլխոզկենտրոնի վորոշման՝ անդամների համայնացրած գույքով բաշխվող յեկամտի գումարը պետք է կազմի դաշտաբուծությունից ու համայնացրած կենդանաբուծությունից ստացած ընդհանուր յեկամտի 5 տոկոսը: Մեզանում դաշտաբուծությունից ստացած յեկամուտը հավասար է 250 հազար ռուբլու, կենդանաբուծության յեկամուտը՝ 10 հազար ռուբլու, իսկ ընդամենը 260 հազար ռուբլու, այդ գումարի 5 տոկոսը հավասար է 13 հազար ռուբլու:

Յեթե 180,4 հազար ռուբլուց հանենք և այդ 13 հազար ռուբլի գումարը, այդ դեպքում մենք կստանանք միայն յեկամուտը, վոր պետք է բաշխենք անդամների միջև՝ նրանց աշխատանքի վարձատրության կարգով: Այդ յեկամուտը կլինի 180,4−13=167,4 հազար ռուբլու:

Այժմ տեսնենք, թե ինչպե՞ս կարտահայտվի կոլխոզնիկի յեկամուտը և արդյո՞ք մենք նախատեսումներ արինք ֆոնդերի հատկացման համար:

Յենթադրենք, վոր մեր կոլխոզում 400 ծուխ է, վո-

րանք աշխատել են 100 հազար աշխատանքային օր: Այստեղից մենք կարող ենք իմանալ, թե ինչպիսի միջին յեկամուտ կունենա կոլխոզում յուրաքանչյուր ծուխ և ամեն մի աշխատանքային օրում: 167,4 հազար ռուբլի բաժանելով 400-ի մենք կստանանք 418, ուրեմն յուրաքանչյուր կոլխոզային ընտանիքին միջին հաշվով ընկնում է մոտ 418 ռուբլի յեկամուտ, իսկ մեկ աշխատանքային օրում կլոր թվով ընկնում է 1 ռուբլի 68 կոպեկ: Այսպիսով կոլխոզը կարողացավ ծածկել իր բոլոր ծախսերը, ապահովելով միևնույն ժամանակ ավելի լավ կյանք համեմատած անհատական չքավոր-միջակային տնտեսությունների հետ և նաև ավելացրեց իր անբաժանելի ֆոնդը, վորն իր հերթին ցույց է տալիս կոլխոզնիկների նյութական դրության բարելավումը:

3. ՅԵԿԱՄՏԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ.

Յեկամտի այդ մասի ու բերքի բաշխումն արդեն կոլխոզնիկների իրենց գործն է: Հարկավոր է սահմանել այնպիսի կարգ, «վոր բերքի բաշխման հարցերը լուծվեն վոչ թե առանց կոլխոզնիկի գիտության, վորևէ գրասենյակում, այլ Կուսակցության կենտկոմի դիրեկտիվի հիման վրա կոլխոզնիկների միջոցով, կոլխոզնիկների ընդհանուր ժողովի միջոցով, կոլխոզնիկների ընդհանուր ժողովի հաստատումով: Այդ կլինի լավագույն յերաշխիքը սխալների դեմ» (Յակովլևի յեզրափակման ճառը Համկոմկուսի (բ) 16-րդ համագումարում): Այնտեղ, վորտեղ բաշխման հարցերը վճռվել են առանց կոլխոզնիկների գիտության, առանց բավականաչափ ղեկավարության, այնտեղ թույլ են տրված սխալներ: Այդ սխալներից կարևորագույնները նշված են ԽՍՀՄ Կոլխոզկենտրոնի վորոշման մեջ. այն է՝ ա) յեկամուտների բաշխման հավասարեցուցիչ յեղանակ. բ) սպառման նորմաների սահմանում. գ) կոլխոզի անդամների միջև յեկամուտների բնամթերային մասի բաշխման չափերի ու ժամկետների վերից տված ցուցումներ. դ) անբաժանելի ու հասարակական ֆոնդերի օգտին տվյալ տնտեսական տարվա համար չափազանց բարձր չափը. ե) մի շարք դեպքերում աշխատանքի հաշվառումը դրամական արտահայտությամբ պահելը, վորի հետևանքը այն է լինում, վոր կոլխոզային մասսայի մեջ ամրանում է այն գաղափարը, թե կոլխոզն էլ վարձող է և յեկամտին մասնակցելը փոխարինվում է աշխատավարձի հասկացողությամբ. զ) առանձին դեպքերում լիովին ըստ փայերի բաշխելու կապիտալիստական յեղանակ սահմանելը. անբաժանելի ֆոնդերի համար հատկացումներն անթույլատրելիորեն այնպիսի ցածր չափերի հասցնելը, վորոնք չեն ապահովում արտադրության միջոցների վերականգնումը, իսկ յերբեմն մինչև իսկ անբաժանելի ֆոնդի համար հատկացումներից լիովին հրաժարվելը: Յեկամուտների բաշխման սիստեմը կոլխոզներում պետք է կառուցված լինի արտադրական և աշխատանքային սկզբունքներով: Այդ սկզբունքները, վոր դրված են կառավարության ու Կոլխոզկենտրոնի դիրեկտիվների հիմքում, հանգում են հետևյալին. ա) յեկամուտների (բնամթերքների ու դրամի) բաշխումն անդամների միջև պետք է կատարվի յուրաքանչյուր կոլխոզնիկի գործադրած աշխատանքի քանակի ու վորակի համեմատ. այդ աշխատանքը պետք է արտահայտվի աշխատանքային օրերով. բ) աշխատանքի վարձատրությունը կատարվում է բացառապես կոլխոզի բերքի և ուրիշ ճյուղերից ստացած յեկամուտների արդյունքից. գ) ընտանիքների աշխատանքի անընդունակ անդամների բավարարումը, համայնական սնունդը, մանկական մսուրները և այլն կատարվում են կամավոր կարգով և ընդհանուր ժողովի վորոշումով. դ) կոլխոզի այն անդամները, վորոնք առանց հարգելի պատճառների չեն մասնակցել կոլխոզի աշխատանքին, ամենևին իրավունք չունեն բաժին ստանալու կոլխոզի յեկամուտներից:

Այստեղից պարզ է, վոր անդամները բնավ չեն կարող հավասարաչափ ապահովվել յեկամտով: Կոլխոզնիկների միջև նյութական անապահովությունը բղխում է վոչ թե միայն նրանից, վոր նրանք կոլխոզում տարբեր յեկամուտներ ունեն աշխատանքներում տարբեր

չափով մասնակցելու հետեվանքով, այլ նաև իրենց գույքային դրության տարբերության պատճառով:

Մենք պետք ե ձգտենք, վորպեսզի վորքան կարելի յե արագ վոչընչացնենք կոլխոզնիկների միջև սոցիալական ու նյութական անհավասարությունը: Բայց պետք ե գիտենալ, թե ինչպես անել այդ: Այդ հավասարությունը միանգամից ձեռք բերելու անկարող ձգտումներն անխուսափելիորեն կոպիտ սխալներ են առաջացնում: Այդ սխալների մի մասը նշված եր վերեվում: Այն անհավասարությունը, վոր գոյություն ունի անդամների միջև, ներկայումս արմատապես տարբերվում ե այն անհավասարությունից, վոր գոյություն ունի անհատական սեկտորում՝ չքավորի, միջակի ու կուլակի միջև:

Այդ հարցը լավ ե պարզաբանել ընկ. Յակովլեվը: Նա Համկոմկուսի 16-րդ համագումարում արած իր զեկուցման մեջ ասաց. «Գույքային այն անհավասարությունը, վոր մենք ունենք կոլխոզում, վոչ մի ընդհանուր բան չունի այն անհավասարության հետ, վոր գոյություն ունի չքավորի ու կուլակի միջև: Բայց միևնույն ժամանակ այդ այն անհավասարությունը չե, վոր մենք ունենք գործարանում: Այստեղ կա յերկու թեքում, վոմանք ասում են, վոր կոլխոզում մենք ունենք միայն այն անհավասարությունը, ինչ ունենք գործարանում, այլ կերպ ասած՝ կոլխոզում, իբր, միջակն ել հավասար ե չքավորին: Մյուսները, ընդհակառակը, ասում են, վոր կոլխոզում չքավորն ու միջակը հակադրվում են իրար ճիշտ այնպես, ինչպես և կոլխոզից դուրս: Այդ յերկու թեքումն ել, իհարկե, միանգամայն սխալ ե: ԽՍՀՄ գործարանային բանվորների միջև պահպանված անհավասարությունը բղխում ե հիմնականում աշխատանքի տարբեր վորակից ու քանակից, բանվորների տարբեր վորակավորումից: Մինչդեռ արտելում, վորտեղ համայնական տնտեսության արտադրանքը բաշխվում ե հիմնականում աշխատանքի քանակի ու վորակի համեմատ, կա և այդ անհավասարությունը, բայց բացի դրանից, կա նաև լրացուցիչ անհավասարություն, վո-

րը բղխում ե գույքային դրության տարբերությունից, միջակի ու չքավորի լրացուցիչ անհատական տնտեսության տարբեր չափերից»: Այնուհետև Յակովլեվն ասում ե, վոր այդ անհավասարությունը, վոր բղխում ե անդամների տարբեր գույքային դրությունից, դեռ տեղի կունենա համեմատաբար յերկար ժամանակ, քանի դեռ կոլխոզների անդամների մոտ կմնա լրացուցիչ անհատական տնտեսությունը: Միայն լիովին համայնացնելով արտադրության բոլոր միջոցները, յերբ կոլխոզի անդամն այլևս չի ունենա վոչ մի անհատական տնտեսություն, անհավասարությունը կոլխոզի անդամների միջև կլինի նույն կարգի, ինչ և բանվորների մեջ: Բայց «պահանջել, վորպեսզի գյուղացիները, արտել մտնելով անմիջապես հրաժարվեն բոլոր անհատական սովորքներից ու շահերից, և համայնացրածին հավելյալ անձնական տնտեսություն (կով, վոչխար, թռչուն, ագարակամերձ բանջարանոց) վարելու հնարավորությունից ևայլն,—նշանակում ե մոռանալ մարքսիզմ-լենինիզմի այբուբենը» (Համկոմկուսի (բ) 16-րդ համագումարի բանաձև):

Վերեվում ասածից ամենևին չի հետևում, վոր կոլխոզը չպետք ե միջոցներ ձեռք առնի յեկամուտն ավելի հավասարաչափ բաշխելու, միջոցներով ապահովելու կոլխոզնիկների բատրակ-չքավորական մասի բազմանդամ ընտանիքների գոյությունը: Վերջիններս ամենից հաճախ չունեն լրացուցիչ անհատական տնտեսություն, իրենց աշխատանքն ամբողջովին նվիրում են կոլխոզին, հետեվապես չունեն վորևե լրացուցիչ յեկամուտ: Այդ խնդրի լուծմանը պետք ե մոտենալ աշխատանքների ճիշտ բաշխումով թե՛ վորակի և թե՛ այս կամ այն ծխին աշխատանքով բեռնավորելու տեսակետից: Հարկավոր ե առաջին հերթին աշխատանքով բեռնավորել բատրակային ու չքավորական ընտանիքներին, բազմանդամ ընտանիքներին, առաջնակարգ միջոցներ ձեռք առնել բարձրացնելու համար նրանց աշխատանքի վորակը (կվալիֆիկացիան), նրանց առաջ քաշել, վորպես տրակտորիստներ, մեքենավարներ, բրիգադիրներ

և այլ այնպիսի աշխատանքների, վորոնք ավելի յեն վարձատրվում, քան հասարակ աշխատանքը։

Այս բոլորը հնարավորություն կտա տնտեսություններին վաստակել ավելի շատ աշխատանքային օր և հետևապես ավելի շատ յեկամուտ ստանալ բաշխման ժամանակ։

Այժմ մեզ հարկավոր ե կանգ առնել անդամների միջև յեկամուտների բաշխման գործնական կողմի վրա։ Այստեղ հարկավոր ե տարբերել յերկու հարց. 1) աշխատանքի վարձատրություն կամ ամբողջ յեկամտի բաշխում համաձայն յուրաքանչյուր անդամի ունեցած աշխատանքային օրերի քանակի ու վորակի. 2) բերքի բաշխում կամ կոլխոզնիկների՝ կենսամթերքներով ու կերով հայթայթման կարգը ի հաշիվ ստացած յեկամուտների աշխատանքի վարձատրությունից հետո։ Բերքի բաշխումը և կոլխոզնիկին ի հաշիվ յեկամուտների այլ կանխավճար տալը նախորդում ե կոլխոզնիկի բոլոր յեկամուտների հայտաբերման և նրա վերջնական հաշվեվճարին. սակայն ավելի լավ գաղափար կազմելու համար առաջ մեկնաբանենք ընդհանրապես յեկամտի բաշխումը կամ աշխատանքի վարձատրության կարգը։

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքների նորմայի յենթարկելը, նրանց գործարքային վարձատրությունն ու աշխատանքային օրերի աշխատանքի հաշվառումը հանդիսանում են միակ ճիշտ ձևը կոլխոզնիկի արտադրողականությունը բարձրացնելու և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար։ Այդ հիման վրա յուրաքանչյուր կոլխոզնիկ շահագրգռված ե նրանով, վորպեսզի ավելի շատ աշխատի, վոր ավելի շատ աշխատանքի օրեր ունենա, հետևապես և ավելի շատ յեկամուտ ստանա։ Աշխատանքների նորմայի յենթարկելը հնարավորություն ե տալիս կազմակերպելու սոցիալիստական մրցակցություն անդամների միջև, վորովհետև՝ առաջինը, աշխատանքի կազմակերպության այդպիսի սխե-

մը անմիջապես շահագրգռություն ե առաջ բերում աշխատանքների յուրաքանչյուր մասնակցողի մեջ և, յերկրորդ՝ աշխատանքները նորմայի յեն յենթարկվում, այսինքն՝ ցույց ե տրվում թե արտադրության աշխատանքի ու միջոցների ինչպիսի քանակ հարկավոր ե կանոնավոր կերպով ծախսել աշխատանքի այս կամ այն տեսակի վրա։ Շատ հաճախ մենք կոլխոզներում տեսնում ենք, թե ինչպես առանձին բրիգադներն ու կոլխոզնիկները հարվածային տեմպերով գերակատարում են իրենց նորմաները 2—3 անգամ. դրա շնորհիվ կոլխոզնիկ-հարվածայինը մեկ բանվորական օրում արտադրում ե 2—3 աշխօր (աշխատանքի օր) նրա աշխատանքի վարձատրությունն ել 2—3 անգամ բարձր ե լինում, քան թե այն աշխատողներինը, վորոնք աշխատում են մլուլ տալով («հանգստանալով»)։ Այդպիսի շոշափելի օրինակները լավագույն ձևերն են սոցիալիստական մրցության, հարվածայնության համար մղվող ագիտացիայի համար։ Այստեղ ակնհայտնի կերպով պարզվում են այն ուղիները, վորոնք դեպի կոլխոզի անդամի յեկամտի բարձրացումն են տանում։ Մենք կանգ չենք առնի աշխատանքի վարձատրության մյուս սիստեմների վրա. այն ե՝ ժամանակով աշխատանքի սիստեմի վրա, յերբ բանվորական ժամանակը վարձատրվում ե կատարած աշխատանքով առանց քանակն ու վորակը հաշվի առնելու, թեկուզ աշխատանքը բաժանված լինի ըստ վորակի, ժամանակով հավասարաչափ սիստեմի վրա, այսինքն՝ նույնպիսի սիստեմի վրա, ինչվոր նախորդ ձևն եր, միայն առանց աշխատանքների վորակը հաշվի առնելու։ Վերջին դեպքում վարչության նախագահի, մեքենագրուհու, հովվի աշխատած օրերը, վարձատրվում են միատեսակ (կամ այդպիսի կոլխոզի յեկամուտը բաժանվում ե յուրաքանչյուր կոլխոզնիկի ծախսած ժամանակի համեմատ, առանց նկատի ունենալու, վորակը, քանակը և կատարած աշխատանքի վորակը)։ Աշխատանքի վարձատրության ձևերը, հետևապես և բաշխումը, շատ բազմաթիվ են, սակայն այդ բոլոր ձևերը, բացի գործարքային ձևից, միանգա-

մայն անպետք են՝ աշխատանքը ճիշտ կազմակերպելու և կոլխոզն ամրացնելու տեսակետից: Ճիշտ է, մենք չենք կարող բոլորովին հրաժարվել աշխատանքը ըստ ժամանակի վարձատրությունից կոլխոզներում յեղած մի քանի աշխատանքների համար: Օրինակ՝ ըստ ժամանակի յեն վարձատրվում կոլխոզում ղեկավար աշխատողները (վարչություն, գյուղատնտեսներ, ճյուղերի վարիչներ) և մի քանի աշխատանքների մի մասը, այնպիսի աշխատանքների, վորոնք դեռևս վորևե պատճառով չի հաջողվել նորմայի տակ դնել: Բայց այդ բացառություն է: Աշխատանքների ճնշող մասը կարելի յե նորմայի յենթարկել և անցնել գործարքային ձևին:

Դառնանք այժմ մեր օրինակելի կոլխոզին: Մի տարվա ընթացքում կոլխոզը կոլխոզնիկների աշխատանքի հաշվառում է կատարել բաշխելով աշխատանքները ըստ վորակավորման, այնպես, վոր ավելի հասարակ աշխատանքների համար որական աշխատածի համար վարձատրվում է մեկ աշխոր (աշխատանքի օր), ավելի վորակավորյալ և պատասխանատու աշխատանքի համար վարձատրվում է որական նորմայի համար 2 աշխոր: Այդ աշխատանքների միջև ընկած են միջին աշխատանքները գնահատման համապատասխան կոեֆիցիենտով (յենթադրենք՝ 1,25—1,50—1,75— համապատասխան որական աշխատածի համար): Մեզ արդեն հայտնի յե, վոր մեր կոլխոզում մի տարվա մեջ բոլոր կոլխոզնիկները աշխատել են 100 հազար աշխոր: Կոլխոզնիկների միջև բաշխման յենթակա յեկամուտը հավասար է 167,4 հազար ռուբլու: 167.400 ռուբլին բաժանելով 100.000 աշխորվա վրա կստանանք ռ. 64 կ., վորը ցույց է տալիս մեկ աշխորվա վարձատրությունը: Բազմապատկելով աշխորվա արժեքը աշխորների քանակով, վոր աշխատել է անդամը, կստանանք յեկամտի այն գումարը, վորն ընկնում է ամեն մի կոլխոզնիկին:

5. ԲԵՐՔԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Յեկամուտների հաշվին կոլխոզնիկն ստանում է և դրամական կանխավճարներ, և բնամթերք բերքը բաշ-

խելու ժամանակ: Կոլխոզի ամբողջ բնական արտադրանքը (ընդհանուր հավաքած բերքը) հաշվի յե առնվում և նշվում է, թե ինչպես պետք է բաշխել: Այն աղյուսակը, վորտեղ ցույց է տրվում, թե ինչպես պետք է բաշխել ընդհանուր արտադրանքը ըստ զանազան նպատակների, կոչվում է հացախարային բալանս: Ամենից առաջ ընդհանուր արտադրանքից առանձնացվում է այն մասը (ապրանքային ավելցուկներ), վոր պետք է հանձնել պետությանը կոնտրակտացիայի համաձայն, վոր կապվում են կոոպերատիվ կազմակերպությունների հետ կամ մեքենա-տրակտորային կայանի հետ կընքած պայմանագրի համաձայն: Տարբեր կուլտուրաների համար տարբեր է և ապրանքային մասը: Տեխնիկական կուլտուրաների արտադրանքը (վուշ, բամբակ, կենաֆ, գճերչակ, ճակնդեղ և այլն) համարյա 100 տոկոսով ապրանքային է հանդիսանում, բացառությամբ սերմֆոնդի: Մյուս կուլտուրաները նույնպես ունեն շատ բարձր ապրանքայնություն, օրինակ՝ արևածաղիկը, գարին, սոյան, մի շարք բանջարանոցային կուլտուրաներ և այլն: Հատիկային մթերական կուլտուրաների նկատմամբ այս տարի արտադրող ռայոնների համար սահմանված էր ապրանքային մաս նրանց ընդհանուր բերքի 25 տոկոսից մինչև 35 տոկոսը, նայած ինչ ռայոն է և ինչպիսի բերքատվություն: Աճման հետ աճում է և այդ կուլտուրաների ապրանքային մասը: Արդեն այս տարի շատ կոլխոզներ հանձնել են վորպես ապրանքային ավելցուկներ մինչև 45—50 տոկոս իրենց ընդհանուր արտադրանքից, նշանավոր չափով բարձրացնելով կառավարութ. կողմից նրանց համար նշանակված հացահատիկի նորմաները: Վոչ հատիկային ռայոնների համար հատիկամթերք հանձնելու նորման վորոշված էր ընդհանուր բերքի մեկ ութերորդ մասը միջին բերքատվության դեպքում: Ապրանքային մասը հանձնելուց հետո, ամբողջ արտադրանքը մնում է կոլխոզի լիակատար տրամադրության տակ: Նախքան բերքի մնացած մասը բաշխելը, կոլխոզը պետք է՝ առաջին՝ առանձնացնի սերմացուի ու ապահովագրության ֆոնդերը, նայած

արտադրական պլանով նախատեսված ցանքադաշտի տարածության հաջորդ տարվա համար. յերկրորդ՝ ստեղծի խարային ֆոնդ՝ հանրայնացված անասուններին կերակրելու համար, նկատի ունենալով, վոր առաջիկա տարում անասունների թիվը կարող է ավելանալ (լրացուցիչ կերպով անդամների անասունների հանրայնացում և գնում): Բնաֆոնդեր կազմակերպելուց հետո և ապրանքային ավելցուկները հանձնելուց հետո մնացած բնամթերային և խարային մթերքները բաշխվում են անդամների մեջ: Պարենամթերքները (հացահատիկ, բանջարեղեն, կենդանաբուծական մթերքներ և այլն) հիմնականում բաշխվում են յուրաքանչյուր անդամի գործադրած աշխատանքի քանակին ու վորակին համապատասխան: Բազմաբերան ընտանիքներին մթերքով ապահովելու և անաշխատունակներին մթերքով ապահովելու համար կոլխոզները հաճախ մթերքի մի մասն առանձնացնում են, վորը բաշխվում է նրանց մասամբ ի հաշիվ անաշխատունակներին ողնելու ֆոնդի, մասամբ այն ընտանիքի յեկամուտի հաշվին, վորի խնամքի տակ է գտնվում անաշխատունակը: Բոլորը կախված է անաշխատունակների քանակից և ընտանիքի այս կամ այն կարիքից: Ըստ աշխատանքի օրվա մթերքները բաշխելու ժամանակ մի քանի անտեսություններ բավականին չատ են ստանում նրանից, ինչ վոր անհրաժեշտ է ընտանիքին բավարարելու համար. ընդհակառակը, մյուս բազմաբերան անտեսությունները, վորոնք ունեն անաշխատունակների խոշոր թիվ, կարող են պարենի պակաս զգալ: Այդ հարցը կոլխոզնիկները հաճախ լուծում են այսպես. բերքի մի մասն առանձնացնում են բերաններին մատակարարելու համար (ի հարկե, համապատասխան ընտանիքի ընդհանուր յեկամուտի հաշվին), իսկ մնացած մասը (սովորաբար խոշոր մասը) բաշխում են ըստ աշխատանքի օրերի. վորքան չատ են կոլխոզնիկի աշխօրերը, այնքան չատ մթերք կստանա: Յեթե դրանից հետո յել այս կամ այն կոլխոզնիկի մոտ մնում են ավելցուկներ, չհաշված նրա բավարարման համար անհրաժեշտ մթերքները, մեր խնդիրն է՝ հասնել նրան,

վոր նա իր ավելցուկները տա պետությանը, վորպեսզի կոլխոզնիկների վոչ մի կիլոգրամ հացը չուկա չգնա: Հացը հանձնելու համար կոլխոզնիկն ստանում է առավելապես արդյունաբերական ապրանքներ և կանխիկ դրամ: Խարը (ֆուրաժը) բաշխվում է կոլխոզնիկների միջև ըստ առկա վոչ հանրայնացված անասունների թվի և տրվում է նրանց յեկամուտների հաշվին (կանխիկ դրամով):

Բերքը բաշխելու ժամանակ առանձնապես անհրաժեշտ է, վոր իրենք կոլխոզնիկները իրենց արտադրական խորհրդակցություններում վորոշեն բաշխման ձեվը: Այդ բացառապես նրանց գործն է և նրանց իրավունքը:

Տնտեսական տարվա վերջում կոլխոզի վարչությունը, մի կողմից, հաշվում է ընդհանուր յեկամուտը, վոր ընկնում է յուրաքանչյուր կոլխոզնիկին, մյուս կողմից՝ հաշվում է կոլխոզնիկին տարվա մեջ տրված բնամթերքն ու դրամական ավանսները: Կոլխոզնիկին հասնող յեկամտի գումարի ու նրան տրված ամեն տեսակ ավանսների տարբերությունը տրվում է կոլխոզնիկին նրա հետ վերջնական հաշվեհարդարի ժամանակ:

6. ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՅԵՎ ՄՅՈՒՍ ՖՈՆԴԵՐԻ ՀԱՄԱՐ

Յեկամուտները բաշխելու ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել անբաժանելի ֆոնդի վրա: Այդ ֆոնդի միջոցներն ու այդ միջոցների աճումը արտահայտում են կոլխոզի անմիջական սոցիալիստական ամրացումը: Անբաժանելի ֆոնդը վոչ միայն ավելացնում է կոլխոզի միջոցները, այլև նրան հնարավորություն է տալիս արագորեն աճելու, խոշոր կարողություն ձեռք բերելու և անդամների միջև առողջ փոխհարաբերություններ ստեղծելու, դաստիարակելով նրանց սոցիալիստական ուղղությամբ: Իսկապես ա-ցած, գյուղատնտեսության հանրայնացման պրոցեսը, գործնական լեզվով արտահայտած, նշանակում է կուտակել հանրայնացված անբաժան միջոցներ և կառու-

ցել այդ միջոցներով խոշոր մեքենայացված տնտեսություն:

Այդ պատճառով պարտադիր է անբաժան ֆոնդին հատկացումը:

Անհրաժեշտ է խոսել նույնպես և պարգևատրման ֆոնդի մասին: Այդ ֆոնդը պետք է հանդիսանա նյութական լծակներից մեկը զարգացնելու համար սոցմրցությունն ու հարվածայնությունը:

Այդ ֆոնդից կոլխոզի անդամներին պետք է նվերներ տրվեն պլանները գերակատարելու համար, աշխատանքը ժամանակից շուտ կատարելու համար, գյուտարարության համար և ռացիոնալիզատորական ձեռնարկումների համար, վորոնք բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը:

Ամեն մի լուրջ քայլ այդ ուղղությամբ հարկավոր է անպայման խրախուսել նվերով: Հարկավոր է խելացիորեն զուգակցել համոզումն ու տույժը խրախուսանքի հետ: Այդ պայմաններում ամեն մի նվեր տրված ռուբլին կոլխոզին կտա նոր հարյուրավոր ռուբլիներ:

Կոլխոզի մնացած բոլոր հասարակական ֆոնդերի համար հատկացումները (յեկամուտը բաշխելու ժամանակ) կատարում են իրենք կոլխոզնիկները իրենց վորոշումների հիման վրա:

Ահա այն հիմնական դրույթները, վորոնցով հարկավոր է ղեկավարվել կոլխոզներում յեկամուտները բաշխելու ժամանակ:

VII. ԿՈՒԼՏՈՒՐ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

1. Կուլտուրական աշխատանքի նշանակությունը: 2. Կուլտուր-կենցաղային աշխատանքի կազմակերպումը կոլխոզներում: 3. Կոլխոզնիկների քաղաքական դաստիարակությունը: 4. Ագրո-արտադրական պատրաստություն: 5. Հակակրոնական աշխատանք: 6. Գեղարվեստական — լուսավորական աշխատանք: 7. Նոր կենցաղի կազմակերպումը: 8. Կուլտուր-կենցաղային աշխատանքը կանանց մեջ: 9. Աշխատանք յերիտասարդության մեջ: 10. Կուլտուր-կենցաղային աշխատանքի ֆինանսավորումը:

1. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղի սոցիալիստական վերակառուցումը պահանջում է վճռական միջոցառումներ՝ կոլխոզնիկների միջև կուլտուրական աշխատանքը ծավալելու ասպարեզում:

Կոլխոզում տարվող կուլտուրական աշխատանքի նշանակության մասին կտրուկ կերպով խոսում են Համ Կ(բ) ԿԿ (1929 թ.) նոյեմբերյան պլենումի վորոշումները, վորտեղ ցույց է տրված, վոր՝ «կոլխոզային շինարարությունը միտք չունի առանց ուժեղ կերպով բարձրացնելու կոլխոզային բնակչության կուլտուրականությունը: Խորհրդային մարմինները, ինքը կոլխոզային սիստեմը, գյուղատնտեսական և սպառողական կոոպերացիան և ամբողջ խորհրդային հասարակայնությունը պետք է ծավալեն լայն աշխատանք կուլտուրա-... սպասարկելու համար կոլխոզային բնակչությանը, առաջին հերթին խոշոր կոլխոզներում և համատարած կոլեկտիվացման ռայոններում»:

Ե՛լ ավելի վճռականորեն է դնում ու վճռում այդ հարցը կուսակցության 16-րդ համագումարը՝ խոշոր ուշադրություն նվիրելով գյուղատնտեսական կադրերի պատրաստության հարցին և կոլխոզներում տարվող կուլտուրական աշխատանքին: Ընկ. Յակովլեվի «Կոլտնտեսության վերելքի կոլխոզային շարժման և գյուղատնտեսության մասին» ղեկուցման առթիվ համագումարի բանաձևի մեջ առված է.

«Կոլեկտիվացման ամրացման կարեվորագույն պայմաններից մեկը —դա կոլխոզային կադրեր ստեղծելու աշխատանքն է: Կոլխոզային կադրեր ստեղծելու հիմք պետք է ընդունել հենց իրենց համար վորպես առաջքաշու-կոլխոզնիկների մասսայից նոր կադրերի

մը: Հենց այդ է հանդիսանում աշխատելու համար գը-
ալի կոլխոզներն ուղարկված 25 հազար բանվորների կա-
րեվորագույն խնդիրը, վորոնցից շատերն արդեն կարո-
ղացել են հայտաբերել իրենց վորպես գերազանց կազ-
մակերպիչներ կոլխոզային տնտեսության և հեղինա-
կություն են նվաճել կոլխոզնիկների շրջանում, մանա-
վանդ այն դեպքերում, յերբ նրանք վորպես իրենց գըլ-
խավոր անելիքը՝ հենց իրենց կոլխոզնիկների միջից
նոր կադրեր ստեղծելու հարցը դրին: Կուսակցությունը
յելնում է նրանից, վոր մոտակա մեկ-յերկու տարում
կոլխոզային մասսայից անպայմանորեն, առաջավոր
բանվորների ներգործությամբ, առաջ կգան տասնյակ
հազարավոր իսկական կազմակերպիչ տաղանդներ, վո-
րոնք սոցիալիզմի իսկական շինարարները կհանդիսա-
նան գյուղատնտեսության մեջ:

Գլխավոր խնդիրներն այդ ասպարեզում հանդիսա-
նում են՝

ա) ղեկավար աշխատանքի համար կազմակերպել
կադրերի առաջքաշման սիստեմը. կադրեր, վոր պիտի
հանդես գան հենց իրենց կոլխոզնիկների շրջանից.
բ) Սովխոզներին, գյուղկերխողպրոցներին, բարձր.
ուսում. հաստատություններին, գյուղատնտեսական
տեխնիկումներին, յերկրորդ աստիճանի դպրոցներին
և մեքենա-տրակտորային կայաններին կից դնել
մասսայական կարճատև կոլխոզային կադրերի պատ-
րաստումը.

գ) ե՛լ ավելի լայնորեն ներգրավել գյուղատնտեսա-
կան ԲՈՒՀերի (բարձր. ուսումն. հաստ.) և տեխնի-
կումների մեջ կոլխոզային յերիտասարդությունը.
դ) լայնորեն ծավալել կոլխոզներում մասսայական
քաղաքական-լուսավորական աշխատանքը.
ե) լայնորեն ծավալել սոցմրցակցությունը կոլխոզ-
ների ամբողջ աշխատանքում, այլև կազմակերպել և
զարկ տալ արտադրական խորհրդակցությունների և
պատգամավորական ժողովների աշխատանքին կոլխոզ-
ներում.

զ) կազմակերպել կոլխոզներում կին-կոլխոզնիկնե-
րի պատգամավորական ժողովներ, կառուցելով նրանց

աշխատանքը այնպես, վոր ապահովված լինի կոլխոզա-
յին կադրերի աճման գործը կանանց շրջանից և նրանց
առաջքաշումը»:

Անհրաժեշտ է ձգտել, վոր կոլխոզի ամեն մի վար-
չություն (խորհուրդ), ամեն մի կուլտուրական-կենցա-
ղային հանձնաժողով, ամեն մի կոլխոզնիկ-ակտիվիստ
ձեռնարկի իրենից կախված բոլոր միջոցները 16-րդ
կուսհամագումարի այդ վորոշումը կիրառելու համար:

Կոլխոզներում կուլտուրական աշխատանքի խնդիր-
ները առանձնապես սուր են դրված այն առնչությամբ,
վոր կոլեկտիվացման պրակտիկան իր ամբողջ վորոշա-
կիությամբ հայտաբերում է այն անժխտելի, վոր կա
կոլխոզ-շինարարության լայն թափի և հիմնական կոլ-
խոզային մասսաների կուլտուրական հետամնացության
միջև: Հետզհետե կոլեկտիվ տնտեսությունների թվի
աճման ու չատացման հետ, կուլտուրական ճեղք-
վածքն էլ քանի գնում ավելի յե իրեն զգալ տալիս: Խո-
շոր գյուղատնտեսական արտադրությունը ճիշտ դնելու
համար, հարկավոր են գիտելիքներ, կուլտուրականու-
թյուն և փորձ: Կոլխոզային տնտեսության այս կամ
այն ճյուղի յուրաքանչյուր կոլխոզի նախագահ, ղեկա-
վար գիտե, թե վորքան ավելորդ, անմիտ վեճեր դո-
յություն ունեն, վորքան վնասաբարական ու ամենա-
տանջալի յերկպառակտություններ են տեղի ունենում կոլ-
խոզի ղեկավարի և նրա անդամների միջեվ միայն նրա
համար, վոր անգրագետ կամ կիսագրագետ կոլխոզնի-
կը չի կարողանում ստուգել իր աշխատանքային գըր-
քույկում բանվորական ժամերի գրանցումը: Այդ բա-
նը խանգարում է աշխատանքին, դցում է աշխատան-
քային կարգապահությունը, տնտեսությունը քայքա-
յում և հաճախ վնաս է հասցնում: Վերջապես, առանձնապես կա-
րեվոր է ընդգծել այն, վոր կոլխոզների կուլտուրական
հետամնացությունը առանձնապես վտանգավոր
է այժմ՝ գյուղում դասակարգային պայքարի խիստ
սրման պայմաններում: Անգրագիտությունը, անկուլ-
տուրականությունը ամենավոխերիմ թշնամիներն են
հանդիսանում գյուղի սոցիալիստական վերակառուց-

ման համար և հաճախ նրանք օգտագործվում են կուլակի կողմից հակահեղափոխական աշխատանքի համար կոլխոզների դեմ, Խորհրդային իշխանության դեմ: Կուլտուրայի համար պայքարը ներկա պայմաններում դառնում է դասակարգային պայքարի կարեվորագույն բնագավառներից մեկը, դառնում է համատարած կոլեկտիվացման կենսագործման զենքերից մեկը և այդ հիման վրա կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու զենքերից մեկը:

Այսպիսի պայմաններում կուլտուրական աշխատանքի ծավալումը կոլխոզներում հանդիսանում է կոլխոզային շինարարության կարեվորագույն խնդիրներից մեկը և պետք է բոլոր կուսակցական ու խորհրդային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում լինի, վորոնք կապված են գյուղի հետ, պետք է կոլխոզների ղեկավարների և յուրաքանչյուր կոլխոզնիկ-ակտիվիստի ուշադրության կենտրոնում լինի:

2. ԿՈՒԼՏՈՒՐ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

Կուլտուր-կենցաղային աշխատանքը կոլխոզներում լայն է իր ծավալով և՛ իր անելիքներով: Այդ աշխատանքի կարեվորագույն բնագավառներն են հանդիսանում. 1) կոլխոզնիկների քաղաքական դաստիարակությունը, 2) ագրո-արտադրական պատրաստությունը, 3) անգրագիտության վերացումը և հանրակրթական պատրաստությունը, 4) մասսայական, գեղարվեստական, սպորտային, քաղաքական-լուսավորական աշխատանքը, 5) նոր կենցաղի կազմակերպումը, 6) աշխատանք կանանց շրջանում, 7) աշխատանք յերիտասարդության մեջ:

Կուլտուրական-կենցաղային աշխատանքի համար վորպես ղեկավարներ և կազմակերպիչներ պետք է հանդես գան կոլխոզներում ամենից առաջ կուսակցական և կոմյերիտական բջիջները, շրջգործկոմների և գյուղխորհուրդների կուլտսեկցիաները: Բոլոր այդ կազմակերպությունները պետք է մոբիլիզացիայի յենթարկեն

իրենց ուժերը կոլխոզներին կուլտուրապես սպասարկելու համար, մասնակցելով կուլտուրական աշխատանքի պլանը կազմելու մեջ, վորտեղ յուրաքանչյուր կազմակերպությանը հատկացվում է միանգամայն վորոշակի ֆունկցիաներ, և նրանց ղեկավարությամբ ու հսկողությամբ պետք է լայն ծավալ ստանա կուլտուրական-կենցաղային աշխատանքը կոլխոզում:

Կոլխոզներում կուլտուրական աշխատանքի սկզբնական կազմակերպչական կենտրոն պետք է լինի հատուկ կուլտուրական-կենցաղային կոմիսիան, վորի խնդիրն է՝ 1) աշխատանքն այնպես տանել, վոր կոլխոզի յուրաքանչյուր անդամ ակտիվորեն մասնակցի և գիտակցական վերաբերմունք ցույց տա գյուղում տարվող դասակարգային պայքարի հարցերին և կոլխոզային շինարարությանը, 2) հաղորդել կոլեկտիվի ամեն մի անդամին ընդհանուր գյուղատնտեսական, զոոտեխնիկական և այլ անհրաժեշտ գիտելիքներ և 3) վերակառուցել կոլխոզի կենցաղը ել ավելի կուլտուրական, խելացի, նրա անդամների կարիքներին շահավետ ձևով սպասարկելու սկզբունքներով, հանրայնացման սկզբունքներով: Այդպիսի կոմիսիաներ պետք է կազմակերպվեն ամեն մի կոլխոզում— ամենախոշորից սկսած մինչև ամենափոքրը: Այդ կոմիսիաներն ընտրվում են կոլխոզի անդամների ընդհանուր ժողովում 3—7 մարդու կազմով և իրենց ամենօրյա աշխատ. յենթարկվում են կոլխոզի վարչությանը: Կոմիսիային պետք է ղեկավարի կոլխոզի վարչության անդամներից մեկը: Այդ կոմիսիայի մեջ պետք է գրավել նրանց, ովքեր ավելի գործունյա են, քաղաքականապես գրագետ, մասնագետ մանկավարժներ: Կոմիսիան իր անդամների մեջ բաշխում է պարտականությունները՝ նախագահի, քարտուղարի, ակումբի վարիչի կամ կարմիր անկյան վարիչի, գրադարանապետի, կանանց և յերիտասարդության մեջ քաղլուսաշխատանքի, ղեկավարի և այլն: Այդպիսի կոմիսիայի աշխատանքը հաջող ընթանալու համար, անհրաժեշտ է, ծայրահեղ դեպքում, ամենից

ավելի խոշոր կոլխոզներում, նրա անդամներից մեկին ազատել մշտական աշխատանքի համար:

Կազմակերպելով աշխատանքը, կուլտուր-կենցաղային կոմիսիան պետք է չմոռանա, որ ամենից առաջ հսկայական օգնություն կարող են և պետք է հասցնեն քաղաքի բանվորներն ու հիմնարկային շեֆական ընկերությունները: Շեֆական կազմակերպությունների խնդիրներն են՝ օգնել ակումբ կամ կարմիր անկյուն կազմակերպելուն, կոլխոզին հայթայթել գրականություն, ռադիո-բարձրախոսներ դնել, բանալ կինո և այլն: Այդ հաճախ դժվար է լինում իրականացնել կոլխոզի փոքրաթիվ ուժերով, սակայն առանձին դժվարություն չի ներկայացնում մեծ գործարանի բանվորների համար կամ մի խոշոր հիմնարկության ծառայողների համար: Կուլտ-կենցաղային կոմիսիաները պիտի ինչ գնով ուզում է լինի կապվեն այդպիսի հիմնարկությունների կամ ձեռնարկությունների հետ և գտնեն իրենց համար շեֆ, խոշոր, օրինակելի կոլխոզներ: Կուլտ-կենցաղային կոմիսիաները իրենց հերթին պետք է շեֆություն վերցնեն մոտակա ամենից ավելի թույլ կոլխոզների վրա:

3. ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կուլտուր-կենցաղային աշխատանքի առաջին և կարևորագույն խնդիրը կոլխոզներում հանդիսանում է կոլխոզնիկների քաղաքական դաստիարակության աշխատանքը: Կոլխոզային քաղաքական-լուսավորական աշխատանքի նպատակն է՝ դաստիարակել կոլխոզնիկներին պրոլետարական իդեոլոգիայի ոգով, բացատրել նրանց սոցիալիստական շինարարության կարևորագույն հարցերը, պատրաստել կոլխոզային մասսաներին այնպես, որ նրանք ակտիվորեն մասնակցեն սոցշինարարության մեջ: Սեփականատիրական իդեոլոգիայով և հոգեբանությամբ յերեկվա հետամնաց գյուղացուն մենք պետք է վերադաստիարակենք որ-

պես գիտակից, քաղաքականապես պատրաստված մարտիկ ու սոցիալիստական տնտեսության նոր ձևերի ստեղծող: Գյուղում դասակարգային կատաղի պայքարի պայմաններում այդ խնդիրը լուծելու համար և կուլակությունը որպես դասակարգ վերացնելու համար իրենց մեծագույն յեռանդն ու ունակությունը պետք է հայտաբերեն բոլոր կուսակցական և խորհրդային կազմակերպությունները, որոնք կապված են գյուղի հետ, և առաջին հերթին կոլխոզների ղեկավարները:

Քաղաքական լուսավորության ձևերից մեկը կոլխոզներում հանդիսանում են քաղաքական ինքնակրթության խմբակները և քաղգրագիտական դպրոցները: Քաղգրագիտության դպրոցներում և խմբակներում հաստատապես պիտի մտցնել պարապմունքների ցուցակ (մոտավորապես՝ ձմեռը—1 անգամ շաբաթական ամառը—1 անգամ յերկու դեկադում)·պետք է ձեռք բերել հարկավոր քանակով դասական պլակատներ և, որ քիչ կարևոր չէ, պետք է սարքավորված լինի հատուկ սենյակ պարապմունքների համար:

Խմբակներին, ինչպես և քաղլուսավորական ամեն տեսակ աշխատանքին պետք է մասնակից դարձնել շրջապատի չքավոր-միջակային դեռևս ոչ կոլեկտիվացած բնակչությանը, մանավանդ գյուղական յերիտասարդությանը: Միայն նման պայմաններում, իրոք, կոլխոզները կուլտուր-քաղաքական օջախներ կդառնան նոր գյուղի համար:

Դպրոցների ու խմբակների կազմակերպման հետ միասին անհրաժեշտ է լայնորեն գործադրել և' քաղաքական աշխատանքի մասսայական ձևերը—դասախոսություններ, զրույցներ, թերթերի և գրքերի, բարձր ընթերցումներ, միտինգներ և այլն: Աշխատանքի այդ ձևերի միջոցով հարկավոր է լուսաբանել ընթացիկ մոմենտի բոլոր սուր հարցերը, կոլխոզնիկ մասսային մշտապես իրազեկ պահել կուսակցական համագումարների որոշումներին, կառավարության միջոցառումներին, ԽՍՀՄ միջազգային և ներքին դրությանը:

Ինչպես կոլխոզային մասսաների, այնպես էլ շրջա-

կա բնակչության քաղաքական դաստիարակության համար արտակարգ կարևոր նշանակություն ունի հեղափոխական տոների կազմակերպված անցկացումը: Այդ օրերին պետք է վորպես միջոց հանդիսանան մոբիլիզացիայի յենթարկելու կոլխոզնիկներին ու անհատ տնտեսավարներին, չքավորներին ու միջակներին կուսակցության լոզունգների շուրջը: Այդ օրերին աշխատավորների լայն մասսաները պետք է ծանոթանան հեղափոխության պատմության հետ, կատարած աշխատանքի հաշվեհարդարը կատարեն, նշելով հետագա ուղիներն ու հեռանկարները:

Քաղաքական լուսավորության աշխատանքի կենտրոնները պետք է լինեն կոլխոզային ակումբները: Ակումբը վորպես բազա յե հանդիսանում քաղաքական դաստիարակության համար, խելացի հանգստի տեղ է, վորպես կենտրոն բազմակողմանի կուլտուրական, քաղաքական, արտադրական ու գեղարվեստական փոխադարձ ներգործության համար: Ակումբային աշխատանքի հաջողության համար անհրաժեշտ է ունենալ հարմար սենյակ, անընդհատ հոգացողություն ակումբային գործը լայնացնելու ու կենդանացնելու մասին՝ կոլխոզների ղեկավարների և բոլոր նրանց կուլտուրական աշխատողների կողմից:

Յեթե չկան կուլտուրական ուժեր կամ բավարարող սենյակ, ավելի լավ է չշտապել ակումբ բանալու, այլ կարելի յե բավականանալ միայն կարմիր անկյուն կառուցելով: Այդպիսի կարմիր անկյան աշխատանքների ծավալն ավելի փոքր է և հենց այդ աշխատանքների ձևերն էլ ամենից ավելի հասարակ են և մատչելի: Որինակ՝ կարելի յե անկյունում սկսել աշխատանքը թերթերի ու ժուրնալների խմբակային ընթերցումից: Աստիճանաբար կարմիր անկյան աշխատանքը պետք է լայն ծավալ ստանա պատի թերթեր հրատարակելու, քաղխմբակներ կազմակերպելու միջոցով և այլն:

Իսկ ակումբի սենյակները նպատակահարմար է, բացի դրանից, օգտագործել կառուցելու համար՝ գյուղատնտեսական, ռազմական, սանիտարա-առողջապա-

հական և այլ անկյուններ, վորոնք հայթայթված կլինեն համապատասխան պլակատներով, դրականությամբ, էքսպոնատներով, լոզունգներով, դիագրամներով, վորոնք կպատկերավորեն կոլխոզի արտադրական գործունեյությունը և այլն: Այստեղ արդեն պետք փակցնել ներքին կարգի կանոնները, սանիտարիայի կանոնները և առողջապահության կանոնները, ամեն տեսակ տեղեկություններ և այլն:

Առանձնապես բացառիկ դեր պիտի խաղան ակումբներն այն ժամանակ, յերբ անց են կացվում այս կամ այն խոշոր տնտեսական-քաղաքական կամպանիաներ (համատարած կոլեկտիվացում և կուլակի լիկվիդացիա, հացամթերում, խորհուրդների վերընտրություններ, ցանքի և բերքահավաքի կամպանիաներ, հանրակըրթության կազմակերպում և այլն): Այդ կամպանիաների ժամանակ ակումբների բազմապիսի աշխատանքը պետք է ուղղված լինի այդ կամպանիաների սպասարկելուն, նրանց հաջողությունը ապահովելուն:

Ակումբային կուլտուր-լուսավորական աշխատանքը չի կարելի կատարել—ինչպես այդ շատերն են անում—միայն ակումբի կամ կարմիր անկյան չորս պատերի մեջ: Ընդհակառակը վատ է աշխատում այն ակումբը, վորը չի ընդարձակում իր աշխատանքը ակումբի սահմաններից դուրս—հասարակության մեջ, արտադրական բնագավառները, բրիգադների մեջ դաշտային աշխատանքների ժամանակ և այլն: Այն կոլխոզներում, վորտեղ կուլտուր-կենցաղային կոմիսիաները կարողացել են կուլտուրական աշխատանքը մոտեցնել արտադրությանը, նրանք ավելի մեծ հաջողություններ կունենան կուլտուր-լուսավորության և տնտեսական ճակատներում:

Պատի թերթը հանդիսանում է մի օրգան, վորը նպաստում է ինքնաքննադատության լայն զարգացմանը, քաղաքական դաստիարակության և կոլխոզային մասսաների լուսավորությանը և արտացոլում է կոլխոզների ամենօրյա կյանքը՝ կենցաղային և արտադրա-

կան տեսակետից: Այսպիսի թերթ պետք է լինի ամեն կոլխոզում: Այդ թերթի մեջ ամենից առաջ պետք է շատ համառոտակի ձևով լուսաբանվի ընթացիկ քաղաքական կյանքը: Խոշոր ռադիոֆիկացիայի յենթարկված կոլխոզներին կարելի յե հանձնարարել ունենալ թարմ տեղեկությունների սենյակ, վորպիսի տեղեկությունները կտրվեն ամեն որ ռադիոյով:

Թերթի ամբողջ մատերյալը հիմնականում պետք է նկատի ունենա՝ մոբիլիզացիայի յենթարկելու կոլխոզնիկների ուշադրությունը աշխատանքի արտադրողականության հարցերի շուրջը, անբաժան կապիտալներ կուտակելու, արտադրությունը ռացիոնալացնելու, կուլտուր-կենցաղային շինարարության շուրջը և այլն:

Դրա հետ միասին թերթը պետք է աշխուժորեն արձագանքի գյուղում տարվող քաղաքական և տնտեսական կամպանիաներին: Նախապատրաստվո՞ւմ են արդյոք խորհուրդների վերընտրությանը, միասնական սպառողական ընկերության վերընտրություններին, կա՞ արդյոք փոխառությունների իրացում, կատարվո՞ւմ է արդյոք հացամթերում—թերթը ժամանակին պետք է արձագանքի, մոբիլիզացիայի յենթարկելով ընթերցողների ուշադրությունը որպես հարվածային հարցերի շուրջը, գործնականորեն դնելով յուրաքանչյուր խնդիր և ուշի ուշով հետևելով այդ խնդրի կատարման ընթացքին:

Միաժամանակ պետք է հիշել, վոր պատի թերթը դեպի իր կողմը կարող է գրավել ընթերցողին և թղթակցին միայն այն ժամանակ, յերբ նա լույս կտեսնի կանոնավոր (մոտավորապես ամսվա մեջ 1–2 անգամ):

Հսկայական նշանակություն ունի լայն հակակրոնական աշխատանքի ծավալումը: Գյուղատնտեսության նոր արտադրական ձևերին պետք է համապատասխանի աշխատողի մի նոր տիպ—համարձակ, գրագետ, կուլտուրական գյուղացու տիպը, վորը գիտակցորեն և վստահորեն է գնում դեպի խոշոր կոլեկտիվ մեքենայացված տնտեսության շինարարությունը: Բնությունը ստրկորեն հպատակվելու փոխարեն, վորի բոլոր յերեվույթները ընդունվում են վորպես հարտաքին ուժի ակտ,—գյուղացի-կոլեկտիվիստը պետք է ձեռք բերի մատերիալիստական աշխարհայացքի առողջ հիմունքները, լցվի բողոքի վոգով և պայքարի տարերքի դեմ, կամք ունենա փոխելու անպետք դարձած տնտեսական ձևերը և մտցնի գիտության և տեխնիկայի ժամանակակից նվաճումներին համապատասխան նոր ձևերը:

Պետք է հիշել, վոր ներկա պայմաններում կրոնը դասակարգային թշնամու զենքն է—կուլակության զենքն է—նրա կոլեկտիվացման դեմ պայքարում, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման դեմ և վոր կրոնի դեմ պայքարը հանդիսանում է դասակարգային պայքարի կարևորագույն բնագավառներից մեկը:

Կրոնական նախապաշարումների դեմ հաղթանակի կարելի յե հասնել միայն լուրջ, յերկարատև և խորը հակակրոնական և լուսավորական աշխատանքի հետևանքով: Յուրաքանչյուր կոլխոզում պետք է կազմակերպել մարտնչող անաստվածների միության բջիջ: ՄԱՄ-ի բջիջը պետք է լայն մասսայական հակակրոնական աշխատանք ծավալի օգտագործելով հակակրոնական աշխատանքի համար ամենաբազմազան ձևերը, ինչպես օրինակ՝ դասախոսություններ, զրույցներ, հակակրոնական գրականության ընթերցումներ, պլակատներ, լոզունգներ և այլն: Դրա հետ միասին բջիջը պետք է կազմակերպի հակակրոնական խմբակ: Ցանկալի յե ամեն մի կոլխոզում ստեղծել անաստվածի անկյուն, վորտեղ կախվեին համապատասխան թռուցիկներ, ծաղրանկարներ, պլակատներ, վորտեղ յուրաքանչյուր կոլխոզնիկ կկարողանար գտնել հակակրոնական գրականություն և «Անաստված» թերթը:

Հակակրոնական պրոպագանդի համար վորպես հարվածային որեր ամենից նպատակահարմարն է ընտրել հավատացյալների տրադիցիոն որերը.—ամառը—Հոգեհանգստյան, Համբարձման որերը, ձմեռը—Ծնունդը, Ավետումը, Զատիկը: Այդ որերին պետք է հարմարեցնել բացատրական պրոպագանդան, վոր կպարզաբանի այդ տոների իսկական իմաստը:

Սակայն անհրաժեշտ է զգուշանալ կոլխոզնիկների կրոնականության դեմ պայքարի մեթոդների վարչական թվից՝ մեքենայաբար յեկեղեցիները փակելու միջոցով, արգելել կրոնական ծեսեր կատարել և այլն: Նման խոտորումները հակակրոնական աշխատանքի ասպարեզում, բացի վնասից՝ վոչ մի օգուտ տալ չեն կարող:

4. ԱԳՐՈ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ամեն տնտեսություն վարելու համար, մանավանդ խոշոր, մեքենայացված, հասարակական տնտեսություն վարելու համար անհրաժեշտ են համապատասխան գիտելիքներ և պատրաստություն: Գյուղատնտեսական անգրագիտությունը, չխոսենք արդեն ընդհանուր կիսագրագիտության մասին, հանդիսանում է ամենալուրջ արգելքը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում: Գյուղացու ձեռք բերած հին հմտություններն ու գիտելիքներն անհատական գաճաճային տնտ. ժամանակ, այժմ կատարելապես անպետք են խոշոր հանրայնացված արտադրության պայմաններում: Լայն գյուղացիական մասսաները բոլորովին անծանոթ են որինակ՝ այնպիսի հարցերին, ինչպես որինակ՝ հասարակական աշխատանքի դնումն ու ճիշտ կազմակերպումը, հաշվառումն ու վերահսկողությունը կոլեկտիվ տնտեսության մեջ, աշխատանքի վարձատրության սկզբունքները, յեկամուտները բաշխելու մեթոդները և այլն: Այդ խնդիրներն են ահա վոր առաջին անգամ կանգնում են այժմ մեր գյուղացիության առաջ, իրենց ամբողջ սրությամբ և ակտուալությամբ:

Այդ խնդիրները լուծելուն խանգարում է մասնագետների պակասությունը, վորոնք անհրաժեշտ են գյուղատնտեսության մեջ: Այդ ճեղքվածքը, վոր կա գյուղատնտեսական, ճարտարագիտական, տեխնիկական ու գիտական ուժերի՝ կոլխոզ շինարարության պահանջի և նրանց առկայության միջև, ներկայում լուրջ սպառնալիք է ստեղծում նրա հետագա հաջողություն-

ների համար: Մասնագետների կադրերը պետք է վոչ միայն բարձր մեքենայական տեխնիկայի կրողները լինեն գյուղատնտեսության մեջ, այլև նրանք ըստ եյության պետք է բատրակության, չքավորության և միջակ գյուղացիության կազմակերպիչները լինեն: ԽՍՀ Միության կոլխոզների բարձրագույն ու միջին կրթությամբ գյուղատնտեսների մաքսիմալ պահանջը 1931 թ. հասնում է մոտավորապես 50 հազ. մարդու:

Այնինչ նույնիսկ 1928/29 թ.թ. սկզբին կոլխոզներում բարձրագույն ու միջին կրթությամբ գյուղատընտեսների թիվը հաշվում եյին մոտ 3 ½ հազար: Ընդառաջ գնալով ագրո-տեխնիկական կադրերի ընդհանուր պահանջին, Խորհրդային իշխանությունը արդեն 1931 թ. բաց արեց նոր բարձրագույն և միջին ուսումնական հաստատությունների ամբողջ մի ցանց: Գյուղացիական յերիտասարդության բոլոր դպրոցները վերակազմակերպված են կոլխոզային յերիտասարդության դպրոցների՝ մտցնելով նրանց ծրագրի ու աշխատանքի մեթոդների մեջ համապատասխան փոփոխություններ:

Կադրերի սուր կարիքը լրացնելու համար կոլխոզային կազմակերպությունները ամեն տեսակ կարճատև կուրսերի խիտ ցանց են ծավալել՝ զանազան ճյուղերի ու մասնագիտությունների կոլխոզային աշխատողների պատրաստության և վերապատրաստության համար: Թեև օգտակար և նպատակահարմար են այդպիսի կուրսերը, բայց այնուամենայնիվ նրանք բավարարել չեն կարող նրանց, ովքեր ցանկանում են ավելի հիմնովին և խորացրած գիտելիքներ ձեռք բերել արտադրության այս կամ այն ճյուղում, վորպեսզի կարողանան կոլխոզային արտադրական կյանքի իսկական կազմակերպիչներն ու ղեկավարները դառնալ: Ամեն կոլխոզ չի կարող, հնարավորություն չի ունենա հազարավոր կիլոմետր կոլխոզից ընկած հեռու կուրսերն ու դպրոցներն ուղարկել իր յերիտասարդներին: Այստեղ կոլխոզնիկին օգնության է հասնում հեռակա ուսուցումը, վորի առավելությունը նրանումն է, վոր

սովորողը, առաջինը՝ կարող է պարապմունքներին ժամանակ հատկացնել ինչքան ինքը կցանկանա, նայած թե ինչպիսի բեռնավորում ունի կոլխոզում, ավելացնելով այդ ժամանակը աշնանն ու ձմեռը մինչև 3–4 ժամ օրական և կրճատելով գարնանն ու ամառը հնձի ժամանակ մինչև 1–2 ժամ օրական. յերկրորդ՝ նա կախված չէ ուսուցման համար շենք ունենալու կամ չունենալուց, նույնպես և կախված չէ դասատու ունենալուց, և յերրորդ՝ սովորողը չի թողնում հեռանում իր կոլխոզը սովորելու ժամանակ — ինքը դպրոց է գալիս նրա տունը, նրա մոտ:

Ամուր ագրո-տեխնիկական կադրեր ստեղծելու մեջ հսկայական դեր կարող են խաղալ և պետք է խաղան գյուղատնտեսական արտադրական խմբակները, կոլխոզի բոլոր անդամների արտադրական խորհրդակցությունները, գյուղատնտեսական դասախոսություններն ու զրույցները, կոլխոզային գյուղատնտեսական ցուցահանդեսները, էքսկուրսիաները, ագրո-դասերը և այլն:

Գյուղատնտեսական խմբակների կազմակերպումը, կարելի յե ասել՝ թեև ամենից հասարակ, բայց ագրոլուսավորության ամենից գործող ձևերից մեկն է: Տնտեսները կազմակերպում են խմբակ՝ իրենց արտադրական աշխատանքի պրոցեսում առաջ յեկած հարցերը մշակելու և խմբովին ուսումնասիրելու համար: Խմբակի պարապմունքները հաջող անցկացնելու համար կարևոր է, որ այդ պարապմունքները լինեն կանոնավոր և խիստ պլանային ձևով, տանելով խմբակային ժողովների և այդ ժողովներին հաճախումների ճիշտ հաշվառումը: Խմբակների ղեկավարները պետք է գյուղատնտեսորեն գրագետ մարդիկ լինեն, ամենից լավն է, որ գյուղատնտեսներ լինեն: Վերջիններս այդ գործի վրա պետք է նայեն որպես իրենց ուղղակի հասարակական և արտադրական պարտականության վրա:

Կոլխոզում կազմակերպված գյուղատնտեսական խմբակներից յուրաքանչյուրն իր առաջ յերկու նպատակ է դնում՝ մի կողմից—լավացնել անտեսության համապատասխան ճյուղի դրությունը, մյուս կողմից—բարձրացնել խմբակում մասնակցողների տնտեսական գիտելիքների որակը, մակարդակը: Առաջին խնդիրը լուծվում է խմբակում ձեռք բերած բոլոր գիտելիքները կիրառելով գործնականում, իսկ յերկրորդը—արտադրության ընթացքում առաջացած հարցերի շուրջ լուրջ թեորետիկ վերամշակումով և ուսումնասիրությամբ: Բացի հատուկ արտադրական խմբակներից, չափազանց ցանկալի յե ստեղծել այնպիսի խմբակ, որը կուսումնասիրի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման աշխատանքի կազմակերպչական հարցերը,—աշխատանքը կազմակերպելու և բաշխելու հարցերը, անբաժան կապիտալների կուտակման մեթոդների հարցերը, խոշոր մեքենաներ գործադրելու հարցերը, արդյունավետության ու առավելությունների հարցերը, հասարակական սնունդը կազմակերպելու, նոր կենցաղը կազմակերպելու հարցերը և այլն: Անհրաժեշտ է դարձյալ մեկ անգամ ընդգծել, որ այդ ամբողջ աշխատանքը վոչ մի դեպքում չպետք է ամփոփվի միայն կոլխոզի շրջանակներում, այլ պետք է ներգրավի կոլխոզի շրջակա գյուղերի դեռևս չկազմակերպված բատրակային և չքավոր-միջակային ամբողջ ակտիվին:

Ագրո-արտադրական լուսավորության գործում կարևոր նշանակություն ունեն նույնպես դասախոսությունները, զրույցները, ագրո-դասերը: Դրա հետ կապված կոլխոզմիությունների, ժողլուսների և հողմարմինների առաջ ծառանում է շրջիկ դասախոսների ինստիտուտ կազմակերպելու հարցը: Իհարկե, շրջիկ ինստիտուտ ստեղծելը կապված է բավական խոշոր ծախսերի հետ, բայց նկատի ունենալով կոլխոզների ագրո-արտադրական լուսավորության ծանր կացությունը, այդպիսի ծախսերը խիստ անհրաժեշտ են:

Կոլխոզնիկների մեջ ագրո-արտադրական գիտելիքները տարածելու ամենից ավելի ցուցական մեթոդներից մեկը հանդիսանում է գյուղատնտեսական ցու-

ցահանդեսը: Այդպիսի ցուցահանդես կարելի յե կազմակերպել կոլխոզի ակումբում, դպրոցում, կարմիր անկյունում կամ խրճիթ-ընթերցարանում: Յերբ վոր այդ ցուցահանդեսը կբավարարի արդեն իրենց կոլխոզնիկների հետաքրքրությանը, ոգտակար ե տեղափոխել մյուս մոտակա կոլխոզներն ու գյուղերը: Ցուցահանդեսում կարելի յե ցուցադրել հետեվյալ եքսպոնատները՝ սերմերի լավագույն տեսակները և բույսերը, վորոնք բուծել են իրենք կոլխոզնիկները, նոր գործադրելի կուլտուրաները, աղյուսակներ ու դիագրամներ, վորոնք բնորոշում են ցանքերի բերքը կոլխոզում համեմատած անհատական տնտեսությունների հետ, տեղական հողերի, մոլախոտերի նմուշները, դաշտերի վնասատուները, բանջարաբույսերի կուլտուրաները, գյուղատնտեսական մեքենաների նմուշներ, գյուղատնտեսական խմբակների գործնական նվաճումները, ցեղային և մթերատու կենդանիների լավագույն օրինակները և այլն:

Ցուցահանդեսի կազմակերպման հետ միաժամանակ գյուղատնտեսական գիտելիքների և փորձի շրջաունի և եքսկուրսիաների կազմակերպումը դեպի օրինակելի կոլխոզները, սովխոզները, մեքենա-տրակտորական և գյուղատնտեսական փորձնական կայանները: Այդպիսի եքսկուրսիաները ոգտակար ե կազմակերպել փորձված ու գիտուն ընկերոջ (գյուղատնտեսի կամ արտադրության համապատասխան ճյուղի վարիչի) ղեկավարությամբ: Ամենից ավելի բարդ է հեռավոր եքսկուրսիաների կազմակերպումը, վորի համար պահանջվում է մեծ նախապատրաստական աշխատանք և միջոցներ տեղափոխության, պարենավորման համար և այլն: Հաշվի առնելով այդպիսի եքսկուրսիաների դաստիարակչական նշանակությունը, կառավարությունը հնարավորություն է տալիս եքսկուրսանտներին տեղափոխվել յերկաթուղու եժան տոմսերով: Արտոնյալ տոմսերից օգտվելու համար իր կոլխոզմիության միջոցով պետք է կապվել Կոլխոզկենտրոնի հետ, վորը

հատուկ պայմանագիր է կնքել «Խորհրդային տուրիստ» ընկերության հետ:

5. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կոլխոզներում տարվող կուլտուրական-լուսավորական աշխատանքի մյուս տեսակների շարքում անգրագիտության վերացումը հանդիսանում է առաջնահերթ և կենսականորեն անհրաժեշտ խնդիր: Չի կարելի լըրջորեն խոսել կոլխոզնիկների ընդհանուր կուլտուրական մակարդակը բարձրացնելու մասին առանց նախորոք անգրագիտությունը վերացնելու:

Նույնկերպ էլ բոլորովին անթույլատրելի յե անգրագիտության վերացման աշխատանքի հարցը կապել նրա հետ, թե կա՞ արդյոք կոլխոզին մոտիկ տեղում ժողլուսի լիկկայան, թե վոչ: Յուրաքանչյուր կոլխոզ պետք է հիմնի իր համար լիկկայան: Յեթե խելացի դրվի գործը, կայանը կարող է իր վրա վերցնել գրագիտություն տարածել և՛ դեպի կոլեկտիվացման չենթարկված շրջակա բնակչության մեջ: Ինչպես փորձն է ցույց տվել, լիկկայանի աշխատանքն ընթանում է ավելի արդյունավետ և կանոնավոր միայն այն դեպքում, յերբ աշխատանք տանողը վարձատրություն է ստանում: Այդ շատ հասկանալի յե. առանձնապես հրավիրված դասատուն օժտված է լինում համապատասխան վորակով, փորձով և ունենում է անհրաժեշտ ժամանակ աշխատանքը լավագույն ձևով տանելու համար: Բացի անգրագետների հետ տարվող պարապմունքներից, առանձնապես հրավիրված մանկավարժը կկարողանա նույնպես ղեկավարել կիսագրագետների դպրոցը: Միայն այն դեպքում, յեթե կոլխոզը բոլորովին դուրկ է առանձին մասնագետ ուսուցիչ հրավիրելու միջոցներից, այն ժամանակ անհրաժեշտ է օգտագործել իր կուլտաշխատողներին՝ առաջին հերթին դպրոցի դասատուներին: Լուրջ օգնություն պետք է հանձին անգրագիտության վերացման գործում և՛ շեֆական ընկերությունները: հաստատուն

Լիկկայանում պետք է աշխատանքի

կարգ սահմանել: Պարապմունքները պիտի տարվեն շաբաթական ամենաքիչը չորս անգամ: Խիստ կարևոր է անգ. լիկկայանի մեջ սահմանել անընդհատ աշխատանք: Ցեթե այս կամ այն պատճառով ուսուցումն ընդհատվում է շատ կամ քիչ յերկարատեվ ժամանակով, այն ժամանակ սովորողները մոռանում են անցածը և հարկ է լինում աշխատանքը վերականգնել սկզբից: Գրագիտության ուսուցումը պետք է տարածվի վորպես հանրօգուտ աշխատանք: Ինչպես բազմաթիվ գյուղատնտեսական կոմունաների ու արտելների պրակտիկան է ցույց տվել, մեծահասակների հետ պարապմունքներն ավելի լավ է կատարել բանվորական ժամանակի հաշվին,—վոչ թե յերեկոյան, այլ առավոտյան ժամի 6-ից մինչև 9-ը, այդ ժամերը վարձատրելով այնպես, ինչպես արտադրական աշխատանքի ժամերը:

Պակաս կարևոր չէ և կիսագրագետների հետ տարվող ուսումնական աշխատանքը. չէ վոր կիսագրագիտությունից մինչև անգրագիտությունը միայն մի քայլ է: Կիսագրագետների հետ աշխատանքը կարող է տանել նույնպես լիկկայանը:

Շատ կոլխոզներում հիմնում են հատուկ դպրոցներ կիսագրագետների համար, վոր, պետք է ասել, ավելի նպատակահարմար է այնքան, վորքան նրանց համար պահանջվում է ուսուցման ավելի ընդարձակ ծրագիր: Կիսագրագետների հետ տարվող աշխատանքը սերտորեն պիտի կապված լինի նրանց գյուղատնտեսության վերաբերյալ տարրական տեղեկությունններ և այլ առանալու հետ:

Յուրաքանչյուր կոլխոզի լիկկայան պետք է իրավեկ պահի թե իր կոլխոզնիկներին և թե շրջապատող բնակչությանը անցկացվող աշխատանքի մասին: Դեռ ավելին. անգրագիտության վերացման աշխատանքի շուրջը պիտի ստեղծել ամենաբարեհաջող և համակրելի մթնոլորտ: Նրա շուրջը անհրաժեշտ է ստեղծել յեռանդուն հասարակական հետաքրքրություն և ուշադրություն:

Կոլխոզում կուլտուր-լուսավորական աշխատանքի անհրաժեշտ ոժանդակիչներն են հանդիսանում գրա-

դարաններն ու ընթերցարանները: Ամեն մի կոլխոզ պիտի ունենա ընթերցարան: Այն կոլխոզը, վոր դուրս
չի գրում թերթեր և ժուրնալներ, այնպիսի կոլխոզը
կուլտուրական կազմակերպության կոչմանն արժանի
չէ: Իհարկե, միայն խոշոր կամ միջին մեծության կոլխոզը հնարավորություն կունենա ձեռք բերել մեծ գրադարան, բայց և այնպես ամեն մի փոքր կոլխոզ պարտավոր է ունենալ թեկուզ վոչ մեծ գրադարան մի հարյուր
գրքերով, վորոնք ամենից ավելի անհրաժեշտ են ամեն մի գյուղացի-կոլեկտիվիստի համար: Միաժամանակ պետք է, վորքան հնարավոր է, լայնորեն օգտագործել շարժական գրադարանները, վորոնք կազմակերպվում են ժողովրդական լուսավորության մարմիններ կողմից կոլխոզային խմբերին կից:

6. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Վոչ միայն քաղաքական-լուսավորական աշխատանքի հաջողությունը, այլև կոլխոզի ամբողջ արտադրական գործունեության հաջողությունը նշանավոր չափով կախված է նրանից թե՝ վորքան խելացի կերպով է բաշխվում կոլխոզնիկների ժամանակը աշխատանքի ու հանգստի միջև, նույնպես և կախված է նրանից, թե վորքան խելացի կերպով է կազմակերպվում նրանց կուլտուրական ժամանցը:

Կոլխոզնիկի ազատ ժամանակը պետք է օգտագործել յերկու ուղղությամբ՝ նրա վորակը բարձրացնելու, ագրո-արտադրական և ընդհանուր քաղաքական գիտելիքները ընդարձակելու ուղղությամբ մի կողմից, և նրա գեղարվեստական պահանջներին բավարարություն տալու և առողջ կուլտուրական զվարճություններ կազմակերպելու ուղղությամբ,— մյուս կողմից:

Կոլխոզներում գեղարվեստական-լուսավորական աշխատանքի բազմաթիվ ձևերից մեկը կինոն է, վորն առանձնապես հաջողություն և ժողովրդականություն է վայելում գյուղացիական լայն մասսաների կողմից:
Այդ պատճառով էլ, ավելի ցանկալի չէ քաղաքական

լուսավորությանն ու ագրո-արտադրական պրոպագանդը անցկացնել կինոյի միջոցով: Խոշոր կոլխոզները պարտավոր են իրենցում կազմակերպել մշտական, անշարժ կինոներ: Քաղաքականապես լավորակ և արտադրականապես օգտակար կինո-ժապավենները, ինչպես և ռադիոն, կարող են վորոշ չափով լրացնել կոլխոզներում քաղաքական լուսավորական աշխատանքների բացը: Իսկ կոլխոզների ռայոնական միավորումները, սպառողական միությունների միջոցով պետք է ձեռք առնեն բոլոր միջոցները ունենալու սեփական շարժական կինոներ՝ կանոնավոր կերպով սպասարկելու համար համախմբված բոլոր կոլխոզներին:

Անշարժ (ստացիոնար) կինոների բացակայության դեպքում, և յեթե նույնիսկ կա անշարժ կինո, չափազանց օգտակար կլինի ունենալ կոլխոզում մոգական (պրոեկցիոն) լապտեր գյուղատնտեսական դիապոզիտիվների (լուսանկարչության ապակու վրա) սերիաներով: Այդ ապարատները թանկ չեն և կարող են ծառայել վորպես հիանալի ցուցադրական միջոց կոլխոզային մասսաների գյուղատնտեսական լուսավորության գործում:

Կոլխոզի կյանքում կինոյից փոքր նշանակություն չունի և ռադիոն: Բարձրախոս ունելով կոլխոզում, կոլխոզի բնակչությունը, վորը գտնվում է նույնիսկ ամենախուլ տեղում, նա կարողանում է կապ պահել յերկրի կուլտուրական կենտրոնների հետ և իրազեկ լինում բոլոր վերջին դեպքերի հետ: Ռադիոյի միջոցով կոլխոզնիկները կարող են զեկուցումներ ու դասախոսություններ լսել գիտական և քաղաքական զանազան հարցերի մասին, կարող են գործնական խորհուրդներ ստանալ գյուղատնտեսության վերաբերյալ, սովորել գործարանային կուրսերում, լսել յերաժշտություն և յերգեցողություն, խոշոր քաղաքական գործիչների զեկուցումները լսել և այլն:

Բացի կինոյից և ռադիոյից, կոլխոզներում քանի գնում, ավելի լայն ծավալ են ստանում դրամատիկական, յերաժշտական և խմբային յերգի խմբակները,

վորոնք ամենից ավելի մատչելի յեն և միևնույն ժամանակ չափազանց հրապուրիչ ձևեր են կոլխոզային մասսայի գեղարվեստական ինքնագործունեության համար:

Համարյա ամեն մի քիչ թե շատ խոշոր կոմունա և արտել ունի իր դրամատիկական խմբակը, իր դերասաններով—սիրողներով և մեծ մասամբ հատկապես սարքավորված փոքր բեմով:

Ինքնագործուն կոլխոզային դրամատիկական խմբակներին վորոշ ոգնություն է ցույց տալիս Կրուպսկայայի անվան արվեստի կենտրոնական տունը գյուղում (նախկին Վ. Դ. Պոլենովի), վորը ներկայումս կազմակերպել է ռայոնական գեղարվեստական խորհուրդներ, ռայոնական քաղլուսներին կից և հիմնական պունկտերի մի ամբողջ ցանց է ստեղծել, վորպես շրջանային և մարզային արվեստի տներ Կրուպսկայայի անվան կենտրոնական տան նմանողությամբ: Միաժամանակ քաղաքային կենտրոններում կազմակերպվում են շարժական գեղարվեստական ցուցահանդեսներ կոլխոզներին անմիջապես սպասարկելու համար, վորոնց աշխատանքի ծրագրի մեջ է մտնում պիեսների բեմադրումները, մենակ և խմբակային պարերը, յերգեցողություն, արտասանություններ, գեղարվեստական ընթերցում, իրենց պատրաստած գործիքներից նվագախումբ, գարմոշկա նվագելը, մասսայական խաղեր, ֆիզկուլտուրա և այլն: Դրա հետ միասին շարժիչները իրենց վրա յեն վերցնում դրամխմբակների անմիջական ոգնությունը բեմի սարքավորման գործում, պիեսի ընտրության, պիեսան պատրաստելու աշխատանքների, պիեսան պատրաստելու աշխատանքներում ղեկավարելու գործում և այլն: Կոլխոզները ... և դերերը բաժանելու գործում և այլն: Կոլխոզները շարժիչների հետ հասպետք է սերտ կապ պահեն այդ շարժիչների հետ համապատասխան Կրուպսկայայի անվան տան համապատասխան ճյուղին:

Կարևոր խնդիր է հանդիսանում ֆիզկուլտուրայի զարգացումը, մանավանդ յերիտասարդության մեջ: Ֆիզկուլտուրական և սպորտային շարժումը, վոր լայ

նորեն ընդգրկել է բանվորական քաղաքը, պետք է թափանցի և հանրայնացված գյուղը: Սակայն անհրաժեշտ է հարմարեցնել ֆիզկուլտուրական աշխատանքի սովորական ձևերը գյուղական արտադրության և կենցաղի պայմաններին: Հատկապես հարցի այդ կողմի վրա յե արդարացի կերպով ցույց տալիս ընկ. Կրուպսկայան կուլտ-բրիգադների հետ ունեցած իր զրույցում, այն բրիգադների, վորոնք սովխոզներն ու կոլխոզներն են գնում:

«Հարկավոր է ստեղծել լավ ձիավարներից ակտիվ, վորոնք կսովորեցնեն յերիտասարդությանը այդ արվեստին, պետք է նկատի ունենալ թե տեղական լավ ձիավարներից, յերգիչներից, թիավարներից, վորսորդ-հետագետներից և այլն ուժ կարելի յե ներգրավել: Հարկավոր է այդպիսի աշխատող-ֆիզկուլտուրնիկներից ակտիվ համախմբել իր շուրջը: Պետք է կարողանալ ամենից ավելի օգտագործել այն, ինչ վոր տեղական կենցաղում դեր է խաղում: Մի ռայոնում, այդ կարտահայտվի ձիարշավով, մյուս ռայոնում, վորևէ վորսորդության հետապնդական տիպ, յերրորդում, լաստերի թիավարություն և այլն: Ամեն մի ռայոնում ֆիզկուլտուրան պետք է կապված լինի տեղական պայմանների հետ: Այն ֆիզկուլտուրնիկը, վոր կերթա և կխոսի առավոտյան լիցքի (զարյադկա) մասին, ֆուտբոլի մասին և այլ նման բաների մասին, նա հաջողություն չի ունենա: Անհրաժեշտ է տեղական պայմանները ներհյուսել կարողանալ իր նպատակների հետ: Իսկ այն ֆիզկուլտուրնիկը, վորը այդ կկարողանա գլուխ բերել, նա շատ բան կանի»:

7. ՆՈՐ ԿԵՆՑԱՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Արտադրական հեղափոխությունը գյուղատնտեսության մեջ չի կարող կտրուկ փոփոխություններ չըմտցնել գյուղացիական կենցաղի մեջ: Գյուղատնտեսության հանրայնացումը չի կարող հաշտվել նեղ, կեղտոտ խրճիթների հետ ու յերեխաների, կանանց հարստա-

հարման, ճնշման հետ, ընտանիքում ավագների բռնության հետ, ինչպես և ընդհանրապես հարբեցողության, անմաքրության, կրոնի հետ, մշտական կռիվների հետ, վորոնք բնորոշ եյին հին գյուղացիական կենցաղի համար:

Կուլտուր-կենցաղային կոմիսիաները պետք է լրջորեն մտածեն կենցաղի նոր ձևերի կազմակերպման հարցերի մասին: Աշխատանքն այստեղ դեռ վոտք չի կոխել: Ամենախոշոր կոլխոզները պետք է այդ աշխատանքը ղեկավարելու համար ջոկեն փորձված աշխատողներ— նոր կենցաղի կազմակերպիչներ:

Կոլխոզային կենցաղում կուլտուրական հեղափոխության գործում, մանավանդ կին-կոլխոզնիկների ազատագրման գործում, հսկայական նշանակություն ունի մանկական հիմնարկներ ստեղծելը—մսուրներ, հրապարակներ, մանկապարտեզներ:

Անհատական տնտեսության մեջ կինը առաջվա նըման մեխված է ընտանեկան օջախին և մասնավորապես յերեխայի օրորոցին, յերեխաներ խնամելուն: Դաշտային աշխատանքների ժամանակ յերեխաները յերբեմն բոլորովին առանց խնամքի յեն մնում, կամ մընում են ծերունիների և տաս տարեկան դայակների խնամքի տակ: Ակնհայտնի յե, այն կոլխոզը, վոր կարողացել է կարգի գցել մանկական հիմնարկները, նա միանգամից ամենալայն համակրանքն ու ժողովրդականություն է վայելում գեղջկուհիների շրջանում: Այդ ավելի քան կարևոր է, վորովհետև ամենից ավելի հետամնաց և սովորաբար դեպի կոլխոզները թշնամաբար վերաբերվող բնակչության մասը հանդիսանում են հաճախ կանայք, վորոնք համարյա միշտ տերտերների ու կուլակների ազդեցության տակ են ընկնում:

Մանկական հիմնարկների կազմակերպումը, մանավանդ վոչ մեծ կոլխոզներում, ավելի լավ է սկսել ընդհանուր սենյակ հատկացնելուց յերեխաների խաղալու համար ձմեռ ժամանակ, աստիճանաբար վերածե-

լով այդ մասին, մանկապարտեզի, դպրոցի, պիոներական կոմունայի:

Մանկական օջախներն ու կոմունաները պետք է այնպես սարքավորված լինեն, որ երեխաները ունենան բոլոր անհրաժեշտ բաները իրենց ֆիզիկական զարգացման համար (առանձին մահճակալներ, առանձին ամաններ կերակրի համար, տաք, ջուր, լուսավոր սենյակ և այլն) և կուլտուրական զբաղմունքների համար (Գրքեր, խաղալիքներ, ռադիո, աշխատանքի սենյակ և արհեստանոցներ): Տուն-կոմունաները կարելի է միացնել դպրոցի հետ, որտեղ սովորում են երեխաները, և երբ պիոներական և կուլտուրական-լուսավորական աշխատանքը կդառնա դպրոցական օրվա բնական շարունակությունը, իսկ երեխաների կենցաղային սպասարկումը (սնունդ, քուն, հանգիստ, առողջապահական միջոցառումներ և այլն) կկենտրոնանա հանրակացարանում:

Դաշտային աշխատանքների ժամանակ Կենտրոնական Սևանի Շրջանի մի քանի կոլխոզներ ծծկեր երեխաների համար կազմակերպում են շրջական մսուրներ: Նրանց նախաձեռնությունը անպայման արժանի է խրախուսանքի և հավանության: Այդպիսի մսուրների կազմակերպումը այնքան էլ բարդ չէ. վերցնում են մեծ ֆուրգոն և նրա մեջ համարեցնում են ծալովի մահճակալներ: Առավոտյանից ֆուրգոնը երեխաներով դուրս է գալիս նրանց մայրերի աշխատանքի վայրը: Այստեղ մահճակալները ող են դուրս բերվում և երեխաները ամբողջ ժամանակ գտնվում են դայակների հսկողության տակ իրենց կերակրող մայրերին մոտիկ: Այդ բանի շնորհիվ ոչ միայն աշխատող մայրերի գործն է թեթևանում, այլև օգտվում է արտադրությունը, որի շահերը չեն տուժում այն դեպքում, երբ մայրերը հարկադրված են լինում թողնել աշխատանքը՝ գնալ երեխային կերակրելու:

Մանկական հիմնարկները պահելու և սարքավորելու միջոցները պետք է հայթայթել այսպես կոչված հասարակական ֆոնդից, որն առանձնացվում է կոլխոզների ընդհանուր եկամտի 5 տոկոսի չափով՝ համաձայն Միութենական Համժողկոմսովի և Կոլխոզկենտրոնի վերջին որոշման (սերմֆոնդը և մյուս հանրային կարիքների հատկացումները դուրս գալուց հետո 5 տոկոսը): Համենայն դեպս, սահմանափակվել միայն այդ հատկացումներով չի կարելի: Կուլտուր-կենցաղային կոմիսիան պետք է փնտրի և այլ աղբյուրներ մանկական հիմնարկների պահպանության համար, օրինակ՝ հատուկ հողամասեր ցանելով, վճարով ներկայացումներ տալով, վճարով կինոսեանսներ դնելով, շաբաթօրյակներ կազմակերպելով և այլն: Այդ ծախսերը ըստ էության իրենցից չեն ներկայացնում որպես վերադիր ծախսեր՝ տվյալ դեպքում միայն երեխաների վրա կատարված այդ ծախսերը փոխադրվում են միացյալ ֆոն, ծախսեր, որոնք կատարվել են առաջուց առանձին ընտանիքների կողմից:

Բնակարանային խնդիրը դժվարագույնն է կոլխոզային շինարարության մեջ: Միջոցների բացակայության պատճառով կոլխոզնիկները առայժմ ապրում են հին գյուղական խրճիթներում, հյուղերում, երբեմն նույնիսկ գետնափոր տներում: Սակայն նույնիսկ այդպիսի պայմաններում էլ հնարավոր է կարգի գցել կուլտուրական կյանքը: Նույնիսկ այդպիսի պայմաններում անխուսափելի չեն կեղտը, էլ բոլորովին պարտադիր ու հակասանիտարական դրությունը խրճիթներում ու բակերում:

Բազմաթիվ կոլխոզների, դրանց թվում և շատ աղքատ կոլխոզների փորձը հաստատում է այդ: Այն կոլխոզներում, որտեղ ղեկավարները և կուլտ-ակտիվը լրջորեն կպել են խրճիթների հակասանիտարական դրությունը վերացնելուն, կուլտուրական կյանքը կազմակերպելուն—մաքրասիրությանը, ձեռքերը լվալուն ճաշից առաջ և այլն,—այդ բնագավառում ունեն խոշոր

նվածումներ: Բժիշկ-հասարակագետները, վորոնք լինում են այդ կոլխոզներում, հաղորդում են, վոր կոլխոզներում հասակավորների հիվանդությունների ու մանուկների մահացությունը նշանավոր չափով ավելի քիչ է, քան շրջապատի գյուղերում: Մարդիկ ավելի առույգ են, կենսուրախ, առողջ:

Նոր կենցաղը, սակայն, չի կարող յերկար ժամանակ հանդուրժել բնակարանային նեղվածությունը: Ուժերի ու հնարավորությունների չափով կոլխոզներն արդեն մոտակա տարիներում պետք է աստիճանաբար կառուցեն ընդարձակ կոմունալ տներ, վորոնք հարթայթված կլինեն ամեն տեսակ հարմարություններով.—համայնական խոհանոցներ, լվացքատներ, մանկական մսուրներ, բոլոր հնարավորության ելեքտրական լուսավորություն, կոյուղի, ջրմուղ և այլն: Իսկ տվյալ պայմաններում ամենից առաջ պետք է ամենից ավելի լրիվ կերպով ոգտագործել ազատ նախկին կուլակների տները և բոլոր փակված յեկեղեցիները: Նրանց պետք է շտապով հարմարեցնել հասարակական կուլտուր-կենցաղային հիմնարկությունների համար:

Իսկ նոր տներ կառուցելու ժամանակ պետք է վճռականորեն հրաժարվել անհատական բնակարաններից և ամբողջ ուշադրությունը պետք է կենտրոնացված լինի լավ սարքավորված կոմունալ տների կառուցման վրա:

Այնքան էլ հեշտ բան չէ կոլխոզում հասարակական սնունդը ճիշտ հիմքերի վրա դնելը. չափազանց դժվարացնում են այդ խնդիրը՝—շենքերի բացակայությունը, սարքավորումը, վարկերի և պատրաստի աշխատող կադրերի բացակայությունը: Իսկ գործի վատ դրումը կարող է հիասթափություն առաջ բերել և յերկար ժամանակ կարող է հասարակական սննդի գաղափարը արհամարհանքի յենթարկվել: Հատկապես այդ պատճառով պետք է հասարակական սննդի գործը առաջին հերթին կարգի բերել համատարած կոլեկտի-

վացման որինակելի ռայոններում և ամենից ավելի խոշոր կոլխոզներում, ընդվորում աշխատանքը հարկավոր է կատարել խիստ պլանային կարգով:

Խոշոր կոլխոզի կենտրոնում պետք է կառուցել բավականին ընդարձակ ճաշարան և մեքենայացված խոհանոց, վորը կարտադրի ամեն օր խոշոր թվով կերակրի բաժիններ, իսկ այդտեղից հատուկ ամաններով կերակուրը պիտի տանել դաշտ, մանավանդ հնձի ժամանակ, կոլխոզի առանձին շրջանների մոտակա ճաշարանները: Խոշոր կոլխոզներում սննդի գործի աշխատողներ պատրաստելու համար պետք է շրջաններում և ռայոնական կենտրոններում կազմակերպել հատուկ կուրսեր, վորտեղ պետք է ուղարկել կին-կոլխոզնիկներին սովորելու: Բացի դրանից, հարկավոր է լիովին ոգտագործել նախկին կարմիր բանակային-խոհարարներին և կոլխոզի անդամ կանանց ուղարկել քաղաքային ճաշարանները փորձառության համար:

Առողջ կենցաղի տարրական նախադրյալն է հանդիսանում բժշկական ոգնության ճիշտ դրումը: Միության կոլեկտիվացվող զանազան ծայրերից ստացվող տեղեկությունները վկայում են այն մասին, վոր գյուղատնտեսական արտելների ու կոմունաների բժշկական սպասարկումը դեռևս հարկավոր բարձրության վրա չի դրված:

Կոլխոզներին բժշկական ոգնության հրատապ և կանոնավոր կազմակերպման գործում ամենակենսական խնդիրներից մեկը տվյալ մոմենտի համար այն է, վոր կոլխոզները պետք է կցել վորոշ հիվանդանոցային հաստատություններին, այնպես, վոր վերջիններս կոլխոզնիկներին ոգնություն ցույց տան առաջին հերթին: Դրա հետ միասին խոշոր կոլխոզներին ու մեծ կոլխոզային միավորումներին առբաժինները պետք է լրացուցիչ կերպով կցեն առանձին բժիշկների մշտական աշխատանքի համար և վոչ թե միայն յերթևեկելու:

Կոլխոզների մեծամասնության մեջ չափազանց թույլ է դրված և սանիտարա-առողջապահական հսկողությունը—սենյակների մաքրելը, աղբահորեր մաքրելը, արտաքնոցների, խոհանոցների, բակերի, ապրելու սենյակների մաքրությունը և այլն: Նման յերևույթների դեմ պետք է վճռական պայքար մղել: Խոշոր կոլխոզներին սանիտարական սպասարկության համար պետք է հիմնել հատուկ սանիտարական հսկողություն (սանբյուրո), որը պետք է տարածվի և բնակելի շենքերի վրա, նրանց պլանայնացման, սննդի, հանրակացարանների ռեժիմի վրա: Իսկ այդ տեսակետից կոլխոզի կարեվորագույն խնդիրն է՝ կառուցել բաղնիքներ և լվացքատներ թեկուզ նախնական ձևի (պրիմիտիվ ձևով): Առանց դրան խոսք եվ չի կարող լինել քիչ թե շատ տանելի սանիտարական պայմաններ ստեղծելու մասին:

Կոլխոզներում պետք է ստեղծել և առողջապահության բջիջներ: Նրանց կազմի մեջ կարող են մտնել կոլեկտիվի բոլոր ցանկացող անդամները: Առբջիջը ձեռնամուխ լինելով իր աշխատանքին, կապվում է մոտակա բժշկական շրջանի կամ տարաժնի հետ: Նա հրավիրում է բժիշկներ զեկուցումներ կարդալու, զրույցներ ունենալու, նույնպես և կոլխոզի բնակիչներին պարբերաբար քննելու համար: Բջիջը պետք է հոգ տանի այն մասին, որ հասարակական փռերը, ճաշարանը, խոհանոցը, լվացքատունը և բաղնիքը լավ սարքավորված լինեն, մաքուր պահվեն և կարգին: Միաժամանակ առբջիջը պարտավոր է հետևել ջրհորների սարքին դրությանը, թույլ չտալով կեղտոտելու և ջուրը պղտորելու: Նրա պարտավորությունների մեջ է մտնում առաջին օգնության կայանների կազմակերպումը, իսկ թե հնարավոր է, և՛ հիվանդանոցների կազմակերպումը, մոր և մանկան կոնսուլտացիայի և դեղատնակների կազմակերպումը: Առբջիջը պետք է կազմակերպի և ակումբին կից սանիտարական անկյուն, որտեղ կլինի սանիտարական լուսավորության վերաբերյալ գրականություն և որտեղ կանցկացվի ամբողջ սանիտարա-լուսավորական աշխատանքը (զրույցներ, ընթերցումներ և այլն):

Ց. ԿՈՒԼՏՈՒՐ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՆԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ

Չնայած նրան, որ գյուղատնտեսության հանրայնացումը ոչ միայն հեղաշրջում է մտցնում գյուղական արտադրության մեջ, այլև արմատական բեկում է մտցնում նահապետական կենցաղային կյանքի մեջ, այնուամենայնիվ, գեղջկուհի-կոլխոզնիկի բարոյական-իրավական դրությունը շատ դեպքերում դեռևս մնում է նույն շատ ծանր կացության մեջ: Կոլխոզում նույնպես կինը սկզբում հաճախ մնում է նույն մոռացված, իրավազուրկ, անխնա շահագործվողը, ինչպես և անհատական տնտեսության մեջ. այստեղ նույնիսկ նրա աշխատանքը, որը խոշորագույն մի աշխատանք, վրա յե ընկնում, ոչ ոքի կողմից չի վարձատրվում և հաշվի առնվում, միևնույն ժամանակ հյուծող, անշնորհակալ և ձանձրալի աշխատանք է: Այդ յերևույթը բացատրվում է ամբողջ մի շարք խոր պատճառներով. այդ պատճառներն արմատացել են գյուղական հին կենցաղում, յերբ կնոջ վրա նայում էին բարձրից, արհամարհական վերաբերմունքով, կատարելապես բացակայում էր ճըն... գեղջկուհիների մեծամասնության կարծող չող ... անհրաժեշտ էին համարում, որ նա բացի արտադրական աշխատանքից, որ նա բացի արտադրական անհատական տնտեսությամբ վարակավորումը, զբաղվի և ընտանեկան անհատական տնտեսությամբ—կերակուր պատրաստել, խոհարարություն անել, լվացք անել, կարել ու կարկատել, յերեխաներին խնամել, անասուններին նայել և այլն:

Յեթե տղամարդու համար մուտքը կոլխոզի մեջ նշանակում է աշխատանքի պայմանների անմիջական փոփոխություն, այդ աշխատանքի կրճատում և թեթևություն, ապա ուրեմն կնոջ համար կոլխոզային կյանքը, մանավանդ ցածր ու միջին ձևերի—հողամշակման ընկերությունների (տոզերի) ու արտելների

կոլեկտիվներում սկզբնական շրջանում, գործի վոչ ճիշտ դրման պայմաններում վորևէ իրական թեթևություն չի կարող բերել:

Գոյություն ունեցող այն դրությունը, յերբ կնոջը կոլխոզում շատ դեպքերում թողնում են առանց ուշադրության, առանց բարձրացնելու նրա վորակավորումը և կուլտուրական մակարդակը, այդպիսով ստեղծում են կանանց յուրահատուկ գործազրկություն կոլխոզներում, ավելի ճիշտ ասած, կանանց աշխատանքի ցածր տոկոսով ոգտագործում:

Կոլխոզի կանանց շրջանում՝ կուլտուր-լուսավորական և քաղաքական աշխատանքի թույլ դրումը հանգեցնում է նրան, վոր դեռ կանանց նշանավոր մասը մինչև որս էլ մնում է կուլակային և տերտերական ազդեցության տակ: Գեղջկուհիների մեջ դաստիարակչական և բացատրական աշխատանքը պետք է դնել իր հարկավոր բարձրության վրա, վորովհետև պատմական բարդացած տնտեսական ու կենցաղային պայմանների շնորհիվ գեղջկուհիները ավելի հետադեմ և ավելի պահպանողական մասն են կազմում գյուղական բնակչության, քան գյուղացի-տղամարդիկ,—այդ ամբողջ կուսակցության, խորհրդային ու կոլխոզային ստորին ակտիվի հրատապ ու անհետաձգելի խնդիրն է.

Կանանց աշխատանքի ճիշտ ոգտագործումը ուղղակի կախված է նրանից, թե վորքան կոլխոզների ղեկավարները կարողանում են նրանց համար ստեղծել առողջ արտադրական պայմաններ և, վոր քիչ կարևոր չէ, կախված է կանանց աշխատանքի մասնագիտացումից, այսինքն՝ նրանց աշխատանքը տնտեսական վորոշ ճյուղերում կազմակերպված ձևով գործադրումից, այնպիսի ճյուղերում, վորոնք ամենից ավելի յեն համապատասխանում կնոջ ընդունակություններին, ֆիզիկական ուժին և աշխատանքային ունակություններին: Այդ ճյուղերն են, վորոնք մինչև հիմա կոլխոզներում դրված են թույլ և մնում են, այսպես ասած, յետին պլանում. մենք խոսում ենք կաթնային գործի, խոզաբուծության մասին, կանանց տնայնագործական արհեստների մասին, կարկատելու ու դերձակների

արհեստանոցների մասին, բանջարանոցապանության, մեղվաբուծության, ջերմապահության մասին և այլն:

Ինչպես փորձը ցույց տվեց, ամբողջ մի շարք կոլխոզներ, վորոնք կարողացան ոգտագործել կանանց աշխատանքը ձմեռվա դադարի շրջանում, նրանք հիանալի արդյունքներ ստացան:

Մի շարք լավագույն կոմունաներ կանանց համար կազմակերպել են դերձականոցներ, հաշխայի արհեստանոցներ, կարու
հեստանոցներ, խսիր գործելու մեքենաների վրա աշխատելու
ձև սովորելու և գործող այդ խմբակ-
խմբակներ. քիչ չեն այն դեպքերը, յերբ տնայնագործական արդձեռնար-
ները վեր են ածվում վոչ միայն իրենց կոլ
կության և սկսում են սպասարկել պատվերներ են կատարում
խոզի անդամներին, այլև իրենց արտադրանքները կո-
դրսից ստանալով հումույթ և վաճառքի հանելով:
ոպերացիայի միջոցով

Կանանց աշխատանքի հաջող կիրառման յերաշխի-
քը, համենայն դեպս, այդ աշխատանքի պահպանման շրջա-
նում (մանավանդ հղիության և մայրության
մեջ է) և, վոր ամենագլխավորն է—միևնույն աշխատան-
քի համար կանանց և տղամարդկանց աշխատանքի հա-
վասար վարձատրության սահմանումն է: Մինչդեռ
կոլխոզների մեծամասնության մեջ և հենց այժմ էլ
կանանց աշխատանքը միևնույն հավասար պայմաններում
գնահատվում է 10–50 տոկոսով պակաս տղամարդու
աշխատանքից: Որինակ՝ Սիբիրում, «սոցիալիզմ» կո-
մունայում (Կանսկի ռայոն) բանվոր-տղամարդը ստա-
նում է 13 ռուբլի ամսական, իսկ կինը—միայն 8 ռուբ-
լի— Հյուսիսային Կովկասում կոլխոզների ճնշող մեծա-
մասնության մեջ կանանց աշխատանքը ավելի պակաս
է վարձատրվում, քան տղամարդունը մինչև 25–50
տոկոս: Անհրաժեշտ է շտապով և վճռականորեն ա-
մասապես փոխել այդքան աննորմալ դրությունը:
Միանգամայն անթույլատրելի յե, վոր աշխատանքի
հավասարության մեջ աշխատանքը վարձատրվի վոչ
թե ըստ ծախսած յեռանդի քանակի ու վորակի, այլ
ըստ սեռի:

Վորակավորյալ աշխատանք տանելու կնոջ համար խանգարող հիմնական չարիք են հանդիսանում անգրագիտությունն ու կիսագրագիտությունը: Շատ կոլխոզնիկներ մեղադրում են կանանց նրանում, վոր իբր թե կանայք ձգտում չունեն սովորելու և խուսափում են մասնակցելուց խմբակներում, յերեկոյան դպրոցներում և կուրսերում: Սակայն կանանց դպրոցական և արտադպրոցական աշխատանքի հաջողության համար հարկավոր է նախորոք նրանց ազատել վառարանից, դաշտից, թաթաշորից, գործելուց, նրա ուժի համեմատ մեքենայացնել նրա աշխատանքը և ներգրավել նրանց ընդհանուր աշխատանքի մեջ, վորպես կոլեկտիվի իրավահավասար անդամ:

Շարքային կոլխոզնիկուհիների վորակը բարձրացնելու լավագույն միջոցը կլինի կազմակերպել կանանց համար հատուկ արտադրական խմբակներ: Դրա համար պետք է համախմբել բոլոր կոլխոզնիկուհիներին, վորոնք զբաղված են, ասենք թե, արտադրության մեջ կամ կաթնային գործում, և նրանց հետ տանել կանոնավոր խմբակային պարապմունքներ գյուղատնտեսների ղեկավարությամբ:

Միաժամանակ հարկավոր է ուշադրություն դարձնել տնտեսության առանձին ճյուղերը վարելու կոլխոզնիկուհիների պատրաստության վրա: Այդպիսի պատրաստություն կազմակերպել է Կոլխոզկենտրոնը գյուղատնտեսական կոոպերացիայի հետ միասին: Այսպես որինակ՝ Թռչնաբուծական միության հետ կազմակերպել են յերեք կենտրոնում (Վորոնեժ, Ռոստով և Կազան) կուրսեր թռչնաբուծությունից վորակավորյալ աշխատողուհիներ պատրաստելու համար: Կանանց համար հատուկ կուրսեր են բացվում մի շարք տեղական կոլխոզմիությունների կողմից:

Փորձը ցույց է տվել, վոր կանանց պատգամավորական ժողովները հանդիսանում են վորպես անփոխարինելի, հիանալի դպրոց ակտիվություն ստեղծելու գործում, հասարակայնության զարգացման և գիտակցության գործում գեղջկուհի–կոլխոզնիկուհիների շրջանում:

Մի շարք տեղերում կոլխոզային պատգամավորական ժողովների նախաձեռնությամբ և պնդումով հրավիրվել են կոլխոզնիկուհիների շրջանային և ռայոնական հատուկ կոնֆերանսներ. ինչպես որինակ՝ Ուրալում, 1929 թ. ձմեռը հրավիրվեցին գյուղատնտեսական կոոպերացիայի ակտիվիստ–կոլխոզնիկուհիների և գեղջկուհի–վայատերերի 11 շրջանային կոնֆերանսներ: Համարյա այդ բոլոր կոնֆերանսներն անցան կոլխոզնիկուհիների բարձր ակտիվությամբ, ընդվորում, վորպես կանոն, կոլխոզնիկուհիները հայտարարում էին բացառիկ ուշադրություն դեպի լուսավորության, նոր կենցաղի հարցերը:

Վերջապես համատարած կոլեկտիվացման առաջավոր ռայոններում զարգանում է կանանց հասարակական ակտիվության նոր ձևը, հանձինս կանանց հատուկ կոլեկտիվացման բրիգադների, վորոնք ակտիվորեն մասնակցում են կուլակային և տերտերական ագիտացիայի դեմ մղվող պայքարին, յեռանդով պրոպագանդ են մղում անհատ տնտեսավարների շրջանում տարածելով կոլեկտիվ գյուղատնտեսական գաղափարները և այլն:

9. ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ամբողջ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար հսկայական կուլտուրական նշանակություն ունեն կոլխոզային փոխորդի—յերիտասարդության ճիշտ հասարակական–աշխատանքային դաստիարակության հարցերը: Վերջին ժամանակներս կոլխոզային մամուլի մեջ ահազանգ է տրվում այն մասին, վոր քանի գնում ուժեղանում է կոլխոզային ավելի վորակյալ և սովորող յերիտասարդության ձգտումը դեպի քաղաքները, գործարաններն ու ֆաբրիկաները:

Այդ պատճառով ավելի քան կարևոր է կոլխոզում յերեխաների դաստիարակությունը դնել իր հարկավոր

բաձրության վրա՝ մսուրներ և նախադպրոցական հիմնարկություններ կազմակերպելու միջոցով. պետք է աշխատել յերեխաներին հարյուր տոկոսով ընդգրկել դպրոցների մեջ, կազմակերպել կոլխոզների ներսում հատուկ աշխատանքային կոլեկտիվներ, փոխարինել յերեխաների հյուծող արտադրական աշխատանքը ուսումնական-դաստիարակչական աշխատանքով և սահմանափակել 14-16 տարեկան պատանիների արտադրական աշխատանքը չորս ժամով:

Անգրագիտությունը կոլխոզներում ներկայումս նշանավոր չափով աճում է ի հաշիվ յերիտասարդության, վորը լրիվին չի ընդգրկվում նախնական դըպրոցի կողմից: Մինչդեռ կոլխոզներում կուլտուր-լուսավորական աշխատանքի հիմնական հարցերից մեկն այն է, վոր պետք է բոլոր յերեխաներն ու պատանիները ամբողջովին ընգրկվեն դպրոցական դաստիարակությամբ: Այդ առնչությամբ ժողովրդական կրթության բաժինները ու կոլխոզային սիստեմը պետք է հաստատուն և ամենուրեք սահմանեն կոլխոզնիկների յերեխաների առաջնահերթ ուսուցումը գյուղական դպրոցներում հանդեպ շրջապատող գյուղացիական բնակչության: Նոր դպրոցների շինարարությունը պետք է ընթանա այն հաշվով, վոր առաջին հերթին բավարարվեն բարձր կոլեկտիվացումով ռայոնների պահանջները, ընդվորում այդ դպրոցները առավելապես պետք է կառուցվեն խոշոր կոլխոզների տերիտորիայում: Ժողովրդական կրթության բաժինները կոլխոզային կուլտուր-կենցաղային կոմբինատների ակտիվ մասնակցությամբ պետք է կարգավորեն կոլխոզնիկների յերեխաների ապահովումը հանրակացարաններով, գիշերօթիկներով, տաք նախաճաշով և այլն:

Կոլխոզնիկների համար կրթության լավագույն մեթոդն այն կլինի, վորը ամենասերտ կերպով կապված է արտադրության հետ: Այդ ամենից ավելի ապահովում է սովորողների հետաքրքրությունը պա-

րապմունքներով, գիտակցական վերաբերմունքը դեպի ուսումը և մեծագույն չափով օգտագործումը ձեռք բերած գիտելիքները ապագա գյուղատնտեսական գործնական աշխատանքում: Այդպիսի դպրոցներ, համաձայն Լուսժողկոմխորհրդի 1930 թ. փետրվարի 5-ի վորոշման, պետք է դառնան կոլխոզային յերիտասարդության դպրոցները, վերակազմված գյուղացիական յերիտասարդության դպրոցներից: ԿՈԼՑԵԴՊ կոլխոզային շարժման պրոպագանդից պետք է անցնեն խոշոր կոլլեկտիվ հողագործության կազմակերպիչների գործնական ուսուցմանը:

Գյուղատնտեսության հին ծրագրերի հանրականությունից (ունիվերսալիզմ), «հանրագետների» և կիսագետների պատրաստությունից ԿՈԼՑԵԴՊ մի քայլ է արել դեպի իր աշխատանքի վերակառուցումը համապատասխան աշխատանքի տեխնիկական բաժանման ընթացքին, տվյալ ռայոնի խոշոր կոլխզներում:

Կոլխոզային յերիտասարդության յուրաքանչյուր դպրոց հատուկ ուղղություն է ընդունել (օրինակ՝ դաշտագործական-տրակտորական, վուշագործական, կաթնա-կենդանաբուծական և այլն), այնպես, վորպեսզի ապահովվի տվյալ ռայոնի կադրերի պահանջը (դաշտագործության բրիգադների, կոլխոզային անասնոցներ, բրիգադիրներ, տրակտորիստներ և այլն):

Սովորողների արտադրական ուսուցումն ու պրակտիկան միաժամանակ հանդիսանում են նրանց աշխատանքը կոլխոզում օգտագործելու հիմնական ձևը: Արտադրական ուսուցման և պրակտիկայի վորոշ ծրագրի անցումը պետք է վորոշ արտադրական առաջադրությունների բնույթ ունենա և կոլխոզի համար պետք է ներկայացնի տնտեսական արժեք:

Դրան համապատասխան, սովորողներին՝ նյութապես ապահովելը աշխատավարձի ձև է ստանում (14 տարեկան պատանիների համար և բարձր), կամ կոլխոզում հատուկ հանրայնացված ուսուցման փոնդի ձև է սահմանվում 14 տարեկանից փոքր պատանիների հա-

մար: Դպրոցի ու կոլխոզների փոխադարձ պարտավո-
րությունները արձանագրվում են հատուկ համաձայ-
նագրով:

Այս ճանապարհով կոլխոզներն ամենից ավելի վըս-
տահորեն կկարողանան պատրաստել իրենց մասնագետ-
ներին, վորոնք սերտորեն կապված կլինեն արտադրա-
կան ու կենցաղային միջավայրի հետ և վորոնք պատ-
րաստ կլինեն իրենց ուժերը ի սպաս դնել այն տնտեսու-
թյանը, վորն իրեն ուղարկել է սովորելու:

Շատ կոլխոզներում գործադրվում է յուրահատուկ
կոնտրակտացիա իր յերիտասարդության հետ: Այդպի-
սով կոլխոզը վոչ միայն խանգարում, այլև ամեն կերպ
խրախուսում է յերիտասարդության գործարանները,
տեխնիկումները, ԲՈՒՀ-երը, տրակտորական, մեղվա-
բուծական և այլն կուրսերը գնալու: Ընդվորում վար-
ձատրում է իրեն կոլխոզից գնացածներին պահելու
և ուսուցման համար միայն այն պարտադիր պայմա-
նով, վոր ուսումը վերջացնելուց հետո կոլեկտիվ տըն-
տեսության մեջ նա հատուցի իր աշխատանքով մի-քանի
տարվա ընթացքում (սովորաբար—վոչ պակաս յերեք
տարի):

Կոմյերիտմիության բջիջները կոլխոզներում կուս-
բջիջների հետ միասին ամենից ավելի պատասխանատու
դեր ունեն կատարելու կոլխոզնիկների և մանավանդ
կոլխոզային յերիտասարդության, քաղաքական և կուլ-
տուր-կենցաղային մակարդակը բարձրացնելու գոր-
ծում:

10. ԿՈՒԼՏՈՒՐ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Ի յեզրափակումն հարկավոր է մատնանշել, վոր
կուլտուր-կենցաղային աշխատանքը կառուցելու ժա-
մանակ ամենալուրջ հարցերից մեկը այդ աշխատան-
քին զարկ տալու համար բավականաչափ դրամական
միջոցներ կուտակելու հարցն է: Մինչև այժմ միայն
առանձին, և այն էլ շատ հազվագյուտ դեպքում, կոլ-

խոզները կարողացել են հնարավորություն գտնել վորոշ
գումար առանձնացնել բավարարելու համար կուլտուր-
կենցաղային ամենաանհետաձգելի պահանջները: Մի-
քանի կոլխոզնիկներ նույնիսկ միանգամայն անթույլա-
տրելի յեն համարում այդպիսի ծախսեր անելը: Բայց
այժմ ամբողջ կոլխոզային ակտիվի համար պետք է մի-
անգամայն պարզ լինի, վոր կուլտուր-կենցաղային
կարիքների համար կատարվող ծախսերը նույնչափ ան-
հրաժեշտ են, թեկուզ քիչ չափով, վորչափ և զուտ
տնտեսական կարիքների համար կատարվող ծախսերը:
Կոլխոզի կուլտուր-կենցաղային կարիքները հոգալու
համար պետք է անպայման հատկացնել, թեկուզ վոչ
մեծ, բայց արդեն հաստատ կերպով մի վորոշ տոկոս
ընդհանուր յեկամտից, ընդհանուր ժողովի կողմից
ընդունված: Ֆինանսավորման վորպես լրացուցիչ աղ-
բյուրներ կուլտուր-կենցաղային աշխատանքի համար
կարող են լինել վճարովի ներկայացումները, յերե-
կույթները, համերգները, կինոսեանսները, նույնպես
և կոլխոզի ընդհանուր ժողովի համաձայնությամբ,
կազմակերպված հասարակական աշխատանքների կազմակեր-
պումը:

Վերջապես, այդ գործում կոլխոզներին օգնություն
պետք է հասնեն՝ սպառկոոպերացիան, գյուղատնտե-
սական կոոպերացիայի առանձին սիստեմները—հացի,
կաթի և այլն—և զանազան կամավոր ու շեֆական ըն-
կերությունները:

Իրենց յեկամտի միջոցների ու դրամական հնա-
րավորությունների հաշիվն անելով, կոլխոզ-
ների վարչությունները իրենց կուլտուր-կենցաղա-
յին կոմիսիաների միջոցով պետք է ծախսի համապա-
տասխան նախահաշիվ կազմեն: Յեթե կոլխոզներում
կառուցվում են նոր բնակելի շենքեր, անհրաժեշտ է
հաշվի առնել կոլխոզնիկների կուլտուր-կենցաղային
կարիքները, նախատեսելով, դպրոցի, մսուրների և
այլնի համար հատուկ սենյակների հատկացումը:

Համ. կենտգործկոմի 30/I 1930 թ. վորոշումով «խոշոր կոլխոզներում կուլտուր-կենցաղային շինարարությանն աջակցող ֆոնդերի մասին» սկիզբն է դըրված սիստեմատիկ վարկավորմանը և օժանդակությանը կուլտուր-կենցաղային աշխատանքին (առայժմ միայն խոշոր կոլխոզներում: Այդ վորոշման համաձայն աջակցության ֆոնդեր են ստեղծվում ինչպես կենտրոններում, այնպես էլ գյուղատնտեսական բանկերի շրջաններում:

Այդ ֆոնդերը կազմվում են բոլոր կոոպերատիվ կազմակերպությունների, «Ժողմննդի» ակցիոներական ընկերության մաքուր շահույթի 5 տոկոս հատկացումներից և պետական ու տեղական բյուջեների հատկացումներից: Այդ ֆոնդից գոյացած միջոցները տրվում են խոշոր կոլխոզներին վորպես յերկարատև և արտոնյալ փոխառություններ հետևյալ հիմնարկների կառուցման և սարքավորման համար.—մանկական մըսուրներ, մանկապարտեզներ, մանկական հրապարակներ, հասարակական ճաշարաններ, հացի փռեր, լվացքատներ, բաղնիքներ, բժշկական կայաններ, ակումբներ, խրճիթ-ընթերցարաններ և գրադարաններ: Այդ ֆոնդերից փոխառություններ են տրվում կոլխոզներին «այն պայմանով, յեթե տվյալ հիմնարկության կառուցման և սարքավորման մեջ կոլխոզը նույնպես մասնակցում է իր միջոցներով վոչ պակաս քան 30 տոկոսի չափով, նկատի ունենալով կառուցման և սարքավորման ընդհանուր արժեքը»:

Խոշոր կոլխոզների կուլտուր-կենցաղային կոմիսիաները պետք է մանրամասնորեն ծանոթանան կառավարական այդ վորոշումների և այդ հարցի վերաբերյալ տեղական կազմակերպությունների վորոշումների հետ: Նրանք պետք է ամեն կերպ աշխատեն, վոր իրենց տեղական կազմակերպությունները, առաջին հերթին իրենց կոլխոզմիությունն իրականացնեն կառավարական այդ վորոշումը:

VIII. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈԼԽՈԶՆԵՐԻՆ

1. Հողաշինարարության արտոնություններ, 2. [illegible]եքենամատակարարման արտոնություններ, 3. Արտա[illegible]րանքը վաճառահանելու արտոնություններ, 4. Արտո[illegible]ություններ կոլխոզների գյուղհարկի վերաբերյալ, [illegible]. Արտոնություններ կարմիր բանակային կոլխոզնե[illegible]ին, 6. Արտոնություններ տեղափոխվող կոլխոզներին:

«Յուրաքանչյուր հասարակակարգ,—ասում է [illegible]ենինը,—առաջ է գալիս միայն վորոշ դասակարգի [illegible] դեպքում»: Կոլխոզները դրամական օժանդակության [illegible] մանր ու մանրագույն տըն-[illegible]անդես են գալիս վորպես [illegible] վերակազմության մի ձև [illegible]տեսության մասսայական [illegible] տնտեսության խոշոր մեխանիզացված—սոցիալիստական [illegible] պետությունը կոլ[illegible]եջ, և դրա համար էլ Խորհրդային [illegible] դրամական օժանդակություն [illegible]ոզներին հսկայական [illegible], կոլխոզներին խոշոր վարկեր [illegible]ույց տալով հանդերձ, [illegible] կարճատև, այլև յեր-[illegible]ատկացնելու միջոցով, ինչպես [illegible] վերապահում է նույնպես մի շարք [illegible]արատեվ, նրանց [illegible]րտոնություններ:

Այդ արտոնությունները վերաբերում են հողաշի-[illegible]նարարությանը, մեքենամատակարարմանը, վարկեր [illegible]բաց թողնելուն, արտադրանքը վաճառահանելուն, [illegible]գյուղհարկին և ապահովագրմանը: Կոլխոզների յու-[illegible]րաքանչյուր ակտիվ կոլխոզնիկ, յուրաքանչյուր կազ-[illegible]մակերպիչ պետք է գիտենա այդ արտոնությունները, վորպեսզի դեռևս չկոլեկտիվացած գյուղացիներին [illegible]բացատրի այն առավելությունների մասին, վոր նրանք [illegible]ստանում են կոլխոզ մտնելու դեպքում, վորպեսզի կոլ-[illegible]խոզային շինարարության իր աշխատանքի ժամանակ գործնականում կիրառի այդ արտոնությունները:

1. ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հողաշինարարության ժամանակ կոլխոզները ստա-[illegible]նում են հետևյալ արտոնությունները·

1. Արտոնություններ հող հատկացնելու դեպքում:

Այդ արտոնությունները նրանումն է, վոր գյուղացիա-

կան ծխերի մի խումբ, յերբ վորոշում է կոլխոզ կազմակերպել, այդ խումբն իրավունք է ստանում առանց հողային հասարակության մեծամասնության համաձայնությունն ունենալու, յեթե նույնիսկ մեծամասնությունը դեմ լինի կոլեկտիվացմանը, իրավունք և ստանում անջատվել և ինքնուրույն հողամաս ունենալ:

Հողային մարմինները պարտավոր են ամենակարճ ժամանակում կոլխոզին հատկացնել հողային հասարակության կազմից անջատված ինքնուրույն հողամաս, վոչ պակաս հողի այն քանակով, վոր մինչեվ կոլխոզ կազմակերպվելն ունեյին այդ բոլոր տնտեսությունները: Բացի դրանից հողային հասարակության մեջ մտնող բոլոր տնտեսությունները յեթե հետագայում ցանկություն են հայտնում մտնելու հողային հասարակությունից անջատված կոլխոզի մեջ, լիակատար իրավունք են ձեռք բերում առանց հողային հասարակության համաձայնությունն առնելու անջատվել նրա կազմից և մտնել կոլխոզին: Նրանց հասնող հողի բաժինը հանձնվում է այն կոլխոզին, վորտեղ նրանք մտել են վորպես անդամներ, հասարակության հողից կտրվում է կոլխոզին մոտիկ յեղած հողերից և կցվում է կոլխոզի հողերին առանց հասարակության համաձայնության:

2. Հողերն անջատելու ժամանակ հողային մարմինները պարտավոր են որենքով կոլխոզի համար անջատել, հատկացնել այնպիսի հողեր, վորոնք ամենից ավելի հարմար են դասավորված, վորակով լավ են, հեշտ մշակելի յեն և ճիշտ տնտեսություն վարելու համար ապահովված են հողային անհրաժեշտ հարմարություններով՝ պարարտանյութերով, ջրով և ճանապարհներով:

3. Սովխոզների շինարարության համար չհատկացված պետական հողային ֆոնդի ամբողջ հողերը հանձնվում են առաջին հերթին գոյություն ունեցող և նոր կազմակերպվող կոլխոզներին ընդվորում այդ դեպքում կոլխոզը վոչ թե այդ ռայոնում գոյություն ունեցող իջեցրած նորմաներով է հող ստանում, այլ ստանում է այնքան, վորքան նա կարող է մշակել առանց

վարձու աշխատանքի և այն էլ հողի այնպիսի քանակ, վորն ամենաձեռնտուն կլինի տվյալ ռայոնում խոշոր տնտեսություն զարգացնելու համար: Այսպես թե այնպես կոլխոզներին խոշոր, ամենից ավելի ձեռնտու հողամասեր պետհողֆոնդից հատկացվում են այն պայմանով, վոր կոլխոզը կարողանա իրեն հատկացրած հողերը օգտագործել միայն իր անդամների ուժերով առանց հողը կապալով օգտագործման տալու: Այդ պատճառով կոլխոզին զգալի չափով հողամաս հատկացնելու դեպքում հողային մարմինները կոլխոզի համար սահմանում են վորոշ ժամկետ, համենայն դեպս, վոչ քիչ քան մեկ տարի, վորի ընթացքում հող ստացող կոլխոզը պարտավոր է՝ կամ լրացնել իր կազմը նոր անդամներ ընդունելու միջոցով, անդամների այնպիսի թվով, վոր բավական լինի ամբողջ հողը մշակելու համար բացառապես կոլխոզի ուժերով, կամ ամբողջ հողը պարտավոր է մշակել այդ նպատակով փոխելով մշակման ձևը տնտեսության մեքենայացման սկզբունքներով: Այն դեպքում, յեթե կոլխոզին հանձնած հողամասերում կան շենք և դանազան տնտեսական կառուցվածքներ, յեթե այդ հողամասի վրա տնտեսություն են վարել և յեղել է վորոշ գյուղատնտեսական ինվենտար, այդ բոլորը կարելի յե հանձնել այդ նույն հողամասի վրա տնտեսություն կազմակերպող կոլխոզին: Այդ ամբողջ գույքը կոլխոզին է հանձնվում նույն քանակով, ինչ քանակ, վոր կոլխոզի համար անհրաժեշտ է իր տնտեսությունը վարելու և հանձնվում է ձրիաբար, մայն անպայման հանձնած գույքի արժեքը դրանցելու անբաժան կապիտալի մեջ:

4. Յեթե կոլխոզների անդամների մեծամասնությունը չքավորներ են և յեթե կոլխոզն. կազմված են զորացրված կարմիր բանակայիններից, պատերազմի հաշմանդամներից և նախկին կարմիր պարտիզաններից, այդպիսի կոլխոզների հողաշինարարությունը կատարվում է ձրիաբար. ամբողջովին պետության հաշվին: Մնացած բոլոր կոլխոզների հողաշինարարությունը

կատարվում է ցածր գներով, և այդ նպատակի համար կոլխոզներին վարկ է հատկացվում:

2. ՄԵՔԵՆԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այդ արտոնությունները նախ և առաջ նրանումն են, որ ամենից ավելի խոշոր բարդ մեքենաները բաց են թողնվում, չհաշված սովխոզներին, առաջին հերթին կոլխոզներին, իսկ մի քանի մեքենաներ և գործիքներ բացառապես կոլխոզներին: Այդպիսի մի շարք բարդ մեքենաների կոլխոզներին բաց թողնելը հնարավորություն է տալիս նրանց իրենց տնտեսությունը դնել անհամեմատ ավելի բարձր բարենպաստ պայմաններում, քան անհատական տնտեսություններն են: Հենց այդ մի հանգամանքը կոլխոզների խոշորագույն առավելությունն են հանդիսանում: Համենայն դեպս, կոլխոզներին տրվող մեքենամատակարարման արտոնությունները միայն նրանում չէ, որ կոլխոզներն ստանում են բարդ գյուղատնտեսական մեքենաներ և առաջին հերթին են ստանում հանդեպ անհատական տնտեսավարների: Այդ արտոնությունները մեծապես աչքի յեն ընկնում նրանով, որ կոլխոզները, առաջինը՝ մեքենաներ և գործիքներ գնելիս արժեքի միայն մի մասն են վճարում, որպես կանխավճար, իսկ արժեքի մնացած մասի դիմաց նրանց վարկ է բաց թողնվում, և յերկրորդ՝ կոլխոզներից կանխավճարներ են վերցնում ավելի քիչ, քան անհատ տնտեսավարներից, իսկ վարկը բաց է թողնվում ավելի յերկար ժամանակով և ավելի ցածր տոկոսներով:

Կոլխոզներին գյուղատնտեսական մեքենաներ է բաց թողնվում վարկավորման արտոնության սանդղակի (շկալա) պայմաններով: Վարկավորման սանդղակներն ամեն տարի հաստատում է կառավարությունը, ընդվորում սովորաբար սահմանվում է վարկավորման յերկու սանդղակ, որոնցից մեկը կիրառվում է սակավազոր կոլխոզներին և չքավորական տնտեսություններին գյուղատնտեսական մեքենաներ հայթայթելու ժամանակ, իսկ 2-րդը՝ այն կոլխոզների համար, որոնց կազմի

մեծ մասը միջակներ են, նույնպես և անհատական միջակային տնտեսությունների համար:

Ավելի արտոնություն տվող առաջին սանդղակը կիրառվում է բոլոր գյուղատնտեսական կոմունաների, նույնպես և արտելների ու իր կազմում չքավորների դերակշռող թիվ ունեցող ընկերությունների վերաբերմամբ:

Սրանց գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները բաց են թողնվում հետևյալ պայմաններով:

1. Մեքենաներ ստացողից կանխավճարներ են վերցնում մեքենաների արժեքի 15–20 տոկոսի չափով. ընդվորում տոկոսի չափը վորոշվում է այսպես՝ յեթե մեքենաները շատ թանկ չեն, շատ են վերցնում. իսկ յեթե շատ թանկ են, քիչ են վերցնում: Օրինակ՝ յեթե մեքենան արժե 300 ռուբլի, այն ժամանակ կանխավճար են վերցնում 15 տոկոս, այսինքն՝ 45 ռուբլի: Յեթե մեքենան արժե 70 ռուբլի, կանխավճար են վերցընում 50 տոկոս, այսինքն՝ 35 ռուբլի: Կանխավճարների մուծելու այդպիսի պայմանները հնարավորություն են տալիս կոլխոզներին ձեռք բերելու ավելի բարդ և թանգարժեք մեքենաներ:

2. Մնացած գումարի համար, որ մնում է կանխավճարները մուծելուց հետո, կոլխոզներին ժամանակ է տրվում, ընդվորում վճարումների ժամկետներն ու չափը նույնպես կախված է գնած մեք. արժեքից — ավելի թանգ մեքենաների համար յերկար ժամանակ է տըրվում, իսկ ավելի եժան մեքենաների համար կարճ ժամանակ: Արժեքով տարբեր մեքենաների վճարումների ժամկետները արտոնության առաջին սանդղակով տանվում է 2-ից մինչև 4 բերքահավաք:

Վարկավորման յերկրորդ սանդղակով, որն ավելի հաստատուն է, կիրառվում է գյուղատնտեսական արտելների հողի հասարակական մշակման ընկերությունների վերաբերմամբ, որոնց կազմում մեծամասնությունը միջակներ են, նույնպես և կիրառվում է անհատական միջակային տնտեսությունների վերաբերմամբ: Սրանց գյուղատնտեսական մեքենաներ և

գործիքներ բաց են թողնվում հետևյալ պայմաններով.

1. Մեքենա ստացողից կանխավճար է վերցվում ձեռք բերած մեքենայի արժեքի 25-ից մինչև 75 տոկոսը (այսինքն՝ ավելի շատ, քան առաջին սանդղակով):

2. Մնացած գումարը վճարելու համար տրվում է ավելի քիչ ժամանակ, քան առաջին սանդղակով,- այսինքն՝ վոչ ավելի քան 2 բերքահավաք և առանձին հազվադեպ դեպքում՝ 3 բերքահավաք ժամկետով:

Բացի դրանից, ինչպես առաջին սանդղկով, նույնպես և յերկրորդ սանդղակով գյուղատնտեսական մեքենաներ ձեռք բերած գյուղատնտեսական արտելների համար կանխավճարի չափը իջեցվում է գնած մեքենայի արժեքի 5 տոկոսով, իսկ կոմունաների համար՝ 10 տոկոսով, ընդգրկում բոլոր կոմունաները, անկախ նրանից, թե նրանք ինչ կարգ ունեն, մեքենաներ և գործիքներ են ձեռք բերում առաջին սանդղակով, ավելի արտոնյալ սանդղակով:

Անհրաժեշտ է մատնանշել դարձյալ մեկ արտոնություն, վորը վերաբերում է կոլխոզներին մեքենամատակարարմանը, այն կոլխոզներին, վորոնք կոնտրակտացիոն պայմանագիր են կնքել իրենց արտադրանքը հանձնելու մասին: Գյուղատնտեսական մեքենաներ վաճառելու ժամանակ այդպիսի կոլխոզներին կանխավճարից լրացուցիչ զեղչ է արվում 50 տոկոսի չափով կանխավճարի համար սահմանված գումարից:

Բացի դրանից, մեքենա-տրակտորական կայաններր առաջին հերթին կոլխոզներին են սպասարկում: Այս առավելությունը վճռական նշանակություն ունի, վորը արմատապես փոխում է կոլխոզի տնտեսության ամբողջ սիստեմը, նշանավոր չափով բարձրացնում է կոլխոզների յեկամտաբերությունը և նրանց անհամեմատ ավելի բարենպաստ դրության մեջ է դնում հանդեպ անհատական տնտեսավարների:

3. ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Անհատական տնտեսավարի հետ համեմատած կոլխոզները բավականին արտոնություններ են վայելում նաև իրենց արտադրանքը պետմարմիններին և կոպերացիային հանձնելիս:

Հատիկային և յուղատու արտադրանքի հանձնման վերաբերմամբ կոլխոզները այն արտոնություններն են ստանում, վոր բացի սահմանված վարձատրությունից, նրանք դեռ ստանում են լրացուցիչ վճար ժամկետայնության համար, ապրանքը միանվագ ստանալու համար, տեսակավորության համար և այլն: Հավելավճարի (լրացուցիչ վճարի) չափը տատանվում է 18 կոպեկից սկսած գարնանային կուլտուրաների համար և մինչև 30 կոպ.— աշնանային կուլտուրաների մի ցենտների համար: Վորոշ պարտիաներով հատիկամթերք հանձնելու ժամանակ (վոչ պակաս 82 ցենտներ), կոլխոզներն ստանում են գնից ավելի միանվագ հանձնելու հավելում, վորը նայած պարտիայի չափերին տատանվում է 18-ից մինչև 24 կոպ. ամեն մի հանձնած ցենտների համար: Արեվածաղիկը հանձնելիս կոլխոզներն ստանում են, բացի յուրաքանչյուր հանձնած արեվածաղկի ցենտների համար նշանակված գնից, 4 կիլոգրամ ձեթ և 8 կիլոգրամ քուսպ (ժմխի):

Տեխնիկական կուլտուրաների վերաբերմամբ կոլխոզներն ստանում են հետևյալ արտոնությունները.— կտավհատի և կանեփի շրջանների կոլխոզները ազատվում են մթերող օրգաններին հացահատիկ հանձնելու նորմաներից, յեթե նրանք իրենց ցանքադաշտի վոչ պակաս 10 տոկոսը կտավհատ են ցանել և վոչ պակաս 5 տոկոսը կանեփ: Կտավհատ և կանեփ ցանողները ՌՍՖՍՀ ռայոններում հայթայթվում են հացով կես ցենտների չափով յուրաքանչյուր կոնտրակտացիայի յենթարկված կտավհատի ու կանեփի մի հեկտար ցանքի համար: Կտավհատ և կանեփ ցանող կոլխոզները իրավունք ունեն վորպես վարկ ստանալ ան-

հրաժեշտ սերմեր նրանց արժեքի մեկ յերրորդականի
չափ կանխիկ վճարով։

Ճակնդեղի վերաբերմամբ․ կոլխոզները ճակնդեղա-
յին կոոպերացիային հանձնելիս հավելավճար են ստա-
նում հիմնական մթերումների գնից 50 տոկոսի չափով։

Վորպես լրացուցիչ առավելություն ճակնդեղա-
յին կոոպերացիային հանձնված ճակնդեղի համար կոլ-
խոզների հետ հաշիվ տեսնելիս, տալիս է նրանց ձրիա-
բար յուրաքանչյուր հանձնած մետրական ցենտներ ճա-
կնդեղի համար 58 կիլոգր․ քուսպ (ժոմ) և 1,05 կիլգ․
շաքար (պատոկա) և ի հաշիվ նրանց հասնող վճարում-
ների 60 կիլոգրամ շաքար։

Դեղին ծխախոտի և մախորկայի վերաբերմամբ․
նույնպես կոլխոզներն ստանում են վորոշված նորմանե-
րով սահմանված յուրաքանչյուր ռայոնի համար հավե-
լավճարներ վորոշված գների համեմատ ապրանքը մի-
նվագ հանձնելու համար, տեսակավորման հատկու-
թյան և ծխախոտի դարսվածքի համար։

Կոնտրակտացիոն պայմանագրով իրենց արտադրա-
քը հանձնող բոլոր կոլխոզներն ստանում են, բացի
հատուկ հավելավճարներից, վորոնց մասին մենք խո-
սեցինք վերևում, նույնպես և ավանսներ պայմանա-
գրեր կնքելիս։ Այդ ավանսները կոլխոզների համար բա-
վականին բարձր են, քան անհատական տնտեսավար-
ների համար, և անկասկած է, վոր այդ ավանսները
խոշոր չափով հեշտացնում են կոլխոզների աշխատանքը։

4․ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂ-ՀԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ․

Առանձնապես խոշոր են այն արտոնությունները,
վորոնք վերապահված են կոլխոզներին գյուղհարկի վե-
րաբերմամբ։ Գյուղհարկի առթիվ կոլխոզներին տրվող
արտոնությունների բնույթն ու չափը խիստ բազմատե-
սակ են և կախված են ամբողջ մի շարք պայմաններից՝
Կոլխոզներին արտոնություններ են վերապահվում ըստ
սակավազորության, ցանքադաշտն ընդարձակելու հա-

մար, ագրոմինիմումը կիրառելու համար, տեխնիկա-
կան կուլտուրաների ցանքերի համար, պտղատու ծա-
ռերով այգիներ ու խաղողի այգիներ քցելու համար,
բանջարանոցների համար, կենդանաբուծության համար
և այլն։

Սակավազոր կոլխոզներին տրվող արտոնություն-
ները նրանումն են, վոր կամ կոլխոզները բոլորովին
ազատվում են գյուղատնտեսական հարկից կամ նրանց
նշանավոր չափով զեղչ է արվում։ Այն դեպքում, յեթե
կոլխոզի տարեկան յեկամուտն ամեն մի բերանի հա-
մար, յեկամուտը նորմաներով հաշվելիս, 30 ռուբլուց
չի անցնում և ըստ հաշվետվության հաշվելիս չի անց-
նում 60 ռուբլուց, այդպիսի կոլխոզը միանգամայն ա-
զատվում է հարկից։

Նորմաներով հաշվելիս 30 ռուբլուց ավելի յեկա-
մուտ ունեցող սակավազոր կոլխոզները և ըստ հաշվե-
տվության հաշվելիս մեկ անձին 60 ռուբլի ընկնելու
դեպքում, այդպիսի կոլխոզները կարող են զեղչ ստա-
նալ վորոշված կոպարի 50 տոկոսի չափով, նկատի ու-
նենալով տնտեսությունը, ռայոնական գործկոմին հա-
տուկ միջնորդություն հարուցելով։

Այն կոլխոզներում, վորոնց կազմի մեջ են մտնում
տնտեսություններ ազատված տուրքից
չքավորական սակավազորության համար, յեկամու-
նախորդ տարում հաշվելիս հողից ստացված յեկամուտ
ը նորմաներով
չափը, այն հողից, վոր պատկանում եր մինչև կոլխոզ
չքավորական տնտեսություններին,
մտնելը ազատված հանդեպ վարելահողի
հարկն իջեցվում է 75 տոկոսով սահմանված նորմաների։
բերքատվության ռայոնում
Ցանքադաշտն ընդարձակելու համար արտոնություն-
ներ են տրվում բոլոր կոլխոզներին, յերբ նրանք լայ-
նացնում են իրենց ցանքադաշտերը նախորդ տարում
տուրքադրման ժամանակ հաշվի առած ցանքադաշտի
հանդեպ և յերբ նրանք վարում, ավելացնում են իրենց
ցանքադաշտին առանց վարի թողնված և խամ հողամա-
սեր։ Այդ արտոնությունն արտահայտվում է նրանում,
վոր ընթացիկ տարում ցանքադաշտի աճած հողերը ա-

պատվում են տուրքից, իսկ նոր վարած հողերը և խամ հողերը, որ սկսել են վարել ազատվում են տուրքադրումից յերկու տարվա ընթացքում:

Ագրո-մինիմումն անցկացնելու համար արտոնությունները արտահայտվում են նրանում, վոր տուրքից 10 տոկոսով զեղչվում է այն կոլխոզների տուրքը, վորոնք անց են կացրել բերքատվությունը բարձրացնելու համար ռայոնում սահմանված ամենահասարակ միջոցառումները: Այդ միջոցառումներն են՝ տեսակավոր սերմեր ցանելը, զտում, տեսակավորում և սերմերի ախտահանում, շարքացան, հողին հանդխտ տալը, պայքար վնասատուների դեմ և մոլախոտերի վոչնչացումը և այլն: Յուրաքանչյուր ռայոնում ռայոնական գործկոմների համապատասխան վորոշումով սահմանվում է բերքատվությունը բարձրացնելու պարտադիր միջոցառումների ցանկը, այն միջոցառումների, վորոնք արտոնության իրավունք են տալիս:

Տեխնիկական կուլտուրաների արտոնությունները արտահայտվում են նրանում, վոր առաջինը՝ կոլխոզների այն հողերը վորոնք ցանվում են ճակնդեղով, կանեփով, գերչակով, սիբիրյան կանեփով (կենդըր), սոյայով և վորսյանկայով, ազատվում են լրիվին գյուղատնտեսական հարկից. յերկրորդ՝ ավելի պակաս հարկ է վերցվում կոլխոզների այն հողերից, վորտեղ ցանվում է բամբակ, վորոնց բերքատվությունը բամբակի ցանքի նորմաներից չորս անգամ պակաս է տացվում յերրորդ՝ տուրքից ազատվում են բամբակի ցանքատարածության մեջ մտնող առվույտի համար ցանքաշամի տարվա ընթացքում. չորրորդ՝ նորմայից յերկու անգամ ցածր տուրք է նշանակվում կտավհատի և կանեփի ցանքերի համար. հինգերորդ՝ լրիվին տուրքից ազատվում են յերկու տարի ժամանակով՝ դեղին թութուն ցանելու համար պլանտացիաները և մախորկա ցանելու համար պլանտացիաները, վորոնք պիտի ցանվեն արմատներից մաքրած և վոռոգելի հողամասերում յեվ ազատվում են մի տարով-մնացած հողամասերում և այն հողերում, վորոնք մտնում են այն կոլխոզների հողամա-

սերի մեջ, վորոնք անց են կացնում գոյություն ունեցող թութունի հողամասեր. ծխախոտագործության համար սահմանված ագրոմինիմումը, 20 տոկոսի չափով զեղչ արվում տուրքից, ինչ վոր հասնում է թութունի պլանտացիաներից ստացված յեկամտի համաձայն. վեցերորդ՝ յեգիպտացորենի և արեվածաղկի համար ցանքերի յեկամտաբերության համար (հաշված) նորմաներով) յերկու անգամ ցածր տուրք է նշանակվում:

Տեխնիկական կուլտուրաների վերաբերմամբ տրվող արտոնությունները այն նպատակն ունեն, վոր դրդեն կոլխոզներին ուժեղացնելու տեխնիկական կուլտուրաների մշակումը, վորոնք անհրաժեշտ են մեր սոցիալիստական արդյունաբերության հումույթի պահանջները բավարարելու համար:

Պարտեզներ և խաղողի այգիներ ունեցող կոլխոզներին տրվող արտոնությունները·

1. Կոլխոզների պարտեզների ու խաղողի այգիների գրաված տարածության համար բերքատվության նորմաները հաշվելիս կրճատվում են 30 տոկոսով համեմատած այդ ռայոնում պարտեզներ և խաղողի այգիներ ունեցող անհատ տնտեսավարների համար սահմանված բերքատվության նորմաների հետ.

2) Պարտեզների և խաղողի այգիների բերքատվությունը բարձրացնելու համար ռայոնում սահմանված ամենահասարակ միջոցառումներն անցկացնելու համար կոլխոզներին զեղչ է արվում տուրքից 20 տոկոսի չափով, վոր հասնում է պարտեզներից և խաղողի այգիներից. 3) տուրքադրումից լրիվին ազատվում են կոլխոզներին պատկանող պտղատու նոր տնկած ծառերը պտղաբերության սկզբից սկսած յերկու տարի ժամանակով. տուրքադրումից ազատվում են պարտեզների տարածությունները, վորոնք վերականգնվել են ծառեր տնկելով և պատվաստ անելով, նոր քցած խաղողի այգեստները, նորոգած և կտրած ու տեղը նոր քցած խաղողի այգիների տարածությունները. 4) չորս տարի ժամանակով տուրքադրումից ազատվում են կոլխոզնե-

րին պատկանող նոր քցած պտղատու ծառներով տարածությունները և խաղողի տնկարանները։

Բանջարագործությանը տրվող արտոնություններն արտահայտվում են նրանով, որ՝ 1) կոլխոզի համբայնացված բանջարանոցներով զբաղված տարածությունների բերքատվության նորմաներից 50 տոկոսով ցածր է համեմատած ռայոնում սահմանված բանջարանոցների բերքատվության նորմաների հետ. 2) յերկու տարով բոլորովին տուրքագրումից ազատվում են հողի այն տարածությունները, վորոնք վերածվում են համբայնացված բանջարանոցների. 3) տուրքագրումից բոլորովին ազատվում են կոլխոզի այն հողամասերը, վորոնք զբաղված են բանջարանոցային կուլտուրաների սերմատու բույսերով։

Կենդանաբուծության համար կոլխոզներին տրվող արտոնություններն առանձնապես նշանավոր են. 1) բոլորովին ազատվում են գյուղհարկից մոտակա յերկու տարվա ընթացքում (սկսած 1930 թվից) ամբողջ համբայնացված բանվորական անասունները (ձիեր, յեզներ և այլն). 2) նույն ժամկետով բոլորովին ազատվում են տուրքագրումից կոլխոզի կովերը, խոզերը, վոչխարները և թռչունները, 3) գյուղհարկից ազատվում են կոլխոզի այն բոլոր տարածությունները, վորոնք զբաղված են սերմատու խոտերով և կերի արմատներով. 4) 10 տոկոս տուրքից զեղչ է արվում այն կոլխոզներին, վորոնք անց են կացնում ռայոնի համար սահմանված պարտադիր միջոցառումները կենդանաբուծությունը լավացնելու համար. այդ միջոցառումներից կարևորագույնները հանդիսանում են անասունների ճիշտ կերակրելն ու պահելը, ամառը ավելի կերակրելը, մատղաշ անասուններին և վարժեցնելը, բեղմնավորման կայանների կազմակերպումը և այլն. ընդգրկում յուրաքանչյուր ռայոնում ռայգործկոմը պետք է միջոցառումների ցանկ կազմի, վորոնք (միջոցառումները) ուղղված կլինեն կենդանաբուծու-

թյունը լավացնելուն, վորոնց անցկացման համար այդ 10 տոկոսային զեղչն է արվում։

5. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈԼԽՈԶՆԵՐԻՆ

Բացի այս թվարկած արտոնություններից, առանց բացառության բոլոր կոլխոզների համար խորհրդային կառավարությունը սահմանել է մի շարք արտոնություններ և այն կոլխոզների համար, վորոնք կազմակերպվում են զորացրված կարմիր բանակայիններից, նախկին Կարմիր բանակայիններից և Կարմիր պարտիզաններից։ Կարմիր բանակային կոլխոզ է համարվում և օգտվում արտոնություններից այն կոլխոզը, վորի բոլոր աշխատունակ ողամարդկանց կեսից վոչ պակասը կազմում են զորացրված կարմիր բանակայինները, վորոնք կոլխոզ են մտել վոչ ուշ մի տարի հետո զորացրման մոմենտից, նախկին Կարմիր բանակայիններ են և կարմիր պարտիզաններ[1]): Կարմիր բանակային կոլխոզները օգտվում նեհետեվյալ արտոնություններից.

1. Այդ կոլխոզներին առաջին հերթին են հողեր տրվում պետական հողային ֆոնդից։

2. Այդ կոլխոզների հողաշինարարությունը կատարվում է առաջին հերթին և պետության հաշվին։

3. Այդ կոլխոզները, մյուսների համեմատությամբ, առաջին հերթին են ստանում ամենից ավելի՛ արտոնյալ պայմաններով՝ տրակտորներ, բարդ գյուղատնտեսական մեքենաներ, արտադրության այլ մի-

1) Նախկին կարմիր բանակայինների և կարմիր պարտիզանների համար սահմանված արտոնությունների իրավունքն ունեցող անձանց թվին են պատկանում այն քաղաքացիները, վորոնք յեղել են քաղաքացիական պատերազմի ժամանակ կարմիր բանակում և դրուժիններում, այլև մահացած գվարդիայի ջոկատներում և կարմիր բանակայինների և կարմիր պարտիզանների ընտանիքները, նախկին կարմիր բանակայինների ընտանիքները։

չոցներ և գործիքներ, նույնպես և հանքային պարարտանյութեր:

4. Վորևէ պատճառով լիկվիդացիայի յենթարկված կոլխոզների հողն ու գույքը առաջին հերթին տրվում են նոր կազմակերպվող կարմիր բանակային կոլխոզներին:

5. Կարմիր բանակային կոլխոզներն առաջին հերթին են օգտվում գյուղատնտեսական օգնությունից:

6. Այդ կոլխոզներին առանձնահատուկ արտոնություններ են վերապահվում գյուղհարկի նկատմամբ. այդ արտոնությունները նրանումն են, վոր կոլխոզի տուրքադրվող յեկամտից հանվում է այն յեկամտի գումարը, վորը հասնում է զորացրված կարմիր բանակայինների բաժնին և տուրքադրվում է միայն յեկամտի մնացած մասը: Այս արտոնությունը կիրառվում է միայն այդ անձերի կոլխոզ մտած ժամանակից առաջին յերկու տարվա ընթացքում, յեթե նրանք կոլխոզ են մտել կարմիր բանակից արձակվելուց վոչ ուշ քան մի տարի հետո: Այս արտոնությունը չի կիրառվում համատարած կոլեկտիվացման ռայոններում:

6. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԿՈԼԽՈԶՆԵՐԻՆ

Մեծ արտոնություններ են վերապահվում այն կոլխոզներին, վորոնք պլանային կարգով տեղափոխվում են նոր տեղեր: Այդ կոլխոզները հատուկ, ամենից ավելի արտոնյալ վարկ են ստանում տեղափոխության համար: Այդ վարկի չափն ու պայմանները տարբեր են և կախված են կոլխոզի տեղափոխության ռայոնից և գյուղացիական տնտեսությունների քանակից, վոր համախմբվելով կոլխոզ են կազմակերպել: Այն կոլխոզները, վորոնք տեղափոխվում են Հեռավոր Արևելյան յերկրի Սախալինի շրջանը (օկրուգ), ստանում են ամեն մի տնտեսության համար 700 ռուբլու չափով փոխատվություն, 15 տարի ժամկետով, իսկ այն կոլխոզ-

ները, վորոնք տեղափոխվում են Հեռ. Ար. յերկրի
մնացած շրջանները,— ամեն մի տնտեսության համար
600 ռուբլի նույն ժամկետով: Իսկ այն կոլխոզները,
վորոնք տեղափոխվում են այլ շրջաններ, ստանում են
ամեն մի տնտեսության համար 400 ռուբլի 10 տարի
ժամկետով:
Տեղափոխության համար տրվող փոխատվու-
թյունների տոկոսները շատ մեծ չեն— ընդամենը 3½
տոկոս ամբողջ ժամանակի համար: Տոկոսները մուծ-
վում են յերկու ժամկետով— առաջին անգամ 2½ տո-
կոս փոխատվությունը տանելիս և 1 տոկոս վճարման
առաջին ժամկետին: Փոխատվությունների մարումը
կատարվում է հետևյալ կարգով. տնտեսական շինա-
րարության համար տրված փոխատվությունների մա-
րումն սկսվում է տրված օրից հինգ տարի հետո, իսկ
ձեռնարկություններ կառուցելու և սարքավորելու հա-
մար, տրված փոխատվությունների մարումն սկսվում
է փոխատվությունը տրված օրից յերեք տարի անցնե-
լուց հետո:
Ե՛լ ավելի նշանավոր արտոնություններ են ստա-
նում տեղափոխվող կոլխոզները գյուղհարկի նկատ-
մամբ: Հեռ. Ար. յերկրի նախկին Սախալինակի, Կամ-
չատկայի և Նիկոլայեվսկի շրջանները տեղափոխվող
կոլխոզները բոլորովին ազատվում են տուրքից 10 տա-
րով, յերբ տեղափոխվում են բնակելի տեղեր, յերբ
տեղափոխվում են անբնակ հողամասեր՝ տուրքից բո-
լորովին ազատվում են 15 տարով, իսկ յերբ տեղա-
փոխվում են Հեռ. Ար. յերկրի մյուս ռայոնները հա-
տավելու համար անբնակ հողամասերում— 9 տարի
և բնակելի տեղերում 6 տարի:
Միության մյուս ռայոնները տեղափոխվելու ժա-
մանակ, վորտեղ պահանջվում են արմատներ հանելու
և այլ վոռոգման աշխատանքներ՝ կուլտու-
րական հողեր պատրաստելու համար, կոլխոզներն ա-
զատվում են տուրքից վեց տարի ժամանակով այդ տե-
ղում հաստատվելու համար. իսկ այնպիսի տեղեր տե-

ղափոխվելու համար, վորտեղ պահանջվում է վարելա-
հողերի մշակում— 4 տարի ժամանակով հաստատվե-
լու համար, և վերջապես, վարելահողերի մշակում
չպահանջվող տեղեր տեղափոխվելիս 3 տարի հաս-
տատվելու համար:

IX. ԿՈԼԽՈԶՆԻԿ ՅԵՎ ԱՆՀԱՏ ՏՆՏԵՍԱՎԱՐ

1. Մեծ բեկում: 2. Կոլեկտիվացման խնդիրը: 3. Կոլխոզ-շինարարության կամավորականությունը: 4. Փոխհարաբերու-թյունները անհատ տնտեսավարի հետ: 5. Պայքար ոպորտունիզմի դեմ, վորպես կարևորագույն խնդիր: 6. Ցուցադրական ագիտացիա: 7. Ինչպես և ինչ բացատրել: 8. «Համոզում պլյուս խրախուսանք»: 9. Մասսայական աշխատանք: 10. Խորհուրդների դերը 11. Համապատասխան կազմակերպություններ: 12. Կոլխոզնիկների խնդիրները:

1. ՄԵԾ ԲԵԿՈՒՄ

Հնգամյակի առաջին տարիների խոշորագույն նըվաճումներից մեկը պետք է համարել այն վճռական բեկումը, վոր կուսակցությունն ու բանվոր դասակարգը ձեռք բերեցին գյուղատնտեսության կոլեկտիվացման մեջ: Կուսակցությունը յերկրի ինդուստրացման խոշորագույն հաջողությունների հիման վրա, մասսայական կոոպերացման ծավալման հիման վրա, մեքենատրակտորային կայանների և սովխոզների զարգացման հիման վրա, կուլակության դեմ ծավալուն հարձակման, բատրակության ու չքավորության կազմակերպելու ամբողջ աշխատանքի հիման վրա, յերկրի ճակատի վրա անհաշտ պայքարում— աջ և «ձախ» ոպորտունիզմի դեմ—ապահովեց համատարած կոլեկտիվացման ծավալումը և այդ բազայի վրա ապահովեց կուլակության վորպես դասակարգի վերացնելու [illegible]ցունդը:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մեջ մեծ բեկում առաջ յեկավ հենց հնգամյակի առաջին տարում:

«Կուսակցության ձեռք բերած նվաճումը նրանու-

ն է, վոր մեզ հաջողվեց ամբողջ մի շարք ռա-
յոններում գյուղացիական հիմնական մասսաներին
[զա]րգացման հին կապիտալիստական ուղիից,— վորից
[օգ]տվում են միայն մի խումբ հարուստներ-կապի-
[տ]ալիստներ, իսկ գյուղացիության հսկայական մեծա-
[մ]ասնությունը մատնված է աղքատության,— դարձնել
[զարգացման] նոր սոցիալիստական ուղին, վորը
[դու]րս է հրում հարուստներ-կապիտալիստներին, իսկ
[միջ]ակներին ու չքավորությանը վերազինում է նոր
[ձ]ևերով, զինում է նոր զենքով, զինում է տրակտոր-
[ներ]ով, գյուղատնտեսական մեքենաներով, վորպեսզի
[հն]արավորություն տա նրանց դուրս գալու աղքատու-
[թյ]ունից և կուլակային ստրկությունից դեպի լայն
[ուղի]՝ հողի ընկերական, կոլեկտիվ մշակման ուղին»:
([Ստ]ալին):

Կոլխոզային շարժման մեջ այդ բեկման էությունը
[կայա]ննումն է, վոր չքավորների յետևից դեպի կոլխոզ-
[նե]ը շարժվեց հիմնական միջակային մասսան: Կուլա-
[կու]թյանը հասցրած կործանիչ հարվածները, սովխոզնե-
[րի] և հին կոլխոզների կենդանի և արդյունաբերության
[ամ]ոզհետև առաջ ներգործումը գյուղատնտեսության
[ավել]ն ավելի ու ավելի բացահայտ դարձրին և' միջակի
[հա]մար, վոր կոլեկտիվացումն է միակ յելք անհատ
[տնտ]եսության համար հետամնացությունից և կարի-
[քությունից] դուրս գալու համար:

Արդեն հնգամյակի առաջին տարին բարձրացրեց
[կոլ]եկտիվ տնտեսությունների կոլեկտիվացման
[գյու]ղացիական [illegible] մինչև 7.6-ի: Հնգամյակի յերկրորդ տարում—
[1929/30] տնտեսական տարում—գյուղը վճռականորեն
[թև]եկ մասսայական կոլեկտիվացման ուղին, իսկ
[մի շարք] հացահատիկային ռայոններում թևակո-
[խեց] խոշորագույն համատարած կոլեկտիվացման ուղին:
[Ծավալ]եց համատարած կոլեկտիվացման մեջ թույլ տված
Կոլխոզային շինարարության խեղաթյուրումները, վոր
[կու]սակցական գծի խոշոր խեղաթյուրումները, վոր
[տեղ] ունեցան այս տարվա ձմռանը, յետհոս առաջ բե-
[րեցի]ն կոլխոզնիկների մի մասի մեջ, ժամանակավորապես
[իջեցր]ին կոլեկտիվացման տեմպը: Սակայն կուսակ-
[ցությու]նը առավ կոլեկտիվացման

ցության Կենտրոնական կոմիտեի հաստատ ղեկավարությունը ապահովեց այդ խեղաթյուրումների արագ վերացումը, և 1930 թվի գարնանացանին կոլխոզներում ամրացավ ամբողջ գյուղացիական տնտեսությունների մինչև չորրորդ մասը: Այսպիսով, հնգամյակը, վորը համաձայն սկզբնական նշումների, պետք է կոլեկտիվացման տոկոսը հասցներ մոտավորապես 20-ի (ամբողջ գյուղացիական տնտեսության), արդեն գերակատարված եր հնգամյակի 2-րդ տարում:

Կոլխոզային շարժման խոշորագույն արտադրական նվաճումները, 1930 թվի գարնանացանի կամպանիան, 1930 թվի ամառն ու աշնանը տնտեսական-քաղաքական կամպանիաների հիմնականում հաջող ավարտումը (բերքահավաքի կամպանիա, հացամթերում, աշնանացան), կոլեկտիվ աշխատանքի հիման վրա գյուղացիական տնտեսության յեկամտաբերության և ապրանքայնության վճռական բարձրացումը, վորն արտահայտվեց միլիոնավոր նոր կոլխոզնիկների փորձով և անհաշտ պայքարը, վոր կուսակցությունը տանում է աջ ոպորտունիստների կողմից կոլխոզ-շարժման թերագնահատության դեմ և «ձախ» խոտորումների դեմ, ահա այս բոլորը 1930 թվի աշնանը առաջ բերին կոլխոզային շարժման նոր վերելք: Հաշվետու կվարտալում նորից կոլխոզները մտան միլիոնից ավելի գյուղացիական տնտեսություններ:

2. ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Յելնելով կոլխոզային շարժման նշված տեմպերից Համ ԿԿ(բ)Կ և ԿՎՀ միացյալ պլենումը դեկտեմբերի 17–21 (1930 թ.) խնդիր առաջ դրեց՝ «1930 թ. ապահովել կոլեկտիվ տնտեսությունների ընդգրկումը Ուկրաինայի (տափաստան), Հյուսիսային Կովկասի, Ներքին Վոլգայի, Միջին Վոլգայի, Անդրվոլգյան յերկրների համար միջին հաշվով գյուղացիական տնտեսությունների վոչ պակաս 80 տոկոսը, այդ նշանակում է այդ ռայոններում հիմնականում ավարտել համատարած կոլեկտիվացումը և կուլակության լիկվիդացիան վորպես

դասակարգ: Հացահատիկային մյուս ռայոններում—Սևհողային շրջան, Սիբիր, Ուրալ, Ուկրայնա (անտառատափաստան), Ղազախստան (Հացահատիկային ռայոններ)—ապահովել գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման 50 տոկոսը: Հացահատիկային տնտեսությունների սպառող շրջանի համար 20–25 տոկոսը: Բամբակի և ճակնդեղային ռայոններում ապահովել կոլեկտիվ տնտեսությունների ընդգրկումը վոչ պակաս տնտեսությունների ընդհանուր թվի 50 տոկոսը: Միջին հաշվով ամբողջ միության մեջ գյուղատնտեսության բոլոր ճյուղերում 1931 թվին ապահովել կոլեկտիվացումը գյուղացիական տնտեսությունների վոչ պակաս կեսը»:

Այդ վորոշումը նորից հաստատում ու զարգացնում է այն հիմնական դրույթները, վորոնք տրվել են դեռևս Համ ԿԿ(բ)ԿԿ 1930 թ. հունվարի 5-ի վորոշումով կոլեկտիվացման տեմպերի հարցի առթիվ:

«Կոլեկտիվացման ասպարեզում պլանի կատարումը հնարավորություն կտա սոցիալիստական տարրերի բացարձակ գերկշռություն ունենալու գյուղի անհատական սեկտորի վրա, ամրացնելու բանվոր դասակարգի գյուղացիության աշխատավոր մասսաների հետ դաշինքը և կավարտի ԽՍՀՄ սոցիալիստական տնտեսության ֆունդամենտի կառուցումը: Այդ հաղթանակը համաշխարհային-պատմական նշանակություն կունենա»: (ԿԿ և ԿՎՀ դեկտեմբերյան միացյալ պլենումի բանաձևից):

Այդ խնդրի լուծումը և հնգամյակի վերջում հիմնականում կոլեկտիվացման ավարտումը կարելի յե հասնել միայն կուսակցության գլխավոր գծի վորոշակի և հետևողականորեն անցկացնելու պայմանով չքավոր-միջակային տնտեսությունների նկատմամբ, վորոնք ներկայումս դեռևս հանդիսանում են վորպես անհատական տնտեսություններ, սակայն վորոնց նկատմամբ կուսակցությունն ու բանվոր դասակարգը իրենց խնդիրն են դնում՝ ներգրավել նրանց կոլխոզների մեջ:

3. ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կոլխոզային շարժման մարքս-լենինյան արմատական սկզբունքը—դա կոլխոզային շինարարության կամավորականությունն է, վորից նահանջելը ամենածանր հանցանքը կլիներ հանդեպ պրոլետարիատի դիկտատուրայի:

«Խորհրդային իշխանության կողմից վոչ մի հարկադրանք լինել չի կարող, վոչ մի որենք չի հարկադրում այդ անել: Գյուղատնտեսական կոմունաները հիմնվում են կամավոր կերպով, հողի հանրայնական մշակման անցումը կարող է լինել միմիայն կամավոր: Բանվորա-գյուղացիական կառավարության կողմից ամենափոքր ստիպողականություն անգամ չի կարող լինել և որենքով չի թույլատրվում» (Լենին):

Մարքսիզմի այդ հիմնական դրույթը՝ պրոլետարիատի կողմից միջակ գյուղացիության վերաբերմունքի մասին ձևակերպել եր դեռևս Ենգելսի կողմից. «Մենք հարկադրված ենք կործանել խոշոր կալվածատիրությունը—այդ մեր խնդիրն է: Մանր գյուղացիության նկատմամբ այդ խնդիրը ամենից առաջ նրանումն է, վոր մասնավոր արտադրությունը, սեփականությունը ընկերությունների վերածել, սակայն վոչ բռնի կերպով, այլ որինակի միջոցով, այդ նպատակի համար առաջարկելով հասարակական ոգնություն»:

Կոլխոզային շինարարության կամավորականության սկզբունքը վերաբերում է վոչ միայն անհատ տնտեսավարի կոլխոզ մտնելուն, նա վերաբերում է նույնպես և կոլեկտիվ շինարարության ձևերի ընտրությանը (հանրայնական հողի մշակում, գյուղատնտեսական արտել, կոմունա):

Աջ ոպորտունիզմի վատթարագույն ձևն է հանդիսանում, համենայն դեպս, այն, վոր կամավորականությունը հասկացվում է վորպես հրաժարում ամեն տեսակի ղեկավարությունից, հրաժարում անհատական տնտեսավարի վրա ազդեցություն գործելուց, նրան կոլխոզ ներգրավելու համար պայքարից, արտելի համար մղվող պայքարից, վորպես կոլխոզային շինարարության հիմնական ողակը տվյալ շրջանում և աստիճանաբար նրա կոմունայի մեջ ներաճումը:

Գործն այդպես ինքնահոսին մատնելը նշանակում է ազատ ասպարեզ բանալ կուլակային հակակոլխոզային ագիտացիայի համար, նշանակում կոլխոզային շինարարությունը դատապարտել կուստարչչինայի, նշանակում է կատարել մեծագույն սխալներ և խեղաթյուրումներ, նշանակում է աջակցել կոլխոզների քայքայիչ տարրերին և ծայրահեղորեն դանդաղեցնել կոլեկտիվացման ծավալման տեմպերը:

Ինքնահոսին մատնելն արտահայտվում է դասակարգային պայքարի բացասումով, վորը ծավալվում է (պայքարը) կոլխոզային շինարարության շուրջը. այդպիսի վերաբերմունքը բացահայտ թերագնահատումն է կուլակային վտանգի, կոլեկտիվացման տեմպերի արագացման խնդիրների չհասկանալն է:

Կուսակցության 16-րդ համագումարն ընդգծեց, վոր «սոցիալիստական շինարարության ճանապարհին կանգնած դժվարությունների հաջող և շտապով հաղթահարման համար պետք է արագացնել սոցիալիստական շինարարության տեմպերը և ծավալել հարձակումը կապիտալիստական տարրերի վրա ամբողջ ճակատով: Այդ տեմպերի ամենափոքր թուլացումը ոգուտ է բերում կապիտալիստական-կուլակային տարրերին և նրանց դեմ հարձակման թուլացումը կնշանակեր գործնականում վոչ թե մեղմացնել դժվարությունները, այլ ընդհակառակը ավելի խորացնել այդ դժվարությունները, կնշանակեր ուժեղացնել պրոլետարական դիկտատուրայի դասակարգային թշնամիների դիրքերը:

Կոլեկտիվ շինարարության տեմպերի արագացումը գյուղատնտեսության մեջ պահանջում է անողոք պայքար մղել կուլակի դեմ անհատ տնտեսավարին կոլխոզի մեջ ներգրավելու համար, պահանջում է ամենորյա լարված աշխատանք տանել միջակին դեպի կոլխոզը մոտեցնելու համար և նրա կոլեկտիվացմամբ ընդգրկ-

լու համար: Պայքարելով «ձախ» խոտորումների դեմ, կոլխոզային շինարարության վարչական մոտե-ցում ունենալու դեմ, կամավորականության սկզբունքը խախտելու դեմ, անհրաժեշտ է միաժամանակ անհաշտ պայքար մղել և ինքնահոսին մատնելու դեմ:

4. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱՎԱՐԻ ՀԵՏ

Գյուղի հրջադարձը դեպի համատարած կոլեկտի-վացումը նշանակում է, վոր այսօրվա յուրաքանչյուր բատրակը, չքավորը կամ միջակ-անհատ տնտեսավա-րը—դրանք վաղվա կոլխոզնիկներն են: Դրանից է բըղ-խում առաջին և կարևորագույն դիրեկտիվը կոլխոզ-նիկների և անհատականների փոխհարաբերություննե-րի մասին.—«Չգրգռել անհատական տնտեսավարներին, այլ նրանց ոգնություն ցույց տալ և ամեն կերպ ներ-գրավել կոլխոզները» (16-րդ կուսհամագումար):

«Հաջողություններից գլխապտույտի» շրջանի խո-տորումները մի շարք գյուղերում առաջ բերին փոխհա-րաբերությունների սրում կոլխոզնիկների և անհատ տնտեսավարների միջև: Հարկադրական կերպով կոլ-խոզի մեջ գրավելը, գույքի հարկադրական հանրայնա-ցում, հաճախ. այն գյուղերը, վոր սխալ հաշվեհարդար էր կատարվում կոլխոզից հեռացողների հետ խոտո-րումների հետեվանքով, հողի սխալ բաժանման գյու-ղերը, յերբ ակնհայտորեն խախտվում եյին անհա-տականի շահերը, անհատ-տնտեսավարի առաջը փա-կելը, վորը հասցրեց մինչեվ իսկ մասսայական կենցա-ղային ընդհարումների,—ահա այս բոլորը բազմաթիվ տեղերում սրեց հարաբերությունը կոլխոզնիկների և անհատ-տնտեսավարների միջև և արգելք հանդիսացավ հետագա կոլեկտիվացման:

Կոլխոզների և կոլխոզնիկների գիծը, այդ պատ-ճառով, պետք է ուղղված լինի այդ սրված հարաբե-րությունները վերջնականապես վերացնելուն և այդ հա-րաբերությունները վերակառուցելուն այնպիսի

սկզբունքներով, վորոնք կապահովեյին փոխադարձ վստահությունն ու իրար հասկանալը:

Սակայն պարզորոշ օպորտունիզմ կլիներ սահմա-նափակվել միայն այդ աննորմալությունները վերաց-նելու հոգսով, վորոնք դեռ գոյություն ունեն մի շարք տեղերում կոլխոզնիկների և անհատ-տնտեսավարների միջեվ: Մեր հիմնական խնդիրը պետք է լինի, վոր այսօրվա անհատական տնտեսավարը այսօր-վա կոլխոզնիկը դառնա: Այդ խնդրի լուծման վրա պետք է կենտրոնանա կուսակցության, խորհուրդների, բանվորների և կոլխոզային մասսաների ամենալարված ջանքերը:

Մենք գործնականում հանդիպում ենք կուսակցու-թյան այդ հիմնական դիրեկտիվի ամենակոպիտ խախտ-մանը, խեղաթյուրմանը: Շատ գյուղերում կոլխոզները հրաժարվել են ընդունել անհատ տնտեսավարներին, մանավանդ կոլխոզից հեռացածներին, առարկելով թե՝ «գարնանը մենք ձեզ կանչեցինք, չեկաք (կամ «հեռա-ցաք»), այժմ թրեվ յեկեք», «առաջ ամրացնենք կոլ-խոզը, հետո կընդունենք նորերին», «առաջ վերջացնենք ընթացիկ կամպանիաները և հետո բաց կանենք ընդու-նելությունը» և այլն, և այլն: Մի քանի գյուղերում, մենք ուղղակի տեսնում ենք, վոր կոլխոզները անհատ տնտեսավարների առաջ դռները փակում են չցանկա-նալով «կոլխոզի տնտեսությունը անհատ տնտեսվարնե-րի հետ բաժանել», այսինքն՝ կոլխոզների կապիտա-լիստական չրջախախման կուլակային ակնհայտնի տեն-դենցներ: Պետք է անհաշտ պայքար հայտարարել այդ տենդենցների դեմ: Ամեն մի կոլխոզնիկի պետք է բա-ցատրել, վոր կոլխոզների հետագա հսկայական աճման և նրանց ամրացման գլխավոր յերաշխիքը համատարած կոլեկտիվացման ծավալման մեջ է, վորն իրոք կապա-հովի կուլակության վերացումը վորպես դասակարգ և սոցիալիստական վերակառուցման հիման վրա բաց կանի գյուղատնտեսության վերելքի նոր հսկայական հնարավորություններ:

Պայքարել ամեն մի նոր կոլխոզնիկի համար, լե-նինյան կամավորականության հիման վրա համատա-

րած կոլեկտիվացման համար, անդադար մերկացնել կոլեկտիվացման կուլակային հակազդեցությունը, անխնա խփել կուլակին դեպի կոլխոզներ նոր հոսանք կազմակերպելու համար և խփել կուլակին համատարած կոլեկտիվացումով — ահա այսպիսին պետք է լինի կոլխոզների գիծը:

5. ՊԱՅՔԱՐ ՈՊՈՐՏՈՒՆԻԶՄԻ ԴԵՄ, ՎՈՐՊԵՍ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐ

Անհատական տնտեսավարներին կոլխոզների մեջ գրավելու համար պայքարի այդ խնդիրը վոչ մի դեպքում չպետք է պարփակվի անմիջական կոլեկտիվացման կազմակերպչական միջոցառումների նեղ շրջանակներում:

Նոր հոսանք կազմակերպելու համար առաջին վճռական նախադրյալն է հանդիսանում կուսակցության գլխավոր գծի հաստատ և հետևողականորեն անցկացումը սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում:

Ոպորտունիզմի ամեն մի արտահայտություն, այն բոլորը, ինչվոր կուլակին է ոգուտ տալիս, կուլակային վտանգի ամեն տեսակ թերագնահատում ուժեղացնում են կուլակային դիմադրությունը կոլեկտիվացմանը, հեշտացնում են կուլակի հակակոլխոզային ագիտացիան և այդպիսով խանգարում են անհատական տնտեսավարի կոլխոզ մտնելուն: Ճիշտ այդպես էլ կուսակցության գլխավոր գծի ամեն տեսակի խեղաթյուրում միջակի նկատմամբ, վարչական ճնշումը միջակի վրա արգելք է հանդիսանում կոլեկտիվացման գործին, անկախ նրանից թե՝ կուսակցության գծի այդ խեղաթյուրումները տեղի յեն ունենում անմիջապես կոլխոզների կազմակերպման ժամանակ կամ թե հացամթերման գծով, միասնական գյուղատնտեսական տուրքի գծով և այլն: Իսկ այդպիսի «ձախ» խոտորումները յետ են մղում միջակին, դարձնում են նրան կուլակային ագիտացիայի հեշտ յենթարկվող:

Այդ պատճառով անհրաժեշտ է անդուլ աշխատանք

տանել բատրակության և չքավորության կազմակերպվածության ուժեղացնելու համար, նրանց արտադրական ակտիվության և նախաձեռնության վերելքի համար: Անհրաժեշտ է վճռական պայքար տանել միջակին յետ մղելու. միջակն է, վոր «ներկայանում է կոլխոզային շինարարության հիմքը տվյալ մոմենտում» (XVI կուսհամագումարի բանաձևից), նրան պետք է սիստեմատիկ կերպով ներգրավել կոլխոզի ղեկավարման մեջ և ամեն կերպ ոգտագործել նրա տնտեսական փորձառությունը կոլխոզային արտադրության մեջ:

Այն բոլորը, ինչ վոր նպաստում է յերկրի սոցիալիստական տարրերի աճմանը, բանվոր դասակարգի դիրքերի աճմանը և կապիտալիստական տարրերի դուրս մղելուն, այդ բոլորը հանդիսանում են վորպես հզոր զենք հետագա կոլեկտիվացման համար: Այդ պատճառով անհրաժեշտ է հատուկ ուշադրություն նվիրել բոլոր այն միջոցառումներին, վորոնք կապված են յերկրի հետագա ինդուստրացման հետ (մասնակցություն փոխառություններին, նախապատրաստական պլանների կատարում, կոլխոզների բանվորական ազատ ուժի առանձնացում արդյունաբերության համար, լայն բացատրական աշխատանք գյուղացիության մեջ ինդուստրացման նշանակության մասին, գյուղատնտեսության վերելքի և վերակառուցման համար և այլն):

6. ՅՈՒՑԱԴՐԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱ

Անհատ տնտեսավարների դեպի կոլխոզները հոսանքն ուժեղացնելու համար նույնչափ մեծ նշանակություն ունեն և՛ արդեն գոյություն ունեցող կոլխոզների ամրացումը և՛ վճռական պայքարը նրանց աշխատանքում յեղած թերությունների դեմ:

Անտնտեսավարություն, կալագողություն, աշխատանքային թափթփվածության ամեն տեսակի հայտաբերում անմիջապես ոգտագործվում է կուլակների կողմից կոլխոզների դեմ ագիտացիա մղելու համար: Յեթե կոլխոզում վատ է կազմակերպված աշխատանքը, յեթե

կոլխոզի արտադրությունը կազմակերպված չէ, յեթե կոլխոզում յեկամուտները բաշխում են ըստ բերանների, վորը խփում է կոլխոզնիկների աշխատանքային շահագրգռությանը,—այդպիսի կոլխոզը վոչ մի դեպքում չի կարող կենտրոնաձիգ ուժ լինել անհատ տնտեսավարների համար: Այդ պատճառով անհրաժեշտ է համառ պայքար մղել կոլխոզների աշխատանքում յեղած թերությունների վերացման համար, հաստատուն կարգապահության համար, աշխատանքի բարձր արտադրողականության համար, անասուններին և դեպի գույքը խնամքով վերաբերվելու համար, ծախսեր անելու մեջ մաքսիմալ խնայողության համար: Հարկավոր է կոլխոզում ծավալել աշխատանքի նոր սոցիալիստական մեթոդները (սոցմրցակցությունն ու հարվածայնությունը) կոլեկտիվ տնտեսության հսկայական առավելությունը հայտաբերելու համար:

Դրա հետ միասին և կուսակցության գլխավոր գծի համար մղվող պայքարի ընդհանուր հիման վրա և կուսակցության դիրեկտիվների համեմատ կոլխոզի աշխատանքի համար պայքարի ընթացքում պետք է կիրառվեն անմիջական միջոցառումներ անհատ տնտեսավարներին կոլխոզների մեջ գրավելու համար:

7. ԻՆՉՊԵՍ ՑԵՎ ԻՆՉ ԲԱՑԱՏՐԵԼ

Ինչպես պետք է ծավալել անհատ տնտեսավարին կոլխոզ գրավելու համար այդ պայքարը:

Այդ պայքարը հիմնականում պետք է ընթանա անդադար իսկական մասսայական բացատրական աշխատանքով՝ սոցիալիստական շինարարության ընդհանուր խնդիրների մասին, հնգամյակի և նրա կատարման մասին, յերկրի ինդուստրացման նշանակության մասին գյուղատնտեսությունը բարձրացնելու համար , գյուղատնտեսության զարգացման յերկու ուղիների մասին (կապիտալիստական և սոցիալիստական), բանվոր դասակարգի ղեկավար դերի մասին, գյուղի և քաղաքի կապիտալիստական տարրերի դեմ մղվող պայքարի մասին և կուլակության վերացման խնդրի մասին՝

վորպես դասակարգ համատարած կոլեկտիվացման հիման վրա:

Այդ բացատրական աշխատանքի հաջողությունը կախված է նրանից, թե վորքան լրիվ կերպով այդ աշխատանքը կկարողանա հայտաբերել անհատ տնտեսավարի համար, կենդանի ցուցադրական կերպով, խոշոր կոլեկտիվ տնտեսության առավելությունը հանդեպ անհատական տնտեսության:

«Մենք ունենք միլիոնավոր ցաքուցրիվ գյուղերի խուլ անկյուններում բաժան-բաժան առանձին տնտեսություններ: Միանգամայն անմտություն կլիներ վերակազմել այդ տնտեսությունները վորևէ արագ յեղանակով, վորևէ հրամանով, դրսի ազդեցությամբ: Միայն այն ժամանակ, յերբ գործնականապես, փորձով, գյուղացիների համար պարզ ձևով ցույց կտրվի, վոր ընկերական, արտելային հողագործությանն անցնելն անհրաժեշտ և հնարավոր է, միայն այդ ժամանակ մենք իրավունք կունենանք ասելու, վոր այդպիսի հսկայական գյուղացիական յերկրում, ինչպիսին Ռուսաստանն է, լուրջ քայլ է արված դեպի սոցիալիստական հողագործությունը:» (Լենին):

Մեկ վոր ասված է, թե անհրաժեշտ է կամավոր համաձայնություն ձեռք բերել, նշանակում է հարկավոր է գյուղացուն համոզել և հարկավոր է համոզել գործնականապես: Խոսքերով նրանք չեն համոզվի և շատ լավ կանեն, վոր չեն համոզվի: Վատ կլիներ, յեթե նրանք համոզվեյին միայն դեկրետների մեկ ընթերցումով և ագիտացիոն թռուցիկներով: Յեթե կարելի լիներ այդ ձևով վերակազմել տնտեսական կյանքը, այդ ամբողջ վերակազմումը մի գրոշ էլ չէր արժենա: Պետք է առաջ ապացուցել, վոր այդպիսի համախմբումն ավելի լավ է, համախմբել մարդկանց այնպես, վոր նրանք իսկապես համախմբվեն, և վոչ թե փոշիանան,— ապացուցել, վոր այդ ձեռնտու չէ: Այդպես է դնում հարցը գյուղացին, և այդպես են դնում հարցը մեր դեկրետները»: (Լենին):

Ցուցադրելու լավագույն ձևը կլինի այն, վոր անհատ

[illegible] կոլխոզների հաշվետվությունները իրենց աշխատանքի և իրենց նվաճումների մասին: Կոլխոզների և կոլխոզնիկների այդպիսի հաշվետվությունները, անհատ, անտեսավարին մոտիկ ու հայտնի օրինակով, հստակ համոզմունքով հայտարարում են կոլեկտիվ արտադրության աճումը, կոլխոզի դաշտերի բարձր բերքատվությունը, կոլեկտիվ աշխատանքի մեծ արտադրողականությունը, ինվենտարի ու քարշային ուժի խոշոր բեռնավորումը կոլխոզներում ու կոլխոզների ապրանքայնության ու յեկամտաբերության գերազանցումը անհատական տնտեսությունների հանդեպ:

Հաշվետու զեկուցումներում բոլշևիկյան ինքնաքննադատության հիման վրա պետք է բաց անել բոլոր թերությունները, վոր կան հաշվետու կոլխոզների աշխատանքում: Ընդվորում պետք է ցույց տալ թե ինչպես կոլխոզում կոլեկտիվ կերպով վերացվում և հաղթահարվում են բոլոր թերությունները՝ կոլխոզային բնակչության ինքնագործունեության հիման վրա, կուսակցական և խորհուրդների ղեկավարությամբ: Այդ ձևը կլինի ամենալավ հակահարվածը կուլակային ագիտացիային, վորն օգտագործում է կոլխոզների աշխատանքում յեղած թերություններն ու սխալներն անհատ տնտեսավարներին կոլեկտիվացումից յետ գրավելու համար: Ընդհակառակը, այդ թերությունների մասին լռություն պահպանելը օգուտ է տալիս կուլակին, վորն այդ թերությունները հրամցնում է անհատ տնտեսավար մասսաներին ուռցրած, խեղաթյուրված ձևով:

Կոլխոզների նվաճումների հայտարարումը պետք է ուղեկցվի կոլխոզի կանոնադրքի գործնական բացատրությամբ, առաջին հերթին գյուղատնտեսական արտելի կանոնադրքի վորպես կոլխոզային շինարարության հիմնական օղակը· պետք է ուղեկցվի կոլխոզի ներքին կազմակերպման բացատրությամբ, կոլխոզի ներքին կարգուկանոնի կանոնների բացատրությամբ,

խելու բացատրությամբ: Առանձին ուշադրություն պետք է դարձնել և այն բացատրության վրա, վոր կոլխոզում բերքը, յեկամուտը և արդյունքները բաշխվում են յուրաքանչյուր կոլխոզնիկի թափած աշխատանքի վորակի ու քանակի համեմատ: Հավասար բաժանման համար, բերանների (ուտողների) բաշխման ըսկզբունքի համար կուլակային ագիտացիային պետք է հակադրել աշխատանքային սկզբունքը, վորը միակն է, վոր ապահովում է բատրակների և չքավորների աշխատանքային վերելքը և միջակի համար հանդիսանում է ամենից ավելի համոզեցուցիչ ապացույցը կոլխոզի աշխատանքի արտադրողականության վերելքի հսկայական հնարավորությունների համար:

Լայնորեն, մասսայական աշխատանքում անհատ տնտեսավարներին կոլխոզները գրավելու առթիվ պետք է նրանց բացատրել այն մեծագույն արտոնությունների մասին, վորոնք տրվում են կոլխոզներին պրոլետարական պետության կողմից:

Տ. «ՀԱՄՈԶՈՒՄ ՊԼՅՈՒՍ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ»

Ընկ. Մոլոտովը XV կուսհամագումարում իր զեկուցման մեջ ընդգծեց. «վո՞րոնք են մեր մեթոդները: Ամենից առաջ, իհարկե, համոզումը, սակայն այդ քիչ է, ընկերներ: Միայն համոզումը բավական չէ: Համոզում պլյուս խրախուսանք պրոլետարական պետության կողմից այն տարրերի նկատմամբ, վորոնք զարգացնում են խոշոր հասարակական գյուղացիական տնտեսություն— ահա գյուղի կոլեկտիվացման մեր մեթոդը: Համոզման մեթոդի միացումը խրախուսանքի մեթոդի հետ այս է հիմնականը գյուղում խոշոր կոլեկտիվ տնտեսության զարգացման գործում»:

Խորհրդային իշխանությունը կոլխոզներին տալիս է հսկայական արտոնություններ և՝ հողերի բաժանման դեպքում, վերապահելով կոլխոզներին լավագույն, ա-

մենից հարմար դասավորված հողերը, և՛ հողաշինարարության ժամանակ, վորը ներկայումս անց է կացվում միայն կոլխոզների համար, և՛ մեքենաներ մատակարարելու ժամանակ (բարդ մեքենաներ, տրակտորներ տրվում են միայն կոլխոզներին), և՛ չինանյութ բաց թողնելու դեպքում, և՛ վարկավորման ժամանակ (բոլոր վարկերի մինչև 90 տոկոսը բաց է թողնվում կոլխոզներին:): Մեծ արտոնություններից են օգտվում կոլխոզները և՛ միասնական գյուղատնտեսական տուրք, ապահովագրման վճարումներ տալիս: Կոլխոզներն ու կոլխոզնիկները միանգամայն ազատ են ինքնահարկումից: Կոլխոզնիկներին արդապրանքներ ավելի շատ են բաց թողնում, քան անհատ տնտեսավարներին: Կոլխոզնիկների յերեխաները օգտվում են արտոնություններից ուսումնական հաստատություններ մտնելիս, կենսաթոշակ ստանալիս և այլն:

Այդ արտոնությունների բացատրությունը պետք է ուղեկցվի այն ստուգմամբ, թե ինկապես ինչ չափով տվյալ ռայոնում, գյուղում կիրառվում են կառավարության կողմից սահմանված արտոնությունները կոլխոզներին, և չկա՞ն արդյոք կուսակցական գծի ոպորտունիստական խեղաթյուրումներ այդ ասպարեզում:

Անհատ տնտեսավարների շրջանում մասսայական աշխատանքի մեջ կարեվորագույն տեղը պիտի բռնի կոլխոզնիկների դերի մասին բացատրությունը, վորպես խորհրդային իշխանության ինկական և ամուր հենարանի, կոլխոզնիկի վրա հենվելու հիմնական լոզունգի բացատրությունը:

Հացամթերման պլանների, մյուս մթերքների պլանների կոլխոզների կողմից կատարման և գերակատարման կոնկրետ որինակներով, ինքնուրույն հերոսների վերընտրությունների և նրանց աշխատ. մեջ կոլխոզնիկների ակտիվ մասնակցության որինակով, ցույց տալով թե ինչպես կոլխոզնիկները մասնակցում են «Հնգամյակը չորս տարում» փոխանցությանը և այլն և այլն, — հաայսպիսի որինակներով անդադար պետք է հայտաբե-

րել, թե ինչպես գործով կոլխոզնիկները դառնում են խորհրդային իշխանության ինկական և հաստատուն հենարանը, թե ինչպես այդպիսով ամրապնդվում է կոլխոզնիկների ու բանվոր դասակարգի դաշինքը և ստեղծվում է անխորտակելի մի ուժ կուլակության վերացման համար վորպես դասակարգ համատարած կոլեկտիվացման հիման վրա:

9. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբողջ այդ ծավալուն բացատրական աշխատանքը պետք է անցկացնել ինչպես մասսայական ձևերով, այնպես էլ անհատապես բացատրելով առանձին անհատ տնտեսավարներին:

Այդ բացատրական աշխատանքի հաջողությունն ամենից առաջ վորոշվում է նրանով, թե վորքան կազմակերպված են բատրակությունն ու չքավորությունը, թե վորքան ապահովված է նրանց ղեկավար դերը դեպի կոլխոզները նոր հոսանք կազմակերպելու մեջ: Այդ պատճառով հարկավոր է բատրակ-չքավորական խըմբակների ու բատրակա-չքավորական ժողովների միջոցով մոբիլիզացիայի յենթարկել բատրակներին ու չքավորներին կոլեկտիվացման խնդրի շուրջը և նրանց ներգրավել կոլխոզների մեջ:

Կանանց պատգամավորական ժողովների միջոցով, կին անհատ տնտեսավարների ընդհանուր ժողովների միջոցով անհրաժեշտ է ծավալել մասսայական աշխատանք կին-տնտեսավարների շրջանում, վորոնք խիստ հետամնացության պատճառով գործիք են դառնում կուլակների ու տերտերների ձեռքին կոլխոզների դեմ: Դեպի կոլխոզները նոր հոսանք կազմակերպելու աշխատանքում կանանց ներգրավումը պետք է կարեվորագույն տեղերից մեկը բռնի:

Դրա հետ միասին, պետք է ծավալել լայն աշխատանք ամբողջ անհատ տնտեսավարների — բատրակամիջակային մասսայի շրջանում՝ գյուղերում, ավաններում և այլն ընդհանուր ժողովներում հաշվետվու-

թյան ու զեկուցումների միջոցով, ամենից ավելի ճկունորեն հարմարեցնելով այդ աշխատանքի ձևերը տեղական պայմաններին (կոլխոզից «հեռացածների» հատուկ ժողովներ հրավիրելը՝ բացատրելու համար նրանց հեռանալու պատճառները և համոզելու վերադառնալ նորից կոլխոզի մեջ, արմատական բնակչությունից անհատ տնտեսավարների հատուկ ժողովներ կամ ազգային ռայոններում ազգային փոքրամասնությունների հատուկ ժողովներ հրավիրելը՝ նրանց բացատրելու համար կոլեկտիվացման պայմանները նրանց ազգային առանձնահատկություններին համեմատ և այլն, և այլն):

Անհատների շրջանում տարվող ագիտացիան պետք է այնպես դրված լինի, վորպեսզի չլինի վոչ մի բատրակ, վոչ մի չքավոր կամ միջակ, վորի հետ զրույցներ չտարվի կոլխոզ մտնելու մասին, վորին բացատրված չլինի նրա տարակուսանքի մասին, վորին ցույց տրված չլինի անհրաժեշտ օգնությունը կոլխոզ մտնելու համար:

Կոլխոզի համար մղվող այդ ագիտացիան բավական լայնորեն ծավալելու համար—ինչպես մասսայական ագիտացիան, այնպես և անհատական—պետք է օգտագործել ինչպես ընդհանուր քաղաքական և հասարակական-տնտեսական կամպանիաները (խորհուրդների վերընտրություններ, ցանքի կամպանիաներ, հացամթերման և այլ գյուղատնտեսական մթերքների մթերման կամպանիաներ, փոխառությունների տարածում, հեղափոխական տոներ, կոլեկտիվացման և բերքի օր և այլն), այնպես էլ հատուկ կոլխոզային կամպանիաները (վերընտրություններ կոլխոզներում, հավաքներ և կոլխոզնիկների համագումարներ, կոլխոզներում արտադրական պլանների կազմում և այլն): Դասակարգային պայքարում այդ կամպանիաներից յուրաքանչյուրի առթիվ պետք է հիմնական լոզունգ ունենալ,—բատրակության, չքավորության և միջակ գյուղացիության կուսակցության ու խորհուրդների շուրջը համախմբելու լոզունգը հանուն կոլխոզների կուլակի դեմ պայքա-

րի համար, կուլակությունը վերացնելու համար վորպես դասակարգ համատարած կոլեկտիվացման հիման վրա: Խորհուրդների վերընտրության ժամանակ պետք է հայտաբերվի խորհուրդների ղեկավար դերը կոլեկտիվացման գործում, խորհուրդների կողմից անցկացվող միջոցառումները կոլխոզային շինարարությանը աջակցելու նկատամամբ, կոլխոզների դերը, վորպես խորհրդային իշխանության հենարան՝ կուլակության դեմ պայքարում, վորը փորձում է սողոսկել խորհուրդների մեջ: Ցանքի կամպանիաների փորձով պետք է հայտաբերվի ցանքադաշտերի հսկայական աճումը, նրանց խոշորացումն արտադրական նվաճումները և այլն և այլն:

Անհատ տնտեսավարներին կոլխոզների մեջ ներգրավելու համար հատուկ նշանակություն ունի մեքենատրակտորական կայանների հետ պայմանագրեր կնքելու կամպանիան:

1931 թ. Մեք. տրակ. կայանների թիվը հասնելու է մինչև 1400-ի: Պրոլետարական պետությունը կոլեկտիվացման զարգացման ու ամրացման համար տալիս է մեքենայական քարշի ուժի հսկայական քանակ: Այդ ուժի ճիշտ օգտագործումը հնարավոր է միայն պետության օգնության և տնտեսության կոլեկտիվ ձևի զուգակցության հիման վրա: Այդ պատճառով մեքենատրակտորական կայանները հանդիսանում են կոլխոզային շարժման ամենահզոր կազմակերպիչները, մեքենատրակտորական կայանների ռայոնները դառնում են համատարած կոլեկտիվացման ռայոնները: Գյուղատնտեսության վերակառուցման համար մեքենատրակտորական կայանների մեծագույն նշանակության մասին, մեքենատրակտորական կայանների բացատրությունը, մեքենատրակտորական կայանների և կոլխոզների միջև համաձայնեցվող փոխհարաբերությունների բացատրության առթիվ մասսայական աշխատանքը հանդիսանում է մեքենատրակտորական կայանների ռայոններում կոլեկտիվացման ծավալման կարևորագույն նախադրյալներից մեկը:

Ներկայումս գյուղում չկա և չի կարող լինել ոչ մի հասարակական կամպանիա, որը անհատ տնտեսավարի առաջ չդնի ամենածավալուն ձևով կոլեկտիվացման հարցը, որը չմոտեցնի նրան կոլխոզին՝ կուլակային ագիտացիայի և կուլակային քաղաքականության կանոնավոր բացատրման ու մերկացման միջոցով և կոլխոզնիկների ու անհատ տնտեսավարների մասսաներին մոբիլիզացիայի չենթարկի կուլակի դեմ անհաշտ պայքար մղելու համար:

10. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԴԵՐԸ

Որո՞նք են այդ մասսայական բացատրական աշխատանքի կազմակերպչական ձևերը:

Ամենից առաջ անհրաժեշտ է մատնանշել գյուղխորհուրդների բացառիկ դերը՝ անհատ տնտեսավարներին կոլխոզների մեջ ներգրավելու գործում: Խորհուրդների,—որպես պրոլետարական դիկտատուրայի-չուրջն են համախմբվում գյուղի պրոլետարական տարրերը, կոլխոզային մասսաները, չքավորությունն ու միջակ անհատական տնտեսավարները: Խորհուրդները մեծ հեղինակություն են վայելում, նրանք հանդիսանում են չքավոր-միջակային գյուղացիության իսկական ղեկավարները: Նրանց խնդիրն է՝ կուսկազմակերպությունների ղեկավարությամբ ամբողջ իրենց աշխատանքով աջակցել անհատ տնտեսավարների ու կոլխոզնիկների միջև փոխհարաբերությունների կարգավորմանը, անհատ տնտեսավարներին պարզաբանել կոլեկտիվացման առավելությունները, օգնել նրանց տնտեսության կոլեկտիվ ձևերին անցնելու գործում: Այդ աշխատանքներում հատուկ նշանակություն են ստանում գյուղխորհուրդներին կից կազմակերպված արտադրական խորհրդակցությունները:

Խորհրդային մարմիններից ու հիմնարկություններից ամեն մեկը (դպրոց, բժհիմնարկներ, փորձակայաններ և այլն) պետք է հարմարեցնեն իրենց ամբողջ

աշխատանքը կոլեկտիվացման կարիքներին ու պահանջներին (դպրոցի ու կոլխոզի միջև կապի ամրացում և դպրոցի ներգրավումը կոլխոզի արտադրական պրոցեսների մեջ, խրճիթ-ընթերցարանի շրջադարձը դեպի կոլեկտիվացումը, հանուն կոլխոզի մղվող ագիտացիայի համար լիկկայանի օգտագործումը և ագրոարշավի օգտագործումը, կոլխոզնիկներին առաջնահերթ սպասարկումը բոլոր հիմնարկներում և այլն:

11. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անհատ տնտեսավարներին կոլխոզների մեջ գրավելուն ամեն կերպ աջակցելու նույն խնդիրը դրվում է և գյուղի բոլոր հասարակական կազմակերպությունների վրա (փոխ. խնայ. գյուղացիական կոմիտեներ, կամավոր ընկերություններ և այլն): Գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքը պետք է անմիջապես ուղված լինի ամենահասարակ արտադրական խմբավորումների կոլխոզների մեջ տեղափոխվելու վրա և կոլխոզներին կանոնավոր սպասարկելու վրա: Սպառկոոպերացիայի աշխատանքը նույնչափով պետք է վերակառուցված լինի ամենահասարակ արտադրական խմբավորում-ռավելապես հայթայթվեն արտապրանքներով, կապելով հայթայթման սխեմը արտադրական պլանների ու մթերումների հաջող կատարման հետ: Գյուղական կոպերացիայի աշխատանքում պետք է ապահոված լինի կոլխոզնիկների ղեկավար դերը»: (Համ ԿԿ (բ) ԿԿ և ԿՎՀ դեկտեմբերյան պլենումի բանաձևից):

Ամենալայն կերպով պետք է ծավալվի անհատ տնտեսավարներին կոլխոզների մեջ գրավելու աշխատանքը արհմիությունների և շեֆական կազմակերպությունների կողմից, նրանք պետք է վճռականորեն ուժեղացնեն կոլխոզների մեջ մտնելու ագիտացիան բանվորների շրջանում, որոնք կապված են գյուղական տնտեսության հետ, նույնպես և սեզոնային բանվորների շրջանում:

12. ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սակայն գլխավոր դերը դեպի կոլխոզները նոր հոսանք կազմակերպելու գործում ընկնում է հենց իրենց կոլխոզների ու կոլխոզնիկների վրա:

«Կոլխոզշարժման նշանավոր նվաճումներից մեկը նրանումն է, վոր արդեն առաջ են քաշված հազարավոր կազմակերպիչներ և տասնյակ հազարավոր ագիտատորներ կոլխոզային գործի համար հենց գյուղացիներից: Այժմ արդեն վոչ թե միայն մենք, վորակյալ բոլշեվիկներս, այլ իրենք կոլխոզների գյուղացիները, կոլխոզային գործի տասնյակ հազարավոր գյուղացի-կազմակերպիչներն ու ագիտատորները առաջ կտանեն կոլեկտիվացման դրոշակը»: (Ի. Ստալին):

Աշնանային հասանքի փորձը հայտաբերեց պայքարի մի շարք նոր մեթոդների ամենահախանալի ձևեր անհատ տնտեսավարներին կոլխոզների մեջ գրավելու համար: Անհատ տնտեսավարների առաջ կոլխոզների հաշվետվությունները չքավորության ժողովներ, պատգամավորական ժողովներում, կին-անհատ տնտեսավարների մասսայական ժողովներում, հավաքագրման խմբակների կազմակերպում, կոլխոզնիկուհիներից խմբակներ առանձնացնելը անհատ տնտեսավարների շրջանում ագիտացիա մղելու համար, կոլխոզների ու անհատ տնտեսավարների դաշտերի յերեկոներ, բարձր կոլեկտիվացման ռայոններից կոլխոզնիկների բրիգադներ ուղարկելը հետամնաց ռայոնները (օրինակ՝ Հյուսիսային Կովկասի 56 կոլխոզնիկ-հարվածայինների ուղարկելը Մոսկվայի մարզը), անհատ տնտեսավարի համար գյուղի բոլոր կուլտուրական ու քաղլուսհիմնարկները ներգրավումը (գերման. հանրակրթության դպրոցներում կոլխոզների հաշվետվությունների վերամշակումը և այլն),—ահա դրանք են այն ուղիները, վորոնցով ինքը կոլխոզային մասսան թեժակոխում է համատարած կոլեկտիվացման պայքարը:

Բացի անհատ տնտեսավարների շրջանում տարվող մասսայական ագիտացիայի այս ձևերից, կոլխոզների

տրամադրության տակ կան դեռ ելի բազմազանի ձևեր անհատ տնտեսավարներին կոլխոզին ու կոլխոզի աշխատանքին մոտեցնելու համար:

Ամենավճռական պայքար պիտի հայտարարել կոլխոզը անհատ տնտեսավարից մեկուսացնելու դեմ, կաստայնության դեմ, կոլխոզի ներքին կյանքը անհատ տնտեսավարից ծածուկ պահելու դեմ: Կոլխոզի ամբողջ աշխատանքը պետք է անհատ տնտեսավարի մասսայական հասարակական վերահսկողության տակ դրվի, և այդպիսով օրըստօրե մի շարք միջոցառումներով ծանոթացնել նրան կոլխոզի աշխատանքի հետ, համոզել նրան կոլեկտիվ տնտեսության առավելությունների մեջ: Կոլխոզի վարչության, վերստուգիչ հանձնաժողովի նիստերին անպայման պետք է թույլ տալ ներկա լինել ցանկացող անհատ տնտեսավարներին: Անհատ տնտեսավարներին պիտի ներգրավել կոլխոզների արտադրական խորհրդակցություններին, կոլխոզնիկների ընդհանուր ժողովներին: Պետք է նրանց կոլխոզի կյանքի կարևորագույն հարցերի քննարկման մեջ քաշել (արտադրական պլանների կազմելը, աշխատանքի և գործարքայնության նորմաների սահմանում, յեկամուտների բաշխում յեվ այլն): Առանձնապես ուշադրություն պետք է դարձնել անհատ տնտեսավարներին կոլխոզների հաշվետու-վերընտրական ժողովներին գրավելու վրա, յերբ ծավալուն կերպով քննարկվում է կոլխոզի ամբողջ աշխատանքը և առանձնահատուկ վորոշակիությամբ հայտաբերվում է այն, վոր կոլխոզները հիմնված են ինքնագործունեության սկզբունքների վրա: Անհատ տնտեսավարը գործնականորեն հնարավորություն ունենա ստուգելու թե ինչ է պետք է կոլխոզը և համոզվի, վոր կոլխոզներն անհատական տնտեսավարության հանդեպ ունեն խոշոր առավելություններ:

Դրա հետ միասին կոլխոզները պետք է ծավալեն ամենալայն աշխատանք՝ անհատ տնտեսավարին արտադրական օգնություն ցույց տալու գործում, առաջին հերթին չքավորությանը, և այդ հիման վրա նրան աշ-

խատանքի կոլեկտիվ ձևերի մեջ քաշեն։ Արտադրական այդ օգնությունը պետք է արտահայտվի ինվենտարի վերանորոգման աջակցելու, սերմերը զտելու մեջ, դաշտային աշխատանքներում գյուղատնտեսական մեքենաներով օգնելու, բուծողներով օգնելու մեջ, ագրոխորհուրդներ տալով լծկանով օգնություն կազմակերպելուն աջակցելու մեջ, միակոսանի վարի կազմակերպելուն օգնելու և կոլեկտիվ աշխատանքի այլ սկզբնական ձևեր կազմակերպելուն աջակցելու մեջ։ Հատուկ ուշադրության են արժանի կոլխոզների ու անհատ տնտեսավարների միջև կնքվող փոխօգնության մասին պայմանագրերը կամպանիաներ անցկացնելու ժամանակ, կոլխոզնիկների կողմից անհատ տնտեսավարներին հասարակական բուքսիրի վերցնելու կազմակերպումը հացամթերումների ցանքային կամպանիաների ժամանակ և այլն, կոլխոզնիկների շեֆությունը անհատական տնտեսավարների վրա, առաջին հերթին չքավորության վրա։ Այդ արտադրական գործնական օգնության ընթացքում անհատ տնտեսավարը կհամոզվի, վոր կոլխոզները հզոր են, վոր նրանք կազմակերպչական ուժ ունեն և ամեն կերպ կաճի կոլխոզի կենտրոնաձիգ ուժը։

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել անհատ տնտեսավարի թեթևության վրա, յերբ նա վորոշել է կոլխոզ մտնել, պետք է հեշտացնել կոլխոզ մտնելու պայմանները։ Միանգամայն անթույլատրելի յե ընդունելության դիմումների քննարկման ձգձգումը, նոր մըտնողների համար թեկնածուական ստաժ սահմանելը, յերաշխավորությունը, մուտքի ավելի վճարումներ նշանակելը, նրանց հատուկ բրիգադների մեջ առանձնացնելը, վատթար աշխատանք տալը և յերկրորդ հերթին տալը և այլն։

Կոլխոզի նոր անդամը կոլխոզ մտնելու հենց առաջին օրից իրեն պետք է զգա կոլխոզի հավասար անդամ, պիտի գրավվի կոլխոզում արտադրական ու հասարակական աշխատանքի մեջ կոլխոզի բոլոր անդամների հետ միատեսակ հիմունքներով։ Նա պիտի մտնի հա-

վաքագրական խմբակների մեջ մյուս անհատ տնտեսավարների շրջանում ագիտացիա մղելու համար,—խնամքով խորհելով նախքան կոլխոզ մտնելը կոլխոզի բոլոր առավելությունների մասին, նա կհանդիսանա լավագույն ագիտատորը կոլեկտիվացման համար։

Սակայն բացահայտ օպորտունիստական պիտի համարել ամեն տեսակ փորձ, յերբ ցանկանում են նախքան կոլխոզ մտնելը պայմանների այնպիսի «թեթևացում», վորը խեղաթյուրում է կոլխոզային շինարարության հիմնական սկզբունքները. այսինքն՝ նախքան կոլխոզ մտնելը ծախել-ծախծխելը ինվենտարն ու անասունները, արտադրության միջոցների հանրայնացման թուլացում և այլն։

Հարկավոր է անշեղորեն անցկացնել այն սկզբունքը, վոր միայն այն ժամանակ կարելի յե անհատ տնտեսավարին կոլխոզի անդամ համարել, յերբ նա հանրայնացնում է կանոնադրքի համաձայն արտադրության իր միջոցները, յերբ սերմեր ու կեր է մտցնում հանրայնացված անասունների համար, յերբ մուտքի վճարը մտցրել է կամ սահմանված կարգով մուտքի վճարը մուծելու համար յետաձգում է ստացել։

Լայնորեն պիտի բացատրել, վոր այն տնտեսությունները, վորոնք ծախում-ծախծխում են անասունները, ինվենտարը, նրանք կոլխոզ չեն ընդունվում, և այդ կանոնը հաստատապես պիտի գործադրել կյանքում։

Դեպի կոլխոզները նոր հոսանք կազմակերպելու կարեվորագույն խնդիրներից մեկը կոլեկտիվացման նոր հենակետեր ստեղծելն է այն տեղերում, վորտեղ դեռևս կոլխոզներ չկան։ Այդպիսի գյուղերում պետք է կազմակերպել նախաձեռնող խմբակներ բատրակներից, չքավորներից և առաջավոր միջակներից, վորոնք վճռել են կոլխոզ կազմակերպել։ Այդ նախաձեռնող խմբակները կուսկազմակերպությունների և գյուղխորհուրդների ղեկավարությամբ, հենվելով հարևան հին կոլխոզների ու կոլխոզմիության օգնության վրա, բացատրական աշխատանք են ծավալում անհատ

տնտեսավարների ամբողջ մասսայի շրջանում կոլխոզ կազմակերպելու համար: Նախաձեռնող խմբակը իր շուրջը համախմբելով անհատ տնտեսավարների մի մասին, ձևակերպվում է որպես կոլխոզ և անցնում է գույքի հանրայնացմանը կանոնադրքի համաձայն և կոլխոզային արտադրության կազմակերպմանը:

Հատուկ աջակցություն պիտի ցույց տալ թե՛ այդ խմբակներին և թե նրանց հիման վրա առաջացած նոր կոլխոզներին: Նրանց պիտի փոխանցել հին, արդեն ամրացած կոլխոզների փորձը և այդպիսով պիտի կասեցնել սխալներից, հեշտացնել նրանց համար, նրանց աշխատանքի ամենից դժվարին, կազմակերպչական շրջանը:

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

ՑԱՆԿ

I. ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Գյուղական տնտեսության վերակառուցման ճանապարհին . . . 3
2. Գլխավորել կոլխոզային վերելքը . . . 8
3. Գարնանացանը մասսայական արշավ է կոլեկտիվացման համար . . . 14
4. Խորհուրդները դեմքով դեպի կոլխոզ . . . 18
5. Ամրացնել աշխատանքը չքավորության մեջ . . . 22

II. ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ինչ է կոլխոզը . . . 26
2. Ով իրավունք ունի կոլխոզ կազմելու և լինել նրա անդամը . . . 29
3. Ինչպես պետք է կազմակերպել կոլխոզ . . . 30
4. Կոլխոզի ձևակերպման և կանոնադրքի ցուցակագրման կարգը . . . 31
5. Պայքարը թեքումների դեմ . . . 34

III. ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՆ

1. Կոլեկտիվացած գյուղացիության միջոցները կոլխոզի միջոցների հիմնական աղբյուրն են . . . 39
2. Ինչպես են գոյանում կոլխոզի միջոցները . . . 40
3. Անբաժանելի ֆոնդերը կոլխոզներում . . . 45
4. Կապիտալների և ֆոնդերի կառուցվածքը կոլխոզներում . . . 49
5. Հաշվեհարդարի պայմանները հեռացած անդամների հետ . . . 52

IV. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

1. Ղեկավարության մարմինները կոլխոզներում . . 55
2. Պարտականությունների բաշխումը վարչության անդամների միջև: 60
3. Կոլխոզի առանձին ճյուղերի ղեկավարները . . 64
4. Վերստուգիչ հանձնաժողով 68
5. Շարքային անդամների կոլխոզների ղեկավարությանը ներգրավելու ձևերը 71

V. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

1. Աշխատանքի կազմակերպման նշանակությունը . . 76
2. Բանվորական ուժի օգտագործման պլանը . . 78
3. Կոլխոզի անդամների մասնագիտացումը . . . 79
4. Բրիգադների կազմակերպումը 80
5. Աշխատանքների նորմայացումը, գործարքային աշխատանք և աշխատանքների գնահատումը . . . 84
6. Սոցմրցակցությունն ու հարվածայնությունը կոլխոզներում 89

VI. ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

1. Յեկամտի բաշխման քաղաքականության նշանակությունը 95
2. Ընդհանուր յեկամուտը հիմնական մասերի բաշխելու կարգը 98
3. Յեկամուտի բաշխումը կոլխոզների միջև . . . 104
4. Աշխատանքի վարձատրությունը 108
5. Բերքի բաշխումը 110
6. Հատկացումներ անբաժանելի և մյուս ֆոնդերի համար . 113

VII. ԿՈՒԼՏՈՒՐ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

1. Կուլտուրական աշխատանքի նշանակությունը . . 115
2. Կուլտուր-կենցաղային աշխատանքի կազմակերպումը կոլխոզներում 118
3. Կոլխոզնիկների քաղաքական դաստիարակությունը . 120
4. Ագրո-արտադրական պատրաստություն 126
5. Հանրակրթական աշխատանք 131
6. Գեղարվեստական լուսավորական աշխատանքը . . 133
7. Նոր կենցաղի կազմակերպումը 136
8. Կուլտուր-կենցաղային աշխատանքը կանանց շրջանում . 143
9. Աշխատանքը յերիտասարդության մեջ . . . 147
10. Կուլտուր-կենցաղային աշխատանքի ֆինանսավորումը . 150

VIII. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈԼԽՈԶՆԵՐԻՆ

1. Հողաշինարարության արտոնություններ . . 153
2. Մեքենա-մատակարարման արտոնություններ . . 156
3. Արտադրանքը վաճառելու արտոնություններ . . 159
4. Կոլխոզների արտոնությունները գյուղհարկի վերաբերյալ 160
5. Արտոնություններ կ. բանակային կոլխոզնիկներին . 165
6. Արտոնություններ տեղափոխվող կոլխոզներին . . 166

IX. ԿՈԼԽՈԶՆԻԿ ՅԵՎ ԱՆՀԱՏ ՏՆՏԵՍԱՎԱՐ

1. Մեծ բեկում 168
2. Կոլեկտիվացման խնդիրը 170
3. Կոլխոզային շինարարության կամավորականությունը . 172
4. Փոխհարաբերությունն անհատական տնտեսավարի հետ . 174
5. Պայքար ոպորտունիզմի դեմ՝ որպես կարևորագույն խնդիր 176

6. Ցուցադրական ագիտացիա 177
7. Ինչպես և ինչ բացատրել 178
8. «Համոզում պլյուս խրախուսանք» 181
9. Մասսայական աշխատանք 183
10. Խորհուրդների դերը 186
11. Հասարակական կազմակերպությունները . . . 187
12. Կոլխոզնիկների խնդիրները 188

ՀՀ Ազգային գրադարան
NL0187518

~~278~~
292